



ԷԶՄԻԱԾԻՆ




2021





Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



«ԷԶՄԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրական

Գլխավոր խմբագիր՝ **Գեորգ Մադոյեան**


Խմբագիրներ՝ **Արփինէ Զանթիկեան,
Լուսինէ Վարդանեան**

Լեզուաոճական խմբագիր՝ **Նարէ Սարգսեան**

Տեխնիկական խմբագիր՝ **Գոռ Գրիգորեան**

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Եզնիկ արք. Պետրոսեան,
Տ. Չաքարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Անդրէաս վրդ. Եզեկեան,
Ազատ Բօգոյեան,
Գեորգ Տէր-Վարդանեան,
Վարդան Դերիկեան,
Գոհար Աւագեան**





“Etchmiadzin”

Theological and Armenological Journal

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**

Editors **Arpine Chantikyan,
Lusine Vardanyan**

Stylistic editor **Nare Sargsyan**

Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Archbishop Yeznik Petrosyan,
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Andreas Yezekyan,
Azat Bozoyan,
Gevorg Ter-Vardanyan,
Vardan Devrikyan,
Gohar Avagyan**



«Эчмиадзин»

Религиоведческий и арменоведческий журнал

Редакционный состав

Главный редактор **Геворг Мадоян**

Редакторы **Арпине Чантикян,
Лусине Варданян**


Стилистический редактор **Нарэ Саргсян**

Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Архиепископ Езник Петросян,
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Андреас Езекян,
Азат Бозоян,
Геворг Тер-Варданян,
Вардан Деврикян,
Гоар Авакян**



ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ Ի ՄԵՌԵԼՈՅ.
ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«...Սայլն այն իշանէր ի լեռնէն ի Մասեաց,
եւ ի վերայ նորա արոոք եւն կարգեալ,
եւ ի վերայ նորա գահոյք ոսկեղէնք,
եւ ի վերայ նորա բեռեզք ծիրանիք,
եւ ի վերայ նորա Որդի Արքայի...»:

Գրիգոր Նարեկացի, «Ճաղ Յարութեան»

Երկու իրողութիւն, երկու փաստ՝ մէկն անկում ու կորուստ, միւսը՝ նորոգութիւն ու վերընծիւղում խորհրդաշնորհ... մէկը մարդկութեան խիղճը խարազանող, մարդկային արդարութեանն ապարդիւն յուսացող ու թէ հասնող, ապա ոչ լիարժէք, ոչ ժամանակին, ոչ անշահախնդիր, միւսը՝ հոգենորոգ, յաւերժական ու անաշառ...

Այդպիսին էր այս տարուայ ապրիլը, եւ այդպիսին են եղել բոլոր այն ապրիլները, երբ կանխաւ մեր հոգիներում Յարութեան հրաշափառ զօրութեանն ապաւինած՝ Քրիստոսի յարութեան աւետիսն ի սիրտ՝ խնկարկել ենք 1915 թուականի Յեղասպանութեան՝ այժմ արդէն սրբադասուած նահատակների յիշատակին:

1915 թ. ապրիլի 24-ին հայոց ինքնութիւնը, որ դարերով ամրապնդուել էր քրիստոնէութեան առաջին մարտիրոսներից մինչ Ոսկեդար՝ մինչ մեր առաջին Թարգմանիչները, մինչ նարեկացիական աղօթքն առ Աստուած, մինչ հայրենի հողի համար մղած պայքարը, չաղաւաղուեց ու չեղծուեց Օսմանեան Թուրքիայի մահասարսուռ ոճրի դէմ, այլ հոգում առաւել ամրագրեց անկորուստ հայրենիքի ամբողջական պատկերը: Հայ մարդը հաւատարիմ մնաց իր երկրին ու հաւատամքին. բանաստեղծը վերադարձաւ՝ իր հայրենակցի հետ կիսելու տառապանքի օրերը, գեղջուկը՝ որդեկորոյս ու հայրենակորոյս, չկորցրեց ապրելու յամառութիւնն

ու բարիք արարելու շիմաստազրկուող ձիրքը, Եկեղեցին ու հոգեւորականը շարունակեցին աստուածասէր ու ազգանպաստ գործունէութիւնը, դպրոցը ոսկեղինիկ լեզուով կրթեց իր սաներին: Եւ ազգն իր պապերից աւանդուած յամառութեամբ գոյատեւեց՝ Յարութեան հաւատն իր ինքնութեան անքակտելի մասը դարձրած:


Կեանքի շրջապտոյտը բաց հասարակութիւններ ու «ջնջուող» սահմաններ գծող աշխարհում 2020 թ. աշնանը նոր փորձութիւն բերեց հայ ժողովրդին՝ պատերազմի արհաւիրքը: Յեղասպանութիւնից հարիւր եւ աւելի տարի անց մեր հայրենիքը կրկին լինել-չլինելու վտանգի առջեւ էր, քանի որ Ադրբեջանը որսացել էր յարմար պահ՝ ազատութիւն տալու պարտուածի իր երեսնամեայ ատելութեանը: Կրկին աւերուեց հայի տունը, յայրուեց իր կառուցողի ձեռքով՝ թշնամու՝ ուրիշինը խլելու սովոր ձեռքը չընկնելու համար: Կրկին հայից խլուեցին նրա հաւատքի տաճարները՝ Ս. Ղազանչեցոցը, Ս. Յովհաննէս Մկրտիչը (Կանաչ ժամ), Դադիվանքը. ցանկը, ցաւօք, շարունակելի է: Աստծուց իրեն տրուած իր բնիկ աշխարհում հայի դէմ կիրառուեցին «նորահնար եւ սպանելու մէջ հմուտ» զէնքեր... Սա այն իրողութիւնն է, որտեղ մարդկային արդարութիւնն է գործում, եւ որտեղ արդարութեան կոչերը մնում են անլսելի, անիրագործելի, դառնում ապարդիւն...


Մենք չենք ուզում հաւատալ, որ կրկին կորցրել ենք: Դեռ կարօտով ուխտի ենք գնում մի անհեթեթ փաստաթղթով մեր սրտից պոկուած մեր եկեղեցիները, մեր հող հայրենին: Կռուի դաշտում դեռ փնտրում ենք մեր զինուորների մասունքներն ու չենք ուզում հաւատալ այդպիսի իրողութեանը: Այդ անհաւատալիօրէն դաժան իրականութիւնից մեզ փրկում է այն միւսը՝ յարութեան, կեանքի նորոգման, Քրիստոսով ամրանալու ու վերընձիւղուելու սրբազան իրողութիւնը: Ապրիլի 4-ին հայոց եկեղեցիներում հնչող սուրբ եւ անմահ Պատարագը, որ մեղսաւոր մարդկութեան փրկութեան համար խաչուած Աստծու Որդու հրաշափառ Յարութիւնն է աւետում, հաստատում, որ Քրիստոս յարեաւ, Քրիստոս մեր մէջ է, իր հոգեհորոգ զօրութեամբ մեզ վերադարձնում է ինքներս մեզ, մեր բուն էութեանը, յիշեցնում ազգային ինքնութեան բոլոր բաղադրիչները, մեր հոգում մեղմում Եռաբլուրում փողփողացող դրօշների ցաւը:

Այս ապրիլի Սուրբ Յարութեան հոգեհորոգումը մեզ շատ է պէտք, ու մենք փորձում ենք ամէն ինչում աստուածային խորհուրդը գտնել. նախ՝ մեղքերից զատուելով, Աստծու խօսքով լցուելով, իսկ յետոյ բերկրանքով

անդրադառնալով այն զարմանալի զուգադիպությունը, որ այդ օրը նաեւ Հայոց Հայրիկի՝ Մկրտիչ Խրիմեանի ծննդեան օրն է: Ապրիլն ինքնին աւետման ամիս է. չէ՞ որ Հայ Եկեղեցին եւ Հայոց Հայրապետն ապրիլի 7-ին Մարիամ Աստուածածնին տրուած բարի լուրով միշտ օրհնում են բոլոր մայրերին, որ ամուր պահեն իրենց ընտանիքները եւ աստուածասէր ու հայրենասէր զաւակներ դաստիարակեն՝ ընդունակ իրականութիւն դարձնելու հզօր եւ արժանապատիւ հայրենիքի մեր տեսիլը:

«Էջմիածին» ամսագրի խմբագրութիւնը եւս տողորուած է Յարութեան հաւատով եւ վստահութեամբ իր ժողովրդի կենսական ուժի հանդէպ, համոզուած է, որ նա կթօթափի մահուան թմբիրը, ինչպէս արել է միշտ իր պատմութեան ընթացքում, որ իր ինքնութեան ամրութեամբ կդիմակայի բոլոր որոգայթներին ու հոգեւոր զօրութեամբ, արժանապատուօրէն կրկին կշենացնի իր հայրենիքը՝ Հայաստանն ու Արցախը՝ ամուր յենարան մնալով եւ Սփիւռքի համար:





**Ն. Ս. Օ. Տ. Տ. ՊԱՐԵԳԻՆ Բ.
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏՎԱՍԸ
ՄԵՐ ՏԷՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ**

(4 ապրիլի, 2021 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Քրիստոս յարեալ ի մեռելոց»
(Շարական Յարութեան):

Սիրելի՛ բարեպաշտ հաւատացեալներ,
Այսօր Սուրբ Յարութեան հրաշափառ տօնն է, տօն՝ վերյառնումի, մեղքի ու մահուան հանգէպ յաղթութեան: Քրիստոս յարութիւն է առել, բացուել է գերեզմանի դուռը, հրեշտակները կեանքի լուսեղէն աւետիսն են բերել, առաքեալները զօրացել եւ ոգեշնչուել են յարուցեալ Փրկչի յայտնութեամբ: Սքանչելախորհուրդ յարութեամբ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, մարդկութեանը պարգեւեց գողգոթաներից յառնելու, մահին յաղթելու եւ յաւիտենական կեանքը ժառանգելու երկնային շնորհը: Մենք այդ վստահութեամբ ենք քաջալերուում, նաեւ գօտեպնդուում նեղութիւնների ու վշտերի, մահուան ահասարսուռ իրողութեան յանգիման՝ ունենալով հաստատուն հաւատը, որ Քրիստոս յարութիւն է առել եւ նորոգել է կեանքը, դուրս բերել մարդկութեանը մեղքի ու չարիքի խաւարից, հաշտութիւն հաստատել մարդու եւ Աստծոյ միջեւ: «Աստուած յաւիտենական կեանք տուեց մեզ. եւ այդ՝ այն կեանքն է, որ Նրա Որդու մէջ է»,— ասում է առաքեալը (Ա. Յովհ. Ե. 11): Քրիստոսի յարութեամբ բացուել է օրհնեալ կեանքի, յոյսի, սիրոյ, խաղաղութեան ու համերաշխութեան լուսաւոր ուղին: Այս կենարար ճանապարհից շեղումը յարութեան

փոխարեն մահ ու աւեր է սփռում, փրկութեան փոխարեն՝ դատապարտութիւն եւ կործանում, կեանքը դարձնում ատելութեան, բաժանումների յորձանուտ՝ լի չարի փորձութիւններով ու վտանգներով:

Սիրելիներ, անցեալ տարի մեր ժողովուրդը, Փրկչի նմանութեամբ, վերստին կրեց խաչելութեան տառապանքը: Պատերազմի դժոխային հնոցում շարշարանաց գողգոթայ անցնելով՝ զոհուեցին հազարաւոր մեր սիրասուն զաւակներ, կորցրեցինք Արցախի՝ հարազատ հայրենիքի զգալի մասը: Ինչպէս պատերազմից առաջ, այնպէս եւ յետպատերազմեան շրջանում մեր կեանքում հաստատուն չեղան տէրունապատուէր սիրոյ եւ համերաշխութեան նախանձախնդրութիւնը, Աստծոյ պատգամների համաձայն կենսակերպը: Պառակտումներն ու սերմանուող ատելութիւնը, անհանդուրժողութեան ոգին, շարունակուող քաղաքական ալեկոծումները նոր ցնցումների ու անկումների վտանգի առջեւ են կանգնեցրել մեր երկիրն ու ժողովրդին՝ ստուերելով նաեւ հայրենանուիրումի ու ազգասիրութեան վեհ գաղափարները: Իսկ հայրենիքի անվտանգութեան չփարատուող մտահոգութիւնը, հայրենական կեանքի տեսլականի բացակայութիւնը, հիասթափութիւնն ու յուսախաբութիւնը անորոշութեան խաւարով են մթագնել ապագայատեսիլ մեր յոյսերը: Ոչ մի հանգամանք, ոչ մի նպատակ, ոչինչ չեն կարող արդարացնել ազգի ու հայրենիքի մասնատումն ու տկարացումը, ազգային եւ հոգեւոր մեր արժէքների, նախնեաց աւանդների ոտնահարումը, նոր սերնդի ապագայնացումն ու բարոյազրկումը, ազգի արժանապատուութեան ու պատուի նսեմացումը: Մեր առջեւ ծառացած քաղաքական, տնտեսական, սոցիալական բարդ հիմնախնդիրների յանդիման, ճգնաժամային դժուարին հանգամանքներում թաղման անձաւի մէջ մնալով, իրավիճակից դուրս ելնելու անհրաժեշտ գործողութիւններում յապաղելով՝ մեր խաչելութիւնը չի պսակուի յարութեան կենարար զօրութեամբ: Յարութիւնը չի կայանում մերժելի ատելութեամբ ու թշնամանքով, բաժանումով ու քայքայումով, այլ սիրով եւ հայրենեաց սիրոյ շուրջ համախմբումով, նեղութիւններն ու դժուարութիւնները միասնաբար յաղթահարելով: Մեր ժողովրդի կեանքը ի հայրենիս եւ ի սփիւռս սպասում է վշտերի անյապաղ սփոփման, շարշարանքներից յառնումի եւ յաղթական յարութեան: Քրիստոսի պարգեւած փրկութեան եւ յարութեան լոյսը, սիրելիներ, ճառագում է զոհողութիւններ ստանձնելու առաքինութեան միջոցով, զոհողութիւններ մէկս միւսի հանդէպ, զոհողութիւններ ի սէր ողջ ժողովրդի: Այս լոյսի ներքոյ է,

որ եսապաշտութիւնն ընկրկում է աստուածապաշտութեան առջեւ, մահաբեր ընթացքը շրջւում է դէպի կենսատու Աստուած, տառապանքների մատնող գործողութիւնները փոխակերպւում են յարուցեալ կեանքի արարումների՝ առաջնորդելով փրկութեան ու յաւիտենութեան: Մեր երկիրն ու ժողովրդին պատուհասներից վեր հանելը, Արցախի կեանքն աւերներից բարձրացնելը եւ հայութեան ու հայրենիքի վերածնունդը հրամայական յանձնառութիւն են՝ իրագործելի ազգի բոլոր զաւակների, քաղաքական կուսակցութիւնների, մասնաւորապէս մեծագոյն պատասխանատուութիւնը կրող իշխանութիւնների կողմից: Հայրենաշէն ջանքերը կպսակուեն յաջողութեամբ օրհասական իրավիճակից պետականութիւնը փրկելու նախանձախնդրութեամբ, անձնական յաւակնութիւններից հրաժարուելով, պետութեան ու ազգի շահը գերադասելով: Այս ոգով յաղթական հանգրուանի պիտի հասցնենք մեր ցաւագին կորուստների վերականգնման, մեր ազգային իրաւունքների պաշտպանութեան, Հայոց ցեղասպանութեան համընդհանուր ճանաչման մեր նուիրական ձգտումները:

Սիրելիներ, Քրիստոս յարութիւն է առել եւ մեզ պարգեւել զօրութիւնը՝ նորոգելու մեր հոգիները, մեր կեանքը: Զյուսալքուենք ու թեւաթափ չլինենք մեզ պաշարած փորձութիւնների յանդիման: Զօրացեալ մնանք յարութեան հաւատով: Յարութեան հրաշքը կենսագործենք մեր երկրում ու կեանքում: Զերմ իղձերով փարուած մնանք մեր հարազատ բնօրրանին՝ մեր հողին, ջրին, մեր օջախին՝ կանխելու համար արտագաղթը հայրենիքից եւ հզօրացնելու մեր պետութիւնը: Տիրոջ զօրակցութեամբ յաղթահարելու ենք մեր կեանքի դառնութիւններն ու արհաւիրքները՝ հասնելով մեր յոյսերի ու տեսիլքների իրագործմանը եւ յարուցեալ նոր կեանքի կերտմանը:

Հոգենորոգ այս օրը աղօթք բարձրացնենք, որ Փրկիչ մեր Տիրոջ օրհնութիւնն ու շնորհները սփռուեն մարդկանց սրտերում՝ խաղաղութիւն եւ բարօրութիւն բերելով աշխարհին, իմաստութիւն քաղաքական գործիչներին՝ պետական ու հասարակական կեանքը կարգաւորելու եւ բարեկեցութեան առաջնորդելու պատասխանատուութեան մէջ: Աղօթենք պատերազմում վիրաւորուած մեր զաւակների առողջութեան, գերիների եւ անյայտ կորածների վերադարձի, մեր զոհուած քաջորդիների եւ համավարակից մահացածների հոգիների հանգստութեան համար՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի խօսքի միտարութեամբ. «Ես իսկ եմ յարութիւն եւ





կեանք. ով հաւատում է Ինձ, թէպէտ եւ մեռնի, կապրի» (Յովհ. ԺԱ. 25): Թող Սուրբ Զատկի յուսառատ աւետիսը հայրենաշէն երազների իրագործման զօրութիւնը պարգեւի աշխարհասփիւռ մեր ժողովրդին: Եւ թող Յարութեան արշալոյսով զարդարուի երկնակամարը մեր ազգային-եկեղեցական կեանքի, եւ խաղաղ ու ապահով մնայ մեր հայրենիքը՝ Հայաստան ու Արցախ աշխարհը, հաւատքով ամուր, սիրով ու միասնական՝ մեր ժողովուրդը, այսօր եւ միշտ եւ յաւիտեան. ամէն:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ՊԱՐԵԳԻՆ Բ.
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ
ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԱԿԵՏԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ**

(7 ապրիլի, 2021 թ.)

Սուրբ Աստուածածնի Աւետման տօնը պետական տօնակարգում հաստատուած է որպէս Մայրութեան, գեղեցկութեան եւ սիրոյ տօն: Այս օրը մեր եկեղեցիներում կատարում ենք օրհնութեան կարգ մայրութեան բերկրանքին սպասող կանանց համար՝ մաղթանքով, որ Աստուած շնորհաշատ զաւակներ պարգեւի եւ լիառատ պահի սէրն ու համերաշխութիւնը ընտանեկան հարկի ներքոյ: Հոգենորոգ տօնի առիթով հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում բոլորին, ի մասնաւորի՝ մայրութեան բերկրանքին սպասող կանանց:

Այսօր մեր սուրբ եկեղեցիներից Աստուածածնի աւետման հրեշտակաձայն աւետիսն է հնչում. «Ուրախ եղիր, ո՛վ շնորհունկալ, Տէրը քեզ հետ է»: Փրկչի աշխարհ գալու բերկրալի լուրը, որն առաջինը լսեց Սուրբ Տիրամայրը, նորոգել եւ օրհնութեամբ է լցրել նաեւ մեր ժողովրդի կեանքը: Դարեր շարունակ այս լուսաբեր աւետիսով ոգեշնչուել եւ զօրացել է քրիստոնեայ մեր ժողովուրդը, իսկ մեր մայրերն ու քոյրերը, օրինակ ունենալով Սուրբ Կոյսին, նուիրագործել են իրենց կեանքը՝ ապրելով հաւատքով եւ առ հայրենին սիրով ու հաւատարմութեամբ:

Մեր ժողովրդի համար դժուարին այս օրերին Սուրբ Հոգու սփռփանքն ու Բարձրեալի զօրակցութիւնն ենք հայցում ազգիս բոլոր զաւակներին, ի մասնաւորի՝ արցախեան նոր պատերազմի կորուստների ու արհաւիրքների ցաւը կրող մայրերին, քոյրերին ու դուստրերին:

Աղօթում ենք, որ Տիրամօր բարեխօսութեամբ՝ հարուցեալ Փրկիչը խաղաղութիւն ու բարօրութիւն պարգեւի համայն աշխարհին, մեր երկրին ու հաւատաւոր ժողովրդին: Թող Տիրոջ հանապազ պահպանութիւնն ու շնորհները հովանի լինեն մայրութեան բերկրանքին սպասող կանանց, որ աստուածաշատութեան, հայրենանուիրումի ու ազգանուիրումի ոգով սնեն ու դաստիարակեն իրենց զաւակներին, եւ Աստուած բոլոր կանանց, մայրերին ու քոյրերին պարգեւի երջանկութիւն, բարօրութիւն ու ամենայն բարիք, այսօր եւ միշտ. ամէն:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ՊԱՐԵԳԻՆ Բ.
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱԽԱՑԱԳԻՐԸ
ՎԱՐՂԱՆ ԳՐԵՊՈՐԵԱՆԻ ՍԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

(17 ապրիլի, 2021 թ.)

Ցաւով տեղեկացանք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակ, տիար Վարդան Գրեգորեանի մահուան մասին:


Յանուն Գերագոյն հոգեւոր խորհրդի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանութեան՝ բերում ենք Մեր սրտակցութիւնն ու ցաւակցութիւնը ննջեցեալի ընտանիքին, հարազատներին ու բոլոր վշտացեալներին:

Հոգեւոյս Վարդան Գրեգորեանը կրթական, գիտական եւ հանրային ճանաչուած գործիչ էր: Աւելի քան քսանամեայ գործունէութեամբ նա գովելի նպաստ է բերել հումանիտար գիտութիւնների զարգացմանը, բեղուն առաքելութիւն իրականացրել ԱՄՆ-ի հեղինակաւոր բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում: Մեծ փորձառութեամբ ու վաստակով լուսահոգի Վարդան Գրեգորեանը գլխաւորել է Նիւ Եօրքի հանրային գրադարանը՝ վերականգնելով գրադարանի մշակութային նշանակութեան կարգավիճակը, եւ շուրջ երկուս ու կէս տասնամեակ նախագահել Նիւ Եօրքի Կարնեգի հիմնադրամը՝ արգասաւորելով բարեգործական այս հաստատութեան ծրագրերի իրականացումը աշխարհի տարբեր երկրներում: Նրա կերպարը ոգեշնչում էր Սփիւռքի շատ գործիչների եւ օրինակելի էր նոր սերնդի համար:

Առանձնակի ջերմութեամբ ենք անդրադառնում, որ համաշխարհային հռչակ ունենալով՝ հոգեւոյս Վարդան Գրեգորեանը միշտ շեշտում էր իր ազգային պատկանելութիւնը, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու զաւակ լինելը: Բարեյիշատակ հայորդին միշտ աշխոյժ մասնակցութիւն էր բերում ամերիկահայ համայնքի հոգեւոր-եկեղեցական կեանքին, Պատարագի սրբազան արարողութիւններին, եկեղեցական կարեւոր միջոցառումներին ու ձեռնարկներին: Նրա սրտում հաստատուն էին հաւատարմութիւնն ու նախանձախնդրութիւնը՝ առ ազգն ու հայրենին: Նա համահիմնադիրն էր «Աւորայ» մարդասիրական նախաձեռնութեան եւ մեծապէս կարեւորում էր Հայոց ցեղասպանութեան համընդհանուր

ճանաչման, Հայ դատի յաղթանակի, հարազատ երկրի զօրացման ու առաջընթացի գործում նուիրեալ ջանքերի ներդրումը, հայրենիք— Սփիւռք կապերի ամրապնդումն ու արդինաւորումը:

Աղօթք ենք բարձրացնում առ ամենողորմ Աստուած, որ Իր անսահման գթութեամբ երկնային երանական բարձունքներում խաղաղութիւն եւ հանգստութիւն պարգեւի հանգուցեալ Վարդան Գրեգորեանի լոյս հոգուն: Այլեւ հայցում ենք Սուրբ Հոգու մխիթարութիւնն ու սփոփանքը ննջեցեալի ընտանեաց անդամներին ու հարազատներին եւ սգակիր բոլոր անձանց»:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅՈՑ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՆԱԿԱՏԱԿՆԵՐԻ
ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐՈՒԼՅՈՒՆ ԱՌԻԹՈՎ


(24 ապրիլի, 2021 թ.)


Մէկ դարից աւելի է անցել Օսմանեան Թուրքիայի կողմից ծրագրուած եւ իրագործուած Հայոց ցեղասպանութիւնից: Եղեռնահար մեր ժողովուրդը փրկուած բեկորներով ցրուեց աշխարհով մէկ՝ իր պատմական հայրենիքում եւ գաղթի անապատներում թողնելով մէկ եւ կէս միլիոն նահատակներ:

Ի. դարասկզբին հայ ժողովրդի ցեղասպանութիւնն արձանագրուած է որպէս մարդկութեան դէմ գործուած դարի առաջին յանցագործութիւն՝ ազգի բնաջնջման, էթնիկ թշնամանքի հրէշաւոր դրսեւորումներով:

Ցեղասպանութեան ողբերգութեան ցաւը այսօր արցախեան պատերազմի ծանր կորուստներով նորովի է պատել մեր ժողովրդի հոգին: Մեր սուրբ նահատակների լոյս յիշատակի առջեւ մեր նուիրական պարտքն է ամրապնդել ազգային միաբանութիւնը, ներքաղաքական զարգացումներում զերծ մնալ բռնութիւններից ու բախումներից եւ նախանձախնդիր ոգով հետամուտ լինել մեր իրաւունքների պաշտպանութեանը: Մեր ժողովրդի կեանքը ձեռքբերումներով զարգարելու, մեր առջեւ ծառացած մարտահրաւէրներին ու սպառնալիքներին դիմակայելու գրաւականը պետութեան զօրացման պատասխանատւութեան բարձր զգացումն է եւ համախմբումը ազգային ու հոգեւոր արժէքների շուրջ:

Մեր սուրբ նահատակների բարեխօսութեան հայցով աղօթում ենք ամենողորմ Տիրոջը, որ խաղաղ ու անվտանգ լինի մեր երկիրը, եւ աշխարհասփիւռ մեր ժողովուրդը միակամ ու միասնական կերտի իր բարօր ու լուսաւոր ապագան՝ յանուն ազգի ու հայրենեաց:





**ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՅՅԻ ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(Ս. Գայանե, 3 ապրիլի, 2021 թ.)

«Քրիստոս յարեալ ի մեռելոց»
(Ա. Կորնթ. ԺԵ. 20):

«Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ,
ընդունայն է քարոզութիւնն մեր,
ընդունայն են եւ հաւատքն ձեր»
(Ա. Կորնթ. ԺԵ. 14):

Սիրելի՜ քույրեր եւ եղբայրներ,

Անցյալի չափիացած վերքերի եւ ապագայի հանդեպ տագնապների մեջ մխիթարություն փնտրող մեր սրտերը վերստին բացել ենք հարություն առած մեր Փրկչի առջեւ եւ մեր հայացքներն ուղղել ենք այն Միակին, որ ի զորու է փրկելու մեզ չարաղետ փորձություններից ու արհավիրքներից եւ անգին կորուստների հանդիման՝ ապրելու նոր հույս ու նոր կամք ներշնչելու մեզ:

Մթագնած երկնքում բոցավառվող արեւի պես է ճառագայթում «Քրիստոս յարեալ ի մեռելոց» ավետիսը՝ բարի լուրը, որ դարեր շարունակ վերափոխում է մարդկության կյանքը:

Քրիստոսի անձնուրաց հետեւորդ, հեթանոսաց շնահանջող առաքյալ Պողոսը, առանց երկիմաստության, բովանդակագուրկ է համարում քրիստոնեական հավատքը, եթե չկա հարության հրաշքի ճանաչումը: «Եթե Քրիստոս հարություն չի առել,— ասում է նա,— ապա ընդունայն է մեր քարոզությունը, ընդունայն է նաեւ ձեր հավատքը» (Ա. Կորնթ. ԺԵ. 14):

Քրիստոսի հարությունը վեմն է մեր հավատքի: Առանց հարության հրաշքի չէր կարող իմաստ ստանալ Քրիստոսի զոհաբերությունը՝ նրա չարչարանքները, նրա խաչելությունը եւ նրա մահը:

Շատերի համար Քրիստոսի հարությունն այսօր եւս շարունակում է մնալ առասպելական մի դյուցազներգություն, ոմանք հակված են այն վերագրելու առաքյալների բորբոքված երեւակայությանը, իսկ ոմանք, ավելի հեռուն գնալով, Քրիստոսի հարությունը համարում են մարդկության պատմության մեջ երբեւէ արձանագրված մեծագույն խաբեությունը: Չարամտության, կասկածանքի ու հոռետեսության շարունակական այս հորձանքների առջեւ, սակայն, երբեք ու երբեք չի նվազել հարության հրաշքի լույսը, չի նվազել, այլ պատմության մեջ անկասելի իր հաղթարշավով գրավել ու գերել է նորանոր սրտեր ու հոգիներ: Հավատավոր քրիստոնյաները, առաքյալների նույն համոզվածությամբ, այսօր եւս շարունակում են վկայել. «Այս Հիսուսին է, որ Աստված հարություն տվեց, որին մենք ամենքս վկա ենք» (Գործք. Բ. 32):

Այո՛, քրիստոնյաներն աներկբա հավատում են, որ Քրիստոս հարություն է առել: Հավատում են, որ Քրիստոսի հարությունը ոչ միայն միստիկական, այլեւ պատմական իրողություն է: Հավատում են, որ Քրիստոս, հարություն առնելով, մարդկանց հարություն առնելու շնորհը պարգեւեց. «Ես եմ հարությունը եւ կյանքը,— ասում է Նա,— եթե մեկը հավատա ինձ, անգամ եթե մեռնի, պիտի ապրի» (Հովհ. ԺԱ. 25):

Պողոս առաքյալը, հետեւելով Քրիստոսին, երկրորդում է. «Եթե մենք միացած ենք Քրիստոսի հետ մահվամբ, ապա միացած պիտի լինենք նաեւ հարության» (Հռոմ. Զ. 5):

Սուրբ հարության մասին խոսելիս, պաշտպանվելով ամբաստանություններից, նույն Պողոս առաքյալը պետական ատյանի առջեւ վկայում է. «Հույս ունեմ առ Աստված,— ասում է Նա,— որ հարություն է լինելու արդարների եւ մեղավորների: Դրա համար ինքս էլ ճիգ եմ անում, որ Աստծու եւ մարդկանց առաջ միշտ մաքուր խղճմտանք ունենամ» (Գործք. ԻԴ. 15–16):

Հարության նկատմամբ հավատքը, այո՛, փոխում է մեր կյանքը: Աննպատակ որոնումները գտնում են վախճան, եւ հարության հավատքով կյանքը դառնում է ճիգ, դառնում է ջանք ու ծառայություն՝ հանուն մաքուր խղճմտանքով հավիտենական կյանքի ժառանգման: Ինչ է կյանքն առանց հարության: «Խարխուլ մակույկով անիմաստ նավագնացություն փոթորկահույզ ծովում»,— կասեր բանաստեղծը: Հարության հավատքով է իմաստ ստանում կյանքը, ծառայությունը դառնում է առաքելություն եւ ոչ թե պարտականություն, հայրենասիրությունը դառնում

է արժանապատվություն եւ ոչ թե բեռ: Առանց հարուստի հավատքի՝ մարդասիրությունը վերածվում է հաշվենկատության, իսկ ազատությունը՝ սանձարձակության ու ամենաթողության:

Երբ գիտենք կյանքի նպատակը, բացահայտում ենք նաեւ դրան հասնելու ուղին: Չկա դեպի երկինք տանող երկրային ճանապարհ: Եւ սա հրդեհված երեւակայությամբ երկնված զուտ բանաստեղծական պատկեր չէ: Սա իրականություն է: Երկիրը պատվանդան է երկինք մեկնելու, եւ հարուստի հավատքը շարժիչն է դեպի երկինք սլացքի:

Հավատում ենք մենք այս իրականությանը: Հավատում ենք արդյոք, որ երկրի նպատակը երկինքն է, հավատում ենք, որ մահվամբ չի ավարտվում մեր կյանքը, եւ վերջապես հավատում ենք, որ այսօրվա մեր գործերն արձագանք են ստանալու հավերժության մեջ: Պողոս առաքյալը դրան խորապես հավատում էր, ահա թե ինչու ասում է. «Ո՛ր է, մահ, քո հաղթությունը, ո՛ր է, գերեզման, քո խաչթոցը» (Ա. Կորնթ. ԺԵ. 55):


Այսօր հազարավոր նվիրական զոհերի գերեզմանների առջեւ, անվերականգնելի կորուստների ցավով համակված, ինչպե՞ս ձայնակից լինենք Պողոս առաքյալին եւ ասենք. «Ո՛ր է, մահ, քո հաղթությունը»:

Մեր երազանքները խորտակված են թվում, ապրածը՝ իմաստագրված, հազարավոր ընտանիքներ՝ սրտաբեկված, ապագան՝ անհուսուծությամբ մշուշված, եւ կարծեք, թե կյանքը վերածվել է անջատիկ մի պահեցողության: Ինչպե՞ս, ինչպե՞ս ճեղքել մշուշոտ խավարը: Գիշերը ցերեկ է դառնում, բայց մեր գիշերվա վախճանը, թվում է, չկա: Մոռացել է մեզ արդյոք Աստված, թողել բախտի քմահաճույթին, թե՞ ժամանակ չունենք մենք Աստծու համար:

Ունենք... Ապա ինչպե՞ս թշնամանքն ու ատելությունը, սիրո ու համերաշխության զգեստավորմամբ, խոր արմատներ բռնեցին մեր կյանքում: Ինչպե՞ս սուտն ու կեղծիքը ճշմարտությունից գերադասվեցին: Ինչպե՞ս հայհոյանքն ու վիրավորանքը դարձան քաջության, իսկ համեստությունն ու խոնարհությունը՝ տկարության խորհրդանշան: Ինչպե՞ս մեծախոսությունը շփոթվեց ճշմարտախոսության, մարդահաճությունը՝ մարդասիրության, հայրենազավությունը՝ հայրենասիրության հետ: Եւ վերջապես ինչպե՞ս կռապաշտը համարվեց աստվածապաշտ...

«Արդ,— ասում է Պողոս առաքյալը,— հեռացրե՛ք ձեզանից հին մարդուն եւ նոր մարդ դարձեք» (հմմտ. Եփ. Դ. 22—24): Փրկչի հարուստին հավատացող «նոր մարդուն» խորթ են նյութապաշտությունն ու





եռասիրությունը: Նա ժամանակը չափում է հավերժության կշիռքով, աղետն ու հիվանդությունը նրա համար փորձություն են, իսկ ձախորդությունը՝ փորձառություն՝ նոր հաջողության ձգտելու համար:


Արդ, լինենք հարության հանդեպ անշրջելի հավատքով զինված «նոր մարդ»՝ երկինք ուղղված վճիռ հայացքով, ապագայի հանդեպ վստահությանմբ եւ խավարի դեմ մաքառելու վճռականությամբ:

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, այսօր մեր Տիրոջ հրաշափառ Սուրբ Հարության տոնախմբումով մեր Սուրբ Եկեղեցին հրավեր է ուղղում մասնակցելու Տիրոջ հարության ուրախությանը՝ ժամանակավորից մեկնելու դեպի հավիտենականը, հարության հավատքով միավորվելու, միանալու ու համերաշխ լինելու՝ ձերբազատվելու ամեն ատելությունից, թշնամանքից, անձնապաշտությունից: «Ամեն ինչից առաջ եւ ամեն ինչից վեր Աստված», — այս է հաղթանակած Աստծու նկատմամբ մեր հավատքը: Աստված, որ հարություն պարգեւեց Իր խաչված ու սպանված Որդուն, նույն Աստված հարություն պիտի պարգեւի նաեւ մեզ՝ Իր հավատարիմ ժողովրդին:

Հոգու խորքից վերստին փառաբանում ենք Քրիստոսի սուրբ եւ հրաշափառ հարությունը, աղոթում մահվանը հաղթած Տիրոջը, որ մխիթարության բյուր շնորհներով սփռված է բերի մեր ժողովրդի զավակներին, ամոքի վշտացյալների վերքերը, հուսալքվածներին՝ հույս, տկարներին՝ ամրություն, հիվանդներին առողջություն շնորհի եւ առատաբաշխ Իր օրհնության ներքո խաղաղություն ու բարօրություն պարգեւի համայն աշխարհին, մեր երկրին ու մեր ժողովրդին:

Տիրոջ շնորհը, սերը եւ ողորմությունը թող լինեն ամենքիս հետ այժմ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:

Քրիստոս յարեալ ի մեռելոց,
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:



**Տ. ԶԱՔԱՐԻԱ ՍԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ «ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ»-ԻՆ
ՍԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(25 ապրիլ, 2021 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Տիրոջ աշխում պատվական է իր սրբերի մահը»
(Սաղմ. ՃԺԵ. 15):

Հաղթանակած Աստծու սիրելի՛ զավակներ,

Հայոց եկեղեցիներում շարունակում է թեւածել եւ տարածվել Տիրոջ հրաշափառ հարուստ ուրախ ավետիսը՝ ջերմացնելով մեր սրտերն ու հոգիները, ապագայի հանդեպ հույս ներշնչելով եւ առավել ամրացնելով ամենքիս հավատի, հույսի եւ սիրո մեջ: Իսկ մենք՝ քրիստոնյաներս, Հինանց այս շրջանում շարունակում ենք մեկս մյուսին ողջունել «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» կենսատու խոսքերով՝ ի պատասխան լսելով «Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի» գոտեպնդող արտահայտութիւնը:

Իսկապէս, հազար փառք հարուստանդ, Տէր, որ ապրելու եւ արարելու ուժ ես տալիս՝ չծնկելու բազում դժվարութիւնների, խոչընդոտների առաջ եւ իմաստավորված վայելելու աստվածապարգեւ ժամանակը մեր ազգի համար դժվարին եւ անորոշ այս ժամանակահատվածում: Անհերքելի իրողութիւն է, որ ինչպէս դարեր առաջ Փրկչի հարուստ իրականութիւնը եւ մահվան դեմ հաղթանակը զորացրեցին առաքյալներին ու առաջին քրիստոնյաներին, նույն ձեւով այսօր հարուստ բարի լուրն այլակերպում է կյանքը եւ հիշեցնում, որ մենք՝ Քրիստոսի անհաղթ բանակի անդամներս, անպարտելի ենք եւ անկոտրում, քանզի հաղթանակած եւ հարուցյալ Տիրոջ զավակներն ենք: Իսկ այս հոգեւոր ապրումը մեզանից յուրաքանչյուրին պետք է մղի՝ անմիջապէս զարթնելու ներկա մղձավանջից եւ անորոշութիւնից, մեզանից վանելու ատելութիւնն ու թշնամութիւնը եւ միաբան սիրով, ամենայն

պատասխանատվությամբ, նվիրվածությամբ եւ համահայկական ներուժի ճիշտ գործածությամբ վերջապես ստեղծելու մեր սրտի Հայաստանը:

Այսօր ուղղադավան մեր Եկեղեցում Հինանց չորրորդ կիրակին է, որ անվանում ենք նաեւ «կարմիր»: Գունագեղ այս կիրակին ամենքիս նախ մտովի տանում է սրանից 106 տարի առաջ, երբ Օսմանյան կայսրությունում նույն այս օրերին սկսվեցին հայ մտավորականների տեղահանությունը, զանգվածային ձերբակալություններն ու սպանությունները: Եւ երեկ լուռության, ոգեկոչման եւ ինքնաանդադարձի օր էր աշխարհասփյուռ հայության համար, երբ ուխտավոր էինք Հայոց ցեղասպանությանը նվիրված Միժեռնակաբերդի հուշահամալիրում՝ հայցելու մեր սուրբ նահատակների բարեխոսությունը Թորգոմի տան զավակների համար: Մեր հավերժության խորհրդանիշ Արարատ սրբազան լեռը նայում էր մեզ, իսկ մեր լուռ եւ մտախոհ հայացքն ուղղված էր Շուաբլուրին, ուր հանգչում են հայոց քաջերը: Նրանք հաղթեցին եւ իրենց հաղթանակով շտկեցին մեր մեջքը Հայոց ցեղասպանությունից տասնամյակներ անց: Հայր վերջապես ապրեց հաղթանակի իրական բերկրանքը, բայց ի՞նչ արեցինք մենք... Մեր բյուրավոր սուրբ նահատակների անմահ հիշատակի հանդեպ լավագույն պատասխանը պիտի լինեին եւ այսօր էլ պիտի լինեն հզոր, արդար եւ արժանապատիվ Հայաստանի ստեղծումն ու հայրենիքակենտրոն քաղաքականությունը, ուր ամեն հայ իրեն երջանիկ եւ արժեւորված կզգա: Ուստի չենք ընկճվում եւ ոչ էլ խուճապի մատնվում, ընդհակառակը՝ ուժերի գերլարումով շարունակում ենք ապրել ու ապրեցնել, քանզի այս կիրակիին տրված «կարմիր» մակդիրը նաեւ պաքարի եւ կյանքի խորհուրդն ունի:

Այո՛, բոլորիս կյանքը փոթորկված է, իսկ սրտերը՝ խոցված վերջին ամիսներին մեր սրբազան հայրենիքում տեղի ունեցած եւ այսօր էլ շարունակվող մտահոգիչ իրադարձությունների պատճառով: «Եթե»-ներն ու «ինչու»-ները կրծում են մեր հոգին եւ չեն թողնում փոքր-ինչ հանգստանալ, իսկ ամենօրյա տեղեկատվական հոսքերն էլ ավելի են շատերին խճճում եւ հեռացնում իրականությունից: Որքան էլ այս պահին դժվար է եւ տխուր, այնուամենայնիվ, իրավունք չունենք հուսահատվելու, անհուսություն տարածելու մեր շրջապատում, անխոհեմ քայլեր անելու եւ անգամ հայրենիքը լքելու մասին մտածելու: Որովհետեւ հենց այս իրականության մեջ է հայտնվում աշխարհին հաղթած մեր Տերը եւ կրկին հորդորում՝ մի՛ վախեցեք, Ես միշտ ձեզ հետ եմ: Իսկ որտեղ Տերն է, այնտեղ են հաղթանակը, հարության հույսն ու լույսը եւ լավատեսությունը: Մնում է, որ մեր

սրտերում ընդունենք Նրան, խոստովանենք Նրան՝ որպես Փրկչի, եւ մի օր Տիրոջ հետ հավիտենապես ապրելու հնարավորութիւն կունենանք:

Քրիստոնյայի կյանքը շարունակական եւ չընդհատվող պայքար է ընդդէմ մեղքի եւ չարի, որ սկսվում է մեր ծննդյան առաջին պահից եւ շարունակվում մինչեւ վերջին շունչը: Այդ պայքարը հեշտ կամ սովորական չէ, հաճախ այն անտեսանելի է եւ դաժան: Մեր հոգեւոր կյանքի սկիզբը Ս. Մկրտության խորհուրդն է, երբ սրբալույս մյուռոնով դրոշմվելով՝ ստանում ենք անհրաժեշտ զենքերն ու շնորհները՝ հանգցնելու «չարի բոլոր մխացող նետերը»: Այլ խոսքով՝ մեր առաջնային պարտականութիւններից է նաեւ պայքարել այլասերող, քանդող եւ ապականող երեւոյթների դէմ, որոնք փորձում են խաթարել հոգեւոր եւ հասարակական մեր կյանքը, շեղել մեզ Աստծուց եւ ազգային, հոգեւոր ու բարոյական արժեքներից: Քրիստոնյան չի կարող կրավորական կեցվածք դրսեւորել կամ անտարբեր լինել մեր շուրջը կատարվող բացասական երեւոյթների հանդէպ, այլ խորագիտութեամբ, լայնախոհութեամբ դրանց մասին պետք է բարձրաձայնի եւ ցույց տա հաղթահարելու ճանապարհները: Այս համառ պայքարում հաղթելու է մինչեւ վերջ համբերողը, չընկճվողը եւ Տիրոջ վրա հույս դնողը:

Հայկ Նահապետի եւ Կարմիր Վարդանի զավակներ, հիմա կյանքի այս հանգրվանում մեր պայքարը հայրենիքի ամբողջականութեան վերականգնման եւ անվտանգութեան, քրիստոնեական եւ ազգային ինքնութեան պահպանութեան, հայեցի կրթութեան եւ դաստիարակութեան ու վերջապէս հայ տեսակի գոյութեանականութեան համար է: Վստահաբար, Տիրոջ ողորմութեամբ լուսը բացվելու է, եւ խավարը չքանա, մեր մտքերը լուսավորվելու են, եւ մենք միասնաբար գտնելու ենք ճանապարհը՝ կորցրածը վերականգնելու եւ մեր երազած պետութեան մեջ ապրելու համար: Այնպէս որ, ընտրութիւնը կրկին մերն է. կարող ենք քայլել ավետարանական «նեղ եւ անձուկ» ճանապարհով, որ տանում է դեպի բաղձալի արքայութիւն եւ կյանք կամ ընտրել «լայն» դուռը, հրաժարվել պայքարից եւ կորստյան մատնվել: Ուստի միշտ սարքին եւ լիցքավորված պահենք մեր զենքերը, որպէսզի կարողանանք ճիշտ ժամանակին թիրախային եւ հուժկու հարված հասցնել:

Կարմիր գույնը խորհրդանշում է նաեւ Տիրոջ՝ հանուն մարդկութեան փրկութեան խաչի վրա հեղած քավարար արյունը, որ «մաքրում է մեզ ամեն մեղքից» (Ա. Հովհ. Ա. 7): Եւ ամեն անգամ՝ Ս. Պատարագի ժամանակ, ճաշակելով Տիրոջ մարմինն ու արյունը, ոչ միայն


մեղքերի թողություն ենք ստանում, այլեւ հարության հույս ունենում, կերպարանափոխվում եւ ապագայի հանդեպ լավատեսությամբ լցվում:

Այս գույնը խորհրդանշում է նաեւ բոլոր այն մարտիրոսներին եւ վկաներին, որոնք նահատակվեցին հանուն Քրիստոսի եւ ավետարանական ճշմարտությունների՝ առավել զորացնելով Քրիստոսի Եկեղեցին: Իրենց նահատակությամբ նրանք գործնականում ցույց տվեցին եւ ապացուցեցին Քրիստոսով ավետարանված փրկության ճշմարիտ լինելը՝ հավատքի եւ խիզախության կենդանի օրինակներ դառնալով հետագա քրիստոնյաների համար: Ուստի պատահական չէ, որ Բ. դարի մատենագիր Տերտուլիանոսն իրավամբ ասում է. «Նահատակների արյունը Եկեղեցու սերմն է»: Այս խոսքերն ամենեւին չափազանցություն չեն, այլ ճշմարիտ վկայություն, քանզի հենց նրանց շնորհիվ առավել ամրացան Եկեղեցու հիմքերը, եւ Քրիստոսի սիրո վարդապետությունը տարածվեց աշխարհով մեկ: Ուստի Դավիթ մարգարեն ասում է. «Տիրոջ աչքում արժեքավոր է Իր սրբերի մահը», քանզի նրանք իրենց մահով անմահացան, իսկ նրանց ապրած կյանքը դարձավ օրինակ կատարելության եւ քրիստոնեական առաքինությունների:

Թվում է, թե ժամանակները փոխվել են, բայց այսօր էլ շատերը նահատակվում են քրիստոնեական հավատքի համար: Այս կիրակին նահատակների օրինակով ասես մեզ հիշեցնում է արիության մասին եւ հորդորում կենդանի հավատ եւ դրանից բխած արժանի գործեր ունենալ: Գուցե այսօր մեզանից չի պահանջվում Ֆիզիկական նահատակություն, բայց կարիքն ունենք հոգեմտավոր արթնության եւ զգոնության, ինքնաքննության եւ միասնականության՝ հանուն սրբազան այս հողի պահպանման եւ շենացման եւ մեր ազգի վաղվա օրվան:

Թող Քրիստոս Աստված անսասան պահի ու պահպանի մեր հայրենիքը, Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ աշխարհասփյուռ հայությանը, հարության հույսով պատի ամեն հայի, մխիթարի, գոտեպնդի եւ առավել զորացնի, իսկ մեր նահատակ սրբերը միշտ երկնքում բարեխոսեն մեզ համար Աստծու մոտ:





ՈՒԹԵ ՓՈՍՍԵՔԵԼ

ՀՈՒԼԻԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԼՍՈՐԻ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՉ¹

Սկիզբը՝ նախորդիվ

Հուլիանականներն ու սելերիոսականներն հեղհեղուկ սահմաններ
եւ հովվական նկատառումներ

Հուլիանականներն ու սելերիոսականներն ապրում էին կողք կողքի եւ երբեմն նույնիսկ միեւնույն վանական համայնքում: Հուլիանականների ու սելերիոսականների միջեւ սահմանները հեղհեղուկ էին, ինչպես արդեն առիթ ունեցանք նկատելու. Պրոկոպիոս եպիսկոպոս Եփեսոսի տաժարանում էր հուլիանականության եւ սելերիոսական միաֆիզիտ Եկեղեցու միջեւ, ու ակնհայտորեն եղան հոգեւորականներ, որոնք նույնպես փոխեցին իրենց միաբանությունը: Եկեղեցական կանոնների հարցում այս ապստամբ հուլիանականներին ներողամտորեն էին վերաբերվում՝ առաջնահերթություն տալով հովվական նկատառումներին: «Արեւելքում գրված գլուխներ»-ում զետեղված նման կանոններից մեկն այն վանականների մտահոգությունների մասին է, որոնց քահանաները հուլիանական են, բայց իրենք Հուլիանոսի վարդապետության հետեւորդ չեն: Հուլիանականներն ու սելերիոսականները, լինելով միեւնույն մենաստանում, բնականաբար, հովվական եւ հոգեւոր խնդիրների բախվեցին. եպիսկոպոսները որոշում կայացրին, որ թեեւ սելերիոսական վանականները չպետք է հաղորդություն ստանային հուլիանական քահանայից, սակայն նրանց թույլատրվում էր սաղմոս արտասանել եւ ճաշել նրանց հետ միասին, թեպետ սովորաբար հերետիկոսների հետ ուտելը խստորեն արգելվում էր նույն համայնքի՝ այլ վայրերում սպասավորող

¹ Հոգվածի բնագիրը տե՛ս U. POSSEKEL, Julianism in Syriac Christianity. in: P. Bruns, H. O. Luthé (Hrsg.), *Orientalia Christiana, Festschrift für Hubert Kaufhold zum 70. Geburtstag*, Wiesbaden, 2013, էջ 437–457:

քահանաներին ու սարկավագներին²: Կանոններն արդարացնում են այս օրենքի մեղմությունը՝ հույս հայտնելով, որ հուլիանական քահանաները դարձի կգան, կամ գոնե սեւերիոսական վանականները, որ «հեռու են կատարելությունից, չեն վերադառնա հերետիկոսությունների ծուղակը»³: Հովվական նկատառումներով էին ուղղորդվում նաեւ միանձնուհիները, որոնք ուսումնառության էին գնում հուլիանական եկեղեցիներ: Նրանց թույլատրվում էր դա անել, սակայն այնտեղ չպետք է հաղորդություն ստանային⁴:

Զ. դարակեսերի կանոնագրքերում մեծապես արժարժվում է այն հարցը, թե ինչպես վարվել միաֆիզիտ սեւերիոսականների, հաղորդություն չունեցող քահանաների մկրտած հավատացյալների հետ՝ լինեն քաղկեդոնականներ թե հուլիանականներ: Նման մի փաստաթուղթ քննարկում է դեպքը ոմն հուլիանական քահանայի՝ Իշաքի ուղղությանը (սրա մասին հետագայում չի խոսվում) պատկանող, որի եկեղեցական խորհուրդները կասկածի տակ են դրվել: Կանոններով սահմանված է. քանի որ այս հուլիանականը ձեռնադրվել է ուղղափառ եպիսկոպոսի կողմից, ապա նրա մկրտությունը պետք է վավեր համարվի: Նույն կանոնը վերաբերում էր նաեւ Պրոկոպիոսի ձեռնադրած քահանաների կատարած խորհուրդներին. ամենայն հավանականությամբ խոսքը հուլիանականների համախոհ Պրոկոպիոս Եփեսացու մասին է⁵: Մյուս կողմից՝ «հերետիկոսի» ձեռնադրած քահանայի, ինչպիսին ոմն Զեբադն էր, մկրտած անձինք պետք է նորից մկրտվեին, քանի որ այդպես էր պատվիրել պատրիարքը

² Տե՛ս «Chapters Written from the Orient», can. 40, ed. Vööbus, Synodicon I, 175.24—176.4: Հերետիկոսների հետ ճաշելու՝ քահանաներին ու սարկավագներին վերաբերող արգելքը կարելի է գտնել նույն տեղում՝ can. 34, ed. Vööbus, Synodicon I, 174.14—17:

³ Տե՛ս «Chapters Written from the Orient», can. 40, ed. Vööbus, Synodicon I, 176.1—2 (text), 167 (transl.):

⁴ Տե՛ս «Chapters Written from the Orient», can. 41, ed. Vööbus, Synodicon I, 176.5—9 (text), 168 (trans.): Կանոն 42-ը (խմբ. Vööbus, Synodicon I, 176.10—20) վերաբերում է մի խումբ վանականների, որոնց հոռմեացիները կոչում էին «լամպետիոսականներ», եւ որոնց մեջ տղամարդիկ ու կանայք միասին էին ապրում: Եթե նրանք ցանկանային միանալ «ուղղափառներին», նախ պետք է առանձնացնեին տարբեր սեռերի ներկայացուցիչներին, ապա պետք է որոշվեր՝ արդյո՞ք նրանք քահանայություն են ստացել քաղկեդոնական, թե՛ հուլիանական եպիսկոպոսից. այդ դեպքում նրանք պետք է գրավոր նզովեին հերետիկոսներին եւ ապաշխարեին:

⁵ Նամակից, որն արժանապատիվ եպիսկոպոսներից մեկը գրել էր իր ընկերոջը՝ կապված որոշ մեղքերի հետ՝ can. 7, ed. Vööbus, Synodicon I, 182.6—9 (text), 173 (transl.): Այս նյութին վերաբերող կանոնական գրականության ուսումնասիրության համար տե՛ս W. DE VRIES, Sakramententheologie bei den syrischen Monophysiten, OCA 125, Rome: PIOS, 1940, էջ 80—85:

(այսինքն՝ Սեւերիոսը)⁶։ Ոչ ուղղափառ համարվող քահանաների կատարած մկրտության խնդրին անդրադարձել է նաեւ Անտիոքի ասորի ուղղափառ պատրիարք Սերգիոսը (557–561 թթ.)՝ Պարսկաստանի եպիսկոպոսներին ուղղված իր նամակում։ Սերգիոսը վկայակոչում է Սեւերիոս Անտիոքացու որոշումը, ըստ որի՝ Զեբադի ձեռնադրած քահանաները պետք է այլ ձեռնադրություն ստանային, քանի որ վերջինիս կատարած ծեսն անվավեր էր։ Սերգիոսի սահմանմամբ՝ սա պետք է վերաբերեր նաեւ հուլիանական վանականների ընդունելությունը⁷։ Նվիրապետության մտահոգությունը մկրտության առնչությամբ ցույց է տալիս, որ չնայած հուլիանականությունը, ըստ էության, վանական երեւույթ էր, սակայն հուլիանական քահանաները ծառայում էին նաեւ աշխարհականների շրջանում՝ գյուղերում եւ գյուղական վայրերում։

Դանիել Շալահացին

եւ աստվածաբանական առձագանձը Զ. դարակեսին

Հուլիանականությունը խոր արմատներ էր գցել հյուսիսային Միջագետքի վանական համայնապատկերում, այդ իսկ պատճառով զարմանալի չէ, որ Զ. դարի կեսերին Հուլիանոսի վարդապետության աստվածաբանական հերքման նշանակետն էր վանական կյանքի սիրտը՝ սաղմոսները։ Վանքերում բոլոր 150 սաղմոսներն ընթերցվում էին ամեն օր, իսկ ծխական եկեղեցիներում՝ շաբաթվա ընթացքում։ Սաղմոսները կարեւոր գործառույթ ունեին նաեւ քրիստոնեության ուսուցման համար, եւ եկեղեցական ձեռնադրություն ունեցողներից պահանջվում էր դրանք անգիր իմանալ⁸։ Ինչպես ցույց է տվել Դեյվիդ Թեյլորը, Ապամեայի մերձակայքում գտնվող Կաֆրա դը-Բիրթայի Մար Մովսես հուլիանական վանքի անմիջական հարեւանությամբ գտնվող Մար Եւսեբիոս վանքի վանահայր Հովհաննեսը գիտակցեց սաղմոսների բացատրությունը վերահսկելու կարեւորությունը եւ այդ նպատակով խնդրեց Դանիել Շալահացու մեկնությունը⁹։ 540-ական թվականներին գրված եւ ասորերեն հետագա

⁶ Նամակից, որն արժանապատիվ եպիսկոպոսներից մեկը գրել էր իր ընկերոջը՝ կապված որոշ մեղքերի հետ՝ can. 7, ed. Vööbus, Synodicon I, 182.10–13 (text), 173 (transl.)։ Հայտնի չէ, թե ով էր այդ Զեբադը։

⁷ Տե՛ս ED. VAN ROEY, Lettre du patriarche jacobite Serge, էջ 218–219։

⁸ Ծեսի եւ աստվածապաշտության մեջ սաղմոսների առանցքային դերին վերաբերող փաստաթղթերի համար տե՛ս TAYLOR, Psalm Commentary, էջ 68f.։

⁹ Տե՛ս անդ, էջ 70–71։

մեկնողական երկերի համար ազդեցիկ իր «Սաղմոսների մեկնություն» գրքում Դանիելն ամեն հնարավորության դեպքում քննադատում էր «հուլիանականների համոզմունքները»¹⁰։ Դանիելն իր աստվածաբանական հերքման մեջ շեշտը դնում էր ինչպես իր հայրենի ասորական ժառանգության, օրինակ՝ հագուստի փոխաբերությունների լայն կիրառմամբ, այնպես եւ հունական աստվածաբանական ավանդության, հատկապես՝ Սեւերիոս Անտիոքացու աշխատությունների վրա¹¹։ Դանիելը նաեւ մի նամակ էր գրել Մար Բասոսի վանքի վանականներին, որում մարտահրավեր էր նետում Հուլիանոսի եւ «երեւութականների» վարդապետություններին¹²։

Զ. դարավերջին ոչ միայն վանական առաջնորդները, այլ նաեւ Անտիոքի ասորի ուղղափառ պատրիարքները շարունակում էին մտահոգվել հուլիանականության խնդիրներով։ Պողոս Բեթ-Ուքամայեցի պատրիարքը (մահ. 581 թ.) սինոդական մի նամակ է հղում Թեոդորոսին (ասորի վանական, որն Ալեքսանդրիայի պատրիարք էր ընտրվել, սակայն համայնքը չէր ընդունել նրան, եւ շուտով ստիպված էր պաշտոնանկ լինել), որում նա ուրվագծում է ասորի ուղղափառ հավատքը եւ մանրամասնորեն հերքում հուլիանական աստվածաբանական դրույթները¹³։

Է. դարի հակահուլիանական գրվածքները

Ողջ է. դարում հուլիանականությունը, ըստ ամենայնի, դեռեւս լուրջ մարտահրավեր էր մեծամասնություն կազմող միաֆիզիտ Եկեղեցու համար, քանի որ շարունակում էին հրապարակվել հակահուլիանական աշխատություններ։ Ինչպես արդեն նշվեց, է. դարակեսին գահակալած Անտիոքի պատրիարք Հովհաննեսը (մահ. 648 թ.) հեղինակել է «Փաստմունք»-ը,

¹⁰ Տէս անդ, էջ 75։ Սաղմոս 83-ի իր մեկնության մեջ Դանիելը նշում է, որ այդ տարին Ք. հ. 541/2 թվականն էր. տես D. G. K. TAYLOR, The Christology of the Syriac Psalm Commentary (AD 541/2) of Daniel of Şalah and the Phantasiast controversy, in: Studia Patristica XXXV: Զեկույցները ներկայացվել են Օքսֆորդում 1999 թ. կայացած հայրաբանության 13-րդ միջազգային գագաթնաժողովում (Louvain, 2001, էջ 508—515). այստեղ՝ էջ 509։

¹¹ Տէս TAYLOR, Christology..., էջ 510—513։

¹² Տէս MICHAEL THE SYRIAN, Chronicle IX 34, ed. Ibrahim, 3296, 8—12 (Chabot 326), transl. Chabot, vol. 2, էջ 273։

¹³ Սինդի նամակը խմբագրել է Ժան Բապտիստ Շաբոն՝ լատիներեն թարգմանության օգնությամբ (J. B. CHABOT, Documenta ad origines monophysitarum illustrandas, CSCO 17, 103 / Syr. 17, 52, Louvain, 1952, էջ 308—334, esp. էջ 328—334 (բնագ.), էջ 215—233 (թարգմ.)։ Պողոս Բեթ-Ուքամացու մասին տես L. VAN ROMPAY, Pawlos of Beth Ucome, "Gorgias Encyclopedic Dictionary of the Syriac Heritage", էջ 322f.։

որում նա շեշտադրում էր Քրիստոսի շարժարանքների իրողությունը եւ հերքում Հուլիանոսի վարդապետությունը: Որպես իր բացատրության հիմնավորում՝ Հովհաննեսը դրան կցեց ծաղկաքաղը, ինչպես տեսանք, քննադատելով հուլիանական եպիսկոպոսներին եւ համարելով նրանց օծումն անվավեր, քանի որ մահացած մարդու ձեռքով էին ձեռնադրվել¹⁴: Լոնդոնյան ձեռագրում (BL add. 12.155), որն ընդգրկում է Հովհաննեսի աշխատության մի կարճ հատված, պահպանվել են հուլիանականների դեմ գրված գլուխները, որոնք հերքում են հարց ու պատասխանի ձևով՝ հավանաբար նույնպես գրված է. դարում¹⁵: Դեռ ավելին՝ հուլիանականների դեմ գրված մի քանի երկարաշունչ ծաղկաքաղեր՝ կազմված է. դարի առաջին կեսին, պահպանվել են Բրիտանական գրադարանի ձեռագրերի ժողովածուում¹⁶: Ը. կամ Թ. դարերով թվագրված ձեռագրերն արտացոլում են միաֆիզիտների շարունակական մտահոգությունն այս խնդրի շուրջ: Թ. դարում Դարայի Հովհաննես եպիսկոպոսը խստորեն հերքում էր հուլիանական վարդապետությունն իր «Լնդդեմ հերետիկոսների» գրվածքում, ինչից երևում է, թե որքան արմատացած ու տարածված էր Հուլիանոսի վարդապետությունը՝ Հյուսիսային Միջագետքում¹⁷:

Հաշտության անհաջող փորձ Ը. դարում

Թեեւ նրա վարդապետությունը շարունակաբար աստվածաբանական քննադատության էր ենթարկվում, սակայն հուլիանական Եկեղեցին

¹⁴ «Փաստմունք»-ը պահպանվում է BL Add. 14.629, fol. 5v-24r. տե՛ս R. WRIGHT, Catalogue, vol. 2, 754–756, ինչպես նաեւ Դրագվեի քննարկումը՝ R. DRAGUET, Julien d'Halicarnasse, էջ 82f: Մի հատված կարելի է գտնել նաեւ BL Add. 12.155, fol. 133r-134r. տե՛ս R. WRIGHT, Catalogue, vol. 2, էջ 942:

¹⁵ Տե՛ս R. WRIGHT, Catalogue, vol. 2, 947f. նաեւ՝ R. DRAGUET, Julien d'Halicarnasse, էջ 85–86: Երկխոսությունը խմբագրել է Դրագվեն՝ լատիներեն թարգմանության օգնությամբ. R. DRAGUET, Pièces de polémique antijulianiste, «Muséon» 44 (1931), էջ 255–317, այստեղ՝ էջ 271–292, 303–317:

¹⁶ Տե՛ս R. DRAGUET, Julien d'Halicarnasse, էջ 83–85. Ծաղկաքաղը պահպանվել է չորս օրինակով՝ Բրիտանական գրադարանում: Ամենամբողջական օրինակը հետեւյալն է՝ BL in Add. 14.532, մյուսները՝ in Add. 14.538, Add. 14.533 եւ Add. 12.155, նաեւ BL Add. 14.529, R. WRIGHT, Catalogue, vol. 2, էջ 918: Քննարկումը Դրագվեի երկում՝ R. DRAGUET, Julien d'Halicarnasse, էջ 83–88:

¹⁷ Տե՛ս JOHN OF DARA, Treatise Against the Heretics, manuscript Mardin Orth. 356, fol. 45v-48r, cf. manuscript Birmingham Mingana Syr. 67, fol. 611–64v: Շնորհակալություն ենք հայտնում Դր. Ահո Շեմունկաշոյին (Ձալցբուրգի համալսարան) այս երկի համապատասխան հատվածի պատճենը տրամադրելու համար: Հովհաննես Դարացու մասին տե՛ս AHO SHEMUNKASHO, John of Dara and his References to Previous Authors, “Parole de l’Orient” 36 (2011), էջ 413–444:

համառորեն շարունակում էր իր գոյությունը: Ը. դարավերջին գահակալած ասորի ուղղափառ պատրիարք Կիրակոս Տագրիտացին (793–817 թթ.) նախանձախնդրորեն ցանկանում էր ծիսական բարեփոխումներ կատարել՝ փորձելով սահմանափակել «մենք բեկանում ենք երկնային հացը» արտահայտության կիրառումը պատարագի ժամանակ¹⁸ եւ ջանալով ճնշել հուլիանական հերձվածը, որն այնքան երկար ժամանակ պառակտում էր ոչ քաղկեդոնականներին¹⁹: Խնդիրը հրատապ էր դարձել, ուստի Կիրակոս պատրիարքը կանոնական օրենսդրության մեջ բազմիցս անդրադառնում էր դրան: Հարրանի շրջակայքում գտնվող Բեթ Բաթին գյուղում Կիրակոսի 794 թ. հրավիրած Սինոդի ժամանակ քահանաներին ու սարկավագներին նախազգուշացնում են չմկրտել նեստորականներին, քաղկեդոնականներին կամ հուլիանականներին²⁰: Ավելին՝ քահանաներին, սարկավագներին, աշխարհական տղամարդկանց ու կանանց կոչ էր արվում չայցելել հուլիանական (կամ նեստորական ու քաղկեդոնական) եկեղեցիներ կամ վանքեր, ընծաներ չմատուցել նրանց եւ ոչ էլ նրանց եկեղեցիներից որեւէ մեկում հաղորդություն ստանալ²¹: Ըստ ամենայնի՝ սեւերիոսականների եւ հուլիանականների սահմանները դեռ բավականին հեղհեղուկ էին, եւ Կիրակոսն իր բարեփոխական նախանձախնդրությամբ ցանկանում էր դադարեցնել միջդավանական ցանկացած շփում:

¹⁸ Այս հակասության մասին տե՛ս J.—M. SAUGET, Vestiges d'une célébration gréco-syriaque de l'Anaphore de Saint Jacques, in: After Chalcedon: Studies in Theology and Church History of fered to Professor Albert Van Roey for his Seventieth Birthday, ed. Carl Laga, Joseph A. Munitiz, and Lucas van Rompay, OLA 18, Louvain, 1985, էջ 309–345: Սոժեն ուսումնասիրում է այն ծիսական ձեռագրերը, որոնցում առկա է «երկնային հացի» (panem caelestem) բանաձեւը: Այս հակասության մեջ Կիրակոսի ներգրավվածության մասին տե՛ս M. OEZ, Cyriacus of Tagrit and his Book on Divine Providence, 2 vols., Piscataway, 2012, vol. 1, էջ 42–47: Ծիսական բանաձեւի աստվածաբանական առարկությունները, որոնք ակնհայտորեն ավելի քիչ են կենտրոնանում «երկնային հաց» արտահայտության վրա, քան այն փաստի, որ այն ուղեկցվում է առ Սուրբ Երրորդությունը մաղթանքով, շարադրված են Կիրակոսի նախորդի Գեոորգի ուղարկած նամակում (տե՛ս MICHAEL THE SYRIAN, Chronicle XII 2, ed. Ibrahim, էջ 483–485 (Chabot, 480–482), transl. Chabot, vol. 3, 5–8; text and English transl. in Oez, Cyriacus, vol. 2, էջ 478–487: Կիրակոս պատրիարքն այս հարցը քննարկում է «Աստվածային նախախնամության մասին» իր գրքում, 26, ed. Oez, Cyriacus, vol. 2, էջ 376–383:

¹⁹ Կիրակոսի մասին տե՛ս W. WITAKOWSKI, Quryaqos, “Gorgias Encyclopedic Dictionary of the Syriac Heritage”, էջ 347f.: Նրա կյանքի ու աստվածաբանության մասին ընդարձակ քննարկումը տե՛ս OEZ, Cyriacus, vol. 1, էջ 3–67: Կիրակոսի հուշագրի մասին տե՛ս A. VÖÖBUS, Die Entdeckung der Mēmrē des Qyriaqos von Antiochien, “Ostkirchliche Studien” 25 (1976), էջ 193–195:

²⁰ Տե՛ս “Synod of Cyriacus”, November 794 AD, can. 9, edit. with English transl. ARTHUR VÖÖBUS, The Synodicon in the West Syrian Tradition II, CSCO 375–376 / Syr. 163–164, Louvain, 1976, 10.2–5 (text), 12 (transl.):

²¹ Անդ, can. 14, ed. VÖÖBUS, Synodicon II, 10.23–28 (text), 12 (transl.):

Ը. դարավերջին հյուսիսային Միջագետքի հուլիանականները նույնիսկ իրենց համար պատրիարք էին ընտրել: Հուլիանական պատրիարք Գաբրիելը Գաբուլայի Մար Իսահակ վանքից էր, որն ակնհայտորեն շարունակում էր մնալ շարժման հենակետը: Անտիոքի միաֆիզիտ պատրիարք Կիրակոսը, որն առնչություն ուներ Կալլինիկոսի մերձակայքում գտնվող էստոնայի («Սյուն») վանքի հետ, այժմ հրաժարվեց նախկինում հնչեցրած իր դատապարտություններից եւ ցանկացավ միանալ հուլիանականներին: Այդ նպատակով երկու պատրիարքները, նրանց եպիսկոպոսները եւ «ողջ հոտը» հավաքվեցին Քենեշրինի մոտակայքում գտնվող Նաֆշաթայի վանքում («Հոգիների վանք») եւ 798 թ. համաձայնության եկան հավատքի խոստովանության շուրջ, որի բնագիրը պահպանվել է Բրիտանական գրադարանի ձեռագրում²²: Այն սկսվում է Սուրբ Երրորդության աստվածության խոստովանությամբ, այնուհետեւ անցնում է Բանն Աստծու մասին ընդհանուր հավատքի ձեւակերպմանը՝ շեշտելով մարդեղության փաստը եւ այն, որ Քրիստոս կամավոր կրեց «բնական կրքերը», ինչպիսիք են՝ սովը, ծարավը, տխրությունը եւ խաչի չարարանքը: Ապականելիության հարցը խելացիորեն շրջանցվում է. հավատի խոստովանությունը շեշտում է, որ Քրիստոս մեզ ազատեց ապականությունից²³: Բանն Աստված նկարագրվում է որպես «անտեսանելի եւ տեսանելի, անիմանալի եւ իմանալի, մահկանացու եւ անմահ, անշարժարելի եւ շարժարելի, ապականելի եւ անապական»²⁴: Հավատի խոստովանությունն ավարտվում է ստորագրողների ցուցակով²⁵.

- Կիրակոս պատրիարք՝ Աստծու շնորհով,
- Գաբրիել պատրիարք՝ Աստծու շնորհով,
- Թովմաս՝ Ամիդայի մետրոպոլիտ,
- Թեոդոսիոս՝ Կալլինիկոսի թեմի եպիսկոպոս,
- Գեւորգ՝ Քենեշրինի եպիսկոպոս,

²² S^{én} BL add. 17.145, fol. 27v-28v: Որպես միության ճշգրիտ թվական՝ նշվում է 1109-ի սեպտեմբերի 7-ը, քանի որ սելեւկյան օրացույցն սկսվում է 312 թ. հոկտեմբերի 1-ից, ուստի այս ամսաթիվը համապատասխանում է Ք. հ. 798 թ. սեպտեմբերի 7-ին: Հավատի խոստովանությունը խմբագրել է Ռենե Դրագուեն՝ ֆրանսերեն թարգմանության օգնությամբ (տե՛ս R. DRAGUET, Le pacte d'union de 797 entre les jacobites et les julianistes du patriarcat d'Antioche, "Muséon" 54 (1941), էջ 91–106, այստեղ՝ էջ 102–106: Այն նաեւ խմբագրվել է անգլերեն թարգմանության օգնությամբ՝ O.E.Z., Cyriacus, vol. 2, էջ 454–459:

²³ Հավատի խոստովանության քննության մասին տե՛ս R. DRAGUET, Le pacte d'union, էջ 91–101:

²⁴ S^{én} Ed. R. DRAGUET, Le pacte d'union, էջ 103.1–3:

²⁵ S^{én} անդ, էջ 104:

- Կոստանդին՝ Քենեշրինի թեմի եպիսկոպոս,
- Հովհաննես՝ Հարրանի եպիսկոպոս,
- Հովհաննես՝ Հալեպի եպիսկոպոս,
- Թեոդոսիոս՝ Սելեւկիայի եպիսկոպոս,
- Հովսեփ՝ Հարրանի թեմից,
- Հաբիբ՝ Ապամեայի մետրոպոլիտ:

Քենեշրինի երկու եպիսկոպոսների, ինչպես նաև Հարրանից մի եպիսկոպոսի եւ մեկ այլ ներկայացուցչի (ենթադրաբար նույնպես եպիսկոպոս) ստորագրությունները թույլ են տալիս ենթադրել, որ այս շրջաններն ունեցել են եւ հուլիանական, եւ սեւերիոսական եպիսկոպոսներ, սակայն թեմերը տարբերվում էին նաև այլ պատճառներով²⁶:

813 թվականի, ինչպես նաև Միքայել Մեծի ժամանակագրությունները պատմում են, որ երկու պատրիարքները պայմանավորվել էին գահակալել այնքան ժամանակ, մինչև նրանցից մեկը մահանար, այդ ժամանակ մյուսը պետք է ճանաչվեր հակաքաղկեդոնական բոլոր հավատացյալների կողմից: Միություն հաստատումը նշանավորվեց Հարրանում համատեղ պատարագի մատուցմամբ²⁷: Չնայած պատրիարքների բարի կամքին՝ միությունը, ի վերջո, խարխվեց: Սեւերիոսական եպիսկոպոսներից մի քանիսը, որոնցից ոմանք այլ պատճառներով արդեն ընդգրկմանում էին Կիրակոսին, կատաղորեն հարձակվեցին իրենց պատրիարքի վրա եւ նրան նույնիսկ մեղադրեցին հուլիանականության մեջ²⁸: Նրանք անիրատեսական պահանջներ էին ներկայացնում, որոնց հուլիանականները չէին կարող տեղի տալ²⁹: Ավելին՝

²⁶ Օրինակ՝ եղեսացիներն Ը. դարավերջին հրաժարվեցին Զաքարիային իրենց եպիսկոպոս ճանաչելուց: Կիրակոս պատրիարքն աշխատում էր փոխզիջման լուծում գտնել եւ Զաքարիային թեմի մի քանի հեռավոր շրջան տվեց, իսկ եղեսացիները մեկ այլ եպիսկոպոս ունեցան, որին նրանք ընդունում էին. տե՛ս A. PALMER, Monk and Mason on the Tigris Frontier. The Early History of Tur Abdin, Cambridge, 1990, էջ 180f: Դրագվեն քննում է՝ արդյո՞ք Հավատի խոստովանությունը ստորագրողների մեջ Քենեշրինի եպիսկոպոսներից մեկը կարող էր քորեպիսկոպոս լինել, բայց, ի վերջո, եզրակացնում է, որ ամենայն հավանականությամբ նրանք համապատասխանաբար սեւերիոսական եւ հուլիանական նվիրապետության ներկայացուցիչներ էին (տե՛ս R. DRAGUET, Le pacte d'union, էջ 94–96):

²⁷ Տե՛ս “Chronicle of 813”, edit. with Latin transl. E. W. Brooks, “Chronica minora III”, CSCO 5–6 / Syr. 5–6, Louvain, 1905–1907, 251.20–252.12 (text), 190–191 (transl.). English transl. of this chronicle in E. W. Brooks, “A Syriac Fragment”, ZDMG 54 (1900), էջ 195–230. MICHAEL THE SYRIAN, Chronicle XII 4, ed. Ibrahim, 488c, 1–30 (Chabot 485), transl. Chabot, vol. 3, էջ 13–14:

²⁸ Տե՛ս “Chronicle of 813”, ed. Brooks, 252.15–21:

²⁹ Տե՛ս անդ, 252.21–253.22:

ծիսական բարեփոխումների հարցը խառնվեց այս հակասությանը, եւ Կիրակոսի ու Գաբրիելի գումարած Բ. Սինոդը նույնիսկ չկարողացավ փրկել միությունը³⁰։ Միաֆիզիտ Եկեղեցու մեջ պառակտումը շարունակվեց, եւ Կիրակոսը դատապարտեց «երեւութականների» վարդապետությունը 799 թ. Ալեքսանդրիայի պատրիարքին ուղղված սինոդական նամակում³¹։

Եզրակացություն

Սեւերիոս Անտիոքացու եւ Հուլիանոս Հալիկաոնասցու աստվածաբանական վեճը դավանաբանական պատմության սոսկ մի դրվագ չէր, այլ հանգեցրեց միաֆիզիտ Եկեղեցու խոր ու երկարատեւ պառակտման։ Առանձին ճգնափորներ, վանահայրեր եւ վանական ամբողջական համայնքներ արագորեն ընդունեցին Հուլիանոսի վարդապետությունը՝ ենթադրաբար այն պատճառով, որ այն խորապես համահունչ էր նրանց հոգեւոր վիճակին ու նվիրումին։ Մոտավորապես նույն ժամանակ սեւերիոսականներն ու հուլիանականներն սկսեցին ոչ քաղկեդոնական նոր նվիրապետություն ունենալ։ Սեւերիոսական միաֆիզիտները մեծ ջանքեր գործադրեցին՝ Հուլիանոսի աստվածաբանական դրույթները հերքելու եւ հուլիանականներին իրենց հոտ վերադարձնելու համար. հիշենք Հովհաննես Թելլացու նամակները վանահայրերին ու վանականներին, եկեղեցական կանոնները, Դանիել Շալահացու՝ «Սաղմոսների մեկնություն»-ը, Հովհաննես պատրիարքի աստվածաբանական հերքումը եւ մի անանուն ծաղկաքաղ, սակայն նրանց քարոզչությունը, ի վերջո, ձախողվեց՝ չկարողանալով արմատախիլ անել հուլիանական համոզմունքները։ Երբ հնարավոր էր հաշտություն ձեռք բերել Կիրակոսի գահակալության ընթացքում, եպիսկոպոսների միջեւ անձնական մրցակցությունը, ինչպես նաեւ վիճելի այլ հարցեր ձախողեցին նաեւ այս ջանքերը։ Թերեւս բաժանումները դեռ շատ խորն էին՝ սոսկ հայրապետական մի հրամանագրով հաղթահարելու համար. այդպիսով՝ հուլիանականները

³⁰ Բ. Սինոդի մասին խոսվում է Միքայել Ասորու երկում. MICHAEL THE SYRIAN, Chronicle XII 4, ed. Ibrahim, էջ 488—489 (Chabot 485—486), transl. Chabot, vol. 3, էջ 14f.։

³¹ Արաբերեն բնագիրը եւ ֆրանսերեն թարգմանությունը տես H. TEULE, La lettre synodale de Cyriaque, patriarche monophysite d'Antioche (793—817), OLP 9 (1978), էջ 121—140։

շարունակեցին գոյատևել ասորական վերածննդի ժամանակաշրջանում՝ ԺԲ. դարում³²։

Ցանկանում ենք մեր երախտագիտությունը հայտնել դոկտոր Թերեզիա Հայնթհալերին (Philosophisch-Theologische Hochschule Sankt Georgen) եւ դոկտոր Լուկաս վան Ռոմպային (Դյուսելդորֆի համալսարան)՝ այս հոգևածի ավելի վաղ տարբերակի վերաբերյալ օգտակար մեկնաբանություններ եւ մատենագիտական արժեքավոր տեղեկություններ տրամադրելու համար։

Թարգմանությունն անգլերենից՝
ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ



³² Ամիրդայի եպիսկոպոս Դիոնիսիոս բար Սալիբին բազմիցս վիճարկել է հուլիանական վարդապետությունը, հատկապես իր «Ճառ ընդեմ հայերի» գրվածքում։ Հնարավոր է՝ հուլիանական վարդապետությունը դեռեւս հայտնի էր իր թեմում. տե՛ս DIONYSIUS BAR ŞALIBI, Against the Armenians, edit. with English transl. Alphonse Mingana, “The Work of Dionysius Barşalibi Against the Armenians”, Woodbrooke Studies 4, Cambridge, 1931, էջ 8–14, 64 (թարգմ.)։

ԿԱՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ ՂԱՐԻԲՅԱՆ
Միաբան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

ՍՈՍՉԱՏԿԻ ԴԱՊԹԱՎԱՐՍԱՆ ՓՈՐՁԵՐԸ ԺԹ. ԴԱՐՈՒՄ

Մաղաքիա արք. Օրմանյանն իրավացիորեն նկատել է, որ վերջին ծագատիկները (1539 թ., 1634 թ., 1729 թ.) բախումներ էին առաջացնում միայն Երուսաղեմում եւ հազվադեպ՝ Կ. Պոլսում¹: Այդ խնդիրներն ուղղակիորեն առնչվում էին Ս. Հարություն ճրագալույցի օրը կատարվող լուսահանություն կարգին եւ այնքան էին սրում Հայ Եկեղեցու հարաբերությունները Բյուզանդական եւ Կաթոլիկ Եկեղեցիների հետ, որ խնդրի լուծմանը ստիպված էին լինում միջամտել տեղի թուրքական իշխանությունները: Վերջին երկու ծագատիկների պատմության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ մեր պատրիարքների խորագիտության շնորհիվ, բախումները կանխելու նպատակով, մինչ ծագատիկը բանակցություններ էին սկսվում Հույն Եկեղեցու առաջնորդների հետ: Խնդրի վերջնական լուծման համար կողմերից մեկը պիտի զիջեր: Այս տեսակետից ուշագրավ է ծագատիկի առնչությամբ Երուսաղեմի հայոց պատրիարք Գրիգոր Շղթայակրի պատասխանը հույն եկեղեցականներին. «Գիտեմ, զի ազգ ճոխ եւ փառքամ է՛մ դուք եւ աւագագոյն քան զմեզ, եւ անհմարին է զիջանել ձեզ եւ տօնել զՋատիկն ձեր ընդ մեզ: Նոյնպէս եւ մեք, թէպէտ եւ աղփատ եւ նուաստ, այլ անկարելի է մեզ փոխել զսահմանս հարց մերոց, եւ արկանել երկպառակութիւն եւ խռովութիւն ի մէջ ժողովրդոց»²: Ինչպես Գրիգոր Շղթայակրի պատրիարքը, այնպես եւ մեր Եկեղեցու հետագա առաջնորդները քաջ գիտակցում էին, որ այս հարցում անհնար է ակնկալել Հույն Եկեղեցու որեւէ զիջում: Մյուս կողմից՝ թուրքական իշխանությունները չէին կարող համակերպվել իրենց համար որեւէ նշանակություն չունեցող հարցի պատճառով որոշակի պարբերությամբ տեղի ունեցող բախումների ու խառնաշփոթի հետ:

¹ Տե՛ս ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆՅԱՆ, Ազգապատում. Հայ Ուղղափառ Եկեղեցու անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը, յարակից ազգային պարագաներով պատմուած, Ս. Էջմիածին, 2001, հտ. Գ., էջ 2827:

² ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԵՊՍ. ՏԵՐ-ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆՅ, Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, Երուսաղէմ, հտ. Բ., 1890, էջ 16—17:

Ինչպես գիտենք, ծռազատիկը տեղի էր ունենում որոշակի հստակ պարբերությամբ, հետեւաբար՝ խնդրի ժամանակը պարզելը դժվար էր: 1729 թ. հետո հաջորդ ծռազատիկը պետք է լիներ 1824 թվականին: Այս անգամ որոշվում է խնդիրը վերջնականապես լուծել:

1824 թ. ծռազատիկի հաղթահարման մասին խոսել են մի շարք հեղինակներ: Հարցին առաջինն անդրադարձել է Մաղաքիա արք. Օրմանյանը: Վերջինս նշում է. «Կատարեալ յիշատակներ կը պակասին, թէ ով եղաւ առաջին միտք արթնացնողը, ինչպէս կազմուեցաւ ազգային համամտութիւնը, ինչ կերպով համաձայնեցան բոլոր արժողութիւնները»³: Մաղաքիա արք. Օրմանյանը նաեւ հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում. նա իրավացիորեն նշում է, որ ծռազատիկի հետ կապված բանակցություններն սկսվում են նախօրոք, սակայն նախաձեռնությունների սկզբնական թվական չի նշում, միայն գրում է. «...ամեն ոք գրաւուած էր նոր շփոթներու երկիւղէն»⁴: Վերոբերյալից կարող ենք եզրակացնել, որ, ըստ Մաղաքիա արք. Օրմանյանի, բանակցություններն սկսվում են 1824 թ. ոչ շատ շուտ, եւ նոր բախումների մոտալուտ վտանգը բոլորի ուշադրությունը կենտրոնացրել էր այս հարցի վրա: Նա նշում է, որ խնդրի հետ կապված ուսումնասիրություններ են կատարվել Երուսաղեմում, Կ. Պոլսում եւ Ս. Էջմիածնում. «...Պոլսոյ մէջ տոմարական հետազոտութիւնները յանձնուեցան Գեորգ Միւհէնտխեսանի, որ իր ժամանակին ամենայն հմուտ չափագէտն ու տոմարագէտն էր»⁵: Երուսաղեմում եւ Ս. Էջմիածնում կատարված ուսումնասիրությունների հեղինակների վերաբերյալ Մաղաքիա արք. Օրմանյանը տեղեկություններ չի հաղորդում: Նրա կարծիքով՝ չնայած ծռազատիկի հետ կապված շփոթությունների կենտրոնը Երուսաղեմն էր, սակայն այս անգամ խնդրով առավել հետաքրքրված էր Մայր Աթոռը. «Գայթակղութիւնը մեծ պիտի ըլլար, եթէ ռուսներուն դիմող եւ ապաւինող հայերը տարբեր օրով Զատիկ տօնէին»⁶: Հետեւաբար, ըստ նրա, բանակցություններ սկսվում են Հայ եւ Ռուս Եկեղեցիների միջեւ ու ձեռք բերված համաձայնության շնորհիվ. «1824 թ. յունուարի 26-ին Առաջատուաց Բարեկենդան հաշուեցաւ փոխանակ փետրուար 2-ին թողլու, եւ ապրիլ 6-ին ալ Զատիկ տօնուեցաւ յունաց եւ ռուսաց հետ... Անկէ ետքը տոմարական ցուցակներն ալ հինգհարիւրեակի

³ ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆՅԱՆ, Ազգապատում, հտ. Գ., էջ 4117:

⁴ Անդ, էջ 4116:

⁵ Անդ:

⁶ Անդ, էջ 4117:

շրջանին չորս ծոազատիկի տաճիներուն Շ. տաճգիրը Հ. տաճգիրի փոխեցին, եւ այլեւ ծոազատիկի անունն իսկ մոռացութեան մատնուեցաւ»⁷: Նկատելի է, որ Մաղաքիա արք. Օրմանյանը հայերի այս զգուշավորութեան մեջ տեսնում է ներսես Աշտարակեցու անմիջական մասնակցութիւնը⁸: Հետագա ուսումնասիրողների մեծ մասն այս խնդրին անդրադառնալիս հիմնականում ուղղակիորեն մեջ են բերում Մաղաքիա արք. Օրմանյանի հաղորդած տեղեկութիւնները⁹: Վերջինիս են հղում նաեւ սույն խնդիրը վերլուծող ռուս հեղինակները¹⁰:

Հարցին անդրադարձած մյուս հեղինակը Զգոն եպս. Տեր-Հակոբյանն է: Սրբազան հայրը, իր «Զատիկի հարցը» գրքում խոսելով 1824 թ. ծոազատիկի խնդրի լուծման մասին, հղում է Մաղաքիա արք. Օրմանյանին, սակայն տալիս է նաեւ լրացուցիչ տեղեկութիւններ: Ըստ նրա՝ ծոազատիկի հետ կապված քննարկումներն սկսվում են Կ. Պոլսում 1820 թվականին: Կ. Պոլսի հայոց պատրիարք Պողոս արքեպիսկոպոսը, Եփրեմ Ա. Զորագեղցու (1809—1830 թթ.) հավանությամբ, բանակցութիւններ է սկսում հունաց տիեզերական պատրիարքի հետ: Երկու կողմերի համաձայնությամբ ստեղծվում է մասնագիտական հանձնաժողով, որտեղ հայերի ներկայացուցիչը ժամանակի հմուտ տոմարագետ Մյուհենտիս Գեւորգն էր¹¹: Յավոք, Զգոն եպիսկոպոսն այս տեղեկութիւնների առնչությամբ որեւէ աղբյուր չի նշում:

Ծոազատիկի խնդրին անրադարձել է նաեւ Գեւորգ արք. Սերայդարյանը: Հեղինակը 1824 թ. խնդրի լուծումը կապում է Հայ եւ Ռուս Եկեղեցիների միջեւ տեղի ունեցած ժողովի հետ: Ըստ նրա՝ 1824 թ. երկու կողմերի համաձայնությամբ ժողով է գումարվում, որի ժամանակ որոշվում է Շ. տաճգիրը փոխել Հ.-ով եւ ընդմիջտ լուծել ծոազատիկի խնդիրը¹²: Գեւորգ սրբազանը եւս իր տեղեկութիւնների համար որեւէ աղբյուր չի նշում:

⁷ Անդ:

⁸ Տէս անդ:

⁹ Տէս Զ. ԷՅՆԱԹՅԱՆ, *Զատիկ եւ ծոազատիկ (3) Ժէ. դարի տոմարագետ Ավիկի «Սակս ծոազատիկին» մեկնությունը, «Բանբեր Մատենադարանի», 2018, թ. 25, էջ 381—382. ՄԱՐԳԱՐ ՍՐԿ. ՏԵՐՏԵՐՅԱՆ, Ծոազատիկի առաջացման պատճառները եւ նրա արձագանքները հայ մատենագրության մեջ, ավարտաճառ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Գեւորգյան հոգեւոր ճեմարան, 1986, էջ 36 (անտիպ):*

¹⁰ Տէս Ս. ԿՅԵՆԿՈՎ, Կ. ՓԱՆԿԵՆԿՈ, «Кривые Пасхи» и благодатный огонь в исторической ретроспективе, «Вести Московского Университета», Сер. 13, Востоковедение, 2006, №4, էջ 22:

¹¹ Տէս ԶԳՈՆ ԵՊՍ. ՏԵՐ-ՅԱԿՈԲՅԱՆ, *Զատիկի հարցը, Պէյրուս, 1971, էջ 40:*

¹² Տէս ԳԵՒՈՐԳ ԱՐՔ. ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆ, *Եկեղեցական տոմարագիտություն, Ս. Էջմիածին, 2004, էջ 99:*

ինչպես տեսանք, վերոնշյալ հեղինակները, հակառակ որոշակի տարբերությունների, ծոազատկի խնդրի լուծումը կապում են Հայ եւ Ռուս Եկեղեցիների միջեւ տեղի ունեցած քննարկումների հետ:

Նշյալ հեղինակներն իրենց տեսակետների համար որեւէ սկզբնաղբյուր չեն հղում, եւ, ինչպես Մաղաքիա արք. Օրմանյանն է նկատում, այս հարցի հետ կապված «կատարեալ յիշատակներ կը պակասին»¹³, ուստի անհրաժեշտություն առաջացավ խնդիրն ուսումնասիրել ըստ աղբյուրների:

Մեր ուսումնասիրության արդյունքում կաթողիկոսական դիվանում գտանք Ռուսաստանի թեմի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսի՝ 1823 թ. օգոստոսի 11-ին Ներսես Աշտարակեցուն ուղղված նամակը. սրբազան հայրը տեղեկացնում է հայոց հայրապետին, որ ինքը եւ Բեսարաբիայի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսը համաձայն են մոտակա ծոազատիկը կանխելու նպատակով առաջարկվող փոփոխությանը եւ խնդրում են հետագա տարաձայնություններից խուսափելու համար ժողովով կամ կաթողիկոսական հրամանով հաստատել այն¹⁴: Սա Ռուսաստանի առաջնորդի առաջին նամակն է ծոազատկի խնդրի հետ կապված՝ ուղղված Ներսես Աշտարակեցուն: Նամակի բովանդակությունից պարզ է դառնում, որ առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսը մասնակից չի եղել ծոազատկի առնչությամբ նախօրոք՝ 1820 թ. սկսված բանակցություններին եւ միայն 1823 թ. օգոստոսի 11-ին, երբ արդեն կար որոշակի առաջարկ խնդրի հետ կապված, արտահայտել է իր դիրքորոշումը¹⁵:

Այժմ փորձենք արխիվային նյութերի, պատմագրական ուղղակի եւ անուղղակի վկայությունների օգնությամբ պարզել խնդրի հանգամանքները: Արդեն նշել ենք, որ նախորդ ծոազատիկների պարագայում խնդրից առաջ Երուսաղեմի հայոց պատրիարքները որոշակի քայլեր էին ձեռնարկում սպասվող տարաձայնությունները կանխելու նպատակով: Հետեւաբար՝ կարելու էնք համարում ներկայացնել 1824 թ. առաջ Երուսաղեմում տեղի ունեցած որոշ իրադարձություններ:

Հնդհանուր առմամբ Երուսաղեմի հայոց պատրիարքարանի պատմության մեջ բազմաթիվ են Հուլյն եւ Կաթոլիկ Եկեղեցիների հետ բախումների դրվագները: 1806 թ. Երուսաղեմի հուլյն պատրիարքը՝ Անթիմոսը, փորձում է տիրանալ Հայոց պատրիարքարանի ունեցվածքին: Խնդիրը

¹³ ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆՅԱՆ, Ազգապատում, հտ. Գ., էջ 4117:

¹⁴ Տէս ՄՄ, Կաթողիկոսական դիւան, թղթ. 45, վաւ. 47:

¹⁵ Տէս անդ:

նոր չէր. հույներն իրենց բաղձալի նպատակն իրականացնելու համար մշտապես առիթ էին փնտրում¹⁶: Նախորդ փորձի ժամանակ նրանք սուլթան Սելիմ Բ.-ից խաբեություն մը հրովարտակ էին ստացել հայերի դեմ, որում ասվում էր. «...Հայք տիրել կամեցեալ են տեղեաց եւ ժառանգութեանց նոցին»¹⁷: Այս հրովարտակի օգնությամբ նրանք փորձում էին վիճարկել հայերի իրավունքներն ու տիրանալ նրանց վանքերին: Նախորդ դեպքում սուլն հրովարտակը չհանգեցրեց սպասված արդյունքի, եւ այժմ խնդիրը կրկին շահարկելու փորձ էր արվում: Սակայն Թուրքական կայսրությունում սկսված քաղաքական խնդիրների պատճառով այս հարցը երկրորդ տեղ մղվեց, եւ հայերը շարունակեցին տնօրինել իրենց կավածքները¹⁸:

Հաջորդ իրադարձությունները, որոնց ցանկանում ենք անդրադառնալ, 1808 թ. սեպտեմբերի 30-ի գիշերը Սուրբ Հարություն տաճարում բռնկված հրդեհը եւ դրան հաջորդած դեպքերն են: Ի սկզբանե հրդեհը բռնկվում է «վերնատունն Հայոց ի տանաթին Ս. Յարութեան... անտի ձգեցաւ բոցն ի Գողգոթայ եւ ի տանաթն Յունաց»¹⁹: Դեպքը քննելու նպատակով առաւոտյան հավաքվում են «...մեծամեծք ալյազգեաց, քաղաքապետն, եկեղեցիի Աղասին, Միսթին եւ այլք, եւ բազմութիւն մեծ խառն յամենայն ազգաց...»²⁰: Հույները, օգտվելով այն առիթից, որ հրդեհը հայկական հատվածում է սկսվել, հանիրավի մեղադրում են հայերին ու կրկին փորձում տիրանալ նրանց ունեցվածքին՝ այդ նպատակի իրագործման համար իրենց կողմը գրավելով լատիններին եւ տեղացիներին: Սակայն կատարված քննության ընթացքում, օտարազգի պահապանների վկայությամբ, հույների մեղադրանքները հերքվում են: Շուտով Կ. Պոլսից ստացվում է դատավորի որոշումը, որտեղ Հայ, Հույն եւ Լատին Եկեղեցիներին հրահանգվում էր՝ «...կամ ի միասին եւ կամ իւրաքանչիւր ազգ շինել զբաժին տեղիս իւրեանց»²¹: Սակայն հույները չենթարկվեցին հրամանին. նրանք ցանկանում էին միայնակ վերանորոգել տաճարը, որպեսզի կառողանային այնտեղից դուրս վճռել հայերին: Հույները, առանց հայերի

¹⁶ Տէս ԱՍՏՈՒԽԱՍՏՈՒՐ ԵՊՍ. Տէր-ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆՑ, Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, հտ. Բ., էջ 149–150:

¹⁷ Տէս անդ, էջ 149:

¹⁸ Տէս անդ, էջ 162–163:

¹⁹ Անդ, էջ 160:

²⁰ Անդ, էջ 169:

²¹ Անդ, էջ 171:

իմացություն, Յոուսուֆ փաշայից ստացան գաղտնի հրովարտակ, որով նրանց իրավունք էր վերապահվում միայնակ վերակառուցել հրդեհված տաճարը: Հույները նույնիսկ դիմեցին կայսերը, որ նա հայերի մայրավանք Սուրբ Հակոբը նույնպես հանձնի իրենց²²: Սակայն Մահմուդ սուլթանն անմիջապես հավանություն չտվեց հույների աղերսագրին: Հայերը, տեղեկանալով հույների ձեռնարկումների մասին, իրենց ունեցվածքը պաշտպանելու նպատակով, փորձեցին հրովարտակներ ստանալ: Հարցը հանձնվեց հատուկ դատարանի քննությանը: Շուրջ հինգ տարի տեւած վեճերից հետո հայերին հաջողվեց վերականգնել նախկին կարգավիճակը եւ վերանորոգել Սուրբ Հարություն տաճարի հայկական հատվածը²³:

Այս համառոտ անդրադարձից պարզ է դառնում, որ ԺԹ. դարի առաջին տասնամյակին Երուսաղեմի հայոց պատրիարքարանում իրավիճակը խիստ լարված էր: Մշտական բախումներն ու տարաձայնությունները Հույն եւ Կաթոլիկ Եկեղեցիների հետ չէին դադարում եւ ամեն առիթով բորբոքվում էին նոր թափով. թուրքական իշխանությունները հաճախ ստիպված էին լինում միջամտել: Այս ամենի շարակարգում սպասվող ծռազատիկն անխուսափելի էր դարձնելու հերթական բախումը: Հետեւաբար՝ տրամաբանական կլիներ, որ Երուսաղեմի հայոց պատրիարքը եւ բարձրաստիճան մյուս հոգեւորականները, հաշվի առնելով նաեւ իրենց նախորդների փորձը, վաղաժամ քննարկումներ սկսեին՝ ծռազատիկի խնդրին որեւէ լուծում տալու նպատակով:

Ցավոք, հնարավորություն չենք ունեցել ուսումնասիրելու Երուսաղեմի եւ Կ. Պոլսի հայոց պատրիարքությունների՝ մեր խնդրին առնչվող արխիվային վավերագրերը: Սակայն եղած տեղեկությունները հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմելու կատարվածի վերաբերյալ:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի կաթողիկոսական դիվանում ծռազատիկի առնչությամբ պահպանված առաջին վավերագիրը Եփրեմ Ա. Ձորագեղցի կաթողիկոսի՝ 1821 թ. ապրիլի 4-ին Ներսես Աշտարակեցուն ուղղված նամակն է²⁴: Նամակում հայրապետը խոսում է սպասվող ծռազատիկի առնչությամբ Կ. Պոլսի պատրիարքարանում սկսված քննարկումների մասին. «Ըստ որում գրեցաք ի միւս հատուած թղթոյն գրել

²² Տէս ԱԻԵՏԻՍ ՊԵՐՊԵՐԵԱՆ, Պատմութիւն Հայոց, Կոստանդնուպօլիս, 1871, էջ 60:

²³ Տէս ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատում, հտ. Գ., էջ 4069:

²⁴ Տէս ՄՄ, Կաթողիկոսական դիւան, թղթ. 38, վաւ. 26:

մեզ զորոշ ինչ զբանից Սիրոյ հրաւիր տետրակին եւ կամ ծոպատկին, քանզի արդէն հաստատեալ են ի Պօլիս ոչ այնչափ հաւանութեամբ պատրիարքին, քան որչափ հարկադրութեամբ գլխաւոր ամիրայից իբրու վասն խաղաղութիւն կամ ի կատարումն հրամանի թագաւորին»²⁵: Նշյալ հատվածից պարզ է դառնում, որ ծոպատկի առնչությամբ քննարկումներն սկսվել են ոչ այնքան մեր հոգեւորականների ցանկութեամբ, որքան պետական պարտադրանքի հետեւանքով: Նույնիսկ հայերից ոմանք «չընկալցին զբան հաւանութեան, յարեցին ի Սոյ կաթողիկոսն, եւ ի պատասխանատրութեան անդ առ թագաւորն ասացին վասն մեր, թէ նոքին յայլ տէրութեան գալով չունիմք ինչ զկախումն ի նոցունց, մեր գլովսն առաւելապէս կախեալ է ի խալիֆայէն, որ՝ ի Սիս...»²⁶: Այս ամենի մասին հայոց կաթողիկոսը տեղեկացել է Կ. Պոլսի Պողոս պատրիարքի կողմից եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստանալու նպատակով Հայաստան ուղարկված Հակոբոս վարդապետից²⁷: Հայրապետը Ներսես Աշտարակեցուն խնդրում է իր կարծիքը հայտնել ծոպատկի վերաբերյալ²⁸:

Կ. Պոլսում Պողոս պատրիարքի ընտրութիւնից հետո տարածայնութիւններ էին սկսվել կաթողիկոսմետ հայերի եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետեւորդների միջեւ²⁹: Այս հանգամանքով պայմանավորված՝ հայոց կաթողիկոսին եւ Ներսես Աշտարակեցուն ամբաստանութիւններ էին ներկայացվել Պողոս պարիարքի դեմ: Պատրիարքը, զգուշութիւն դրսեւորելով, 1820 թ. հուլիս 30-ին եփրեմ Ա. Զորագեղցուն գրած նամակում տեղեկացնում է, որ Կ. Պոլսում տեղի ունեցած իրադարձութիւնների վերաբերյալ հայոց հայրապետին տեղեկութիւններ կհաղորդի Հակոբ վարդապետը, որն ուղարկվել է եպիսկոպոս ձեռնադրվելու նպատակով³⁰: Հակոբ վարդապետը հիշատակվում է նաեւ Կ. Պոլսի Գաբրիել պատրիարքի ընտրութեան առնչությամբ: Պողոս պատրիարքը վերջինիս ուղարկում է նաեւ Երուսաղեմ՝ որպէս օգնական³¹, հետեւաբար՝ Հակոբ վարդապետը քաջ տեղյակ էր թէ՛ Երուսաղեմում, թէ՛ Կ. Պոլսում տիրող իրավիճակին:

²⁵ Անդ:

²⁶ Անդ:

²⁷ Տէս ՄՄ, Կաթողիկոսական դիւան, թղթ. 36, վաւ. 179:

²⁸ Տէս ՄՄ, Կաթողիկոսական դիւան, թղթ. 38, վաւ. 26:

²⁹ Տէս ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատում, հտ. Գ., էջ 3995:

³⁰ Տէս ՄՄ, Կաթողիկոսական դիւան, թղթ. 36, վաւ. 179:

³¹ Տէս ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԵՊՍ. Տէր-Յովհաննէս Եսեան, Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, հտ. Բ., էջ 367–368:

Ներսես Աշտարակեցին 1821 թ. հուլիսի 9-ին գրում է պատասխան նամակը, որում խնդրի լուծման որեւէ տարբերակ չի նշում, այլ խոսում է նախաձեռնության անհրաժեշտության մասին: Նամակի բովանդակությունից պարզ է դառնում, որ եղել է կից գրություն, որտեղ Ներսես Աշտարակեցին ներկայացրել է խնդրի լուծման իր առաջարկները. «...ես ի վերայ առ ի Զէնչ յառաջադրեալ օրինակին զայս միայն կարողացայ ի պահու իմում անձկութեան շարահիսել սպասատուութեամբ ձերոց Քահանայապետ[ակ]յան հրամանաց, գոր ընդ այսմ մատուցանեմ ամենախոնարհաբար ի սպասու աստուածաբեալ տէութեանդ, ուր եթէ գտցի իմն հանոյական, կարելի է յառաջ մատուցանել զայն ի գործ, իսկ եթէ ոչ, ներել ինձ մաղթեմ ամենողորմած մարդասիրութեամբ»³²: Ցավոք, այդ գրությունը չի պահպանվել: Նշենք, սակայն, որ Ներսես Աշտարակեցու այս նույն նամակն ընդգրկող մեկ այլ վավերագրում զետեղված է նրա՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքին ուղղված գրությունը, որտեղ հեղինակը մանրամասն ներկայացնում է իր տեսակետը քննվող հարցի վերաբերյալ³³: Պատրիարքին ուղղված գրությունն անթվակիր է, բայց պետք է որ շարադրված լինի հայոց կաթողիկոսին հասցեագրված նամակից՝ 1821 թ. հուլիսի 9-ից հետո: Ըստ էության՝ հայրապետին ուղարկված նամակին կից գրությունն ու պատրիարքին հասցեագրված նամակը բովանդակային առումով չպետք է տարբերվեն:

Պատրիարքին ուղղված նամակի սկզբում Ներսես Աշտարակեցին նշում է, որ առաջիկա՝ 1824 թ. սպասվող ծագագատի առնչությամբ Կ. Պոլսից, Զմյուռնիայից ու Կեսարիայից եղել են բազմաթիվ խնդրագրեր՝ ինչպես հոգեւորականներից, այնպես եւ աշխարհականներից: Դիմել է նաեւ Կեսարիայի առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոսը. «...վասն խափան առնելոյ շտալով օտարաց գտելի բամբասանաց ուղղափառութեան հաւատոյ Հայաստանեայցս Սուրբ Եկեղեցոյ եւ վնասուցն կարծեցելոց օրինակութեամբն անցելոց յունաց»³⁴: Ըստ նրա՝ խնդիրը կարիք ունի ընդհանրական քննության, որպեսզի համաձայնություն ձեւավորվի Հայ Եկեղեցու բոլոր ներկայացուցիչների միջեւ. «...զի մի ուրեմ գայթակղութիւն իմն դրդել ունիցի զմիտս տկարաց»³⁵: Սակայն ժամանակի

³² ՄՄ, Կաթողիկոսական դիւան, թղթ. 38, վաւ. 161:

³³ Տէս ՄՄ, Կաթողիկոսական դիւան, թղթ. 38, վաւ. 172:

³⁴ Անդ:

³⁵ Անդ:

սղուծյան պատճառով հնարավոր չէ հավաքել «զբազմութեան առաջնորդաց ժողովրդեանն առ մեզ կամ առ միմեանս ի տեղի պատշանաւոր ի բազմազբաղ յայսմիկ կարեւալ միջոցի»³⁶: Հետեւաբար՝ Ներսէս Աշտարակեցին պարտավորվում է «...մաքուր վշտակցութեամբ յեցեալ ի վկայութիւնս կենդանի խղճի եւ յազդեցութիւնս լուսաւոր մտաց լուսաւորեալ մանկանց Հայաստանեայց Սուրբ Եկեղեցոյ եւ ամենաբարեպաշտ հօտի նախաւահանալ»³⁷ յայպետին մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի որոց մեքս գտանեմք այժմ աւանդապան եւ հայրապետ եւ հովուապետ անառատ գրիմք ողջմիտ հայրապետութեան եւ հովուապետութեան միայն համաձայնութեամբ սուրբ ժողովոյն գերագան Մայր Աթոռոյ էջմիածնի ընտրելի համարեալ ի սմին պատահման պաշտպանել զխաղաղութիւն Եկեղեցոյ եւ ժողովրդեանն Քրիստոսի»³⁷: Ներսէս Աշտարակեցին խնդրի լուծման համար առաջարկում է 1824 թ. տարեգիրը Ծ.-ից փոխել Հ.-ի³⁸, այսինքն՝ համաձայնել հուլյների հետ ապրիլի 6-ին Զատիկ տոնելու պահանջին: Այստեղ հարց է առաջանում, թե ինչպէս Հայ Եկեղեցու առաջնորդներն այսքան հեշտ համաձայնեցին զիջման գնալ: Ինչպէս գիտենք, ծագագատիկ գլխավոր պատճառը, որի հետեւանքով Հայ Եկեղեցին Ս. Հարությունը տոնում էր Հուլյն եւ Կաթողիկ Եկեղեցիներից առանձին, վերջիններիս՝ հրեական պասեքի օրը Զատիկ տոնելու հանգամանքն էր, որից էլ խախտվում էր այն տոնելու նիկիական կանոնը: Բոլոր Եկեղեցիների զատկացուցականները հիմնված էին լուսնային 19-երյակների վրա, որոնք ունեն բավական մեծ ճշտություն, սակայն անսխալ չէին: Լուսնային 19-երյակն արեգակնային 19 տարիների համեմատ ունենում էր 1 ժամ 28 րոպե 15 վրկ. տարբերություն, որը 312,5 տարում կազմում էր մեկ օր³⁹: Նիկիայի 325 թ. ժողովից մինչեւ 1824 թ. անցել է 1499 տարի, որը եթե բաժանենք 312,5-ի կստանանք մոտ 5 օր, այսինքն՝ 1824 թ. դրությամբ լուսնի լրման հետ կապված կար 5 օրվա շեղում: Ինչպէս գիտենք, հրեաները, ի տարբերություն քրիստոնյաների, կիրառել եւ կիրառում են լուսնաարեգակնային օրացույց, հետեւաբար՝ հավանական է, որ այդ 5 օրվա սխալը հրեաների զատկացուցականներում շտկված լինել, եւ հերթական ծագագատիկ տարում համընկնում տեղի չունենար: Ցավոք, հստակ տեղեկություններ չունենք

³⁶ Անդ:

³⁷ ՄՄ, Կաթողիկոսական դիւան, թղթ. 38, վաւ. 172:

³⁸ Տէս անդ:

³⁹ Տէս ԳԵՒՈՐԳ ԱՐՔ. ՍԵՐԱՅԳԱՐՅԱՆ, Եկեղեցական տոմարագիտություն, էջ 29:

հրեաների ունեցած զատկացուցականների մասին, որպեսզի կարողանանք ամբողջական եւ հստակ տվյալներ ներկայացնել:

Ինչպես արդեն նշել ենք, ծառատկի առնչությամբ պահպանվել է Ռուսաստանի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսի՝ Ներսես Աշտարակեցուն ուղղված նամակը. վերջինս իր եւ Բեսարաբիայի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսի անունից խնդրում է Ներսես Աշտարակեցուն դիմել Եփրեմ Ա. Ձորագեղցի կաթողիկոսին՝ կատարված փոփոխությունը ժողովական որոշմամբ կամ կաթողիկոսական հրամանով ամրագրելու: Հովհաննես արքեպիսկոպոսը նշում է, որ 1824 թ. համար պատրաստվում են տպագրել շուրջ երկու հարյուր օրինակ օրացույց, իսկ կաթողիկոսական կոնդակն անհրաժեշտ է այդ օրացույցում վերջնական փոփոխություններ կատարելու համար: Հետաքրքիր է՝ Ռուսաստանի առաջնորդի վերոնշյալ նամակից առաջ՝ 1823 թ. մայիսի 7-ին, Ներսես Աշտարակեցին Եփրեմ Ա. Ձորագեղցուն հղած նամակում, ի թիվս այլ հարցերի, խոսում է նաեւ այն մասին, որ իրեն է դիմել Աստրախանի Հովհաննես արքեպիսկոպոսը՝ խնդրելով միջնորդել ծառատկի առնչությամբ կատարված փոփոխությունը եկեղեցական ժողովով կամ կաթողիկոսական կոնդակով հաստատելու համար⁴⁰:

Քննվող հարցի առնչությամբ պահպանված կարեւորագույն վավերագիրը Եփրեմ Ա. Ձորագեղցու 1823 թ. նոյեմբերի 2-ին Տաթևի առաջնորդ Մարտիրոս արքեպիսկոպոսին ուղղված կոնդակն է, որտեղ կաթողիկոսը պատվիրում է «զի ի գնալ ձեր ի Դաւթ ուր եւ պատահիլ ունիջի՛ յայնոսիկ սահմանս առաջնորդաց վիճակաւորաց կամ աւագ երիցանց քաղաքաց եւ կամ քաղաքացից գիւղորէից պատուիրեսցես, զի յայսմ ամի յառաջիկայ՝ որ է թիւ փրկչական 1824 եւ թիւ հայոց 1273 եւ ըստ տունարի մերոյ ծառատիկ գտաւեգիրն ի գործածցէն (Ձ եւ Հ) Ձ գիրն մինչ ի վերջն փետրուարի որպէս կանոն վասն յամենայն նահանջ ամաց, իսկ Հ գիրն սկսեալ ի մտիցն մինչեւ ցլումն տարւոյն ըստ որոյ յառաջիկայ տօնն սրբոյ Զատիկի կատարի ի վեցն ապրիլի, որպէս եւ օրացոյց տարւոյն Կոստանդնուպոլիս եւ յԱստրախան տպեալ են մերովս հրամանաւ ըստ նշանակեալ տաւեգրացն»⁴¹: Նամակի բովանդակությունից կարող ենք եզրակացնել, որ կաթողիկոսը հրամանագրեր է հղել նաեւ Աստրախան ու Կոստանդնուպոլիս՝ պատվիրելով տպագրվելիք օրացույցներում կատարել

⁴⁰ Տէն ՄՄ, Կաթողիկոսական դիւան, թղթ. 45, վաւ. 129:

⁴¹ Անդ, թղթ. 45, վաւ. 31:

համապատասխան փոփոխությունը: Աստրախանում 1824 թ. տպագրված եկեղեցական օրացույցում ներկայումս կաթողիկոսի կարգադրած տարեգրի փոփոխությունը կատարված է⁴²:

Այսպեսով որոշակիորեն հստակ պատկեր ենք ստանում 1824 թ. ծնագատիկի՝ նախօրոք սկսված քննարկումների, խնդրի լուծման առաջարկների եւ ընդհանուր համաձայնության ստեղծման վերաբերյալ: Այժմ փորձենք մեր ունեցած տեղեկությունները համեմատել նախորդ հեղինակների՝ այս խնդրի վերաբերյալ հիշատակությունների հետ: Արդեն անդրադարձել ենք, որ Մաղաքիա արք. Օրմանյանի եւ մյուսների տեսակետը, ըստ որի՝ ծնագատիկի խնդրի լուծմամբ առավել շահագրգռված էին Մայր Աթոռում՝ կապված Ռուսաստանի հետ հաստատված հարաբերություններով, սխալ է: Անհիմն են նաեւ Գեւորգ արք. Սերայդարյանի՝ 1824 թ. քննարկվող հարցի շուրջ տեղի ունեցած հայ-ռուսական միացյալ եկեղեցական ժողովի վերաբերյալ հաղորդած տեղեկությունները: Որոշակիորեն ճշմարտացի է Զգոն եպիսկոպոսի դիտարկումը՝ քննարկումներն սկսվել են 1820 թ. Կ. Պոլսում, սակայն հեղինակի հիշատակությունը տոմարագետ Գեւորգ Մյուհտեսիի մասին, որը, ըստ նրա, զբաղվել է սույն խնդրով, նույնպես անհիմն է: Հավանաբար, Զգոն եպիսկոպոսը Գեւորգ Մյուհտեսիի մասին գրում է՝ օգտվելով Մաղաքիա արք. Օրմանյանի աշխատությունից: Նշենք, որ վերջինս եւս հիմնավորում չունի առայն, որ Գեւորգ Մյուհտեսին մասնակցել է ծնագատիկի շուրջ ծավալված քննարկումներին: Հեղինակը վկայաբերում է 1901 թ. Կ. Պոլսում տպագրված «Ընդարձակ օրացույց»-ը, որտեղ Գեւորգ Մյուհտեսիի վերաբերյալ պահպանվել է միայն հետեւյալ տեղեկությունը. «Միւնէնտիսի Գէորգ (†1830), որ իր ժամանակին ամենէն հմուտ հայ չափագէտն ու տօմարագէտն էր»⁴³: Մաղաքիա արք. Օրմանյանը եզրակացրել է, որ ծնագատիկի նման տոմարագիտական կարեւոր նշանակություն ունեցող խնդիրը չէր կարող լուծվել առանց ժամանակի նշանավոր տոմարագետի անմիջական մասնակցության. սակայն մեր ուսումնասիրած վավերագրերից որեւէ մեկում այս մասին հիշատակություն չի պահպանվել: Ավելին, ինչպես տեսանք, ծնագատիկի խնդրի լուծման համար առաջարկված եւ ընդունված տարբերակով ամբողջությամբ զբաղվել է Ներսես Աշտարակեցին:

⁴² Տե՛ս «Տարեցույց եւ օրացույց», Աստրախան, 1824:

⁴³ «Ընդարձակ օրացույց ազգային հիւանդանոցի, տոմար, զանազան գիտելիքներ, վիճակագրական տեղեկութիւններ», Կ. Պոլիս, 1901, էջ 195:

Մեր կարծիքով՝ չի հաստատվում նաեւ Զգոն եպիսկոպոսի հաղորդած տեղեկությունն այն մասին, որ Կ. Պոլսում ծռազատկի խնդիրը քննելու համար Հայ եւ Հույն Եկեղեցիները ստեղծել են հատուկ հանձնախումբ: Մենք ընդհանրապես տեղեկություն չունենք հույների հետ որեւէ բանակցության մասին, որը, անշուշտ, պետք է տեղի ունեցած լիներ: Այս մասին վերջնական կարծիք կարող ենք հայտնել միայն Կ. Պոլսի պատրիարքարանի արխիվային նյութերն ուսումնասիրելուց հետո:

1823 թ. կատարված փոփոխությունը հստակ երեւում է նաեւ դրանից առաջ եւ հետո հրատարակված տոնացույցներում: Սիմեոն Ա. Երեւանցու (1763—1780 թթ.) տոնացույցի հեղինակային հրատարակության մեջ տրված է տարեգրերի աղյուսակ 532 տարվա համար, որն ընդգրկում է Հայոց ՌՄԻԳ. (1223)-ից ՌՉԾԳ. (1754) թվականները եւ համապատասխանում է Փրկչական 1774—2305 թվականներին: Այս աղյուսակում 1824, 2071, 2166 եւ 2261 թվականների համար (եթե 1824 թ. փոփոխությունը չկատարվեր, 2071, 2166, 2261 թվականները ծռազատիկ տարիներ կլինեին) տարեգիրը տրված է Շ.⁴⁴: Հետագայում տպագրված զատկացուցակներում⁴⁵ եւ Սիմեոնյան տոնացույցի հետագա հրատարակություններում, որոնք հաջորդում են 1824-ին, վերոնշյալ ծռազատկի տարիների տարեգրերը փոխված են Հ.-ի⁴⁶: Հետեւաբար՝ Եփրեմ Ա. Զորագեղցի կաթողիկոսի 1824 թ. տված հրահանգը տարածվել է նաեւ հետագայում սպասվող ծռազատիկների վրա՝ վերջնականապես լուծելով այս խնդիրը: Նշյալ փոփոխությունը, սակայն, Հուլյան տոմարի համար էր եւ այժմ գործադրելի է միայն Երուսաղեմի հայոց պատրիարքությունում: 1924 թ. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ընդունում է Գրիգորյան տոմարը, այս փոփոխությունը եւ տոնացույցներում տրված տարեգրով Զատիկ հաշվելու աղյուսակները նոր տոմարով այլեւս գործադրելի չեն:

⁴⁴ Տէս ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՒԱՆՅԻ, Տօնացույց, Վաղարշապատ, 1774, 523 էջից յետոյ տեղադրուած աղիւսակ:

⁴⁵ Տէս «Ժամակարգութիւն Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ», Կ. Պօլիս, 1827, էջ 144:

⁴⁶ Տէս ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՒԱՆՅԻ, Տօնացույց, Վաղարշապատ, 1906, էջ 371—374:

РЕЗЮМЕ

«Кривые пасхи» («Цразатик») создавали проблемы и столкновения в основном в Иерусалиме, изредка — в Константинополе. Они напрямую были связаны с чином выноса огня во время Пасхальной Литургии Сочельника и настолько обостряли отношения Византийской и Католической Церквей с Армянской Апостольской Церковью, что местные власти были вынуждены вмешаться для их урегулирование.

В статье представлены усилия армянских духовных лидеров, направленных на урегулирование этих проблем в XIX веке, которые посредством переговоров с лидерами Греческой, Католической и Русской Церквей пытались разрешить эти вопросы путем компромисса и избежать столкновений.

SUMMARY

Different dates for celebrating Easter caused problems and clashes mostly in Jerusalem, and rarely in Constantinople. These problems were directly related to the Holy Fire ceremony on the Easter Eve, and aggravated the relations of the the Armenian Apostolic Church with the Byzantine and Catholic Churches so much that the local authorities had to intervene in their settlement.

The article presents especially the efforts of the Armenian spiritual leaders aimed at the settlement of these issues in the 19th century. Through compromise, they tried to resolve these issues and avoid clashes by negotiating with the leaders of the Greek, Catholic and Russian Churches.





Տ. ՏԱՃԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԾԱՏՈՒՐՅԱՆ
Միաբան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

ԽՈՆԱՐՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՑՈՒ «ԲՆԱԳՐԱԿԱՆ ՆՇԱՐՆԵՐ»-ՈՒՄ

Ներածություն

Գրիգոր Խլաթեցին ապրել է ԺԴ. դարավերջին եւ ԺԵ. դարասկզբին (1349–1425 թթ.)՝ մի ժամանակաշրջանում, երբ միջնադարյան Հայաստանում հայ հեղինակները հիմնականում ստեղծագործում էին միջին հայերենով: Այս շրջանի հայերենն ահա այսպես է բնութագրում ականավոր լեզվաբան Հ. Աճառյանը. «Միջին հայերենը կանգնած է գրաբարի եւ աշխարհաբարի միջեւ, իբրեւ երկուսի միացուցիչ օղակը: Կան դեպքեր, ուր նա դեռ գրաբար է, ինչպես հայցականի զ եւ բացառականի ի, յ նախդիրների գործածության մեջ, բայց ավելի շատ են այն դեպքերը, ուր նա բոլորովին աշխարհաբար է, ինչպես կտր. դրի, դրիւ, տուի, տուիւ եւ այլն: Ավելի քիչ են այն դեպքերը, ուր նա, իբրեւ անցման շրջան, ներկայացնում է թե՛ գրաբարը եւ թե՛ աշխարհաբարը, ինչպես հոգնակիի կազմության մեջ, ուր ձայնավորով վերջացող բառերն ստանում են -ի, բաղաձայնով վերջացողները՝ -եւ եւ այլն»¹:

Ինչպես միջին հայերենով ստեղծագործող շատ հեղինակների, այնպես էլ Գրիգոր Խլաթեցու «Բնագրական նշմարներ»-ում² անհամեմատ շատ փոփոխություններ կրած խոսքի մասերից մեկը բայն է: Խոնարհման համակարգում տեղաշարժերը հիմնականում վերաբերում են մի քանի դերբայների եւ դիմավոր բայի որոշ ժամանակաձեւերի,

¹ Հ. ԱճԱՌՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն, հտ. Ա., Երեւան, 1951, էջ 252:

² Այս անվան տակ նկատի ունենք Գրիգոր Խլաթեցու՝ ձեռագիր եւ տպագիր աղբյուրներից քաղված ստեղծագործությունները՝ պատմական ողբերը, գանձերը, վարք-վկայաբանությունները, հիշատակարանները, թղթերը եւ հանելուկները, որոնք ամփոփված են «Գրիգոր Ծերենց Խլաթեցի» աշխատության երկրորդ մասում՝ «Բնագրական նշմարներ» վերտառության ներքո (տես Ա. ՄԱԹԵՈՍՅԱՆ, Ս. ՄԱՐԱԲՅԱՆ, Գրիգոր Ծերենց Խլաթեցի, Երեւան, 2000, էջ 121–199):

որոնք կազմությամբ զգալիորեն տարբերվում են դասական գրաբարի խոնարհման համակարգից:

Փոփոխություններ դերբայների կազմության մեջ

Անորոշ եւ անցյալ դերբայների կազմության մեջ նկատելի են այնպիսի տեղաշարժեր, որոնք իրենց գործածության ձևերով զգալիորեն տարբերվում են դասական գրաբարի նույնանուն դերբայներից³: Խլաթեցու երկերում պահպանված են գրաբարյան չորս լծորդությունները՝ իրենց պարզ եւ ածանցավոր կազմությամբ⁴: Այստեղ կան նաեւ ենթակայական դերբայի բազմաթիվ օրինակներ, բայց քանի որ դրանք իրենց կազմությամբ նույնանում են գրաբարին, հարկ չենք համարում այն քննարկման առարկա դարձնել:

Անորոշ դերբայ

Խլաթեցու բնագրերում կան մի քանի օրինակներ, որտեղ անորոշ դերբայը հանդես է գալիս երկու տարբեր լծորդություններով: Օրինակ՝ «...անպարսաւ թողել աղաչեմ վասն սակաւ գովեստիս...» (էջ 139):

Սակայն «Մատեան ողբերգութեան Գրիգորի Նարեկացւոյ՝ ասացեալ Գրիգորի վարդապետէ Խլաթեցոյ Մերենց կոչեցեալ» ստեղծագործության ծայրակապում գրված է թողուլ՝ «Գրիգորի է այս բանքս՝ թողուլ զմեղս» (էջ 146—147):

«Իբրեւ պատճառական ածանց գրաբարում գործածվում է -ոյց ածանցը, որը ներկայի հիմքից կազմվող ձևերում հանդես է գալիս ան ածանցի հետ՝ ոյց+ան=ուցան, իսկ անորոշ դերբայում այս ածանցներին կցվում է դերբայական եւ մասնիկը՝ անկախ այն բանից, թե ածանցվող բայը որ խոնարհման է պատկանում: Այստեղ ոյց ածանցը շեշտակորույս լինելով դառնում է ուց»⁵: Ի տարբերություն դասական գրաբարի՝ Խլաթեցու երկերում պատճառական բայերը հավասարապես հանդես են գալիս եւ ուցանել վերջավորությամբ, եւ ցնել տարբերակով:

³ Խոսքն այստեղ բնավ չի վերաբերում հարակատար դերբային, քանի որ գրաբարում այն չի առանձնացված (տես Ա. Ա. ԱՐԲԱՀԱՄՅԱՆ, Գրաբարի ձեռնարկ, Դ. հրատ., Երեւան, 1976, էջ 94):

⁴ Գրաբարում Ո խոնարհման մեկ բայ կա՝ գոմ (լինել, գոյություն ունենալ), որը, պակասավոր բայ լինելով, վերելում հիշված լծորդությունների շարքում չի հիշատակվում (տես անդ, էջ 99):

⁵ Ա. Ա. ԱՐԲԱՀԱՄՅԱՆ, նշ. աշխ., էջ 179:

«Ես զնա յիւր կամացն դարձուցանել ոչ կարեմ, դուք գիտէք, թէ կամիք. հարցէք զնա» (էջ 167):

«Սա զկաղս գնացուցանէ,սա զմեռեալս ի մեղաց յարուցանէ,սա զմոլորեալս դարձուցանէ.... Սա զԱստուած ընդ մարդկան հաշտեցուցանէ, սա զմարդիկ յԱստուած հայեցուցանէ» (էջ 175):

Հմմտ.

«Եւ վասն երիս պատճառի իշխացի զթուղթս արհնութեան յիշեցնել ձեզ» (էջ 192):

Անցյալ դերբայ

«Ընդհանուր պատմական հնչունափոխության արդյունք է անցյալ դերբայի վերջավորության փոփոխությունը՝ եալ > ել, որ ձեւական փոփոխություն լինելուց բացի՝ մեծ չափով նպաստել է դերբայի վերափոխմանը՝ որպէս վաղակատար՝ բայի խոնարհման համակարգի վերակազմավորման ընթացքում»⁶:

Այստեղ հարկավոր է նշել, որ անցյալ դերբայի վերջավորության եալ > ել փոփոխությունը նպաստել է ոչ միայն վաղակատար, այլեւ հարակատար դերբայի կազմավորմանը:

Ստորեւ բերվող օրինակներում հանդես են գալիս խիստ հաճախադեպ եալ > ե հնչունափոխությամբ առաջացած ձեւերը.

«Զայն տեսեալ ոմանց եւ ձայն տուել (տուեալ.— Տ. վրդ. Մ.) միմեանց եւ առժամայն կուտեցան» (էջ 154):

«Եւ տէրն հեզաբար տուել պատասխանի եւ ասաց...» (էջ 154):

Այս վերջին օրինակում, ինչպէս տեսնում ենք, ել վերջավորության մէջ անցյալ դերբայը հանդես է եկել խոնարհված բայի՝ եա (անցյալ կատարյալ) փոխարեն:

«...եւ համատարած աջովն պատսպարել պահել պատըսպարեսցէ զձեզ...» (էջ 185):

«...ամենախնամ աջովն իւրով պատսպարել պահեսցէ զձեզ տամբք եւ զաւակաւք...» (էջ 189):

Մի նախադասության մէջ հանդիպում ենք տամ անկանոն բայի անցյալ դերբային՝ ալ վերջավորությամբ.

⁶ Լ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ, ԺԳ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Երեւան, 1997, էջ 77:

«Եւ մուղրին այն ձայն տուեալ որոց մերձն կային ի քարափոսին, եւ գրոհ տուալ (տուեալ.— Տ. վրդ. Ծ.) ի հետ գնացին եւ զկինն Յիմար անդէն քարկոծ արարին» (էջ 168):

Մի օրինակում, սակայն, անցյալ դերբայը հանդես է եկել անորոշ դերբայով հայցականի փոխարեն.

«...եւ ունիս համարձակութիւն բարեխաւսեալ (բարեխաւսել.— Տ. վրդ. Ծ.) առ Որդին քո Միածին վասն դաւանողաց քոց...» (էջ 138):

Ինչպէս միջին հայերէնով գրող բազում հեղինակներ, Խլաթեցին նույնպէս գործածում է անցյալ դերբայը դասական գրաբարի գրեթե բոլոր իմաստային առումներով:

Այսպէս՝ եմ օժանդակ բայն անցյալ դերբայի հետ հանդես է գալիս իր բոլոր ժամանակաձեւերով.

«է ինձ երանի յայնժամ, թէ լինիմ արժանացեալ մաղթանաւք սրբոցն ընդ քեզ...» (ներկան՝ ապառնու իմաստով, էջ 139):

«Քաւ եւ մի՛ լիցի բնաւ, թէ երբեք ես ուրացեալ լինիմ զՔրիստոս Աստուածն իմ, յոր հաւատացեալ եմ եւ հաւատամ...» (նույն իմաստով, էջ 160):

Ինչպէս գրաբարում, այստեղ եւս անցյալ դերբայը եմ օժանդակ բայի անցյալ եւ ապառնի ժամանակաձեւերի հետ կարող է կրավորականության իմաստ ձեւավորել.

«...Որ ընկալեալ եղել ի սէր,

Եւ հատուցաւ, զոր ինչ խնդրէր...» (ընդունվեց, էջ 142):

«...Փափագ սըրտիս եղել լցեալ

Ես յԱստուծոյ եմ գոհացեալ...» (բավարարվեց, կատարվեց, էջ 169—170):

«...Յաշնան, հրոտից ամիսն ի ԺԳ. (13), յաւուր յիսնակամտին սկսեալ եղել գիրքս, եւ յամռան հրոտիցն Լ. (30) աւարտեցաւ...» (սկսվեց, էջ 178):

«...յիշողն յիշեալ եղիցի, եւ որ զԱստուած-ողորմին ասէ, Աստուած նմա ողորմի...» (թող հիշվի, էջ 178):

«...եւ իմաստութիւն քո ի վեր ի յերկիրն կենդանեաց հաստատ ամրացեալ լիցի...» (հաստատում՝ հաստատված՝ ամուր կլինի, էջ 191):

Վաղակատարի իմաստով ժամանակաձեւերն այստեղ հաճախադեպ են.

«...Ներսէս դրախտէն էր տունկ բերեալ...» (բերել էր, էջ 140):

«...Քաւ եւ մի՛ լիցի բնաւ, թէ երբեք ես ուրացեալ լինիմ զՔրիստոս Աստուածն իմ, յոր հաւատացեալ եմ եւ հաւատամ...» (հավատացել եմ, էջ 160):

«...Եւ մինն ի յերիցն իմացեալ փախեաւ եւ միւսն գնացեալ էր ի ճանապարհ...» (գնացել էր, էջ 165):

«...Փափագ սրբորիս եղեւ լցեալ
 Ես յԱստուծոյ եմ գոհացեալ...» (գոհացել եմ, էջ 169–170):
 «...Յորում ամի էր սաստկացեալ
 Զաւրք Թամուրին ի դուս եկեալ...» (սաստկացել էր, էջ 170):
 «...Որք հասկաքաղ եկեալ էին...» (եկել էին, էջ 133):
 Իսկ ստորեւ բերվող օրինակում անցյալ դերբայն աշխարհաբարյան
 ձեւով է գործածվել.
 «...եւ մինչդեռ տարին չէր վնարել...» (էջ 173):
 Հանդիպում է նաեւ անցյալ դերբայ + ունիմ կառույցը.
 «...եւ աղաւթասէր ճգնաւորացն յինքն բերեալ ունէր...» (բերել էր,
 էջ 152):
 «...եւ զայնքան կարծրագոյն տանջանս շարշարանացն ի մարմնի իւ-
 րում տարեալ ունէր...» (տարել էր, էջ 165):

Հարակատար դերբայ

«Հարակատար դերբայը ցույց է տալիս կատարված, ավարտված գոր-
 ծողության կամ եղելության ընդհանուր գաղափար՝ որոշ հետեւանքով,
 իբրեւ գործողի կամ եղողի տեւական կամ ժամանակավոր հատկանիշ»⁷:

Հայտնի է, որ ի տարբերություն միջին հայերենի եւ աշխարհաբա-
 րի՝ դասական գրաբարի քերականության մեջ ած վերջավորությամբ
 հարակատար դերբայ գոյություն չի ունեցել⁸: Այդպիսի ձեւերն առավե-
 լաբար նախագրային շրջանից մնացել էին գոյականական եւ ածակա-
 նական իմաստներով (առեղծուած, դիպուած, հայեցուած, հատուած,
 յաւելուած, յօդուած, շինուած եւ այլն): Խլաթեցու գործերում հարա-
 կատար դերբայը քերականական իմաստով ամբողջացած երեւույթ
 է եւ հանդես է գալիս ածականական, գոյականական, ինչպես նաեւ
 մակբայական առումներով:

Ածականական առումով.

«...Զիս յիշեցէք ըզեղկելիս՝

⁷ Ա. Ա. ԱՐԲԱՆՍՅԱՆ, Հայերենի դերբայները եւ նրանց ձեւաբանական նշանակությունը, Երեւան, 1953, էջ 193:

⁸ Գրաբարը չունի հարակատար դերբայի կարգը, բայց ունի առանձին եզակի ձեւեր, իսկ կարգ է դարձել միջին հայերենում եւ ծավալվել աշխարհաբարում. «Եւ փշելն դեռ եւս ի միջի կայ կարծելոյ՝ թէ իցէ արարած շունչն, թէ չիցէ...» (ՅԶՆԻԿ ԿՈՂՔԱՅԻ, Եղծ աղանդոց, թարգմ. եւ ծանոթ. Ա. Ա. Աբրահամյանի, Երեւան, 1994, էջ 156):

Զմրափած Գրիգոր *հըլաթեցիս...*» (էջ 134):

«...Մերս խաաւած եկեղեցիս, Ազգըս ցըրած յամեն տեղիս...» (էջ 135):

«...Ներսէս պայծառ լոյս բորբոքած

Եւ յաշտանակ բարձրը նըստած,

Յընդհանրական ազգըս ծագած,

Կաթողիկոս Մեծ անուանած,

Յարեգական տիպ նըմանած,

Յարեւելից տունըս հաստատած...» (էջ 141):

«...ողորմած եւ գրած աղքատաց, զամենեսեան լուսաւորէր բարի
ձեւօք եւ ուղղակի կարգօք...» (էջ 152):

Գոյականական առումով.

«...Եթէ այլ մնաց, փեսայ ի հօրէ տուածն յիւր տէրն դառնայ, եւ աղջ-
կան հօր տուածն իւր տէրն դառնայ: Ապայ կերածն ու մսղածն չգայ յի-
շումն...» (էջ 194):

Մակբայական առումով.

«...Տուն մի տեսայ սպիտակ փռած,

Ու սեաւ հաւեր ի ներս թառած...» (էջ 198):

Հարակատար դերբայը հանդես է գալիս նաեւ բաղադրյալ ժամա-
նակների կազմի մեջ՝ եւմ օժանդակ բայի հետ: Այսպիսի կառույցներում
սովորաբար գերակշռող է դառնում կրավորականությունը իմաստը.

«...Կապած էր չըւանն ի վիզն, զոր առեալ ի քարշ տանէին...» (էջ 122):

«...Թող զոր ձիոցն էին կոխած

Եւ ի քարանցն էին վիժած...» (էջ 171):

«...Վանքս խիստ քակած է եւ այրած...» (էջ 193):

«...Ով ընթերցող, թէ ուշիմ վերծանող ես, է նոյ կարգա, որպէս եւ շեշ-
տած է ճառս...» (ներգործ., էջ 181):

Փոփոխություններ եղանակային (դիմավոր) ձեւերում

Ի տարբերություն գրաբարի, որտեղ բայն ունի երեք եղանակ՝ սահ-
մանական, ստորադասական եւ հրամայական, ըստ որում՝ ստորադա-
սական եղանակն իր նշանակությամբ համապատասխանում է աշխար-
հաբարի ըղձական, պայմանական եւ հարկադրական եղանակներին⁹,

⁹ Տե՛ս Ա. Ա. ԱՐԲԱՆԱՄՅԱՆ, Գրաբարի ձեռնարկ, էջ 106:

միջին հայերենում (եւ Խլաթեցու բնագրերում) առանձնացվում է հինգ եղանակ՝ սահմանական, հրամայական, ըղձական, պայմանական եւ հարկադրական: Վերջիններս հանդես են գալիս իրենց ձեւախմաստային առանձնահատուկ արտահայտություններով:

Գրաբարի եւ միջին հայերենի խոնարհման համակարգի առանձնահատկությունները համեմատելով՝ Լ. Հովսեփյանը ներկայացնում է երեք խումբ.

ա) «շեղումներ գրաբարյան նախկին համակարգից՝ որպես նրա զարգացման արդյունք,

բ) գրաբարյան սխալ կազմություններ (ձեւերի բաղարկություն, գերճգրտություն եւ այլն),

գ) ներթափանցումներ միջին հայերենյան համակարգից, խոսակցական լեզվի ազդեցություն, նեղ բարբառային տարրերի ներմուծում»¹⁰:

Ստորեւ բերվող ենթաբաժինները պարունակում են բոլոր այն առանձնահատկությունները, որոնց մասին խոսվեց վերելում:

Սահմանական եղանակ

Այստեղ անդրադառնալու ենք հիմնականում ներկա, անցյալ անկատար, ապառնի եւ անցյալ կատարյալ ժամանակաձեւերին:

Ինչպես միջին հայերենում, այնպես եւ Խլաթեցու երկերում ներկա ժամանակաձեւը կազմվում է գրաբարյան ներկայի ձեւերի վրա կուսանիկն ավելացնելով:

«Գրաբարյան լեզվով գրված օվկիանածավալ գրականության մեջ թե՛ հին ժամանակներում եւ թե՛ ընդհուպ մինչեւ մեր օրերը չի կարելի գտնել կուսանիկով կազմված ոչ մի բայաձեւ, մինչդեռ միջին հայերենով գրող ոչ մի հեղինակ չի խուսափել այս մասնիկից՝ սկսած Ներսես Շնորհալուց մինչեւ Ֆրիկ, Երզնկացիները եւ հետագա միջնադարյան մեր մյուս տաղերգուները»¹¹:

Ահա մի քանի օրինակ Խլաթեցուց.

«...եւ վասն անհանգստութեանս կու հոգաւ...» (էջ 183):

«...եւ էնց կու կամիմ Աստուծով զքեզ առ իս՝ զինչ զլոյս աշացս...» (էջ 184):

¹⁰ Լ. Ս. Հովսեփյան, նշ. աշխ., էջ 55:

¹¹ Ս. Մ. Անթոնյան, Բայր եւ նրա խոնարհման համակարգը («Արևիկներ միջին գրական հայերենի պատմության», խմբագրությամբ է. Բ. Արևիկյանի, գիրք Ա., Երևան, 1972, էջ 322):

«...Որպէս Աստուած յամէն լեզուէ, յամէն մարդէ աւրհնութիւն կու խնդրէ...» (էջ 193):

Բացի կու մասնիկից՝ սահմանականի ներկա ժամանակաձեւը կազմովում է նաեւ կ-ով:

«Միջին հայերենով գրած առանձին հեղինակների գործերում մենք հանդիպում ենք կու մասնիկի կ հնչյունափոխության. եղած օրինակներում կ մասնիկը հանդես է գալիս միշտ ձայնավորից առաջ»¹²:

«...Շնորհակալ եմք եղբայրաբար սիրոյդ եւ հայրախնամ գթոյդ, որ զմեր հանգիստն կորոնեմ...» (էջ 183):

«Պետք է ենթադրել, որ կու մասնիկի ու ձայնավորն սկզբում սղվել է ու ձայնավորով սկսվող բայաձեւերից առաջ՝ կից վանկերի նույնության անբարեհնչյունության պատճառով՝ կու ուզեմ > կուզեմ, կու ուտեմ > կուտեմ եւ այլն, իսկ հետագայում երեւույթը տարածվել է ընդհանրապես ձայնավորով սկսվող բոլոր բառերի վրա: Արդի արեւելահայ գրականում, ինչպես հայտնի է, կ մասնիկը գրվում է նաեւ բաղաձայնից առաջ (կգրեմ, կխաղամ): Մյուս կողմից՝ այս փաստերը մեզ թույլ են տալիս ասելու, որ կու > կը հնչյունափոխությունն ավելի ուշ շրջանի երեւույթ է, եւ հասկանալի պատճառով, միջին հայերենի լեզվաձեւը գրաբարից զանազանող այդ մասնիկը չէր կարող այդքան շուտ փոփոխության ենթարկվել»¹³:

Իհարկե, այս ամենից զատ, Խլաթեցու բնագրերում գերակշռող են սահմանական ներկայի գրաբարյան ձեւերը.

«...Ի գոլորշեաց նա գոյամայ,

Ոչ երեւի եւ էանայ,

Յանկարծակի ոչնչանայ...» (էջ 195):

«...Որք զիս ըմպեմ՝ անմահանամ,

Ոմանք առնուն եւ մահանամ,

Զայլս մաքեմ եւ մաքուր կամ...» (էջ 196):

Եթե խոսելու լինենք ներկա ժամանակաձեւի իմաստային առումների մասին, պիտի նշենք, որ բուն ներկայի իմաստներից բացի, ինչպես գրաբարում, այն շատ հաճախ հանդիպում է նաեւ ապառնիի նշանակությամբ (ըդձական եւ որոշ չափով էլ պայմանական եղանակային երանգավորումով).

«...Ոչ ունելով բժիշկ ճարտար,

Որ տայ մեզ դեղ առողջարար...» (էջ 139):

¹² Ս. Մ. ԱՆԹՈՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 325:

¹³ Անդ:

- «...Ես աղաչեմ զտիրուհին,
զամենօրհնեալ Աստուածածին,
Որ տայ ինձ կար տկար անձին...» (էջ 148):
- «...Յետոյ զամբ ի ձեր շուքդ հանգչիմք եւ ի ձեր տեսդ մխիթարիմք...»
(էջ 183):
- «...ամենախնամն Աստուած բարին յաջողէ եւ զձերոցդ ամենի...»
(էջ 183):
- «...Եւ որպէս աթոռն չորս ոտն ունի, որ նստաւղն ի վերայ հաստատ
նստի...» (էջ 193):
- «...Երկիր թագաւորին լաւ շէն պիտի պահել, որ զաւրք թագաւորին
մարմնաւոր ընչիւք ուրախ պահեն...» (էջ 193):
- «...Զաւրք բազում պիտոյ է թագաւորին, որ հետ թշնամեացն պատե-
րազմին, որ աշխարհն ի շէն մնայ...» (էջ 193):
- «...յոյս ունիմ թէ տեսոյդ ձեր արժանաւորիմ մերձ ի մաւտոյ...»
(էջ 193):
- «Եթէ ապրիմք՝ ձեր տեսովդ ուրախանամք եւ թէ մեռանիմք՝ զհոգս հո-
ղոյն տաս, եւ զհոգիս աղաւթիւքդ յուղարկես...» (էջ 194, 128–129, 193):
- «...զի թէ զիս ի տեղի քո նստուցանես եւ զհոգիմ իշանութեանդ քո եւ
զտիրնութիւնդ զոր ունիս ինձ տաս եւ զիս դժխոյ աշխարհիս կացուցա-
նես՝ չկարեմ փոխանակել...» (էջ 161):
- «...եւ կամիմ որ զմնացեալ աւուրքս ի քո շուքն անցուցանեմ, եւ զհո-
ղոյս հողոյն քո ձեռքդ տաս...» (էջ 184):
- «...Որպէս պտուղք եւ ճուղք անկեալ յերկիր, ...այսպէս շառաւեղ
եւ պտուղ զաւակաց քոց բուսուցանէ Տէր Աստուած ի վերայ երկրի...»
(էջ 191):
- Վերջին երեք օրինակները պատճառական ուցան ածանց ունեցող
ներկա բայաձեւեր են, որ դարձյալ ապառնու իմաստով են հանդես
գալիս:
- Իսկ հետեւյալ օրինակներում ներկան անցյալի իմաստով է գործած-
վել (պայմանական ներկա).
- «...Սուրբըն Վարդան առ կայսր առաքի,
Եւ մեծաշուք յՀատըմբաւ մըրի...» (էջ 143):
- «...Ի յԱրտագու գաւառ ժողովին,
Ուր էր տապանըն Թադէոսին...» (էջ 145):

Խլաթեցու երկերում, ի տարբերություն միջին հայերենի շրջանի շատ հեղինակների, սահմանական եղանակի անցյալ անկատարով դրված բայերը՝ գրաբարի հետ համեմատած, ոչ մի փոփոխություն չեն ենթարկվել:

«...Ներսէս զերեսս իւր սահմանէր,

Սքանչելապէս մատրուակէր:

Ի յընթերցումն պարապէր,

՝Ի անդ հանապազ զաշս նշտէր:

Գետս արտասուաց առատ բխէր,

Զիւր սուրբ հոգին առոգանէր:

Նա թէ յաշխարհս երբեք նայէր,

Մեծ Արարիչն փառս առաքէր...» (էջ 142):

«...Ներսէս յաղօթս առ Տէր կանխէր,

Դէմյանդիման ընդ Նա խաւսէր:

Մըտաւք զՓրկիչն շնորհսըն որոնէր,

Եւ արտասուաւք գոհաբանէր:

Տըրոցն տուրս կըշիռ չափէր,

Զանձն աղերսիւ փոխանակէր:

Որ ընկալեալ էղեւ ի սէր,

Եւ հատուցաւ, զոր ինչ խնդրէր...» (անդ):

Անցյալ կատարյալ ժամանակաձեւով հանդես եկող բայերում Խլաթեցին երբեմն օգտագործում է եց հնչյունափոխված վերջավորությունը՝ գրաբարյան եաց-ի փոխարեն.

«...ԶԱրճէշ եւ զԱրծկէ աւարեց,

ԶԲասեն եւ զԱւնիկըն քակեց,

ԶԿարնոյ քաղաքըն՝ զԱռզըռում,

Քան զամենայն խիստ աւերեց...» (էջ 133):

Ինչպես տեսնում ենք, եց վերջավորությունը լեզվի՝ դեպի աշխարհաբար ընթացող պատմական զարգացման տեսանկյունից կարեւոր դեր ու նշանակություն ունի:

Խլաթեցու բնագրերում, սակայն, գրաբարյան եաց վերջավորությամբ ձեւերն ավելի մեծ թիվ են կազմում.

«...Ներսէս, որ քաղցր աղբիւր բըխեաց,

Կըրկին ի դառըն շփոխադրեաց:

Դատարկ բանիւ երբեք չգրեաց,

Եւ ոչ ի խաւսս օտար խառնեաց:

Մարդ Աստուծո (Աստուծոյ.— Տ. վրդ. Մ.) զինքն յատիմեաց,

Դէպ եւ յօգուտ զլեզու շարժեաց:

Ի խրատելոյ ոչ դադարեաց,

Եւ զանազան հասակ մարգեաց...» (էջ 142):

Ինչպես գրաբարում, այնպես էլ *Խլաթեցու երկերում* կարեմ բայն անցյալ կատարյալի հիմքում հանդես է գալիս ագ վերջավորությամբ.

«...Գիտութիւն լիցի, որ այժմ չկարացի գնալ...» (էջ 183):

Խլաթեցու գործերում իշխեմ բայը նույնպես անցյալ կատարյալի հիմքում հանդես է գալիս ագ վերջավորությամբ, որ բարբառայինն է հիշեցնում.

«...Եւ վասն երիս պատճառի իշխացի զթուղթս արհնութեան յիշեցնել ձեզ...» (էջ 192):

Խլաթեցու գրվածքներում երբեմն նկատելի է, որ ի թույլ բաղադրիչ ունեցող բայերում բաղադրիչը խախտված է: Կան դեպքեր, երբ ի բաղադրիչը բացակայում է, եւ կան այնպիսի նախադասություններ, որոնցում այն հանդես է գալիս.

«...Բազումք յահէ նոցին փախան (փախեան.— Տ. վրդ. Մ.)

Եւ ի նրդմունս սատակեցան...» (էջ 124):

Հմմտ.

«...Շատք ի սըրոյ նոցա մեռան,

Ի այլքըն փախեան եւ գերեցան...» (էջ 132):

«...Եւ մինն ի յերիցն իմացեալ փախեալ...» (էջ 165):

Խլաթեցու բնագրերում հանդիպում են նաեւ այնպիսի դեպքեր, երբ ի թույլ բաղադրիչը հանդես է գալիս ընդունիմ բայի՝ անցյալ կատարյալի ձեւերում.

«...Եւ ընկալեալ (ընկալաւ.— Տ. վրդ. Մ.) երախայրեաց պտուղս ի մարդկայինս ազգէ...» (էջ 155):

Հմմտ.

«...Ընդդէմ ներհակ ումեք չյարեալ,

Այլ սուրբ սիրով յինք ընկալաւ...» (էջ 141):

«Երբ ի՞նչ արեց հարցին պատասխանող (անցյալ կատարյալ, Գ. դեմք, եզակի թիվ) բայաձեւը միավանկ է, նրա սկզբում մեծ մասամբ Ե կամ է է ափեւանում. բաղաձայնով սկսվող բայի վրա՝ Ե, ձայնավորով սկսվո-

ղի վրա՝ է»¹⁴։ Սակայն *Խլաթեցու գործերում կարելի է գտնել օրինակներ, որոնցում առկա տեղաշարժը կապված է ե հ ե է աճեցման խառն կիրառության հետ.*

«...Որ էա¹⁵ ինձ կար՝ տկար անձին

Եւ գեշն ու զնուն հասոյց ի մին...» (էջ 135)։

«...Եւ դուք առաւել զհոգին տայք սպանանել, զոր նա զմարմինն էսպան¹⁶։ Եւ դարձեալ մատնեաց զՏէրն եւ զարծաթն էառ...» (էջ 187)։

«...Եւ իբրեւ շարութիւն նոցա ի գլուխ ել եւ յամօթ եղել սատանայ, զի ոչ եհաս ըզձիցն զոր ուներ» (ունէր.— Տ. վրդ. Ծ., էջ 155)։

«...Եւ եհան անտի զորդի Ահմատ զանին՝ զսուլտան Տահիրն...» (էջ 177)։

Միջին հայերենի գրեթե բոլոր հեղինակների, ի մասնավորի *Խլաթեցու երկերում* Ե խոնարհման ածանցավոր բայերը մեծավ մասամբ թողել են իրենց կերպային վերջավորությունները։ Նկատելի է այն փաստը, որ եւ ներգործական սեռի բայերը՝ ներգործակերպ արտահայտված, եւ չեզոք սեռի բայերն այստեղ շատ հաճախ ստանում են գրաբարի անցյալ կատարյալ ժամանակի կրավորաձեւ վերջավորությունները՝ ալ, առ, աւ, ախ...

«...Մեծ պատուհաս ի շահաստան

Բարբարոսաց ազգէն հասան» (հասին.— Տ. վրդ. Ծ., էջ 124)։

«...Այս ամենայն ի սուր անցան» (անցին.— Տ. վրդ. Ծ., էջ 133)։

«...Հինգն յունւարի Թաւրէզ մըտան» (մտին.— Տ. վրդ. Ծ., էջ 124)։

«...Արեւալ մանկունք իմաստացան,

Ի հեշտութեանց, որ պատրեցան,

Ուրախարար հարւրն գըտան» (գտին.— Տ. վրդ. Ծ., էջ 140)։

«...Անթիւ վընաս էր գործեցան...»¹⁷ (էջ 124)։

«...Յորոց անոյշ հոտ բուրեցան (բուրեցին.— Տ. վրդ. Ծ.),

Յերկրէ յերկինըս վերացան,

Սուրբ բուրվառաւքըն խընկեցան...» (էջ 140)¹⁸։

¹⁴ Պ. ԲԵԳԻՐՅԱՆ, *Լեզու նախնեաց, Բ. վերամշակված եւ լրացված հրատարակություն, Սբ. Էջմիածին, 2000, էջ 25*։

¹⁵ Սպասելի էր ետ։

¹⁶ Սպասելի էր եսպան։

¹⁷ Այս օրինակում գործեցան բայից առաջ, ինչպես երեւում է, որ հարաբերական բացակայում է՝ տողի հանգավորման պատճառով. «...Անթիւ վընաս էր, [որ] գործեցան» (գործեցին.— Տ. վրդ. Ծ.)։

¹⁸ Վերջին օրինակներն ավելի շուտ հանգավորման հետ են կապված։

Միջին հայերենից սկիզբ առնող այս երեւոյթը հետագա դարերի ընթացքում ավելի ամբողջական ու տիրապետող դարձավ եւ իր մեծ ազդեցութիւնը հավասարապէս թողեց ներկայիս գրական լեզվի՝ արեւելահայ եւ արեւմտահայ տարբերակների վրա, ուր կատարյալի այդ վերջավորութիւնները կապված են սոսկածանցի հետ:

Դրանց կողքին, սակայն, *Խլաթեցին գործածում է եւ գրաբարյան ձեւեր.*

«...Եւ կրանաւորք վանականին

Մոլորելով յարկ ոչ գաիմ,

Որք ի կանայս ոչ նայէին,

Հարկիւ ի մէջ նոցա մտիմ...» (էջ 126):

Ստորեւ բերվող օրինակները, հակառակ որ Ա խոնարհման ներգործական կամ շեղոք սեռի բայեր են, հանդես են գալիս կրավորական վերջավորութեամբ.

«...Աստ յապաշաւ զըղջան¹⁹ կեցան (կեցին.— Տ. վրդ. Մ.),

Եւ անդ փառաւք պըսակեցան...» (էջ 140):

«...Ընդ իւր պարգեւ փոխան տըւաւ (ետ.— Տ. վրդ. Մ.),

Թէ եւ ի մէնջ Տէրըն բարձաւ...» (էջ 142):

Հմմտ.

«...Օրնաւղբ մանկանց դահիճ եղան» (եղեն.— Տ. վրդ. Մ., էջ 124):

Խլաթեցու բնագրերում երբեմն տամ, զեմում բայերը հոգնակի երրորդ դեմքում ընդունում են վերջավորութիւններ, որոնք աշխարհաբար են հիշեցնում.

«...Րամիցն հրաման տըւին (ետուն.— Տ. վրդ. Մ.) ամենայն...» (էջ 122):

«...Զորս սըրոյ ճարակ տըւին...» (էջ 133):

«...զՄակաբայեցիսն սրոյ ճարակ տուին...» (էջ 156):

«...Եւ նորածեւ պաշար տըւին...» (էջ 172):

«...Այլ եւ զՀասանն Ծարեցին

Երեք որդւովքըն զեմեցին» (զենին.— Տ. վրդ. Մ., էջ 126):

Սպանանեմ բայը *Խլաթեցին* գործածում է եւ արեւմտահայ, եւ արեւելահայ աշխարհաբարին հատուկ անցյալ կատարյալի ձեւերով.

«...Րամից բոլորից Հային զտէր Թորոսն անդէն սպանեցին...» (էջ 123):

¹⁹ Զղջամ կամ զղջանամ բայի անցյալ կատարյալը համապատասխանաբար դառնում է զղջաց կամ զղջացաւ, հետեւաբար հոգնակի երրորդ դեմքում կլինի զղջացին կամ զղջացան եւ ոչ զղջան:

«...Ձոր առին եւ քանդեցին,
 Զեպիսկոպոսն սպանեցին...» (էջ 126):

Հմմտ.

«...Վասն Քրիստոսի սպանին, զի գլխաւորքն փրստոնէին» (քրիստոնէին.— Տ. վրդ. Ծ., էջ 122):

«...Եւ զԿապուտից ամուրն առին,
 Եւ չորս հարելր անդէն սպանին...» (էջ 126):

Գրաբարի Ե, Ի եւ Ա լծորդության այն ածանցավոր բայերը, որոնք իրենց հիմքում ունեն անսոսկածանցը, խոնարհման համակարգում որոշակի ձեւով առ այսօր պահպանվում են ներկայիս արեւմտահայ աշխարհաբարում: Սակայն արեւելահայերենում պատկերն այլ է. տեղի է ունեցել ան > ն հնչյունափոխություն միայն Ե լծորդության բայերում (գտանել > գտնել):

Խլաթեցու բնագրերում այդ կարգի բայերն իրենց կազմությամբ շատ նման են արեւմտահայերենին.

«...Րամից բոլորից Հային զտէր Թորոսն անդէն սպանեցին...» (էջ 123):

«...Նոյն սպաննելոցն էր բազմութիւն...» (էջ 131), բայց՝ «...Եւ սրպաննելոցն թիւ գլտին...» (էջ 171):

Ստորադասականի ապառնի ժամանակաձեւը նույնպես Խլաթեցու գործերում գրեթե փոփոխություն չի կրել՝ բացի մեկ-երկու օրինակներից, որտեղ նկատելի են փոքրիկ տեղաշարժեր:

«...Յաւղն կենաց տեղասցի յերեսս նոցա եւ բուսուսցէ յաւրն վերջին, որ եւ զձեզ առհասարակ ...պահպանեալ պատսպարեսցէ ...ի խորանն երկնաւոր հրավիրեսցէ (հրափրեսցէ.— Տ. վրդ. Ծ.) եւ անցեալ պաշտեսցէ. ամէն...» (էջ 190):

«...Եւ չար խորհրդողքն որ ի մին ճանապարհք գայցին ի վերայ քո...» (էջ 192):

«...Եւ մի՛ պսակեսցիք ի զարմից եւ ի զաւակաց քոց...» (էջ 192):

Ինչպես նկատելի է, առաջին երկու օրինակներում տեղաշարժը կապված է տեղամ եւ գամ բայերի ապառնի ժամանակաձեւի վերջավորության հետ: Քանի որ տեղամ եւ գամ բայերը չեզոք սեռի են պատկանում, եւ երկուսն էլ Ա լծորդության բայեր են, ուստի նրանց ապառնի ժամանակաձեւը գրաբարում (է-ն ե-ի փոխարեն) չէր կարող կրավորականին հատուկ ի, իմ վերջավորություն ստանալ:

Երրորդ օրինակում տեղաշարժն առնչվում է պսակեմ բայի հոգնակի երկրորդ դեմքի հետ. ջիֆ վերջավորությունյան փոխարեն ստացել է ցիֆ:

Հմմտ.

«...եւ դուք ազատեսցիֆ ի ծառայութենէ մեղաց...» (էջ 188):

Հրամայական եղանակ

Խլաթեցու երկերում հիմնականում հանդիպում են հրամայական եղանակի երկու ձևերը՝ բուն հրամայականը կամ հրամայական եղանակի ներկան եւ ժխտական կամ արգելական հրամայականը: Հորդորական հրամայականը կամ հրամայական եղանակի ապառնին, որ ներկայի համեմատությամբ իր իմաստով ավելի մեղմ բնույթ ունի եւ աշխարհաբարում թարգմանվում է ըղձական, պայմանական կամ հարկադրական ապառնիներով՝ արտահայտված հրամայական շեշտով, եւ կամ հենց հրամայականով, Խլաթեցու երկերում մեկ-երկու օրինակներում է հանդիպում (այստեղ հարկավոր է նշել, որ գրաբարի «Քերականներից ոմանք հորդորական հրամայականն առհասարակ չեն ընդունում, իսկ ոմանք էլ վերը նշված ձևերը համարում են ստորադասական եղանակի ձևերի տարբերակներ»²⁰): Ինչեւէ, հորդորական հրամայականի կազմության մեջ երկրորդ ապառնիի հարացուցային ձևերի հետ բաղարկություն է առաջացել: Օրինակ՝ առաջին եւ երկրորդ դեմքերի խառնումով առաջացել է պսակեսցիֆ ձևը, որը գործածվել է մի՛ արգելականի հետ.

«...եւ մի՛ պսակեսցիֆ ի զարմից եւ ի զաւակաց քոց...» (էջ 191–192):

Արգելական հրամայականի կազմության մեջ օրինաչափ ձևերի կողքին առկա են նաեւ ել վերջավորությամբ բայաձևերը՝ եւ-ի փոխարեն, որով բայը նույնացել է անորոշ դերբայի հետ.

«...ու մի՛ հրամայել թէ նոցա աւրհնութիւն զինչ լինիցի...» (էջ 192):

Մնացած օրինակներում բուն հրամայական եղանակը գրեթե պահպանել է իր գրության ձևերը.

«...Ուրացի՛ր զՔրիստոս եւ դարձի՛ր²¹ յօրէնս մեր...» (էջ 154):

«...Ուրացի՛ր եւ տանկացի՛ր...» (էջ 167):

²⁰ Ա. Ա. ԱՐԲԱՆՅԱՆ, նշ. աշխ., էջ 158:

²¹ Դառնալ բայի հիմքում ընկած է ձ պայթաշփականը (աֆրիկատը): Այս բայի բուն հրամայականը դասական գրաբարում կազմվում է երկու ձևով՝ դարձ կամ դարձի՛ր (ՆՀԲ, հտ. Բ., էջ 596), սակայն դառնալ բայը հիմնականում խոնարհվում է կրավորաձեւ՝ դարձի՛ր (տե՛ս Ա. Ա. ԱՐԲԱՆՅԱՆ, նշ. աշխ., էջ 153), ինչը նույնությամբ պահպանել է Գրիգոր Խլաթեցին:

«...Ով ընթերցող, թէ ուշիմ վերծանող ես, է նոյ կարդա՛, որպէս եւ շեշտած է ճառս...» (էջ 181):

«...Այսուհետեւ առ իս դարձի՛ր ի տուն քո եւ առ եղբարս քո...» (էջ 183):

«...Դու առ մեզ արե՛կ²², մեր աշացս լոյս ես եւ սրտի սուն...» (էջ 184):

Ըղծական եղանակ

Միջին հայերենի ըղծական եղանակը, որ ունի երկու ժամանակաձեւ՝ ապառնի եւ անցյալ ապառնի, իր իմաստով համապատասխանում է աշխարհաբարի ըղծական եղանակին: Այս եղանակի բայաձեւերն ինչպես միջին հայերենում, գալիս են գրաբար սահմանական եղանակի ներկա եւ անցյալ անկատար ժամանակաձեւերից:

Ստորեւ բերվող օրինակներում նկատելի է, որ ըղծական եղանակի բայաձեւերը իլաթեցու բնագրերում հանդես են գալիս հիմնականում թող, ուր, զի, թէ, եթէ եւ նման այլ շաղկապների եւ եղանակավորող բառերի հետ եւ առավելաբար գործածվում են ստորադասական նախադասություններում.

«...Թող մեզ խաւարի այսար լոյս լուսնին եւ ակն արեւին...» (էջ 123):

«...Ոչ ունելով բժիշկ ճարտար,

«...Ով մանկունք սուրբ եկեղեցւոյ, որք հանդիպի՛ ի սմա եւ օգտի՛ ի սմանէ, յիշեցէ՛ք ի Քրիստոս...» (էջ 178):

«...յիշողն յիշեալ եղիցի, եւ ուր զԱստուած-ողորմին աւէ, Աստուած նմա ողորմի...» (էջ 178):

«...Աստուած իւր ամենառատ ողորմութեամբն քաղցր աշաւք հայի ի Սանէլն...» (էջ 182):

«...ամենախնամն Աստուած բարին յաջողէ եւ զձերոցդ ամենի...» (էջ 183):

«...Եւ թէ դորա սրտին աւֆայ կու պահես, ուխտէպ կառնես...» (էջ 184):

«...Եւ թէ կու ջանաս զՅովհաննէս վարդապետդ ի հետ բերես²³, ապա թէ չէ ի գալ²⁴, դու ե՛կ ի տուն քո՝ առ ընտանիս քո...» (էջ 184):

«Ուր տայ մեզ դեղ առողջարար...» (էջ 139, 161, 184, 190, 191, 193, 194):

²² Կարծում ենք՝ արե՛կ-ը գամ բայի բուն հրամայականն է, որ կազմվել է միեւնույն բայի արի՛ եւ ե՛կ ձեւերի միացումից: Սա միջին հայերենում շատ գործածական է:

²³ Սպասելի էր բերել:

²⁴ Սա միջին հայերենին բնորոշ ժխտական դերբայի օրինակ է: Վերջինս միջին հայերենում ձեւավորվում է անորոշ դերբայից եւ չ ժխտական մասնիկով կազմված օժանդակ բայի ներկայի եւ անցյալի ձեւերից (տե՛ս Ս. Մ. ԱՆԹՈՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 315): Սակայն ժխտական դերբայ լինելով հանդերձ՝ այստեղ կիրառվել է ըղծականի իմաստով՝ «ապա եթէ չգա»:

Վերելի օրինակներից կարելի է ենթադրել, որ Խլաթեցու բնագրերը հարուստ են ըղձական եղանակի ապառնի եւ անցյալ ապառնի ժամանակներով արտահայտված բայաձեւերով, ինչը հնարավոր չէ համեմատել պայմանական եւ հարկադրական եղանակներով հանդես եկող բայերի հետ:

Պայմանական կամ ենթադրական եղանակ

Պայմանական եղանակը եւս երկու ժամանակաձեւ ունի՝ ապառնի եւ անցյալ ապառնի, սակայն Խլաթեցու բնագրերում միայն մեկ՝ ապառնի ժամանակով բայաձեւերն են հանդիպում: Միջին հայերենի պայմանական եղանակն իր արտահայտած իմաստով նույնաձեւն է արեւելահայ աշխարհաբարի պայմանականին՝ գալով գրաբարյան ներկա կամ անցյալ անկատար բայաձեւերից՝ կու կամ կ մասնիկների ավելացմամբ.

«...եւ թէ դորա սրտին աւֆայ կու պահես, ուխշէպ կառնես...» (էջ 184):

Խլաթեցու մյուս օրինակներում կու կամ կ մասնիկներ չկան.

«...Յետոյ գամֆ ի ձեր շուքդ հանգչիմֆ եւ ի ձեր տեսդ միխթարիմֆ...» (էջ 183):

«Եթէ ապրիմք՝ ձեր տեսովդ ուրախանամֆ եւ թէ մեռանիմք՝ զհողս հողոյն տաս, եւ զհողիս աղաւթիւքդ յուղարկես...» (էջ 194):

«...եւ թէ խոնարհիք ի ձեր բարձրութենէդ ի մեր նուաստութիւնս եւ յիշման առնէք (առնէք.— Տ. վրդ. Ծ.) արժան հարցման աղազաւ, կեամֆ...» (էջ 194):

«...որ թէ զամենայն մարմինս իմ մասն կտրատել տաս, ...ես զՔրիստոս ոչ ուրանամ...» (էջ 161):

Հարկադրական եղանակ

Արեւելահայ աշխարհաբարում հարկադրական եղանակի բայաձեւերը կազմվում են ըղձականի ձեւերի վրա պիտի եղանակիչն ավելացնելով (որը պիտիմ բայի սահմանական ներկա ժամանակի եզակի թվի երրորդ դեմքն է):

Խլաթեցին պիտի եղանակիչը երբեմն դնում է նաեւ անորոշ դերբայի հետ՝ նրան տալով անհրաժեշտորեն կամ հարկադրաբար կատարվելիք գործողության գաղափար:

«...Երկիր թագաւորին լաւ շէն պիտի պահել, որ զաւրք թագաւորին մարմնաւոր ընչիւք ուրախ պահեն...» (էջ 193):

Մնացած օրինակներում պիտի-ն հանդես է գալիս ինքնուրույն կիրառությամբ: «Հարց է ծագում. ինչպէս է առաջացել, եղանակիչի ինքնուրույն կիրառությունն ստացել այս բառը: Ասացինք, որ պիտի բայաձենն արտահայտում է «հաւկավոր է» (ընդգծումը.— Տ. Վրդ. Մ.) իմաստը, ուստի սրան պետք է հաջորդեր որ ստորագասական շաղկապով սկսվող ենթակա բնույթի երկրորդական նախադասություն (բայի եղանակային ձեւով)²⁵...»²⁶:

«...իմաստուն ու խերանդէշ նայիպ ու վազիր պիտի, որ հետ թշնամոյն կոտի ու զշար մարդկան կորցնեն...» (էջ 193):

«...Աղաւթարար մարդ պիտի, որ վասն թագաւորին աղաւթս առնէ...» (էջ 193):

Եզրակացություն

Գրիգոր Խլաթեցու «Բնագրական նշմարներ»-ում գոյութիւն ունեցող խոնարհման համակարգի տեղաշարժերը քննելիս հանգեցինք հետեւյալ եզրակացութեան.

Ի տարբերութիւն գրաբարի, որտեղ բայն ունի երեք եղանակ՝ սահմանական, ստորագասական եւ հրամայական, Խլաթեցու միջին հայերենյան բնագրերում, ինչպէս եւ արեւելահայ աշխարհաբարում, առանձնացված է հինգ եղանակ՝ սահմանական, հրամայական, ըղծական, պայմանական եւ հարկադրական, որոնք հանդես են գալիս իրենց ձեւաիմաստային առանձնահատուկ արտահայտութիւններով:

Խլաթեցու բնագրերում՝ խոնարհման համակարգում առկա տեղաշարժերը հիմնականում վերաբերում են բայի անդեմ ձեւերի՝ անորոշ, անցյալ եւ հարակատար դերբայների կազմութեանն ու դիմավոր բայի որոշ ժամանակաձեւերին, որոնք կազմութեամբ զգալիորեն տարբերվում են դասական գրաբարի խոնարհման համակարգից եւ որոշակի փոփոխութիւններ կրելով՝ մոտենում են աշխարհաբարին:

²⁵ Արսեն Այտընյանն այս մասին գրում է. «Պիտի հին դիմագուրկը, որ հիմայ միայն ստորագասականով մէկտեղ կը բանի ապառնի շինելու, հին ռամկօրէնի մէջ սկսաւ որ շաղկապով գործածուիլ. այսպէս՝ պիտի որ լինի» (Ա. ԱՅՏԵՆԵԱՆ, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 97):

²⁶ Տես Ս. Մ. ԱՆԹՈՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 345:


РЕЗЮМЕ

Глагол — одна из частей речи, пережившей несравнимо большие изменения в «Текстуальных проблесках» Григора Хлатеци. Живя и творя в послеклассический период и излагая мысли на среднеармянский языке, Хлатеци, тем не менее, в значительной степени был связан с классическим грабарором (древнеармянский язык).

Вместе с этим, однако, есть много общностей и с ашхарабаром (новоармянский язык), связанных с формированием личных и безличных глаголов в системе спряжения и способов изменения наклонений глаголов при сравнении с грабаром.

SUMMARY

The verb is one of the parts of the speech that has undergone countless changes in “Original Notes” by Grigor of Khlat. Living and writing in the post-classical period, Grigor of Khlat, however, was largely associated with the Classical Armenian language while writing in the Middle Armenian. Nevertheless, there are many similarities with the Modern Armenian language as well, which are related to the formation of personal and impersonal verb forms in the conjugation system and the change of verb moods in comparison with the Classical Armenian language.



ՍԵՂԱ ՊԱՐՍԱՄՅԱՆ
ՀՅԹԻ

ՕՍՄԱՆՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՆԵՐԳՐԱՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ
ԲԱՆԱՎԱՅՐԵՐԻ ԵՒ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՉՆՉԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՎԱՆԻ,
ԲԻԹԼԻՍԻ ԵՒ ԷՐԶՐՈՒՄԻ ՆԱՅԱՆՔՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ (1915–1918 ԹԹ.)

Հայոց ցեղասպանության իրագործման համար պետությունը ներգրավել էր իր քաղաքական ու ռազմական ողջ ներուժը: Ցեղասպանության իրականացման գործում կարեւոր դերակատարություն է ունեցել նաեւ օսմանյան բանակը՝ Իսմայիլ էնվերի գլխավորությամբ¹: Պետական հրահանգով՝ թուրքական բանակի ստորաբաժանումները ներգրավված են եղել ցեղասպանության տարբեր գործողություններում՝ սկսած հայերի տների խուզարկումներից, տղամարդկանց զանգվածային ձերբակալություններից, աքսորից, ինքնապաշտպանական մարտերի ճնշումից մինչեւ տեղահանություններ, սպանություններ, երեխաների բաշխում թուրքական որբանոցներին, ունեցվածքի յուրացում, ավերածություններ եւ այլն²:

Այս հոդվածի նպատակն է ներկայացնել օսմանյան բանակի ներգրավվածությունը հայկական բնակավայրերի եւ առանձին թաղամասերի ոչնչացման գործում, որոնք, որպես կանոն, ուղեկցվել են հայկական

¹ Իսմայիլ էնվեր — Օսմանյան բանակի գլխավոր հրամանատար, ռազմական նախարար, Հայոց ցեղասպանության ծրագրման եւ կազմակերպման հիմքում կանգնած երիտթուրք պարագլուխներից: Նրա անմիջական հրահանգով ու վերահսկողությամբ հենց բանակի ներսում զինաթափվել ու ոչնչացվել են հայ սպաներն ու զինվորները:

² Հայոց ցեղասպանության տարբեր փուլերում բանակի ներգրավվածության մասին տե՛ս նաեւ R. KÉVORKIAN, The Armenian Genocide: A Complete History, New York, 2011, էջ 282–353. T. AKÇAM, The Young Turks' Crime against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire, Princeton, 2012, էջ 169–170, 189–190, 322. V. N. DADRIAN, The Role of the Turkish military in the destruction of Ottoman Armenians: A study in historical continuities, Journal of Political and Military Sociology, 1992, Vol. 20, No. 2, (Winter), էջ 275–277. A. ԱՎԱԿՅԱՆ, Գեոցիդ армян: механизмы принятия и исполнения решений, Ереван, 2013, էջ 122–123. H. KAISER, L. ESKIJIAN, N. ESKIJIAN, At the Crossroads Der Zor of Death, Survival, and Humanitarian Resistance in Aleppo, 1915–1917, Tampa, 2017, էջ 6–7. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Զանգվածային եւ զանգվածային բռնությունները. Օսմանյան կայսրության մոլոտովման բնակչության մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը, Երեւան, 2017, էջ 98–110:

պատմամշակութային հուշարձանների թիրախավորմամբ³։ Տարբեր վավերագրերի եւ վկայությունների միջոցով հողվածն առաջ է քաշում երկու հիմնախնդիր՝ հայկական հետքի վերացումը՝ որպես պետական անհրաժեշտություն՝ երիտթուրքերի ցեղասպանական ծրագրի մաս, եւ դրա իրականացումը, որը վերապահված է եղել առաջին հերթին բանակին։ Առանձին շեշտադրմամբ ներկայացվում է բանակի մասնակցությունը մերձեցականության՝ Վանի, Բիթլիսի, էրզրումի նահանգների հայկական բնակավայրերի ոչնչացմանը։

* * *

Երիտթուրքական իշխանություններն Արեւմտյան Հայաստանը կամ Արեւելյան վեց վիլայեթները՝ Սեբաստիան, Դիարբեքիրը, Խարբերդը, էրզրումը, Բիթլիսը, Վանը, ինչպես նաեւ Տրապիզոնի վիլայեթը, դիտել են այն թեժ կետերը, որտեղից հայերի բնաջնջման գործընթացն առավել հրատապ եւ կարեւոր էր⁴։ Այդ նպատակով հայերի տեղահանությունն ու կոտորածներն առավել արագ ու շահավետ կազմակերպելու համար ներգրավվում է էրզրումում տեղակայված օսմանյան Երրորդ բանակը՝ Մահմուդ Քյամիլի հրամանատարությունը⁵։ Նրան մեծապես աջակցել են գեներալներ Հալիլ Կուտը՝ էնվերի հորեղբայրը, եւ Ալի Իսսան Սաբիսը⁶։ Վերջին երկուսի անունները՝ որպես Հայոց ցեղասպանության հիմնական իրագործողներ, արձանագրված են եղել Կ. Պոլսի հայոց պատրիարք Զավեն Եղիայանի կազմած եւ 1919 թ. Փարիզի խաղաղության վեհաժողովին

³ Ինչպես 1894–1896 թթ., 1909 թ. կոտորածների ընթացքում, այնպես եւ Հայոց ցեղասպանության տարիներին հայկական պատմամշակութային հուշարձանների, մասնավորապես վանքերի, եկեղեցիների կողոպտման ու ոչնչացման գործում կարեւոր դերակատարություն է ունեցել օսմանյան բանակը։ Այս մասին մանրամասն տես Ս. ՊԱՐՍԱՄՅԱՆ, Մշակութային ցեղասպանության իրագործման մեխանիզմներն 1909 թ. Ադանայի ու հարակից շրջանների կոտորածների ընթացքում եւ դրանց հետեւանքները, «Ցեղասպանագիտական հանդես», թ. 1 (1), Երեւան, 2013, էջ 98–104. Ս. ՊԱՐՍԱՄՅԱՆ, Հայկական մշակութային արժեքների ոչնչացման քաղաքականությունն ու դրա հետեւանքները 1894–1896 թթ. համիդյան կոտորածների տարիներին, «Ցեղասպանագիտական հանդես», թ. 2 (1), Երեւան, 2014, էջ 18–30։

⁴ S. V. N. DADRIAN, Children as victims of genocide: the Armenian case, "Journal of Genocide Research", 2003, 5 (3), September, էջ 423։

⁵ Երրորդ բանակի սպայական անձնակազմի անմիջական հրամանատարությամբ են գործել Հայոց ցեղասպանությունն իրականացնելու համար կազմավորված «Հատուկ կազմակերպության» (Teşkilat-ı Mahsusa) ջոկատները. տես անդ, ինչպես նաեւ նույնի՝ "The Role of the Turkish military...", էջ 276–277։

⁶ S. V. N. DADRIAN, The Role of the Turkish military..., էջ 277։

կից ստեղծված՝ Պատերազմի հեղինակների պատասխանատվության եւ պատիժների սահմանման հանձնաժողովին ներկայացված ցուցակում: Այնտեղ կային նաեւ ռազմական այլ խոշոր ղեկավարների եւ բարձրաստիճան զինվորականների անուններ, օրինակ՝ Բեհիշ Բեյ (Պատերազմի նախարարությունում բանակի բաժինների ղեկավար), Սուլեյման Նուման փաշա (ռազմական առողջապահության բաժնի տնօրեն, պատասխանատու էր հայ ռազմական բժիշկների սպանության համար), Կովկասի եւ հայկական գավառների բանակային կորպուսի ղեկավարներ՝ Յակուբ Չեկի փաշա, Հիլմի Աբդուլ Քադրի, գնդապետ Օսման Բեյ: Այս ղեկավարները՝ Ալի Իսսան Սաբիսի եւ Հալիլ Կուտի հետ միասին, պատասխանատու էին հայկական նահանգներում զանգվածային կոտորածների եւ անլսելի վայրագությունների համար⁷:

Թուրք զինվորականության շրջանում հակահայկական տրամադրությունների բորբոքման եւ Հայոց ցեղասպանության գործում զինվորների ներգրավվածությունն ապահովելու համար շրջադարձային եղան ռուսական ճակատում օսմանյան բանակի կրած անընդմեջ պարտությունները: Մասնավորապես՝ Սարիղամիշի ճակատամարտում (1915 թ., հունվար) թուրքական բանակի կրած ծանր պարտությունն օգտագործվեց հակահայկական կրքեր բորբոքելու համար՝ պարտության մեղքը բարդելով հայ աշխարհազորայինների վրա⁸: Բանակի հրամանատարության պնդումները՝ հայերի «գավառական լինելու», «զինված ապստամբություններ» կազմակերպելու վերաբերյալ, քարոզչության արդյունավետ գործիք դարձան⁹, ինչը հետագայում դառնալու էր հայերի տեղահանությունների ու բնաջնջման հիմնական արդարացումներից մեկը¹⁰: 1915 թ. փետրվարից սկսած՝ Երրորդ բանակի հրամանատարության վերահսկողության ողջ տարածքից հաճախակի են դառնում կառավարությանն ուղղված՝ հայերին զրպարտող հեռագրերը¹¹: Դրանցում հատկապես առանձնառնում են Մահմուդ Քյամիլի ուղարկածները, որոնցից նաեւ պարզ է դառնում հայերի դեմ միջոցառումներ իրականացնելու համար անձամբ որոշումներ կայացնելու նրա արտոնված լինելը¹²: Կառավարությանն ուղղ-

⁷ Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի արխիվ (անմշակ):

⁸ Տե՛ս Դ. ԱՌՇԱՄ, նշ. աշխ., էջ 157–162:

⁹ Տե՛ս անդ, էջ 158–175:

¹⁰ Տե՛ս անդ:

¹¹ Տե՛ս անդ, էջ 159:

¹² Տե՛ս անդ, էջ 160–162:

ված հեռագրերից մեկում Մահմուդ Քյամիլը, Վանի ինքնապաշտպանական մարտերը ներկայացնելով «ապստամբություն», իր որոշման մասին հետեւյալն է տեղեկացնում. «...որոշում է կայացվել մինչեւ վերջին մարդն արմատախիլ անել դավաճաններին, որոնք զինված ապստամբություն են բարձրացրել կառավարության դեմ» (ընդգծումը.— Ս. Պ.)¹³:

Օսմանյան կայսերական բանակի բարձրագույն հրամանատարության գրասենյակից Երրորդ եւ Չորրորդ բանակների հրամանատարներին հրահանգվել է հնարավոր ամեն տեսակի օժանդակություն ցուցաբերել Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի նահանգապետներին՝ այդ տարածքներից հայերին հեռացնելու եւ դեպի հարավ աքսորելու համար¹⁴: Ավելին՝ Էրզրումում տեղահանության մասին հրամանները տվել է Երրորդ բանակի հրամանատարությունը, մասնավորապես՝ Մահմուդ Քյամիլը¹⁵: Էրզրումի նահանգապետ Թահսին բեյի՝ ներքին գործերի նախարարին ուղարկված 1915 թ. մայիսի 13-ի հեռագիրը փաստում է, որ բանակը կենտրոնական դերակատարություն է ունեցել տարածաշրջանից հայերի մաքրման սկզբնական գործողություններում¹⁶: Արեւելյան վիլայեթների քաղաքային իշխանությունների հարցմանն ուղղված Ներքին գործերի նախարարության մայիսի 23-ի պաշտոնական պատասխանում նշվում էր զինվորականների հրամաններին անվերապահորեն ենթարկվելու անհրաժեշտության մասին: Խոսքը Երրորդ բանակի հրամանատարության մասին է, որի լիազորություններն առնվազն մինչեւ 1915 թ. օգոստոսը տարածվում էին բոլոր վեց վիլայեթներում¹⁷: 1915 թ. Էրզրումում Գերմանիայի փոխհյուպատոսը Մաքս Էրվին Ֆոն Շոյբներ-Ռիխտերի՝ տեղահանվող հայերի հանդեպ իրագործված զանգվածային ջարդերի առիթով հայտնած վրդովմունքին ի պատասխան՝ Թահսին բեյը փորձել է արդարանալ՝ վստահեցնելով, որ տարածաշրջանում «իրական իշխանությունը» գտնվում է Մահմուդ Քյամիլի ձեռքում¹⁸:

¹³ Անդ, էջ 160:

¹⁴ Խոսքը 1915 թ. մայիսի 6-ին Ներքին գործերի նախարարության անվտանգության ընդհանուր վարչության՝ Վանի եւ Բիթլիսի նահանգապետեր Զեւդեդ եւ Մուստաֆա Աբդուհալիբ բեյերին ուղարկված ծածկագիր-հեռագրով եւ Էրզրումի նահանգապետ Թաշինին հասցեագրված համանման մեկ այլ հեռագրով տրված հրահանգների կատարմանն օժանդակելու մասին է. տե՛ս T. AKÇAM, նշ. աշխ., էջ 189–190:

¹⁵ Տե՛ս R. KÉVORKIAN, The Armenian Genocide..., էջ 291:

¹⁶ Տե՛ս անդ, էջ 292:

¹⁷ Տե՛ս անդ, էջ 292, 313–314:

¹⁸ Տե՛ս անդ, 293–294:

Բանակի անմիջական մասնակցության մասին փաստող կարեւոր եւ առայժմ գտնված միակ պաշտոնական փաստաթուղթը 1915 թ. հուլիսի 10-ով թվագրվող հեռագիրն է, որը, Մահմուդ Քյամիլի ստորագրությամբ, Թորթումում (էրզրումից հյուսիս) տեղակայված Երրորդ բանակի շտաբից ուղարկվել է Սվազի (Սեբաստիա), Տրապիզոնի, Վանի, Մամուրեսթ ուլ-Ազիզի (Խարբերդ), Դիարբեքիրի (Տիգրանակերտ) եւ Բիթլիսի նահանգապետներին¹⁹։ Այս փաստաթուղթը ներառվել է երիտթուրքերի դատավարության նյութերում եւ ներկայացվել 1919 թ. ապրիլի 27-ի առաջին դատավարության ժամանակ²⁰։

Հաշվի առնելով փաստաթղթի կարեւորությունը՝ մեջբերում ենք հեռագրի ամբողջական թարգմանությունը.

«Մեզ հայտնի է դարձել, որ որոշ գյուղերում, որոնց բնակչությունը տեղահանվել է թիկունք, մահմեդական բնակչության որոշակի [տարրեր] հայերին ապաստան են տվել իրենց տներում։ Քանի որ սա կառավարության հրամանների խախտում է, հայերին ապաստան տված կամ պաշտպանող տնտեսությունների ղեկավարները պետք է մահապատժի ենթարկվեն իրենց տների առջեւ, եւ պարտադիր է, որ նրանց տներն այրվեն։ Այս հրամանը պետք է պատշաճ ձևով փոխանցվի հասցեատերերին։ Հետեւեք, որ տարածաշրջանում չմնա թեկուզ եւ մեկ շտեղհահանված հայ, եւ տեղեկացրեք մեզ ձեր ձեռնարկած գործողությունների մասին։ Կրոնափոխ հայերը նույնպես պետք է տեղահանվեն։ Եթե հայերին պաշտպանող կամ նրանց հետ բարեկամական կապեր պահպանող անձինք զինվորականներ են, նրանց կապերը բանակի հետ պետք է անհապաղ խզվեն՝ նրանց վերադասներին պատշաճ կերպով տեղեկացնելուց հետո, եւ նրանք պետք է ենթարկվեն քրեական պատասխանատվության։ Եթե նրանք քաղաքացիական անձինք են, նրանց պետք է հեռացնեն պաշտոններից եւ դատեն ռազմական դատարանի առջեւ։

Երրորդ բանակի հրամանատար Մահմուդ Քյամիլ, 10 հուլիսի, 1915 թ.»²¹։

¹⁹ Տե՛ս անդ, էջ 314։

²⁰ «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի», առաջ., թարգմ. եւ ծանոթ.՝ Ա. Հ. Փափազյանի, Երեւան, 1988, էջ 29, 44։

²¹ Տե՛ս R. KÉVORKIAN, The Armenian Genocide..., էջ 314։

Պաշտոնական այս հեռագիրը որեւէ կասկած չի թողնում Երրորդ բանակի հրամանատարության անմիջական մասնակցության առումով: Այն նաեւ լավագույն վկայությունն է մինչեւ վերջին հայի ոչնչացման՝ իթթիհադականների մտադրության մասին, անգամ եթե այդ հայն իսլամ է ընդունել:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ Երրորդ բանակի հրամանատարությունը լիիրավ գործելու եւ տեղում որոշումներ կայացնելու արտոնություն էր ստացել մայրաքաղաքից: Մեր ուսումնասիրությունները թույլ են տալիս պնդել, որ հատկապես Վանի, Բիթլիսի, Էրզրումի նահանգներում օսմանյան բանակի զինվորներն առանձնակի վերժխնդրությամբ են գործել: Սեպուհի²² վկայությամբ՝ թուրք զինվորները, իրենց բոլոր կորուստները վերագրելով հայ կամավորներին, «սոսկալիօրեն կատաղած», անխնա ավերում եւ կոտորում էին նահանջի ճանապարհին ընկած հայկական գյուղերը²³: Ռազմաճակատին մոտ գտնվելով՝ զինտեխնիկայի, թնդանոթների կենտրոնացումը նշված տարածքներում էական բարդություն չի ներկայացրել առավել լայնածավալ ավերածություններ իրականացնելու համար:

Որպես ցեղասպանության պետական քաղաքականության մաս՝ հայերի ֆիզիկական բնաջնջմանը զուգահեռ ոչնչացվել են հայկական հետքերը՝ մասնավորապես տարածքային պատկանելություն խորհրդանշող պատմամշակութային հուշարձանները, առաջնորդարանները եւ այլն, որին նույնպես իր գործուն մասնակցությունն է ունեցել օսմանյան բանակը: Ստորեւ բերված՝ իր տեսակի մեջ բացառիկ վավերագիրը լիովին հաստատում է մեր այն փաստարկը, որ հայկական հետքերի վերացումը, հատկապես հայերի պատմական տարածքներում երիտթուրքերի ցեղասպանական ծրագրի բաղկացուցիչ մաս է կազմել, որը վերապահված է եղել առաջին հերթին բանակին:

Այսպես՝ 1916 թ. հոկտեմբերի 7-ին Ահմեդ Ջեմալին²⁴ հղած իր հեռագրերից մեկում ներքին գործերի նախարար Թալեաթը, բացատրելով

²² Սեպուհ (Արշակ Ներսիսյան, ծնված՝ 1872 թ., Բաբերդ) — հայ ազգային ազատագրական շարժման գործիչ, ֆիդայի: Եղել է ՄԴ Հնչակյան, ապա՝ ՀԶ Դաշնակցություն կուսակցությունների անդամ: Հայկական 1-ին կամավորական զնդի 2-րդ վաշտի հրամանատար: Այդ պաշտոնում մասնակցել է Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում մղվող կռիվներին: Սեբաստացի Մուրադի հետ հիմնադրել է «Մեկ հայ, մեկ ոսկի» հիմնադրամը:

²³ Սեֆոնտ, էջեր իմ յուշերէն, հտ. Ա., Պոսթրն, «Հայրենիք» տպարան, 1925, էջ 237:

²⁴ 1914 թ. նշանակվել է կայսրության ռազմածովային նախարար, 1914–1918 թթ.՝ Սիրիայում գործող 4-րդ բանակի հրամանատար, 1915–1917 թթ.՝ Սիրիայի կառավարիչ, 1915 թ. կլիկիհայություն տեղահանության ու կոտորածների կազմակերպիչներից էր:

Սաի կաթողիկոսարանի վերացման անհրաժեշտությունը, հետեւյալն է գրում. «...Սաի կաթողիկոսարանի վերացումը եւ առաջին իսկ հնարավորության դեպքում կաթողիկոսի արտաքսումն այնտեղից նպատակ ունի լիովին ջնջել այդ վայրի գոյությունը, վայր, որը Կիլիկիայում հայերի համար պատմական ու ազգային մեծ նշանակություն ունի, եւ որը հայերի կողմից ներկայացվում է որպէս հայկական կառավարության վերջին նստավայր»²⁵; Թաւեաթի սուլն հրահանգն անմիջապէս գործի է դրել Զեմալ փաշայի զինակից եւ փոխանորդ Օմեր Ֆահրեդդինը²⁶; Վերջինս Կիլիկիայի հայկական հուշարձաններն ավերակների վերածելուց հետո հայտարարել է. «Աւետարանը ձեր ձեռքէն պիտի առնենք»²⁷; Ֆոնուզի (ավան Ադանայի նահանգի Մարաշ գավառի Զեյթունի գավառակում) Ս. Կարապետ վանքի վանահայր Ժ. վրդ. Թագակճյանի տեղեկագրի (Հաւելայ, 27 փետրվար, 1919 թ.) համաձայն՝ հայերի տեղահանությունից հետո Ֆոնուզում եւ Զեյթունում թուրք զինվորները հրկիզել եւ ավերել են 3 վանք, 20 եկեղեցի, 20 դպրոց եւ 2 առաջնորդարան²⁸; Զաքարիա Պզտիկյանի²⁹ կազմած եւ 1921 թ. ապրիլի 14-ին Կիլիկիայում Հայ ազգային խորհրդին եւ Ֆրանսիական բարձրագույն հրամանատարությանը ներկայացրած հուշագրի համաձայն՝ Առաջին աշխարհամարտի ընթացքում Կիլիկիայի միայն հայ առաքելական համայնքին պատկանող եկեղեցական կալվածքների (407 շինություն³⁰) կրած վնասի չափը կազմել է շուրջ 623 000 օսմանյան ոսկեդրամ³¹:

²⁵ Sêu T. AKÇAM, U. KURT, The Spirit of the Laws: The Plunder of Wealth in the Armenian Genocide, translated by A. Arkun, New York, 2015, էջ 5:

²⁶ Օմեր Ֆահրեդդին (1868–1948 թթ.)՝ հայտնի «Անապատի վագր» մականվամբ – 1914 թ. նշանակվել է 4-րդ բանակին առընթեր՝ Մոսուլում տեղակայված 12-րդ ջոկատի հրամանատար, 1915 թ. գործուն մասնակցություն ունեցել Ուրֆայի, Զեյթունի, Մուսա լեռան, Հաճնի հայերի ինքնապաշտպանության ճնշմանը: Օմեր Ֆահրեդդինի այդ գործունեության մասին ավելի մանրամասն տե՛ս Պ. ՏՕՆԱՊԵՏԵԱՆ, Զայն տառապելոց, Փարիզ, 1922, էջ 289–290:

²⁷ Անդ: Զինվորների կողմից Սաի մայրավանքի ավերման եւ կողոպտման մասին տե՛ս նաեւ Խմբագրական, «Համաշխարհային պատերազմ», «Մշակ», Թիֆլիս, 21 օգոստոս, 1915, թ. 183, էջ 1:

²⁸ Գ. ԱՀԱՐՈՆՅԱՆ, Յուշամատեան Մեծ եղեռնի 1915–1965, Պէյրուս, 1965, էջ 850–854:

²⁹ Առաջին աշխարհամարտի նախօրեին եղել է մեջլիսի անդամ, իսկ Հայոց ցեղասպանությունից հետո՝ Լիբանանի Հայոց առաջնորդարանի ղեկավանապետ եւ իրավական խորհրդական:

³⁰ Այս թվաքանակի մեջ ներառված են միայն Կիլիկիայի Հայոց կաթողիկոսության (86 շինություն)՝ Ադանա, Տարսոն քաղաքների եւ շրջակա գյուղերի, Մալաթիա, Սիս, Մերսին, Սիլիֆքե (Սելեկիա) քաղաքների եկեղեցական կալվածքները:

³¹ Բ. ԵՂԱՅԵԱՆ, Ատանայի հայոց պատմություն, Անթիլիաս–Լիբանան, 1970, էջ 871–872, 878–880:

* * *

1915—1916 թթ. Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերից տեղահանության հիմնական գործընթացն ավարտելուց եւ Արեւմտյան Հայաստանը հայաթափելուց հետո հայկական հետքի վերացումը դառնում է առաջնահերթություն: Հատկապես մերձճակատային բնակավայրերում հրետանու կենտրոնացումով գործի է դրվում մի ամբողջ ֆաղաֆային մշակույթի³² կամ առանձին հայկական թաղամասերի ոչնչացման գործիքակազմը: Մեր ուսումնասիրությունները թույլ են տալիս պնդել, որ նման եղանակով, ինչպես նաեւ համատարած հրկիզումների միջոցով թիրախավորվել եւ գրեթե ամբողջությամբ հողին են հավասարեցվել մասնավորապես Վան, Բիթլիս, Սղերդ, Մուշ, էրզրում, Երզնկա քաղաքները՝ հարակից բնակավայրերով: Նշված վայրերում թուրք զինվորները թիրախավորել եւ առանձնակի վրեժխնդրությամբ են ոչնչացրել կրոնական, պատմամշակութային հուշարձանները (հնագույն եւ միջնադարյան վանքեր, եկեղեցիներ, մատուռներ, հուշակոթողներ, գերեզմանոցներ, խաչքար-տապանաքարեր՝ վիմագիր արձանագրություններով ու որմնանկարներով):

Ստորեւ Վանի, Բիթլիսի, Մուշի, Սղերդի, էրզրումի, Երզնկայի եւ հարակից այլ բնակավայրերի օրինակով կներկայացնենք Երրորդ բանակի զինվորների իրականացրած կոտորածները, ավերածություններն ու ավարառությունն առանձին-առանձին:

Վան եւ շրջակայք

Վանի գավառակը (կազա) համանուն գավառի (սանջակ) եւ նահանգի (վիլայեթ) կենտրոնն էր: Օսմանյան կայսրության ժԹ. դարավերջի — Ի. դարասկզբի վարչատարածքային բաժանմամբ՝ գավառակը կազմված էր կուսակալանիստ Վան քաղաքից ու կուսակալի ենթակայության տակ գտնվող շրջակա գյուղերից (Վան-Տոսպ կենտրոնական գյուղախմբից եւ երեք այլ՝ Թիմար, Արճակ, Հայոց ձոր գյուղախմբերից)՝ ընդհանուր առ-

³² Հստ հեղինակի՝ ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին Արեւմտյան Հայաստանի ֆաղաֆային մշակույթն ընդգրկել է բնակելի թաղամասերը, վանքերը, եկեղեցիները, կամուրջները, գերեզմանոցները, կրթական եւ կրթասիրաց հաստատությունները, վարչական մարմինները, առեւտրաարհեստագործական ձեռնարկությունները, տպարանները, արհեստանոցները, արվեստանոցները, շուկաները, խանութները, կրպակները, պանդոկները եւ այլն: Արեւմտյան Հայաստանի մի քանի տասնյակ քաղաքներից առավել նշանավոր էին Վանը, Շատախը, Բաղեշը (Բիթլիս), Մուշը, Կարինը (էրզրում), Երզնկան, Սեբաստիան (Սվազ), Խարբերդը, Մալաթիան, Ակնը եւ այլն:

մամբ 112 հայկական բնակավայրերով³³։ Հայոց ցեղասպանության նախօրյակին Վանի գավառակի հայ բնակչության թիվը կազմում էր 10 743 տուն, 62 656 շունչ, որից Վան քաղաքում՝ 4230 տուն, 22 470 շունչ հայ³⁴։

1904 թ. Կ. Պոլսի պատրիարքարանի՝ առաջնորդական վիճակների հրատարակած պաշտոնական վիճակացույցի համաձայն՝ տվյալ ժամանակահատվածում Վանի թեմում (Վան-Տոսպ, Ադիլչեվազ, Բերկրի, Արճեշ) կային գործող 114 եկեղեցի, 25 վանք, Լիմ-Կտուցի (Թիմար) թեմում՝ 24 եկեղեցի, 8 վանք, Հեքյարի թեմում՝ 6 եկեղեցի, Աղթամարի թեմում (Կարճկան, Ոստան, Կեցան, Կարկառ, Հայոց ձոր, Շատախ)՝ 193 եկեղեցի եւ 41 վանք. ընդհանուր առմամբ՝ 337 եկեղեցի, 74 վանք³⁵։ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913–1914 թթ. տվյալների համաձայն՝ Վանի նահանգի 450 հայկական բնակավայրերում բնակվում էր 110 897 հայ, գործում՝ հայկական 457 եկեղեցի, 80 վանք, 192 դպրոց³⁶։

1915 թ. սկզբին Արեւելյան եւ Արեւմտյան Հայաստանի հայկական բնակավայրերում բռնկված կոտորածների ալիքը հասնում է Վանի նահանգ։ Այստեղ կոտորածների առաջին ալիքն սկսվում է Բաշկալից (Վանի նահանգ, Հեքյարի գավառ) եւ շրջակա գյուղերից՝ տարածվելով Սարաչի (Մահմուդիեի գավառակ՝ Վանի գավառում), Կարճկանի, Կարկառի, Ալշավազի եւ Թիմարի գյուղերը³⁷։ Այս փուլում կոտորածները հիմնականում իրագործել են տեղական ժանդարմերիան եւ քրդական հրոսակախմբերը։ Դասավիճակը փնտրելու պատրվակով ոստիկանները ներխուժում էին գյուղեր, խուզարկություններ սկսում, որոնք ուղեկցվում էին սպանություններով, կողոպուտով, տների հրկիզումներով, ողջակիզումներով, կանանց ու աղջիկների առեւանգումներով³⁸։

³³ Տե՛ս Ռ. Ա. ԹԱՌՆՅԱՆ, Վանի գավառակի հայկական վանքերը եւ վանական կյանքը Մեծ եղեռնի նախաշեմին (1870-ական թթ.— 1914), «Ցեղասպանագիտական հանդես», թ. 7 (1), Երեւան, 2019, էջ 77–78։

³⁴ Վիճակագրությունը կազմվել է 1913–1914 թթ. Վանի թեմական իշխանությունների կողմից՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի հանձնարարությամբ. տե՛ս Ա. ԴՕ, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914–1915 թվականներին, Երեւան, 1917, էջ 11–13, 18, 21։

³⁵ Հաշվումները մենք ենք արել։ Եկեղեցիների ու վանքերի անվանումներն ըստ տեղանքի տե՛ս «Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչեան Հիւանդանոցի Հայոց», Կ. Պոլիս, 1904, էջ 370–372, 394–395։

³⁶ Տե՛ս R. H. KÉVORKIAN, P. B. PABOUDJIAN, Les Arméniens dans l'Empire ottoman à la veille du génocide, Paris, 1992, էջ 57–60։

³⁷ Ա. ԴՕ, նշ. աշխ., էջ 116–145։

³⁸ Բաշկալիում եւ շրջակա գյուղերում Ահմեդ բեկի գլխավորած 160 ժանդարմներն ու մազրիկից աշիրեթապետ Շարաֆ բեկի շուրջ 150 հոգանոց խումբը հայերի տները թալա-

Մարտի կեսերին հայտնի է դառնում Վանի նորանշանակ կուսակալ Զեդեթ բեյի՝ ռազմաճակատից վերադառնալու լուրը: Կուռուբաշ գյուղի մոտ տեղական իշխանությունները, մի քանի հայ երեւելիներ դիմավորում են նրան: Զեդեթին իր հետ ռազմաճակատից բերել էր շուրջ 800 չերքեզներից կազմված հետեւակային զորք եւ 3 թնդանոթ³⁹: Ականատեսների վկայությամբ՝ կուսակալին ուղեկցող զորքն ու սպառազինությունն ինքնին մի սպառնական ուժ էին, որոնց համար նա երեք օր կորցրել էր ճանապարհին⁴⁰:

Զեդեթը նոր դեմք չէր. Վանի նախկին կուսակալներից Թահար փաշայի որդին էր, էնվերի փեսան⁴¹: Մինչեւ Վանի կուսակալ նշանակվելը՝ 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո, Զեդեթը Սարայի կայմակամն էր, ապա՝ Բաշկալեի գավառապետը (մյուլթեսերիֆ), որը հասցրել էր աչքի ընկնել հայերի նկատմամբ իր դաժանություններով եւ չափազանց անցանկալի անձ էր նրանց համար⁴²: Զեդեթը «Նալբանդ»⁴³ գայմագամ՝ մականունն էր ստացել մասնավորապես այն դեպքից հետո, երբ հերթական խուզարկությունների եւ զենքի փնտրտուքի ժամանակ իբրեւ հեղափոխականի՝ կոտանքների ենթարկելով սպանել էր վանեցի առեւտրական Պետրոս Փիրումյանին, ապա՝ դաժան ծեծի ենթարկել եւ պայտել տվել նրա տասներկուամյա որդուն՝ Սարգսին⁴⁴:

Ռազմաճակատից վերադառնալուց անմիջապես հետո Զեդեթն սկսեց նախապատրաստվել Վասպուրականի հայության կոտորածներին՝ հայկական թաղերում կենտրոնացնելով ռազմաճակատից իր հետ բերած հետեւագործը: Այսպես՝ ապրիլի 1-ին Շատախի հայկական թաղամասում գտնվող Համուդ Աղայի զորանոցը, որ մինչ այդ դատարկ էր, սպառազինվեց, եւ այնտեղ տեղափոխվեց 150-ի չափ չերքեզ, ավելի քան 300 զինվոր տեղակայվեց Վան քաղաքի հայկական թաղամասերի մոտ գտնվող Հաջի-

նելուց եւ կրակի տալուց, 10 տարեկանից բարձր արու զավակներին կոտորելուց հետո տղամարդկանց հավաքել են Առակ գյուղում, ապա՝ դաշտ հանելով՝ կոտորել. տեսն անդ:

³⁹ Տես անդ, էջ 150–151:

⁴⁰ Տես անդ:

⁴¹ Տես Գ. Բիրյուխեր, *Արմենիա 1915: Что скрыло кайзеровское правительство от немецких подданных. Уничтожение Турцией культурного народа*, Ереван, 1991, էջ 59, *Ինչպես նաեւ՝ Ա. Դո, նշ. աշխ.*, էջ 76:

⁴² Ա. Դո, նշ. աշխ., էջ 76–77:

⁴³ Նալ-պայտ, *Նալբանդ — պայտար, ձիուն պայտողը. տես է. Ա. Պապյան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երեւան, 1976, էջ 1044:*

⁴⁴ Ա. Դո, նշ. աշխ., էջ 76–77:

բէքերի զորանոցում⁴⁵։ Կոտորածների նախապատրաստումն իրականացվում էր խիստ գաղտնիության պայմաններում, սակայն բարեկամ մի քանի քրդերի նախազգուշացումների շնորհիվ ծրագիրը հայտնի դարձավ, «թէ եւ այդպիսի ջարդ ոչ ոք չէր երեւակայում»⁴⁶։ Մարտի 29-ին Շատախում նշանավոր ուսուցիչ եւ դաշնակցական գործիչ Հովսեփ Զոլոյանի եւ տեղի հինգ հայ երիտասարդների անսպասելի ձերբակալութիւններով սկիզբ դրվեց նահանգի հայ երեւելիների եւ տղամարդկանց ձերբակալութիւնների ու բռնութիւնների նոր ակիւքին⁴⁷։ Հրամայվեց եռօրյա ժամկետում 20—40 տարեկան հայ տղամարդկանց զինվորագրում⁴⁸։ Դրան հաջորդեցին Հիրճ գյուղում Իշխանի (Նիկողայոս Պողոսյան)⁴⁹ եւ նրա երեք ընկերների դավադրաբար սպանութիւնը, Արշակ Վռամյանի (Օնիկ Դերձակյան)⁵⁰ ձերբակալութիւնն ու սպանութիւնը⁵¹։ Տեղի հայկական կուսակցութիւնները՝ Արամ Մանուկյանի գլխավորութեամբ, գնահատելով իրավիճակը, ժողով են գումարում՝ որոշելով դիմել ինքնապաշտպանութեան⁵²։ Վասպուրականի հայութեան կոտորածներն սկսվեցին ապրիլի 4-ից եւ շարունակվեցին ավելի քան մեկ ամիս Վանի նահանգի բոլոր գավառներում։ Կովկասյան ճակատում պարտութիւն կրած թուրքական զորքերը, նրանց միացած քրդական անկանոն ջոկատներն ու չեքեզական հեծելազորը Զեւթեթի անմիջական հրամանատարութեամբ սկսեցին նահանգի հայ բնակչության կոտորածները, թալանն ու ավերածութիւնները⁵³։ Մանգան, Արճակ, Խառակունիս, Նարաթ, Ավերակ, Դարման, Կողբանց, Պըլթեց, Աթանան, Իշխանիգոմ, Շուշանց եւ մի շարք այլ գյուղերի վրա հարձակվել են 3—4 թնդանոթակիր հարյուրավոր զինվորներ՝ մեկը մյուսի հետեւից ավերելով, հրկիզելով հայերի տներն ու եկեղեցիները⁵⁴։

⁴⁵ Տէս անդ, էջ 153, 239։

⁴⁶ Տէս անդ, էջ 162—163։

⁴⁷ Տէս անդ, էջ 152—157։

⁴⁸ Տէս անդ, էջ 153—154։

⁴⁹ Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ֆիդայի, Ն. Յ. Դ. կուսակցության անդամ։

⁵⁰ Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, Ն. Յ. Դ. կուսակցության անդամ, օսմանյան խորհրդարանի պատգամավոր։

⁵¹ Տէս անդ, էջ 157. նաեւ՝ Թէոդոսի, Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարիին, խմբագիր՝ Ա. Գալաճեան, Նիւ Նորք, 1985, էջ 40։

⁵² Ա. Դո, նշ. աշխ., էջ 157։

⁵³ Մի շարք գավառներում (Շատախ, Հայոց ձոր, Արճեշ, Թիմար, Ալջավազ եւ այլն) հայերը դիմել են ինքնապաշտպանութեան. տէս անդ, էջ 165—190։

⁵⁴ Անդ, էջ 192—220։

Թնդանոթի են տրվել Կողբանցի Ս. Գրիգոր մենաստանը, Շուշանցի մոտ գտնվող Կարմրավորա Ս. Աստվածածին վանքը, Վարազա վանքը, Անգղի Ս. Աստվածածին վանքը, Սպիտակ վանքը⁵⁵:

Տարաբնույթ փաստերը վկայում են, որ զորքերի գործուն մասնակցությամբ Վանի տասնյակ նշանավոր վանքեր ու եկեղեցիներ՝ իրենց ներսում պահվող հնագույն ձեռագրերի եզակի նմուշներով եւ եկեղեցական թանկարժեք մասունքներով, հրկիզվել են մեծ քանակությամբ նավթի կիրառումով⁵⁶: 1915 թ. ապրիլին թուրքական կանոնավոր զորքը, հարձակվելով Կուռուպաշ գյուղի վրա, տեղի դպրոցի եւ այլ շինությունների հետ միասին հրկիզել է Ս. Ստեփանոս եկեղեցին, որում պահվել են 1 ձեռագիր Ավետարան, 2000 օսմանյան լիրայի արժողության անոթներ, արծաթե խաչեր եւ այլն⁵⁷: Նույն եղանակով են ոչնչացվել Ալյուր գյուղի եկեղեցիները՝ Ս. Նարեկացի, Ս. Ստեփանոս, Ս. Լուսավորիչ, որոնցից յուրաքանչյուրի ներսում պահվել են 2–3 ձեռագիր Ավետարան, այդ թվում եւ Գրիգոր Նարեկացու ձեռագիր «Մատեան»-ը՝ արծաթապատ եզրերով⁵⁸: Ալյուրի եկեղեցիներից մեկը հրկիզվել է այնտեղ արգելափակված կանանցով ու երեխաներով⁵⁹: Արճակ գյուղի եկեղեցին թուրքերն այրել են խոշտանգված քահանային եկեղեցու սյունին կապած⁶⁰: Թուրք զինվորները կողոպտել ու հրկիզել են նաեւ Թիմարի գյուղախմբի Աստվածածին գյուղի համանուն վանքը, Ատեր (եկեղեցին՝ Ս. Աստվածածին), Գոմս (եկեղեցին՝ Ս. Ստեփանոս), էրերին, Մարմետ (եկեղեցում պահվել են 5 ձեռագիր Ավետարան, 3 արծաթե սկիհ, ոսկե մեռնաթաս եւ այլն), Ջանիկ, Քյոչանի (եկեղեցին՝ Ս. Աստվածածին), Հայոց ձորի գյուղախմբի Քերծ, Առեղ (եկեղեցին՝ Ս. Գեւորգ), Կեմ (եկեղեցին՝ Ս. Թադեոս), Կղզի, Հնդստան (ունեցել է 2 եկեղեցի), Մաշտակ, Մարգա (եկեղեցին՝ Ս. Մարտիրոս), Բերկրիի գավառակի Գործոթ (եկե-

⁵⁵ Տե՛ս Թէոֆիլ, նշ. աշխ., էջ 43, 46. Ա.-Ռո, նշ. աշխ., էջ 198:

⁵⁶ Տե՛ս «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ», փաստաթղթերի ժողովածու, հտ. Ա., Վանի նահանգ, Երեւան, 2012, Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), վկայություններ թ. 12, 41, 64, 68, 69, 71, 74, 81, 83, 85–86, 87, 90, 98, 100, 104, 107, 108, 128, 129, 134, 142, 149, 161, էջ 42–43, 117, 78–79, 121, 124, 125, 131, 138, 142, 145–147, 148, 153, 165, 168, 174, 180, 183, 211–214, 219, 229, 241, 255:

⁵⁷ Տե՛ս անդ, վկայություն թ. 12, էջ 42:

⁵⁸ Տե՛ս անդ, վկայություն թ. 64, էջ 117:

⁵⁹ Տե՛ս անդ, վկայություն թ. 65, էջ 118:

⁶⁰ Տե՛ս անդ, վկայություն թ. 41, էջ 78–79:

ղեցին՝ Ս. Կիրակոս), Խաչան, Արճեշի գավառակի Բլուրմակ, Սոսկուն գյուղերի, Ականց-Արճեշ գյուղաքաղաքի Ս. Գեորգ եւ Ս. Թադեոս եկեղեցիները⁶¹։ Պատիկագելի եկեղեցին վերածվել է սպանդանոցի՝ գյուղի տղամարդկանց կոտորելու համար⁶²։

Վանի կողոպտված ու հրկիզված տասնյակ հուշարձանների մասին է վկայում նահանգի հայ առաջնորդարանի փոխանորդ Եզնիկ վրդ. Ներկարարյանի 1915 թ. մայիսի 28-ի զեկուցագիրը՝ ուղղված Ամենայն Հայոց Գեորգ Ե. կաթողիկոսին, որում մասնավորապես ասվում է. «...նահանգին խոշոր վանքեր ու եկեղեցիներ այրված են... իսկ եկեղեցական գույք, անոթ, զգեստ, գրամն հացը կողոպտված, փչացված ու այրված են, որոնց մեջ են քաղաքիս Յայնկոյսեր, ս. Գակսի եւ Հայկազունք եկեղեցիներն, նաեւ Վարագ, Կտուց, Անապատ, Աղթամար եւ ուրիշ շատ մը վանքեր...»⁶³։ Լիմ անապատի, Վարագավանքի եւ նահանգի այլ վանքերի կողոպտման ու ավերման, ինչպես նաեւ ձեռագրերի կարելու մասի ոչնչացման մասին վերոնշյալ վկայությունները երկրորդվում է Լիմի վանահայր Հովհաննես վարդապետ Հյուսյանի վկայությամբ՝ Գեորգ Ե.-ին ուղղված նոյեմբերի 10, 1915 թվակիր նամակով⁶⁴։

Թուրքական զորքերի կողմից հայկական եկեղեցիների ոչնչացման վերաբերյալ առավել արժեքավոր են օտարերկրյա ականատեսների վկայությունները։ Թուրքական բանակի վենեսուելացի վարձկան սպա Ռաֆայել դե Նոգալեսը⁶⁵, ականատես լինելով եւ որոշ դեպքերում անձամբ մասնակցություն ունենալով թուրքերի ավերիչ գործողություններին, Վանի Արտամեդի եկեղեցու մասին հետագայում իր հուշերում գրում է. «Նայելով եկեղեցուն, որ շարունակ այրվում էր իբրեւ ժայթքող հրաբուխ... Ես անիծում էի այն պահը, երբ դաժան ճակատագիրն ինձ իմ հավատակիցների դահիճը դարձրեց»⁶⁶։

⁶¹ Տե՛ս անդ, վկայություններ թ. 68, 69, 71, 74, 81, 83, 85–86, 87, 90, 98, 100, 104, 107, 108, 128, 129, 134, 142, 149, 161, էջ 121, 124, 125, 131, 138, 142, 145–147, 148, 153, 165, 168, 174, 180, 183, 211–214, 219, 229, 241, 255։

⁶² Տե՛ս անդ, վկայություն թ. 138, էջ 224–225։

⁶³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 54, թ. 21 եւ շրջ., բնագիր, ձեռագիր։

⁶⁴ «Նորին Ս. Օծուխեան Ս. Տ. Գէորգ Ե. Վեհափառ եւ սրբազնագոյն կաթողիկոսի ամենայն Հայոց ի Ս. Էջմիածին՝ Լիմ անապատի Յովհաննէս վարդապետից ամենախոնարհարար տեղեկագրութիւն», «Արարատ», ԺԱ.—ԺԲ., 1915, էջ 863–864։

⁶⁵ Առաջին աշխարհամարտի տարիներին ծառայել է թուրքական բանակում, մասնակցել Վանի 1915 թ. ինքնապաշտպանության ճնշմանը։

⁶⁶ Տե՛ս Ր. ԴԵ ՈՒԳԱԼԵՍ, Четыре года под полумесяцем, Москва, 2006, էջ 56–61։

Զինվորների հրկիզմամբ գրադարանների եւ ձեռագրերի ոչնչացման մասին է վկայում Ռաֆայել դե Նոգալեսի մեկ այլ վկայություն՝ ըստ որի. «Երբ հայերը լքեցին Վարազը [Վարազավանքը], Թուրքերի ձեռքը հանձնեցին պատմական հրաշալի այդ հուշարձանը հազարավոր հատորներ պարունակող գրադարանով, որը, ինչպես եւ ենթադրվում էր, Թուրքերն ամբողջովին հրկիզեցին»⁶⁷:

Որոշ դեպքերում, հասկանալով ձեռագրերի իրական արժեքը, Թուրք կամ այլազգի զինվորականներ, ոստիկաններ ու պաշտոնյաներ յուրացրել են ձեռագրերը՝ հիմնականում եվրոպական կամ այլ երկրներ արտահանելու եւ վաճառելու նպատակով⁶⁸:

Բուն Վան քաղաքի հայ բնակչությունը (շուրջ 23 հազար) եւ շրջակա գյուղերից այստեղ ապաստանած հազարավոր հայեր, շուրջ մեկ ամիս տեւած հերոսական դիմադրության շնորհիվ, փրկվեցին կոտորածներից⁶⁹, սակայն քաղաքը գերծ շմնաց ավերումից: 1915 թ. հուլիսի 19-ին, երբ հայերն ստիպված բռնում են դեպի Կովկաս գաղթի ուղին, եւ հուլիսի 28-ին ռուսական զորքերը ժամանակավորապես թողնում են Վանը, քաղաք են մտնում Զեւդեթի գլխավորած հարյուրավոր զինվորներ՝ հողին հավասարեցնելով հայկական թաղամասերը եւ կոտորելով Ավանցում⁷⁰:

⁶⁷ Անդ, էջ 75:

⁶⁸ Տե՛ս Ս. ՔՈՒԱՆՋՅԱՆ, Մեր ձեռագրական կորուստները, «Էջմիածին», 1967, Զ., էջ 51: Հայոց ցեղասպանության տարիներին Վասպուրականը արեւմտահայ ձեռագրական այն եզակի կենտրոններից էր, ուր շնայած ձեռագրերի մեծ մասի կորստին, այնուամենայնիվ, հաջողվեց փրկել նրանց մի կարեւոր մաս: Վասպուրականի ու Տարոնի ձեռագրերի փրկության կազմակերպման գործում մեծ է եղել Ամենայն Հայոց Կաթողիկոսության դերը, որին մեծապես աջակցել է Պետերբուրգի գիտությունների ակադեմիան: Տե՛ս «Արարատ», ԺԱ.—ԺԲ., 1915, 811, 860—865. «Արարատ», Ա.—Բ., 1916, 46—47. «Արարատ», է.—Ը., 1916, 566—586: 1915—1916 թթ. ընթացքում Վանի նահանգից փրկվել եւ Ս. Էջմիածին է փոխադրվել 1452 ձեռագիր, որոնք հետագայում հանձնվել են Մաշտոցի անվան Մատենադարանին: Հետագա տարիներին վանեցի գաղթականների փրկած ձեռագրերի ձեռք բերման ու նվիրատվությունների շնորհիվ այսօր Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է Վասպուրականից տեղափոխված 1473 ձեռագիր, այդ թվում՝ Վանից եւ շրջակայքից՝ 335, Աղթամարից՝ 285, Կիւմանապատից՝ 306, Կտուց անապատից՝ 202, Վարագից՝ 345: Տե՛ս «Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», կազմող՝ Օ. Եգանյան, հտ. Ա., Երեւան, 1965, էջ 99—105:

⁶⁹ Վանի հայության դիմադրությունն սկսվել է ապրիլի 7-ին՝ վաղ առավոտյան՝ Շուշանց գյուղից ապաստան փնտրելու համար Այգեւստան իջնող մի քանի հայուհիների վրա զինվորների հարձակումով եւ նրանց օգնության հասած ազգակիցների սպանությամբ: Դրան հաջորդել են կրակոցներն ու բերդի բարձունքում կենտրոնացված թնդանոթների զարկերը հայկական թաղամասերի վրա. տե՛ս ԹԷՈՒԻԿ, նշ. աշխ., էջ 41. Ա.—ԴՅ, նշ. աշխ., էջ 238—239:

⁷⁰ Գյուղը եւ նավահանգիստ Վանա լճի ափին, Վան քաղաքից 3 կմ դեպի հյուսիս-արեւմուտք:



1. ՎԱՆ. Հայկական թաղամասի համայնապատկերը, 1900-ականներ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ



2. ՎԱՆ. Վարազավանքը (V—XIX դդ.)՝ հյուսիսարևմտյան կողմից, 1900-ականներ, լուսանկարը՝ Վարդան Համբիկյանի



3. ՎԱՆ. Վարազավանքի տեղում կառուցված ֆրդաբնակ Բաբրաշը գյուղը, 2005 թ., լուսանկարը՝ Սամվել Կարապետյանի



4. ՇՈՒՇԱՆՑ. Կարմրավոր վանքը (XIV—XV դդ.), 1900-ականներ



5. ՇՈՒՇԱՆՑ. Կարմրավոր վանքի տեղանքը, 2005 թ., լուսանկարը՝ Սամվել Կարապետյանի



6. ԳՅԱՎԱՇ. Սպիտակ վանքը՝ հարավարևելյան կողմից, 1900-ականներ, լուսանկարը՝ Երվանդ Լալայանի



7. ԳՅԱՎԱՇ. Սպիտակ վանքի տեղանքը, 2005 թ., լուսանկարը՝ Սամվել Կարապետյանի



8. 13—14 դդ. գրված ձեռագիր
«Մաշտոց»՝ հրկիզված
«Армянский вѣстник»,
еженедѣльный журналъ,
1916, №16



9. ՎԱՆ. տեսարան ավերված հայկական թաղամասից,
1915 թ., «The New York Times, Mid-Week Pictorial», vol. 1,
№49, 12 օգոստոսի, 1915 թ.




10. ՎԱՆ հայկական թաղամասի ավերակները, 1917 թ.,
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ

ու քաղաքում մնացած հարյուրավոր հայերի, այդ թվում՝ վիրավորների, որոնք տարբեր պատճառներով չէին գաղթել⁷¹:

“The New York Times, Mid-Week Pictorial” ամերիկյան հայտնի պարբերականի 1915 թ. օգոստոսի 12-ի համարում լույս տեսած Վանի հրկիզված եւ ավերված հայկական թաղամասի լուսանկարը լավագույն վկայությունն է թուրք զինվորների գործողությունների⁷²:

Դեպքերին ականատես գերմանացի սպա Հենրիխ Ֆիռլյուխերի վկայությամբ՝ Վանի պաշարման ժամանակ Զեւդեթն ավերեց ավելի քան 200 գյուղ եւ կոտորեց 26 000 մարդ⁷³: Վրացական «Սաքարթվելո» օրաթերթի հաղորդմամբ՝ 1915 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ Վանի մերձակա գյուղերում հայերը ոչ մի վանք չունեին այլեւս, նրանց աղոթատեղիները Զեւդեթ փաշայի զորքերը հողին էին հավասարեցրել⁷⁴:

Շարունակությունը՝ հաջորդիվ



⁷¹ Ա. Ռո, նշ. աշխ., էջ 472, 481:

⁷² Տէս “The New York Times, Mid-Week Pictorial,” vol. 1, №49, August 12, 1915, էջ 9:

⁷³ Տէս Գ. Фирбюхер, նշ. աշխ., էջ 59:

⁷⁴ Տէս «Հայոց ցեղասպանության թեման վրացական պարբերականներում 1914–1918 թթ.», վրաց. թարգմ.՝ Հրաչյա Բայրամյանը, Երեւան, 2017, էջ 95:

ՅԱԿՈԲ ԶՈՒԱՔԵԱՆ

Պատմական գիտ. դոկտոր, ԳԱԱ ՀԱԻ

ՎԱՅԵՐԵՆԸ ՍԵՐՁԱԽՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ՍԷՉ (1918–1946)

Յետեղեռնեան տարիներուն Մերձաւոր Արեւելքի հայ գաղթականութեան միայն չնչին տոկոսը գրական արեւմտահայերէնը գիտէր։ Մեծամասնութեամբ բարբառախօս ու թրքախօս, մասամբ արաբախօս ու քրտախօս էին հայկական հիւղաւաններուն մէջ եւ հոս ու հոն ցրուած բնակիչները։ Թրքախօս էին Այնթապի, Քիլիսի, Պերեճիկի, Մարաշի, Ատանայի, Չորք Մարզպանի, Ամանոսեան լեռներու գաղթական դարձած հայերը մեծամասնաբար։ Արաբախօս էին Սուրիա անցած Մարտիւնի հայերը, Ճսըր Շուղուրի մօտիկ գտնուող Եագուպիէ, Գնիէ եւ այլ մանր գիւղերու բնիկները, նաեւ Հալէպի, Տէր Զօրի եւ Դամասկոսի հին հայերը։ Քրտախօս էին Արեւմտեան Հայաստանի ծայր հարաւարեւմտեան շրջանները, մանաւանդ՝ 1927–1931 Սուրիա անցած հայերը, որ ծանօթ են բշերիկցիներ անունով։ Օսմանեան կայսրութեան արեւելեան շրջաններու՝ Կիլիկիոյ եւ Արեւմտեան Հայաստանի մէջ արեւմտահայ դպրոցը դեռ չէր կրցած գրական արեւմտահայերէնը դարձնել ընդհանուր լեզու։ Բոլորը թրքերէնը գիտէին, եւ բնականաբար՝ Պէյրութի, Հալէպի, Դամասկոսի, Պաղտատի, Մուսուլի եւ այլ վայրերու հայոց մէջ տարածուեցաւ թրքերէնը՝ իբրեւ հաղորդակցութեան լեզու։ Թրքախօսութիւնն ընթացիկ երեւոյթ էր Մերձաւոր Արեւելքի հայ գաղթականներուն մէջ։ Աւելի մտահոգիչ էր մանաւանդ այն զանգուածի պարագան, որուն մայրենին թրքերէնն էր։ Դեռ 1919-ին ասիկա օրակարգի նիւթ կը դառնայ. մամուլը այսպէս կը բնութագրէ երեւոյթը. «Ցաւալի է այն երեւոյթը, որուն ականատես կ'ըլլանք ամէն օր։ Քիչ չէ թիւը կայտառ, վառվռուն հայ փոքրիկներուն, որոնք, ցաւալի՜ իրողութիւն, հայերէն չեն կրնար խօսիլ։ Ասոնք՝ հայութեան ապագայ սերունդը, զրկուած են իրենց մայր լեզուէն եւ թողուած են ասդին-անդին թափառական... Մեծ է տոկոսը չափահաս կիներու եւ այրերու, որոնք բացարձակապէս անտեղեակ են հայերէնին։ ...Պէտք է մեր ազգային մարմինները լուրջ նկատողութեան առնեն թրքախօսութիւ-

նը, եւ միջոցներ ստեղծեն զայն դարմանելու: Բոլոր թրքախօս մանուկները պէտք է դպրոց դրկուին: ...Խւրաքանչիւր հօր, մօր պարտականութիւնն է նախ եւ առաջ իր տղուն, աղջկան հայերէն սորվեցնել»¹:

Թրքերէնը կ'ապրէր ոչ միայն ընտանիքին մէջ, այլեւ բեմի վրայ: Այդ թուականներուն դպրոցական հանդէսներուն մէջ թրքերէն զաւեշտ ալ կը ներկայացնէին փոքրիկները՝ ի սէր մեծերուն, որոնցմէ շատերը միայն թրքերէն գիտէին: Այդ հանդէսները նիւթական եկամուտ մը կը բերէին դպրոցին, եւ անոնցմէ հրաժարիլ այդքան ալ դիւրին չէր գրական հայերէնը չհասկցող ծնողաց մեծ զանգուածին համար: Եկեղեցւոյ մէջ քարոզը կը տրուէր թրքերէն, խորհուրդները, աւետարանները կը թարգմանէին թրքերէն, աւետարանական եկեղեցւոյ մէջ հոգեւոր երգերը թրքերէն էին: Աւետարանական եւ լատին-կաթոլիկ եկեղեցիներու մէջ ժԹ. դարու կէսերէն գործող օտար քարոզիչներէն (միսիոնարներէն) շատերը միայն թրքերէն գիտէին: Թրքերէնը տեղ շինած էր այդ շրջանակներուն մէջ: Եւ բնական է, որ հայ գաղթականութեան մէջ 1920-ական թուականներու ընտանեկան խրախճանքներն ու հանդէսները կատարուէին թրքերէն խօսակցութեամբ եւ երգեցողութեամբ:

Հալէպի եւ Պէյրութի մէջ հայատառ թրքերէն պարբերականներ լոյս կը տեսնէին², մեծ մասով հոգեւոր, նաեւ տարաբնոյթ թրքերէն գիրքեր: Անշուշտ, կար նաեւ հայատառ թրքերէն Աստուածաշունչը: Կը հրատարակուէին ժողովրդական շունչով հայատառ թրքերէն ընդարձակ ոտանաւորներ (տեսթան), որոնք դաստիարակչական հսկայ դեր կը կատարէին թրքախօս հայոց մէջ՝ զանոնք զգաստացնելու այլասերումի օտարամուտ երեւոյթներուն առջեւ, կը պատկերէին գաղթահայութեան օտարութեան մէջ բնադրելու վիճակը, կը ներշնչէին մեր մօտիկ անցեալի ազգային ազատագրական պայքարի դրուագներով ու խորհրդային Հայաստանի գոյութեամբ³:

¹ Ե. ՍՏԵՓԱՆԵԱՆ, Թրքախօսութիւնը, «Կիլիկիա եռօրեայ», Ատանա, Ա. տարի, թիւ 6, 14 Մարտ, 1919:

² Հալէպի նոր գաղութին մէջ հայատառ թրքերէն պարբերականներ էին «Նոր Աւետարեւ» (1928–1934) շաբաթաթերթը, որ ունէր հայերէն տարբերակ եւս, «Սապահ երկարը» (Լուսաստղ, 1926–1927), «Մարանաթա» (Տէրը կու գայ, 1925–1963) եւ «Ֆուսսաթը Զայ երմէ» («Առիթը մի փախցնէր», ձեռագիր, 1928) ամսաթերթերը:

³ Այս տեսթաններու շարքին մէջ Սարգիս Զառը Մինասեան կը սիրէ երգիծել ալաֆրանկա հագուստն ու պարը, ընտանեկան նոր բարքերը. երեք գործ ծանօթ է մեզի. «Տեսթան ալաֆրանկա մօտայա շարթ պիրէր թանէ հէր ֆերտէ օտայա» (երեք պրակ 13,

Հայրենակցական խիտ շրջանակներու մէջ կը գործէր բարբառը: Բարբառախօս հայ շրջանակներու մէջ քահանաները բարբառով կը կարգային Աստուածաշունչի գրաբարի վրայէն: Կար նոյնիսկ բարբառի վերածուած Աւետարան⁴: Բարբառախօս միջավայրի մէջ հայ գործիչներու հայերէն ելոյթները տեղւոյն վրայ կը թարգմանուէին բարբառի: Օրինակ՝ 24 Յունիս 1912-ին Քեսապի Ազգային Սահակեան վարժարանի շրջանաւարտից հանդէսին տնօրէն Մանուկ Գուլումճեանի կարդացած «Հուսկ բանքը» տեղւոյն վրայ կը թարգմանէ Աւետիս Ինճեճիքեանը:⁵ Այս երեւոյթը շարունակուեցաւ նաեւ գաղթականութենէ ետք Մուսա լեռ, Քեսապ, բարբառախօս հայրենակցականներու համեմատաբար խիտ շրջանակներու մէջ: Դպրոցներէ ներս գրական լեզուի առջեւ խուժ կը նկատուէր բարբառը, անոր ալ դէմ պայքար կար, բայց միւս կողմէ մեծ կարեւորութեամբ կը շեշտուէր բարբառները հաւաքագրելու եւ նկարագրելու անհրաժեշտութիւնը, անով հարստացնելու արեւմտահայերէն աշխարհաբարը: Հալէպի «Շփրատ» օրաթերթը 19 Յունիս 1929 թիւ 199-ի խմբագրականը կը նուիրէ այս նիւթին, ուր խօսելէ ետք հայ բարբառներու ուսումնասիրութեան մէջ տարուած աշխատանքներն ու անոնց բերած օգուտը կը թելադրէ անյապաղ անցնիլ անոնց հաւաքագրման աշխատանքին: Հալէպի եւ շրջակայքին մէջ իրենց բնօրրանին մէջ կը գոյատեւէին տակաւին Պէյլանի, Սուէտիոյ, Քեսապի, Արամո-Ղնեմիէ գիւղերու բնիկ հայոց բարբառները, հայրենակցական խիտ շրջանակներ կը ներկայացնէ-

12 եւ 16 էջանի, Հալէպ, 1927), «Տեսթան շարլսթոն վելվելեսի — օյունլար վելվելեսի» (16 էջ, Հալէպ, 1930), «Ֆամիլիալարտա գուհուր էտէն էնտիշելէր տեսթանը» (16 էջ, Հալէպ, 1939):

Հալէպի մեծագոյն գաղթակայանը կը գտնուէր Ռամատանիէի, Սուլէյմանիէ եւ Համիտիէի յարակից շրջաններուն մէջ: 1935-ին պետական հրամանով կը քանդուին այդ հիւղաւանները, որ մէկուկէս տասնամեակէ աւելի հայոց թշուառութեան բոյնը եղած էին: Անոնց քանդումին նուիրուած են Սարգիս Չառլշ Մինասեանի «Տեսթան պարագալար խիթամը» (12 էջ, Հալէպ, 1935) եւ Իմանում Մեննուշի «Պարագալար տեսթանը» (Հալէպ, 1935) ողբերը:

Այնթապի գոյամարտին նուիրուած են Իմանում Մեննուշի «Այնթապ տեսթանլարը», [ոգեկոչում Այնթապի ինքնապաշտպանութեան] (15 էջ, Հալէպ, 1931) եւ Յ. Տէրթախանեանի «1920 Այնթապ հարպընը տեսթանը» (16 էջ, Հալէպ, 1948):

Իւրօրինակ պոէմ մըն է մարաշցի Աւետիս Սէֆիւեանի «Էրմենինին կեչմիշ ահվալ տեսթանը» (48 էջ, Հալէպ, 1948), գործը, որ կը սկսի մեր ազգային ազատագրական պայքարի դրուագներով, յետոյ 1909 եւ Մեծ եղեռն, տունդարձ դէպի Կիլիկիա, երկրորդ գաղթականութիւն, յետոյ բնագրում Սուրիա եւ Լիբանան, Բ. համաշխարհային պատերազմ եւ, ներգաղթի ոգեւորութիւն: Հայրենադարձութեան օրերու արձագանգն է նաեւ Լուսին Տէր Պետրոսեանի «Հայաստան տեսթանը» (7 էջ, Հալէպ, 1946) գործը:

⁴ Աւետարան ըստ Մարկոսի, Կոստանդնուպոլիս, 1913:

⁵ Մ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ, Ազատ բեմի խօսքեր, Կ. Պոլիս, 1912:

ին բարբառախօս Ձէյթունի, Հաճընի, Արաբկիրի, Սեբաստիոյ, Մալաթիոյ, Խարբերդի, Բալուի, Տիգրանակերտի, Ուրֆայի, Քղիի, Սասունի հայերը Հալէպի, Դամասկոսի եւ Պէյրութի մէջ: Խմբագրականը կը գրէ, որ այս բարբառները «Գուցէ շուտով կորուսած ըլլան իրենց հարազատութիւնը. ուստի հայ բանասիրութիւնը եւ լեզուն օգտուին անոնցմէ օր առաջ»⁶:

Արեւմտահայ գրական լեզուն ընդհանուր լեզուի վերածելու ժխ. դա-
րու ճիգը պէտք է շարունակուէր: Ասոր համար ամենէն կարեւոր ու հիմ-
նական կռուանը հայկական վարժարանն էր: Նոյնքան կարեւոր դեր
պիտի կատարէին հայ թերթը, գիրքը, ակումբը: Մերձաւոր Արեւելքի
նոյնիսկ հեռաւոր անկիւններուն մէջ 20—30 աշակերտի համար դպրոց
հիմնելու յամառ աշխատանք կար: Դպրոց բանալը եկեղեցի մը հիմնելէ
առաջ կու գար: Շատ դպրոցական շէնքեր յետագային մատուան դեր եւս
կատարելու սկսան: Հարիւրաւոր դպրոցներ հիմնուեցան: Ասիկա հրաշ-
քի համագօր երեւոյթ մըն էր: Հայերէնի ուսուցումը կրթական ծրագիրին
առանցքը կը կազմէր: Հայերէնի տարածման պայքարն անցաւ մարզա-
կան, երիտասարդական, բարեսիրական միութիւններուն, բոլոր ակումբ-
ներուն մէջ կային գրադարաններ, ընթերցանութիւնը կը քաջալերուէր:
Մամուլն իր կարգին լայնօրէն կ'արձագանգէր այս երեւոյթին: «Եփրատ»
օրաթերթի լրատուական սիւնակներուն մէջ յաճախ քննադատութիւն
կայ աւետարանական եկեղեցիներուն մէջ պաշտամունքները թրքերէնով
կատարելու, իսկ քահանայ հայրերուն՝ ժողովուրդին թրքերէնով դիմե-
լու, քարոզելու եւ փակման խօսք ընելու յամեցող երեւոյթներուն դէմ⁷:
Օրինակ՝ արձանագրուած է, որ Արաբ Փոնարի Ազգ. Խրիմեան վարժա-
րանին մէջ ՀՐԸՄ-ի 24-ամեակին նուիրուած հանդիսութեան փակման
խօսքը Վարդան քհնյ. Վարդերեսեանը կը կատարէ թրքերէնով⁸: Բաբգէն
եպիսկոպոս Կիւլեսէրեան (յետոյ աթոռակից կաթողիկոս) ընդարձակ յօ-
դուածով մը կ'անդրադառնայ հայոց կարգ մը շրջանակներու մէջ տարա-
ծուած թրքախօսութեան պատմական ու քաղաքական պատճառներուն,
ինչպէս որ կան քրտախօս, արաբախօս, վրացախօս հայեր եւս. համո-

⁶ Խմբագրական. Բարբառները փրկենք (կոչ մը մտքի մարդոց), «Եփրատ», Հալէպ, 19
Յունիս, 1929, թ. 199:

⁷ Տէս ԲԱՔԳԷՆ ԵՊՍ. ԿԻՒԼԵՍԷՐԵԱՆ, Թրքախօսութիւն, «Եփրատ», 16 Մայիս, 1928, թ. 89.
նաեւ նոյնը՝ Խմբագրական. Մեր ընտանեկան հաւաքոյթները, 26 Մայիս, 1928, թ. 92. նաեւ
նոյնը՝ Թրքախօսութիւնը, 30 Մայիս, 1928, թ. 93:

⁸ «Եփրատ», 7 Մայիս, 1930:

զուժ կայ, որ թրքախօսութիւնը կը յաղթահարուի հայերէնի ուսուցմամբ, հայ երգի յաղթարշաւով⁹:

Հայերէնի ուսուցումը դժուարութեամբ կ'ընթանայ յատկապէս թրքախօսութեան պատճառով՝ տրուած ըլլալով, որ մեծամասնութիւն կը կազմեն թրքախօս շրջաններէ եկող ծնողներուն զաւակները: Հալէպի Սահակեան վարժարանի տնօրէնը կը տեղեկագրէ. «Ամեն առթիւ պաշտօնակցուհիներու ուշադրութիւնը հրաւիրած ենք հայերէն լեզուի բացառիկ կարեւորութեանը վրայ եւ զայն հետաքրքրութեան նիւթ դարձուցած՝ նկատի ունենալով մանաւանդ աշակերտութեան թրքախօսներու կարելոր մասը, միշտ խրատել, մերթ սպառնալ ու պատժել, օգնել ու միշտ սորվեցնել, ահա՛ մեր ըրածը: Խղճի կատարեալ հանգստութեամբ կարելի է ըսել, որ տրուած պայմաններուն մէջ բաւարար արդիւնք ձեռք բերուած է այս ուղղութեամբ: Կայ այն իրողութիւնը, որով թրքախօսներն սկսան հայերէն խօսիլ նաեւ ԴՊՐՈՅԷՆ ԴՈՒՐՍ (հակառակ անոր, որ ծնողները մեզի չօգնեցին մեր այս աշխատանքին մէջ): Իսկ ուսման միւս ճիւղերը, բաղդատմամբ հայերէնի, աւելի դիւրութեամբ կրցանք սորվեցնել բոլոր կարգերուն, եւ օրէ օր մտքի բացուիլը տեսնել մեր երկսեռ աշակերտներուն ու հրճուիլ ներքուստ (որ կը կազմէ հոգեկան վարձատրութիւնը ուսուցչին)»¹⁰:

Իւրօրինակ պատիժներ սահմանուած էին թրքերէն խօսող դպրոցականներուն համար. օրինակ՝ «Թրքերէն խօսողին կը յանձնուէր կլորակ թիթեղի կտոր մը, որ «մետալ» կը կոչուէր, որուն վրայ գտնուող ծակէն դերձան մը անցուած էր: Ուսուցչուհին զայն կը յանձնէր իր դասարանի ճարպիկ աշակերտներէն մէկուն, ան ալ աղուէսի նման դարան կը մտնէր եւ կը փնտռէր մէկը, որ թրքերէն կը գործածէր, եւ անոր վիզէն կ'անցընէր զայն: Այսպէս՝ ամբողջ օրը մէն մի թրքերէն խօսողին վիզէն կը կախուէր այդ «մետալ»ը: Երեկոյեան ուսուցչուհին ամեն մէկ ստացողին անունը կ'արձանագրէր իր տետրակին մէջ, շաբթուան վերջին օրը ներկայացնելու Պրն. Տնօրէնին, որպէսզի անոր համեմատ պատիժ մը ստանայ»¹¹: Յանկալի չէր նաեւ բարբառի գործածութիւնը: Քեսապի մէջ

⁹ ԲԱՐԳԷՆ ԵՊՍ. ԿԻՒԼԵՍԷՐԵԱՆ, Հայերը եւ թիւրք լեզուն, «Տաթեւ» կրօնական տարեգիրք, Հալէպ, գր. Ե., 1929, էջ 5–34:

¹⁰ Յ. ՉՈՒԱՔԵԱՆ, Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան վարժարանի, 1927–2007, Հալէպ, 2007, էջ 63–64:

¹¹ ՎԵՐ. ՊԱՐԳԵՆ ՕՐՋԱՆԵԱՆ, Բեթէլ, Ութըրթաուն, 2001, էջ 12–13:

վիզի դերձան է օղակին խխունջի պատեան մը կ'աւելցնէին իւրաքանչիւր բարբառային բառին համար: Արձակուելէ առաջ ուսուցիչը տետրակին մէջ կ'արձանագրէր խխունջի պատեաններուն թիւը: Փոքրիկներն ամեն օր կը փորձէին պակսեցնել անոնց թիւը:

Այդ տարիներուն շատ մայրեր գրական հայերէն չէին գիտեր, շատեր հայերէն չէին գիտեր, բայց իրենց զաւակները դպրոցէն բերին հայերէնը, արհեստաւոր փոքրիկ տղաք ակումբէն բերին հայ գիրքը ու դուրս շարտեցին հայատառ թրքերէն թերթը, վէպը, Ս. Գիրքերը: Շատ հոգաբարձուներ հայերէն չէին գիտեր: Թրքերէնի, քրտերէնի, արաբերէնի ու նոյնիսկ բարբառի դէմ ինչ հաւատքով պայքարեցանք ու յաղթեցինք: Այդ հայերէն չխօսող սերունդէն ծնան Մուշեղ Իշխանի գրչակիցները: Ասիկա համաժողովրդական պայքար մըն էր: Դեռ մինչեւ 1960-ական թուականները Հալէպի ու Պէյրութի խանութներուն մէջ կախուած է յայտնի նշանախօսքը. «Թրքերէն խօսողին հայերէն պատասխանէ»:

Վերապատուելի Պարգեւ Օրջանեան, Հալէպի Բեթէլ վարժարանի իր աշակերտական 1920-ական տարիները յիշելով, կը գրէ. «Այսպիսի թրքախօս միջավայրի մը մէջ հասակ նետող մանուկը հայախօս դարձնել հրաշքի համազօր էր, բայց կարելի եղաւ շնորհիւ մեր մշակներուն անխոնջ աշխատանքին: Կ'արժէ անոնց յուշարձանները կանգնեցնել իրենց հայապահպանումի աշխատանքին որպէս վարձք: Մեզի արգիլուած էր խաղերու պահերուն թրքերէն բառ մը իսկ գործածել: Ան եղաւ մեր հայախօսութեան խմորը: Անոնք մեր մէջ արծարծեցին հայերէնի հանդէպ սէր, մեզի դասաւանդելով ոսկեղնիկ լեզուն եւ կերտելով հայու հոգին»¹²:

Այսուհանդերձ թրքերէնը առօրեայ հաղորդակցութեան եւ նոյնիսկ ընտանիքի մէջ կը շարունակէ ապրիլ, երբ հայերէնն արդէն ծանօթ է բոլորին: Դպրոցէն ներս ալ հայերէնի ուսուցման ճիգերը չեն արգիւնաւորուած ակնկալուածին չափով: 1942-ին Միքայէլ Նաթանեան՝ Բարեգործականի երկար տարիներու կրթական քննիչը, երեւոյթը ներկայացնելով, կը գրէ. «Կը հետեւցուի թէ՛ ազգովին եւ անխտիր արտակարգ ճիգ մը կարեւոր է Մեսրոպեան բարբառը վերահաստատելու համար՝ բնականաբար առանց յուսալքուելու, առանց տկարանալու թրքախօսներու մտայնութեան դէմ պայքարին մէջ»¹³: Ըստ Նաթանեանի՝ Սուրիոյ եւ առ-

¹² Անդ, էջ 12:

¹³ Մ. ՆԱԹԱՆԵԱՆ, Լեզուական հարցը Սուրիոյ մէջ եւ հայերէնի ապագան, «Սիոն», 1942, թ. 5–6, էջ 116:

հասարակ արաբական երկիրներու մէջ ապրող հայը «Անխուսափելիօրէն ստիպուած է,— եւ պէտք ալ է,— հետզհետէ սորվիլ եւ աղէկ սորվիլ, արաբերէն եւ նոյնիսկ անոր համընթաց ֆրանսերէնը եւ անգլերէնը...: Լեզուական հարցն ալ, իր բոլոր կողմերով եւ երեւոյթներով, պէտք է մօտէն շահագրգռէ մեզ ազգովին՝ թէ՛ մէկ կողմէն մեր մայրենի լեզուն չկորսնցնելու, իւրացնելու եւ զարգացնելու զուտ հայեցի տեսակէտով, եւ թէ՛ միւս կողմէն, այս երկիրներու մէջ մեր արժանայարգ դիրքը, մէկէ աւելի պատճառներով, կարենալ բաւարարելու եւ պահելու համար»¹⁴:

Բնիկ արաբախօս հայոց շրջանակներու զաւակներն ալ կը ներգրաւուին դպրոցներու կողմէ ղեկավարուող գրական արեւմտահայերէնի տարածման գործին մէջ, ջանք կը տարուի, որ անպայման հայկական վարժարան յաճախեն: Հայ եկեղեցին եւ դպրոցը աւելի հետեւողական եղան այս գետնի վրայ: Հալէպի Առաջնորդանիստ Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ կից Ազգային Հայկազեան վարժարանի տնօրէն Նշան Սաաթճեան 24 թուահամար, 9 Սեպտեմբեր 1920 թուակիր նամակով կը յայտնէ, որ բնիկ արաբախօս աշակերտներու եւ աշակերտուհիներու համար կազմած է մասնաւոր դասարաններ՝ անոնց հայերէնին մասնաւոր ուշադրութիւն դարձնելու նպատակով¹⁵: 52 թուահամար, 25 Սեպտեմբեր 1920 թուակիր նամակով Քաղաքական ժողովը տեղեակ կը պահէ, թէ «Միակ դժուարութիւնն է հայերէն չհասկցող արաբախօսներու խնդիրն: Մասնաւոր ուսուցիչի մը յանձնը եմ, օրական դասէն զատ վեց անգամ ալ կրկին դաս»¹⁶:

Հայ կաթողիկէ համայնքն ալ ունէր արաբախօս մեծ զանգուած մը Դամասկոսի, Հալէպի եւ Գամիշլիի մէջ: Հայ կաթողիկէ եկեղեցին ալ այս գետնի վրայ որոշ ջանք կը թափէ. Ճեզիրէի հայ կաթողիկէ թեմի կազմակերպիչ Կիւրեղ եպս. Զոհրապեանի մասին 1947-ին կը գրուի. «Զոհրապեան հայ կաթողիկէ կղերին այն դասուն կը պատկանի, որ կու գայ գաւառէն, գիտէ Հայն ու Հայաստանը եւ ուրկէ նաեւ իր գործակցութեան օրինակելի ոգին Ազգային առաջնորդարանին հետ»¹⁷: Համայնքն ունի 130 ընտանիք. գրեթէ բոլորն ալ արաբախօս մերտինցիներ են, հայա-

¹⁴ Անդ, էջ 117:

¹⁵ Բերիոյ թեմի ազգային առաջնորդարան, Ստացուած նամակներու ծրար, նամակ թիւ 24, 9—9—1920 թուակիր:

¹⁶ Անդ, նամակ թիւ 52, 25, Սեպտ. 1920 թուակիր:

¹⁷ Ս. ԲԱՅՏԻԿԵԱՆ, Հայ դպրոցը Գամիշլիի մէջ, «Արեւելք», Հալէպ, 25 Մարտ, 1947:

խօսաներ ալ կան, եւ քանի մը տուն՝ քրտախօսներ: Աշակերտութիւն՝ 300: Դպրոցը նախապէս առաջնորդարանին կից էր, արդէն փոխադրուած է սէօրերու դպրոցը: Սակայն նկատուած է, որ հայ կաթողիկէ համայնքի ոչ բոլոր դպրոցներն անկախ գործած են. մանչերու վարժարանները, իսկ տեղ-տեղ երկսեռ վարժարանները յանձնուած են օտար առաքելութիւններու հսկողութեան՝ յիսուսեան, ֆրանչիսկեան, լազարիստ, քափուշի-նեան վարդապետներու: Արաբախօս զանգուածներուն հայեցի դաստիարակութեան ու հայերէնի ուսուցման հարցով միշտ աւելին ակնկալուած է կաթողիկէ դպրոցներէն: 1928-ին դոկտ. Յակոբ Թօփճեան կը գրէ. «Հալէպի հայ կաթողիկէներուն կը պատկանի Հալէպի մեծ դպրոցը, որ թէեւ Հալէպի առաջնորդին հսկողութեան տակ կը գտնուի, սակայն ֆրանսացի ֆրէրներ զայն կը վարեն: Այստեղ կը յաճախեն 500—700 մանչեր ամեն ազգէ: Դպրոցական դասաւանդութեան լեզուն ֆրանսերէն է: Հայ աշակերտներուն կ'աւանդուին հայերէն եւ հայոց պատմութիւն: Այս դպրոցը հայացնելու համար մասնաւոր խնամք տանելու է»¹⁸: Այդ հարցով բողոքներ ու ընդվզումներ եղած են համայնքին մէջ: Անպաշտօն դրուածքով՝ Հալէպի մէջ կայ արաբախօս եւ հայախօս կաթողիկէ վարժարաններու զատորոշում: Հայր Արսէն Ադամեան՝ Տէր Զօրի կաթողիկէ համայնքի ժողովրդապետը, 1932-ին կը գրէ. «Երբ հոս հասայ, տեսայ որ ասորի կաթողիկէները մանչերու դպրոց ունէին, ուստի ես ալ աղջկանց վարժարան մը բացի: Սակայն ասկէ երկու տարի առաջ, երբ ֆրանսացի մայրապետները եկան, ստիպուեցայ իրենց յանձնել մեր վարժարանը եւ վարձու տալ դասարանները, քանի որ չէի կրնար ոչ հետերնին մրցիլ, ոչ ալ միջոց մը գտնել շարունակելու: Անարատ յղութեան մայրապետները անտարբեր մնացին կոչիս առջեւ, եւ այսպէս հայ աղջիկները այսօր լեզունին մոռնալու վտանգի մէջ են: Ասոնց բնակարան եւ դպրոց պատրաստ են. մեծաւորներուն կ'իյնայ ըմբռնել տալ այդ մայրապետներուն որ մեծ քաղաքներու շրջումով խոհարհ Առաքելութիւններէ չխորշին»¹⁹: Այդ համայնքի արաբախօսութիւնը չէ յաղթահարուած:

Հայ Առաքելական Եկեղեցին լեզուի պայքարին կը մասնակցի երկու երեսներով՝ պայքար թրքախօսութեան դէմ գրական արեւմտահայ-

¹⁸ ԴՈՒՏ. ՅԱՎՈՐ ԹՕՓՃԵԱՆ, Հայութիւնը Սիրիոյ մէջ, «Հայաստանի Կոչնակ», Նիւ Եորք, 14 Յուլիս 1928, թիւ 28, էջ 874բ:

¹⁹ Յ. ՉՈՒԱՔԵԱՆ, Թեմերէ լուրեր — Տէր էլ Զօր, «Աւետիք», Պէյրութ, Ա. տարի, 1932, թիւ 10, Դեկտեմբեր, էջ 70—71:

յերէնի տարածման համար, նաեւ եկեղեցւոյ արարողակարգերուն մէջ աշխարհաբարի ներթափանցման փաստին առթիւ՝ պայքար ի պահպանութիւն գրաբար հայերէնի: Հաւատացեալներուն հասկնալի դառնալու համար թրքերէնը կը մտնէ նաեւ Հայ Եկեղեցւոյ մէջ: Ասոր կը յաջորդէ նաեւ աշխարհաբարի գործածութիւնը: Այս երեւոյթը մտահոգիչ կը դառնայ Հայ Եկեղեցւոյ համար, գրաբարի՝ իբրեւ ծիսական լեզուի գործառութիւնը հետզհետէ կը վտանգուէր: Ասոր չէր կրնար հանդուրժել Հայ Եկեղեցին: Ասոր լաւագոյն ապացոյցը Բերիոյ թեմի առաջնորդ Արտաւազդ արք. Սիրմէեանի 6 Ապրիլ 1936 թուակիր թիւ 1 որոշմնագիրն է, որ խստօրէն կ'արգիլէ թրքերէնի եւ աշխարհաբարի գործածութիւնը հայ եկեղեցւոյ ծիսակարգերուն մէջ ու յատուկ պատիժ կը սահմանէ զանցառուներուն:

Ստորեւ այդ պաշտօնագիր-որոշմնագիրը.

— Ներկայ Առաջնորդական Պաշտօնագրով վերջին անգամ ըլլալով եւ կարեւորութեամբ կ'ազդարարենք, որ այսօրուրնէ սկսեալ բացարձակապէս արգիլուած է Հայ Եկեղեցւոյ մէջ, ըլլա՛յ Քահանայ Հայրերու կողմէ, ըլլա՛յ հօւր Վարդապետ կամ Աբեղայ կամ Քահանաներու կողմէ, ըլլա՛յ Սարկաւագ կամ Աւագ Սարկաւագներու կողմէ, ըլլա՛յ հրամանաւ Ուրարակրի կողմէ, ըլլա՛յ Դպրապետի կամ Դպրաց Դասու ոեւէ անհատի կողմէ, թուրքերէն լեզուաւ կամ աշխարհաբար լեզուաւ, ըլլա՛յ ուղղակի, ըլլա՛յ անուղղակի, գրաբար բնագրին վրայէն կարդալ աշխարհաբար կամ թուրքերէն:

Դարձեալ արգիլուած է պսակի, մկրտութեան կամ թաղման յատուկ աղօթքները նոյն ձեւով կարդալ աշխարհաբար կամ թուրքերէն: Մէկ խօսքով՝ տարիներէ ի վեր Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ բոյն դրած քմահաճ սովորութիւնները յառաջիկայ Ս. Զատկի տօնական օրերէն առաջ պէտք է ի սպառ վերցուին քաղաքիս Ս. Աստուածածին, Ս. Խաչ եւ վերջերս ալ ցաւալի կերպով եւ անբացատրելի կերպով ծաւալիլ սկսած Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջէն:

Հայ Եկեղեցին մի է իր բոլոր մանրամասնութիւններուն մէջ,— այս միութիւնը պէտք է երեւան գայ թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ, ինչպէս որ միաձեւ են Գահիրէի, Աղեքսանդրիայի, Աթէնքի, Կ. Պոլսոյ, Մարսիլիոյ, Բարիզի, Լոնտոնի, Ամերիկայի, Պաղտատի, Պարսկաստանի, Հնդկաստանի բոլոր հայ եկեղեցիները:

Ցաւով կը յայտարարենք, որ անսաստողներու համար վերապահած ենք կանոնական խիստ կարգադրութիւններ՝ մէկ ամիսէն մինչեւ երեք ամիս ապաշխարութիւն եւ քահանայական պաշտօններու տեղափոխութիւն:

Յանձնարարելով կատարեալ հնազանդութիւն Առաջնորդական ներկայ կարեւոր Հրահանգի հանդէպ եւ հայրական սիրոյ ողջունիւ:

Մնամք աղօթարար

Արտաւագդ Արքեպիսկոպոս²⁰

Գրաբարի ուսուցումը դեռ ժԹ. դարու երկրորդ կէսէն սկսած էր նահանջ արձանագրել արեւմտահայ դպրոցին մէջ: Սուրիահայ դպրոցը՝ մանաւանդ ազգային վարժարանները, մասամբ կը շարունակէն իրենց ծրագիրներուն մէջ մտցնել նաեւ գրաբարը: Ոմանք ջերմօրէն կը պաշտպանեն անոր ուսուցման կարեւորութիւնը՝ նկատելով հանդերձ, որ «Յաճախ գրաբարի ուսուցումը աւելորդ ժամավաճառութիւն սեպուած եւ զանց առնուած է մեր նախակրթարանաց բարձրագոյն կարգէն կամ նոյնիսկ բարձրագոյն դպրոցներուն մէջ»²¹: Այդպէս ալ կը մնայ: Սակայն դպրոցները ծրագրային եւ արտածրագրային յայտագիրներով աշակերտները եկեղեցիին մօտիկցնելու աշխատանք տարած են ամենուրեք եւ գրաբարին հետ հաղորդ պահած. այսպէս՝

— Ծրագրային իր գործունէութեան մէջ կրօնագիտութեան դասանիւթի առկայութիւնը բացարձակ է բոլոր դպրոցներուն համար: Երեք համայնքները տարբեր դասագիրքեր կ'առաջարկէին իրենց դպրոցներուն: Հայ առաքելական եւ կաթողիկէ վարժարաններուն մէջ կրօնական դաստիարակութեան կողքին կայ յատուկ ջանք՝ աշակերտին ընկալելի դարձնելու գրաբարով կատարուող ծիսակարգը, աղօթքները, շարականներն ու տաղերը, մէկ խօսքով՝ ընկալելի դարձնել գրաբարը: Հայոց պատմութեան դասագիրքերուն եւ հայերէնի ընթերցարաններուն մէջ դրուած են գոց սորվելու գրաբարեան մէջբերումներ մեր վիպասանքէն, ինչպէս հատուածներ՝ Արշակի եւ Վաղարշակի, Արտաշէս Աշխարհակալի, Արտաշէսի եւ Արտաւագդի, Արտաշէսի եւ Սաթենիկի, Նոյեան տապանին դրուագներէն հատուածներ, Աստուածաշունչի թարգմանութեան առա-

²⁰ ՅԱԿՈԲ ՉՈԼԱՔԵԱՆ, Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան վարժարանի, 1927—2007, Հալէպ, 2007, էջ 107:

²¹ Խ. Պ. ՔԱՐՏԱՆ, Գրաբարի ուսուցումը, «Ճիւղատ», Հալէպ, 7 Սեպտեմբեր, 1927, թիւ 45:

ջին տողը եւ այլն, հատուածներ խորենացիի, Եղիշէ Պատմիչի եւ այլոց երկերէն: Կրօնի դասագիրքերուն մէջ կան սորվելիք շարականներ, տաղեր, Տէրունական աղօթքը, Հաւատոյ հանգանակը, աղօթքներ՝ ճաշի, գործի սկսելու, քնանալու եւ այլն:

— Ծրագրային աշխատանքին մաս կը կազմէ «Աշակերտական Պատարագ»ը, որ կը կատարէր քահանան համապատասխան թարգմանութիւններով ու թելադրութիւններով: «Աշակերտական պատարագ»ը կը կատարուէր կից եկեղեցւոյ կամ մատուան մէջ: Աշակերտներ կը ծանօթանային Ս. Պատարագին եւ երգեցողութիւն կը կատարէին:

— Դպրոցականներ կը ներգրաւուէին եկեղեցիներու դպրաց դասերուն մէջ ու աստիճանաբար կ'իրացնէին Հայ Եկեղեցւոյ գրաբար արարողակարգը: Դպրապետները հոն կը կատարէին ու կը շարունակեն կատարել ուսուցման կարեւոր աշխատանք:

— Կան նաեւ մեր երեք համայնքներու Կիրակնօրեայ դպրոցները: Հայ Առաքելական Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցները 1929-ին մտան Համաշխարհային Կիրակնօրեայ դպրոցներուն ցանցին մէջ: Հայկական Կիրակնօրեայ դպրոցները՝ իբրեւ հասարակաց ծրագիր, ունին կրօնաբարոյական եւ ազգային դաստիարակութեան առաջադրանք: Հայաստանեայց Առաքելական դաստիարակութեան մէջ կը մտնեն Հայ Եկեղեցւոյ տօներու, ծիսակարգերու, շարականներու, տաղերու եւ աղօթքներու ուսուցումը: Սա ալ բնականաբար սերտ առնչակից կը դարձնէ սերունդը մեր եկեղեցւոյ ծիսական լեզուին ու անոր նրբութիւններուն:

— Երկրորդական վարժարաններու բարձր կարգերուն մէջ մինչեւ 1960-ական թուականները կար գրաբարի ուսուցման դասապահ: Հետեւողական չէ եղած: Ազգային վարժարաններու 10—11-րդ կարգերուն կրօնագիտութեան առընթեր կը տրուի նաեւ հայ մատենագրութիւն դասը, ուր դպրոցականները յաւելեալ ճաշակ մը կը ստանան գրաբար ընթերցումներէ:

— Հայ Կաթողիկէ Եկեղեցին եւ անոր կիրակնօրեայ դպրոցը գրաբարին նոյն դերը վերապահած են:

— Հայ Աւետարանական Եկեղեցւոյ արարողակարգը կը կատարուի աշխարհաբարով: Համայնքին զաւակները գրաբարին կը ծանօթանան միայն հայոց պատմութեան եւ ընթերցանութեան դասագիրքերուն մէջ տեղ գտած հատուածներով: 1950-ականներէն ետք Եկեղեցին ընդունած

է Տէրունական աղօթքի գրաբար տարբերակը. շարք մը շարականներ ու տաղեր տեղ գտած են Հոգեւոր երգարանին մէջ:

Արեւելահայերէնը միշտ ներկայ է ուսուցման համակարգին մէջ: Դպրոցականները արեւելահայերէնով երգ ու ոտանաւոր կը սորվին տակաւին մանկապարտէզի տարիներէն: Սփիւռքահայ դպրոցին մէջ նախակրթարաններու ընթերցարաններէն (Բենիամին Թաշեանի «Հայկաբան», Սիմոն Սիմոնեանի եւ Օննիկ Սարգիսեանի «Արագած», հայերենի «Մայրենի լեզու» շարքերը) անբաժան են նաեւ արեւելահայ հեղինակներու գործերը՝ շատ անգամ առանց արեւմտահայերէնի վերածումի: Նախակրթարանին մէջ աշակերտները կը ծանօթանան Ռաֆայէլ Պատկանեանի, Րաֆֆիի, Ղազարոս Աղայեանի, Յովհաննէս Թումանեանի, Աւետիք Իսահակեանի, Խնկո Ապերի, Վահան Տէրեանի, Եղիշէ Զարենցի եւ այլ գրողներու: Միջնակարգին՝ հեղինակներուն շարքն աւելի կը մեծնայ: Արեւելահայ եւ խորհրդահայ գրականութեան գործերը միշտ ներկայ եղած են դպրոցական եւ հանրային գրադարաններուն մէջ: Տպարաններ եւ հրատարակչատուններ օրին հրապարակը ողողած են համապատասխան գրականութեամբ, երբ ոմանք դեռ կալանքի տակ էին Խորհրդային իշխանութիւններուն կողմէ: Սուրիոյ մէջ Ուսուցչաց միութեան հրատարակութիւններուն կարեւոր մէկ բաժինը կը կազմէր արեւելահայերէնով հրատարակուած գրականութիւնը: Մէկ խօսքով՝ սփիւռքահայ դպրոցականին համար երբեք անմատչելի չէ եղած արեւելահայ դասականներու լեզուն: Սուրիահայ եւ լիբանանահայ դպրոցի շրջանաւարտները հանգիստ կրնային արտայայտուիլ նաեւ արեւելահայերէնով: Այդ տեսակէտէն բարացուցական երկ մըն է Անդրանիկ Ծառուկեանի «Թուղթ առ Երեւան» պոէմը (1945):

Կարելի է եզրակացնել, որ Մերձաւոր Արեւելքի մեր գաղթավայրերուն մէջ 1920–1946՝ մինչեւ մեծ հայրենազարծութեան տարին, արեւմտահայերէնը շարունակեց նախաեղեռնեան զարգացման իր ընթացքը, կրցաւ դառնալ համընդհանուր գրական լեզու Սփիւռքի բոլոր գաղթավայրերուն համար, սերտ աղերս պահեց արեւելահայերէնի հետ ու գրաբարը կարողացաւ ընկալելի դարձնել նոր սերունդներուն:

РЕЗЮМЕ


В статье представлен процесс развития и обобщения западноармянского литературного языка, который начался еще до геноцида и продолжился среди разбросанных по странам Ближнего Востока армянских беженцев, где турецкий, арабский, курдский языки, а также многочисленные армянские диалекты были причиной, препятствующей национальному объединению.

Армянским школам, церкви, прессе и союзам в 1918—1946 гг., до Великой репатриации, общенациональными усилиями удалось превратить западноармянский в литературный и разговорный язык, сохраняя также связь с восточноармянским и обрядовым армянским — грабаром (древнеармянский язык). Это процесс был направлен на сохранение армянства.

SUMMARY

The article presents the process of development and generalization of the Western Armenian literary language, which began even before the Genocide and continued among the Armenian refugees scattered throughout the Middle East, where the Turkish, Arabic, Kurdish languages, as well as numerous Armenian dialects were the reason that prevented the national unification.

From 1918 to 1946, before the Great Repatriation, Armenian schools, churches, press and unions, through national efforts, managed to turn the Western Armenian into a literary and colloquial language, while also maintaining a connection with Eastern Armenian and Classical Armenian (Grabar) languages. This was a process of preserving the Armenian identity.



ԱՎԱԳ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, ՀՀ ազգային արխիվ

ՎՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՄԻ 1920–1930-ԱԿԱՆ ԹԹ. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ
ՎՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սկիզբը՝ նախորդիվ

Թիվ 52

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №37

Հայաստանի Կ(Բ)Կ ԿԿ Բյուրոյի նիստի,
18/II-1935 թ.

ԼՍԵՑԻՆ՝

5. Հայաստանում Մարտնչող Անաստվածների Միության մասին
(Արխիվյան)։

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հայաստանում հակակրոնական աշխատանքի վիճակը ԿԿ ծայրահեղ
անբավարար է համարում։ Կուսակցական, արհմիութենական կազմա-
կերպությունները եւ խորհրդային մարմինները հակակրոնական ճակա-
տի հանդեպ իրենց ուշադրությունը թուլացրել են։ Հայաստանի ՄԱՄ ԿԽ
մի քանի տարիների ընթացքում փաստացի անգործունյա է եղել։

ԿԿ Բյուրոն որոշում է.

1. Ազատել ԿԽ-ում աշխատանքից Վարդունուն, թողնելով «Անաստ-
ված» ամսագրի խմբագիր։

2. ԿԽ նախագահ հաստատել Ս. Շահվերդովային։

3. Հանձնարարել Ս. Շահվերդովային ԿԿ-ին հաստատման համար
ներկայացնել ԿԽ նախագահության կազմը եւ 1935 թ. առաջին կիսամյա-
կի աշխատանքի նախագիծը։

4. 1935 թ. մայիսի վերջին գումարել ՄԱՄ հանրապետական համա-
գումար։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 15, գ. 11, ք. 85: Բնագիր: Մեքենագիր:

Թարգմ. ոռւս.:

ԹԻՎ 53

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №87

Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ Բյուրոյի նիստի, 20/II-1936

ԼՍԵՑԻՆ՝

16. «Անաստված»¹ ընկերության մասին (Խանջյան):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել «Անաստված» ընկերության նախագահ Պ. Պետրոսյանին (համատեղություն), փոխնախագահ Ֆահրեդյանին, քարտուղար Խաչատրյանին:

2. Հանձնարարել Դզնունուն² «Անաստված» ընկերությանը կինոյի համար ձայնային սարքավորում փոխանցել:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 16, գ. 20, թ. 74: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ռուս.:

ԹԻՎ 54

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №94

Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ Բյուրոյի նիստի, 16/IV-36

ԼՍԵՑԻՆ՝

20. Մարտնչող անաստվածների միության մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

ԿԿ համարում է, որ վերջին ժամանակ մի շարք շրջկոմներ թերագնահատում են հակակրոնական ագիտացիայի եւ քարոզչության քաղաքական նշանակությունը. ՄԱՄ շրջանային խորհուրդները հստակ դեկլարում չեն ստանում, իսկ որոշ շրջաններում (Կիրովական, Ղափան, Արթիկ, Աշտարակ, Աբարան) այդ խորհուրդներն ընդհանրապես չեն գործում:

Համարելով նման դրությունն անթույլատրելի, ԿԿ Բյուրոն որոշում է.

1. ՀԿ(բ)Կ ՔԿ-ներին³ եւ ՇԿ-ներին⁴ առաջարկել Բյուրոյի նիստերում քննարկել Անաստվածների ընկերության⁵ աշխատանքների վիճակը եւ իրական աշխուժացման համար նախանշել գործնական միջոցառում-

¹ Նկատի ունի Մարտնչող անաստվածների միությունը:² Դզնունի Դանիել (1895–1967): 1923–1937 թթ.՝ «Հայկինո»-ի տնօրեն, 1938–1943 թթ. բոնադատվել է:³ Քաղաքային կոմիտեներ (կոմկուսի):⁴ Շրջանային կոմիտեներ (կոմկուսի):⁵ Նկատի ունի Մարտնչող անաստվածների միությունը:

ներ: Վերանայել Ընկերության շրջխորհուրդների ղեկավար կազմերը՝ տոկոսն եւ աշխատունակ ընկերներով թարմացման ու ապահովման տեսանկյունից:

2. Առաջարկել Մարտնչող անաստվածների ընկերության ԿԽ-ին իրականացնել ընկերության անդամների հաշվառում եւ աշխատանք ծավալել նոր անդամների ներգրավման ուղղությամբ, մասնավորապես գյուղերում ընդլայնելով ընկերության ցանցը:

3. ՄԱԸ⁶ ԿԽ-ին, ՀԼԿԵՄ ԿԿ-ին եւ ԼուսԺԿ-ին՝ ուժեղացնել դպրոցներում հակակրոնական աշխատանքը:

4. Պետհրատին՝ նախանշել հրատարակչության ծրագրում հանրամատչելի հակակրոնական գրականության տպագրությունը: ԿԿ Մշակութիւնսին⁷ եւ ՄԱԸ ԿԽ-ին՝ հրատարակչության համար գրականություն (բնագիր եւ թարգմանչական) ընտրել:

5. «Խ. Հ.»⁸, «Կոմունիստ»⁹, «Կզլ Շաֆակ»¹⁰, «Ավանգարդ»¹¹ եւ շրջանային թերթերի խմբագրություններին՝ ուժեղացնել մամուլի էջերում հակակրոնական ագիտացիայի եւ քարոզչության հարցերի եւ գործընթացի լուսաբանումը:

6. Քաղկոմներին եւ շրջկոմներին՝ ՄԱԸ-ին դասախոսական ու խորհրդատվական աշխատանքներում օգնություն ցուցաբերման համար տրամադրել կուսակցության անդամներ եւ որակաորված գիտական աշխատողներ:

7. Հաստատել ՄԱԸ ԿԽ հետեւյալ կազմը՝ Պ. Պետրոսյան (նախագահ), Ն. Դաբաղյան, Ս. Շահվերդովա, Ա. Մոկացյան, Բզնունի, Հ. Գյուլի-Քելիսյան, Ե. Վահրադյան (փոխնախագահ), Կ. Խաչատրյան (պատ[ասխանատու] քարտուղար), Մ. Հուսեյնովա, Գ. Ղազարյան, Ա. Մակինց, Ս. Դավթյան:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 16, գ. 21, քթ. 137–138: Բնագիր: Մեքենագիր:
Թարգմ. ուսու.:

⁶ Մարտնչող անաստվածների ընկերություն (միություն):

⁷ Մշակութային-լուսավորչական բաժին:

⁸ «Խորհրդային Հայաստան» — ՀԿԿ ԿԿ պաշտոնաթերթ, 1921–1940:

⁹ «Կոմունիստ» («КОМУНИСТ») — ՀԿԿ ԿԿ պաշտոնաթերթ, ուսերեն:

¹⁰ «Կզլ Շաֆակ» — ՀԿԿ ԿԿ պաշտոնաթերթ, թուրքերեն:

¹¹ «Ավանգարդ» — Հայաստանի լենինյան կոմունիստական երիտասարդական միության ԿԿ եւ Երեւանի կոմիտեի պաշտոնաթերթ, հրատարակվել է Երեւանում 1923-ից:

ԹԻՎ 55

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №110

Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ Բյուրոյի նիստի, 23 հուլիս 1936 թ.

ԼՍԵՑԻՆ՝

47. Աշտարակի եւ այլ շրջաններում կրոնական տրամադրությունների աշխուժացման մասին (ԿԿ հանձնաժողով՝ Արիսյան):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել ներկայացված առաջարկները¹²:

ԱՇՏԱՐԱԿԻ ԵՒ ԱՅԼ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

ԿՐՈՆԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽՈՒԺԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

ԿԿ Բյուրոն նշում է, որ Աշտարակի շրջանում հունիսի 1-ին եւ 2-ին, կրոնական տոների հետ կապված, կուսակցական եւ կոմերիտական կազմակերպությունների անգործության շնորհիվ, տերտերներին հաջողվել է կազմակերպել նշանակալից հավաքներ, հիմնականում՝ երիտասարդների, Փարպիի եւ Օշականի վանքերում:

ԿԿ նշում է, որ վերջին ժամանակ տեղի են ունեցել տերտերների գործունեության կենդանացման փաստեր, բացահայտ կրոնական քարոզչության փորձեր, գոյություն ունեցող օրենքների խախտումներ հավատքի ծառայողների կողմից կրոնական ծեսերի նշման կարգի մասին եւ այլն, նույնպես եւ այլ շրջաններում:

Դաշնակ տարրերի մնացուկների կողմից ղեկավարվող եւ ուղղորդվող տերտերների կրոնական քարոզչության լեգալացման այդ փորձերը տեղական կուսակցական ու ԵԿՄ¹³ կազմակերպությունների կողմից անհրաժեշտ հակահարված չեն գտնում: Աշտարակի, Վաղարշապատի եւ Ապարանի ՇԿ-ները չնայած ԿԿ բազմաթիվ ցուցումներին եւ պահանջներին ոչ միայն չեն բարելավել հակակրոնական քարոզչության գործը, այլ հակառակը, դեպքերի մեծ մասում այն չեն էլ վարել:

Տերտերների աշխատանքին նպաստում է նաեւ այն, որ շրջանային կուսակցական կոմերիտական կազմակերպությունները, ակումբները եւ այլ մշակութային-լուսավորչական հիմնարկություններն անբավարար են

¹² Ձեռագրով ավելացված է՝ «Ուղարկել կուսակցության եւ կոմերիտիության բոլոր շրջկոմներին»:

¹³ Երիտասարդության կոմունիստական միություն — կոմերիտմիություն:

զբաղվում կոլտնտեսականների մշակութային հանգստի կազմակերպմամբ եւ սպասարկմամբ, մասնավորապես՝ երիտասարդության, զանգվածային ժողովրդական տոնախմբություններ, խրախճանքներ եւ այլն չեն կազմակերպում:

ԿԿ նշում է, որ Մարտնչող Անաստվածների Միությունն անգործություն է ցուցաբերում, ՄԱՄ շատ շրջանային կազմակերպություններ փաստացի իրենց գործունեությունը դադարեցրել են, իսկ մյուսները՝ ՄԱՄ Կենտրոն[ական] Խորհրդի կողմից պատշաճ ղեկավարում եւ օգնություն չեն ստանում:

ՀԿ(բ)Կ եւ ՀԵԿՄ¹⁴ շրջանային կոմիտեների եւ սկզբնական կազմակերպությունների հակակրոնական քարոզչության գործի հանդեպ նման վերաբերմունքը համարելով խիստ անթույլատրելի՝ ԿԿ վճռականորեն պահանջում է բոլոր կուսակցական եւ ԵԿՄ կազմակերպություններից ամենայն վճռական կերպով կասեցնել բազմաթիվ կազմակերպությունների գործունեության մեջ առկա հակակրոնական աշխատանքի նշանակության թերազնահատումը: Այդ կապակցությամբ ԿԿ Բյուրոն որոշում է.

1. Պարտավորեցնել շրջկոմներին իրենց անմիջական ղեկավարության ներքո վերցնել հակակրոնական քարոզչության գծով ամբողջ աշխատանքը, դիտարկելով այն որպես իրենց զանգվածային քաղաքական-դաստիարակչական աշխատանքի մաս:

2. ՀԼԿԵՄ¹⁵ ԿԿ-ին՝ երիտասարդության շրջանում հակակրոնական աշխատանքի ուժեղացման միջոցներ ձեռնարկել: Հաստատել այնպիսի կարգ, որպեսզի շրջանային կազմակերպությունները պարբերաբար հակակրոնական աշխատանքի ընթացքի մասին ՀԼԿԵՄ ԿԿ Բյուրոյին հաշիվ տան:

3. ՀԿ(բ)Կ ԿԿ Մշակութ-լուսավորչական բաժնին՝ ՀԼԿԵՄ ԿԿ-ի, Լուսժող-կոմատի Քաղլուսավորչական վարչության հետ համատեղ նախանշել եւ իրականացնել միջոցառումների շարք աշխատավորների հանգստի կազմակերպման եւ սպասարկման ուղղությամբ, հատկապես՝ կոլտնտեսային երիտասարդության, աշխուժացնելով եւ լայնորեն օգտագործելով ինքնագործ արվեստի խմբակները, շրջանային թատրոնները, երաժշտական

¹⁴ Հայաստանի երիտասարդության կոմունիստական միություն:

¹⁵ Հայաստանի լենինյան կոմունիստական երիտասարդության միություն:

համուլթները, հատուկ ուշադրություն դարձնելով զանգվածային տոնակատարությունների, խորախճանքների եւ այլնի կազմակերպման վրա:

4. ԿԿ Դպրոցական բաժնին, ՀԼԿԵՄ ԿԿ-ին եւ լուսժողովոմատին հրահանգել պարբերաբար օգնել ժողովրդական կրթության բաժիններին դպրոցում եւ դպրոցից դուրս երեխաների շրջանում դաստիարակչական աշխատանքի գործընթացում հակակրոնական քարոզչության ուժեղացման գծով, դրանում մտցնելով ակտիվ հակակրոնական դաստիարակության անհրաժեշտ տարրեր: Դասագրքերում, հատկապես՝ մայրենի լեզվի եւ գրականության, բաղկացուցիչ նյութեր հավելել:

5. ԿԿ Դպրոցների բաժնին՝ ԿԳԿ հետ համատեղ 10-րյա ժամկետում վերանայել Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի տնօրինման տակ գտնվող վանքերի եւ եկեղեցիների ցանցը, ինչպես նաեւ՝ այն անձանց կազմը, որոնց տեղերում հանձնարարված է դրանց պահպանությունը, մաքրելով նրանց շարքերը ներթափանցած օտար եւ թշնամի տարրերից:

6. ԿԿ Մշակութ-լուսավորչական բաժնին՝ ներկայացնել ԿԿ Բյուրոյի հաստատմանը ՄԱՄ Կենտրոնական Խորհրդի նոր աշխատունակ կազմ եւ ՄԱՄ կազմակերպությունների աշխատանքի աշխուժացման եւ ամրապնդման գծով միջոցառումներ:

7. Աշտարակի ՇԿ քարտուղար Բալյանին պարզաբանել, որ Փարպիում եւ Օշականում հավաքները կարող էին տեղի ունենալ միայն շրջանում կուսակցական-զանգվածային աշխատանքի անբարեհույս դրության պայմաններում, մի շարք գյուղերի կոմունիստների անբավարար քաղաքական զգոնության եւ սկզբնական կուսկազմակերպությունների հետ ՇԿ-ների անբավարար կապի դեպքում:

ԿԿ նախազգուշացնում է բոլոր կուսակցական եւ կոմերիտական կազմակերպություններին, որ կազմակերպություններում հակակրոնական աշխատանքի անթույլատրելի անտեսումը եւ թերագնահատումը հաճախ վկայում է դասակարգային թշնամու մնացուկ դաշնակ տարրերի դեմ զգոնության բխցման մասին, որոնք փորձում են զանգվածների վրա իրենց ազդեցությունն իրացնել նրանց շրջանում կրոնական գաղափարախոսության զարթոնքի եւ բորբոքման ճանապարհով:

ԿԿ պարտավորեցնում է բոլոր Քաղկոմներին եւ Շրջկոմներին մոտակա ժամանակ այդ գործում վճռական բեկում իրականացնել եւ հակակրոնական քարոզչությունը պատշաճ բարձունքի դնել:

ԿԿ Մշակութա-լուսավորչական բաժնին՝ նախապատրաստել ԿԿ Բյուրոյում օգոստոս-սեպտեմբեր ամիսներին լսելու Աշտարակի, Վաղարշապատի եւ Ստեփանավանի ՇԿ-ների զեկուցագրերն այդ շրջաններում հակակրոնական աշխատանքի մասին:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 16, գ. 41, թթ. 63–65, գ. 24, թթ. 134–136: Բնագիր:

Մեքենագիր: Թարգմ. ուսու.:

ԹԻՎ 56

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №46

Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ Բյուրոյի նիստի, 21 դեկտեմբեր 1937

ԼՍԵՑԻՆ՝

17. Հայաստանում Անաստվածների Միության աշխատանքի մասին (Մնեյան):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Առաջարկել ՄԱՄ Կենտրոնական Խորհրդին ք. Երեւանում ՄԱՄ քաղաքային եւ շրջանային ակտիվի պատրաստման եւ վերապատրաստման մշտական դասընթացներ կազմակերպել:

2. Հայաստանի բոլոր շրջաններում ՇԿ-ների կուսկաբինետներին կից կազմակերպել ՄԱՄ ակտիվի պատրաստման 10-օրյա դասընթացներ, ապահովելով դրանք դասախոսների շարժական կազմով:

3. Հայաստանի Պետհրատին պարտավորեցնել 1938 թ. հրատարակչական ծրագրում նախատեսել հակակրոնական գրքերի եւ գրքուկների տպագրություն, ինչպես բնագրով, այնպես էլ՝ թարգմանչական:

4. Առաջարկել շրջկոմներին մինչեւ 1938 թ. փետրվարի 1-ի ժամանակաշրջանը իրականացնել Մարտնչող Անաստվածների Միության շրջկոմ-ֆերանսներ:

5. ՄԱՄ հանրապետական համագումարը նախատեսել 1938 թ. փետրվարի 15-ին:

6. ՀԿ(բ)Կ ԿԿ Մշակութա-լուսավորչական բաժնին առաջարկել քննարկել Մարտնչող Անաստվածների Միության ԿԽ-ին կից դասախոսական բյուրոյի կազմը, դրա համար ընտրելով գիտականորեն պատրաստված դասախոսների:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 53, թ. 178: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ուսու.:

ԹԻՎ 57

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 72

ՀԿ(բ)Կ ԿԿ Բյուրոյի նիստի, 27 մարտ 1938 թ.

ԼՍԵՑԻՆ՝

10. Հայաստանի Մարտնչող Անաստվածների Միության աշխատանքի եւ հակակրոնական քարոզչության վիճակի մասին (Լոգավիճակի):

Արտահայտ[վեցին] Բ. Մարտիրոսյան, Լ. Օսիպյան, Խ. Հակոբջանյան, Գր. Հարությունյան¹⁶:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել:

ՄԱՐՏՆՉՈՂ ԱՆԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԵՒ ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

(ՀԿ(բ)Կ ԿԿ Բյուրոյի 1938 թ. մարտի 27-ի որոշումը)

ԿԿ Բյուրոն նշում է, որ հակակրոնական քարոզչությունը՝ որպես կուսակցության քարոզչության կարեւորագույն բաղկացուցիչ մաս, մինչ այժմ Հայաստանում ծայրահեղ անբավարար է ծավալվել:

Հայաստանի Մարտնչող Անաստվածների միության Կենտրոնական Խորհուրդը հավատացյալների շրջանում հակակրոնական քարոզչության լայն ծավալման իր վրա դրված խնդիրները չի կատարել, այդ աշխատանքին ԽՍՀՄ գերագույն Խորհրդի ընտրությունների շրջանում բացահայտված գիտական աշխատողների կադրերին, ուսուցիչներին, բժիշկներին, գյուղատնտեսներին, կուսակցական-կոմերիտական ագիտատորներին եւ անկուսակցական բոլշևիկներին չի ներգրավել:

Հայաստանի ՄԱՄ ԿԽ վատ է ղեկավարել ՄԱՄ ստորին կազմակերպություններին եւ շրջանային Խորհուրդներին, եւ չի ապահովել Մարտնչող Անաստվածների միության Համահայկական կոնֆերանսի նախապատրաստումը եւ գումարումը:

ՄԱՄ ղեկավար կազմում, ինչպես՝ կենտրոնում, այնպես էլ՝ որոշ շրջաններում, ներթափանցել են ժողովրդի թշնամիներ (Դաբաղյան, Հուսեյնով, Ս. Շահվերդովա, Պ. Պետրոսյան եւ ուրիշներ), հետամուտ լինելով ՄԱՄ քայքայմանը եւ լուծարմանը:

¹⁶ Հարությունյան Գրիգոր (1900–1957): 1937–1953 թթ.՝ ՀԿԿ ԿԿ 1-ին քարտուղար:

Որոշ շրջաններում ([Երեւանի] Ստալինյան եւ այլն) կուսակցության քաղկոմները եւ շրջկոմներն այդ գործին ձեւական մոտեցում էին ցուցաբերում եւ չէին հասել ՄԱՄ աշխատունակ կազմակերպությունների ստեղծմանը եւ ծավալել լայն ու ամենօրյա հակակրոնական քարոզչություն հավատացյալների շրջանում: Հակակրոնական քարոզչությունից մի կողմ էն կանգնած կոմերիտական, արհմիութենական կազմակերպությունները եւ ժողովրդական կրթության մարմինները: Պարբերական մամուլը՝ ինչպես կենտրոնական, այնպես էլ՝ շրջանային, չի լուսաբանում հակակրոնական քարոզչության հարցերը եւ չի մերկացնում եկեղեցականների եւ աղանդավորների թշնամական որոշ կոնկրետ փորձերը:

Օգտվելով պարբերական հակակրոնական աշխատանքի բացակայությունից հետադիմական հոգեւորականությունը եւ եկեղեցական-աղանդավորական ակտիվի թշնամական տարրերը մի շարք շրջաններում (Վաղարշապատ, Աշտարակ, Սիսիան, Դիլիջան, Երեւան եւ այլն) աշխուժացրել են իրենց աշխատանքը, փորձեր անելով իրենց ազդեցության տակ պահել աշխատավորության հետամնաց խավերին:

ՀԿ(Բ)Կ ԿԿ Բյուրոն որոշում է.

1. Դեկավարության ուժեղացման համար Խորհրդի քարտուղար ընկ[եր] Անտոնյանին ազատել աշխատանքից, հաստատելով նրան Դասախոսական խմբի վարիչ: Խորհրդի քարտուղար երաշխավորել ընկ[եր] Մելքոն Մելքոնյանին:

ԿԿ ԱՔԲ-ին՝ 3-օրյա ժամկետում ընտրել Կենտրոնական Խորհրդի Նախագահի թեկնածու եւ ներկայացնել ԿԿ Բյուրոյի հաստատմանը:

2. ՄԱՄ հանրապետական կոնֆերանսի գումարումը տեղափոխել ս.թ. հունիս ամսին:

3. Պարտավորեցնել Հայաստանի ՄԱՄ ԿԽ-ին՝ ներգրավմամբ գիտական աշխատողների, շրջանների հիմնարկների եւ մշակութային ուժերի (բժիշկներ, գյուղատնտեսներ, ուսուցիչներ), օգտագործելով կուսակցական-կոմերիտական ակտիվի ագիտացիոն-քարոզչական ուժերը, կազմակերպել պարբերական հակակրոնական քարոզչություն հավատացյալ աշխատավորության շրջանում, լայնորեն կիրառելով անհատական եւ խմբակային քարոզչության եղանակները ընտրական տեղամասերում, թաղամասերում:

ՄԱՄ Կենտրոնական Խորհրդին՝ ուժեղացնել հրահանգչական ապարատը փորձված աշխատունակ աշխատողներով եւ ապահովել ՄԱՄ ստո-

րին կազմակերպությունների եւ շրջխորհուրդների կենդանի օպերատիվ ղեկավարում, խստորեն ստուգելով այդ կազմակերպությունների կադրերին եւ աշխատանքը:

4. Պարտավորեցնել Հայաստանի Կ(բ)Կ քաղկոմների եւ շրջկոմների քարտուղարներին, որտեղ դեռեւս չեն վերականգնվել ՄԱՄ ստորին կազմակերպությունները եւ չեն գումարվել ՄԱՄ շրջանային կոնֆերանսներ, ոչ ուշ քան ապրիլի 25-ը ավարտել այդ աշխատանքը, ապահովելով կոնֆերանսների գումարումը անձնական ղեկավարությամբ:

5. ՀԿ(բ)Կ Քաղկոմներին եւ Շրջկոմներին՝ հաշվի առնելով այն, որ կարող են օգտագործվել ազիտ-քարոզչական եւ մշակութային ուժերը, շրջաններում հակակրոնական աշխատանքի համար իրականացնել նրանց հետ տասնօրյա սեմինարներ եւ կազմակերպել պարբերական քարոզչություն կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում, դպրոցներում, ձեռնարկություններում եւ այլն, հակակրոնական խմբակներում հավատացյալներին ներգրավելով, նրանց հետ խմբակային եւ անհատական ազիտըրույցներ, դասախոսություններ եւ ազիտ-գրականության ընթերցանություն իրականացնել:

6. ՀԿ(բ)Կ ԿԿ Մամուլի բաժնին՝ կենտրոնական եւ շրջանային թերթերի էջերում հակակրոնական քարոզչության հարցերը ապահովել պարբերական խորհրդատվությամբ, պարզաբանելով Հայաստանի ՄԱՄ ԿԽ օգնությունը վերահրատարակության եւ աշխատանքի մասին հրահանգները, ինչպես նաեւ՝ 1938 թ. ոչ պակաս 6 հակակրոնական գրքույկ եւ գիրք հայերեն լեզվով վերահրատարակման ապահովումը:

7. Հանձնարարել ՀԿ(բ)Կ Երեւանի Քաղկոմին ստեղծել ՄԱՄ Քաղխորհուրդ եւ միջոցներ գտնել ազատված աշխատողների վարձատրման համար:

8. Ռադիոհեռարձակման կոմիտեին՝ ՄԱՄ ԿԽ հետ համատեղ պարբերաբար կազմակերպել հակակրոնական նյութերի (զեկույց, դասախոսություն, գեղարվեստական գրականության ընթերցանություն) բարձրախոսով եւ ռադիոյով հաղորդումներ:

9. Պարտավորեցնել ՄԱՄ ԿԽ-ին ԼուսԺԿ հետ՝ ընդգրկելով արհմիություններին եւ արհեստագործական կոոպերացիային, կազմակերպել 3-ամսյա դասընթացներ 40 մարդու համար, անհրաժեշտ ազիտկադրերի պատրաստման համար, հատուկ ուշադրություն հատկացնելով դրան-

ցում ազգփոքրամասնությունների աշխատողների (ազրբեջանցիներ եւ այլն) ներգրավմանը:

10. Հանձնարարել Հայաստանի ԺԿԽ-ին գտնել անհրաժեշտ միջոցներ Մարտնչող անաստվածների միության նյութական բազայի ստեղծման, Կենտրոնական, քաղաքային եւ խոշոր շրջանային հորհուրդների աշխատակիցների վճարման համար:

11. Հանձնարարել ՄԱՄ ԿԽ-ին քննարկել Հայաստանում հակակրոնական թանգարանի բացման հարցը, ծրագրելով բացումը 1938 թ.: Միաժամանակ, ԺԿԽ-ին՝ պաշտամունքի գծով հատուկ հանձնաժողով ստեղծել, կարգավորել պաշտամունքային շենքերի հաշվառումը եւ հսկողությունը, եւ ապահովել փակվող պաշտամունքային շենքերի հավուր պատշաճի օգտագործումը եւ շրջգործկոմների աշխատանքների նկատմամբ հսկողությունը:

12. Երեւանի Քաղխորհրդին՝ փնտրել ՄԱՄ ԿԽ համար համապատասխան շինություն:

13. ՀԿ(բ)Կ քարոզչության եւ ագիտացիայի բաժնին՝ շրջաններում հակակրոնական քարոզչության եւ ագիտացիայի ծավալման ամենօրյա ստուգում եւ հսկողություն հաստատել, ապահովելով ՄԱՄ շրջանային կոնֆերանսների ղեկավարումը եւ հանրապետական կոնֆերանսի նախապատրաստման եւ հաստատված ժամկետում գումարման կազմակերպումը:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 18, գ. 28, թթ. 133, 142–143: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ուսու.:

ԹԻՎ 58

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №8

ՀԿ(բ)Կ ԿԿ Բյուրոյի նիստի, 23 հունիս 1938 թ.

ԼՍԵՑԻՆ՝

26. Մարտնչող Անաստվածների Միության Կենտրոնական հորհրդի նախագահի մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

ՄԱՄ Կենտրոնական հորհրդի նախագահ ընտրել Արշակ Օգանեզովին:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 18, գ. 32, թ. 153: Բնագիր: Մեքենագիր:

Թարգմ. ուսու.:

ԹԻՎ 59

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №23

Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ Բյուրոյի նիստի, 4 օգոստոս 1938 թ.

ԼՍԵՑԻՆ՝

8. Էջմիածնի վանքի եւ կաթողիկոսարանի մասին (Գր. Հարությունյան):

Արտահայտ[վեցին] հավորոստյանը¹⁷, Մ. Պապյանը¹⁸, Խ. Հակոբջանյանը, Ա. Փիրուզյանը¹⁹:

Նկատի ունենալով, որ եղած նյութերը²⁰ մերկացնում են Էջմիածնի կաթողիկոսությունը խորհրդային իշխանության եւ հայ ժողովրդի դեմ պայքարում՝ փակել Էջմիածնի վանքը, դարձնելով այն թանգարան, նոր կաթողիկոսի ընտրություններ չանցկացնել եւ լուծարել հայ հոգեւորականության կենտրոնը՝ Էջմիածնի կաթողիկոսությունը:

Խնդրել ՀամԿ(բ)Կ-ին հաստատել:

ՀԱԱ, ֆ. 1, Ց. 18, գ. 36, թթ. 23–24: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ուսու.:

ԹԻՎ 60

[ԳՐԻԳՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԻՈՍԻՖ ՍՏԱԼԻՆԻՆ]

Գաղտնի

ՀամԿ(բ)Կ ԿԿ

Ընկեր Իոսիֆ Վիսարիոնի Ստալինին

Հայաստանում, սահմանից 10–12 կմ հեռու գտնվող Վաղարշապատ շրջանային կենտրոնում, մինչ այժմ գործում է Էջմիածնի վանքը, որտեղ գտնվում է արտասահմանից հայ հոգեւորականության ուղարկած միջոցներով գոյություն ունեցող հայկական կաթողիկոսի նստավայրը:

Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ տրամադրության տակ եղած Հայաստանի դավաճանական նախկին ղեկավարության գործով նյութերը մերկացնում են կաթողիկոսարանի հակախորհրդային գործունեությունը եւ Հայաստանում դաշնակների կազմակերպությունների ստեղծման գծով նրա աշխատանքը:

¹⁷ Խվորոստյան Վիկտոր (1903–1939): 1937–1939 թթ.՝ ՀեՍՀ ՆԳԺԿ կոմիսար: Գնդակահարվել է: Ռուս:

¹⁸ Պապյան Մացակ (1901–1962): 1937–1953 թթ.՝ ՀեՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ:

¹⁹ Փիրուզյան Արամ (1907–1996): 1937–1943 թթ.՝ ՀեՍՀ ԺԿՆ նախագահ:

²⁰ Նշյալ նյութերը չհայտնաբերվեցին:

Հայկական հոգեւորականութիւնը կաթողիկոսի ընտրութեան ժամանակ ընդունված խորհրդային իշխանութեան հանդեպ լոյալութեան մասին որոշումներով եւ հռչակագրերով քողարկվելով, Հայաստանում ամբողջ ժամանակ քայքայիչ լրտեսական աշխատանք է վարել՝ կապված լինելով արտասահմանում գտնվող դաշնականների, ռամկավարների եւ այլ «հասարակութեանների» հակահեղափոխական կուսակցութեանների կենտրոնների հետ:

Վերջերս մահացած Խորեն Մուրադբեկյան կաթողիկոսը²¹ դաշնականների կուսակցութեան գործուն անդամ էր եւ հակահեղափոխական աշխատանքում կապված էր Խանջյանի, Տեր-Գաբրիելյանի եւ Հայաստանում աջ-տրոցկիստական կենտրոնի այլ անդամների հետ:

1937 թ. էջմիածնի կաթողիկոսարանում աշխատել է 70–75 հոգի հոգեւոր անձ, որոնց մեծ մասը մեր կողմից ձերբակալվել է ակտիվ հակահեղափոխական աշխատանքի համար:

Ներկայումս էջմիածնի կաթողիկոսարանում մնացել է դաշնակ հանդիսացող եւ հակախորհրդային տրամադրված 7 հոգի կրոնական պաշտամունքի սպասավոր:

Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ քննարկելով էջմիածնի վանքի եւ կաթողիկոսարանի հարցը, որոշեց՝ նկատի ունենալով, որ ունեցած տեղեկութեանները մերկացնում են էջմիածնի կաթողիկոսարանը Խորհրդային իշխանութեան եւ հայ ժողովրդի դեմ ակտիվ պայքարում՝ փակել էջմիածնի վանքը, դարձնելով այն թանգարան, նոր կաթողիկոսի ընտրութեաններ չիրականացնել եւ լուծարել հայ հոգեւորականութեան կենտրոնը — էջմիածնի կաթողիկոսութիւնը:

Խնդրում ենք ՀամԿ(բ)Կ ԿԿ հաստատել:

Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ ԲԱՐՏՈՒՂԱՐ

Գր. Հարությունյան²² [ստորագրություն]

ք. Երեւան

4-VIII-1938 թ.

№5558/գ[աղտնի]

ՀԱԱ, ֆ. 1, ց. 18, գ. 79, թթ. 41–42: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ռուս.:

²¹ Խորեն Ա. Մուրադբեկյան (1873–1938): Ամենայն Հայոց Կաթողիկոս (1932–1938): Խեղդամահ է արվել 1938 թ. ապրիլի 6-ին:

²² Հատկանշական է, որ Գրիգոր Հարությունյանը՝ ի տարբերություն այս մեկի, Մոսկվա հղված բազմաթիվ գրութեանների տակ ստորագրել է «Հարութեանով» կամ «Արուտինով»:

РЕЗЮМЕ


Протоколы руководящих органов Центрального комитета Коммунистической партии Армении (Президиума (Бюро) и Секретариата), содержащие довольно интересную информацию о политике Коммунистической партии в отношении Армянской Апостольской Церкви и религиозных вопросах, являются важным источником с точки зрения объективного представления проблемы.

Документы, переведенные с русского языка, публикуются впервые. В советское время они были помечены как «Секретно», «Совершенно секретно», «Особо секретно».

SUMMARY

The minutes of the governing bodies of the Central Committee of the Communist Party of Armenia (Presidium (Bureau) and Secretariat), containing quite interesting information about the policy of the Communist Party towards the Armenian Apostolic Church and religious issues, are an important source from the point of view of an objective presentation of the problem.

The documents are published for the first time in translation from Russian. In Soviet times, they were marked as “Secret”, “Confidential”, “Top secret”.



Տ. ԱՐԱՐԱՏ ՔՀՆ. ՊՈՂՈՍՅԱՆ
ԱՐՓԻՆԵ ԶԱՆԹԻԿՅԱՆ

ՀԱՆՏՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՛ ՈՒՐԱՅՈՒՄ

Հայոց բնօրրանը հերոսների պատմական հայրենիք է, իսկ պատմությունը՝ մի ծավալուն հերոսապատում, ու ամենեւին պատահական չէ, որ դեռեւս Ե. դարում պատմահայրը գրում է. «Զի թէպէտ եւ եմք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, եւ զաւրութեամբ տկար, եւ ընդ այլով յոյժ անգամ նուանեալ թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոյ յիշատակի, գոր եւ ոչ մի ոք ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենագրել»¹:

Հայ ազգի բազմադարյա ընթացքը պայքարի, մաքառման, անկման ու հարուխյան անծայրածիր ճանապարհ է՝ մի արնաներկ Գողգոթա: Առաջինն ու բացառիկ ենք եղել միշտ. սա է, թերեւս, մեր առաքելությունը, ի վերուստ մեզ «շնորհված» առանձնակիությունը: Մեր պատմությունն է որոշարկել մեր ինքնությունը, կերտել մեր ազգային նկարագիրը: Եւ պատահական չէ, որ հենց մեր նախնիներն առաջինը պետականորեն ճանաչեցին ճշմարիտ Լույսը, ընդունեցին Նրան, այնինչ բազմաթիվ ազգեր դեռեւս անհաղորդ էին Աստծու Խոսքին. «...Հայոց ազգը եղաւ առաջինը, որ Քրիստոսի աստուածութիւնը ճանաչեց եւ Նորա սուրբ Աւետարանի փրկարար վարդապետութիւնը գրկեց, որով արդարեւ քրիստոսական երանութիւնն եւս առաւ...»²:

Ընդունեցինք Քրիստոսի փրկարար վարդապետությունը, քանզի այն հոգեհարազատ էր մեզ, ներդաշնակ մեր էությանը, ազգային կերպին՝ դառնալով ազգերի մեջ անդրանիկը: Միշտ լինելով «փոքր ածու»՝ հավատարիմ մնացինք «մեծի ու հնի» մեր կոչմանը... Եւ որպէս անդրանիկ՝ ներողամիտ եղանք մյուսների հանդեպ. միշտ հռչակեցինք՝ չհռչակելով, չարիքին չարագործությունամբ չհատուցեցինք, ուրիշինը երբեք չխլեցինք, այլ բոլորին բաժին հանեցինք մեր հանճարի եւ արարող ուժի անանց

¹ Մովսէս Խորենացի, Հայոց պատմութիւն, «Մատենագիրք Հայոց», Ե. դար, հտ. Բ., Անթիլիաս—Լիբանան, 2003, էջ 1752:

² «Արարատ» ամսագիր, 1868, է. (թիւ 1), էջ 4—5:

գանձերից: Համաշխարհային պատմության գանձարանը հարստացրինք անթիվ ու անհամար հիշատակներով, քանզի մեր հայրենիքը լուկ հող չէ, այլ հիշատակների ծննդավայր, իսկ մեր հավատքը՝ այդ հիշատակներին փարվելու եւ ամեն գնով պահպանելու դավանանք: Անգին հիշատակներ ենք թողել նաեւ մեր ծվատյալ, բռնազավթյալ հայրենիքի տարբեր հատվածներում՝ «Այնպիսի յիշատակներ, զորոնք իրենց նախնիքն անմահացրած՝ իրենք ի համբոյր խոնարհելու կկարօտին. այնպիսի յիշատակներ, որոնք լեռներու եւ ձորերու մէջ հիմա հոգեվարժի պէս կիսամահ կընչեն. այնպիսի յիշատակներ, ուր երբեմն աստուածային պաշտօններգութիւնք կխնկէին, ուր հիմա բուռն եւ գիշերահաւուց կոնչիւն կլսուին... այնպիսի, վերջապէս, յիշատակներ, որոց շէնքն հայերուն գործքն է, եւ շարքը՝ անոնց սրտին եւ սիրոյն շաղախ...»³: Իսկ զավթիչը, ավարառուն երբեք չեն հասկանում իրենց ավարի՝ լինի նյութական, հոգեւոր թե մշակութային, իրական արժեքը, երբեք չեն կարեւորում այն, քանզի իրենցը չէ, իրենց երկնածն ու արարածը չէ:

Պատմության գրեթե բոլոր հանգրվաններում՝ ինչպես անցյալում, այնպես եւ այսօր բարբարոսաբար ոչնչացվում են մեր հիշատակները, ավերվում մեր բազմադարյա պատմության վկա սրբավայրերը, եկեղեցիներն ու վանքերը, փշրվում մեր խաչքարերն ու տապանաքարերը, պղծվում սրբությունները... Եւ այս ամենն իրագործվում է մեկ նպատակադրումով՝ եղծել հայոց հնադարյա՝ հազարամյակներ ձգվող պատմությունը, խեղել, հաշմել հայի ազգային հիշողությունը: Այս առումով բավական է հիշել միայն Հայոց պատմության որոշ դրվագներ՝ արաբների (է. դար)⁴, սելջուկ-թուրքերի արշավանքներ (ԺԱ. դարակես)⁵, մոնղոլ-թաթարների տիրապետության շրջան (ԺԳ. դար)⁶, թուրք-պարս-

³ «Արարատ» ամսագիր, 1868, է. (թիւ 1), «Յառաջաբան»:

⁴ Այս շրջանի դեպքերը, արշավանքների անդառնալի հետեւանքները մանրամասն եւ ստուգապատում ներկայացրել են մեր պատմիչները. տե՛ս Թովմա Արքրոթնի եւ Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, «Մատենագիրք Հայոց», Ժ. դար, հտ. ԺԱ., գիրք Ա., Անթիլիաս—Լիբանան, 2010. Յովհաննէս ԴԱՍԽԱՆԱԿԵՐՏՅԻ, Պատմութիւն Հայոց, «Մատենագիրք Հայոց», Ժ. դար, հտ. ԺԱ., գիրք Ա., Անթիլիաս—Լիբանան, 2010. ՍՏԵՓԱՆՈՍ ՏԱՐԱԿՆԵՅԻ ԱՍՈՂԻԿ, Պատմութիւն տիեզերական, «Մատենագիրք Հայոց», Ժ. դար, հտ. ԺԵ., գիրք Բ., Անթիլիաս—Լիբանան, 2010:

⁵ Տէս Լեոն, Երկերի ժողովածու, հտ. Բ., գիրք Բ., «Սելջուկյան արշավանքներ», Երեւան, 1967, էջ 691—712. Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հտ. Գ., Երեւան, 1977, էջ 34—77. Մ. ԶՈՒԼԱՅԱՆ, Հայոց պատմության խեղաթուրումը արդի թուրք պատմագրության մեջ (հին եւ միջին դարեր), Երեւան, 1995:

⁶ Տէս Ի. ԻՎԱՆԻՆ, О военном искусстве и завоеваниях монголо-татар и среднеазиатских народов при Чингиз-хане и Тамерлане, Санкт-Петербург, 1895. Գ. ԱԹՈՒՆՅԱՆ, Մոնղոլները եւ

կական պատերազմների աղետալի հետեւանքներ (ԺԶ. դար)⁷, հայերի բռնագաղթ Շահ Աբասի օրոք (ԺԷ. դար)⁸, զանգվածային կոտորածներ Արեւմտյան Հայաստանում՝ կազմակերպված սուլթան Համիդի կողմից (ԺԹ. դար)⁹, 1915 թ. Հայոց ցեղասպանություն¹⁰, Հայոց հայրենիքի մասնատում եւ այլ երկրներին բռնակցում (1920–1921 թթ.)¹¹, Հայ Եկեղեցու նկատմամբ բռնաճնշումներ¹²...

1915 թ. Օսմանյան Թուրքիայի իրագործած ցեղասպանության հետեւանքով գազանաբար կոտորվում, բնաջնջվում է Հայոց պատմա-

նրանց արշավանքները ԺԳ. դարում, Վաղարշապատ, 1913. Գ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Հայաստանը Լանկ-Թամուրի եւ Թուրքիայի ցեղերի արշավանքների շրջանում (1386–1500 թթ.), Երեւան, 1997:

⁷ Տէս Լեօ, Երկերի ժողովածու, հտ. Գ., մաս Բ., «Պարսկա-թուրքական պատերազմներ (16–17-րդ դարեր)», Երեւան, 1969, էջ 168–203. Մ. ԶՈՒԼԱՅԱՆ, Թուրք-պարսկական պատերազմները Հայաստանում եւ նրանց հետեւանքները (1590–1639 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1966, թ. 2, էջ 80–91:

⁸ Ըստ պատմական աղբյուրների՝ Շահ Աբասը (1587–1629 թթ.) թուրք-պարսկական պատերազմի ու հայ բնակչության բռնագաղթի ժամանակ անխղճորեն ավերում, այրում եւ ամալացնում էր իր ճանապարհին գտնվող հայկական բնակավայրերն ու շենքեր. տե՛ս «Պատմութիւն Առաքելի վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1884. «Ժամանակագրութիւն Գրիգորի վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ», Երուսաղէմ, 1915. Լեօ, Երկերի ժողովածու, հտ. Գ., մաս Բ., «Շահ-Աբբաս», Երեւան, 1969, էջ 223–263. ՍՏ. ՄԵԼԻՔ-ԲԱՆԵՅԱՆ, Հայոց պատմություն. Հնագույն ժամանակներից մինչեւ 18-րդ դարի վերջը, Երեւան, 1993, էջ 120–125. Ա. ՆՍԱՅԱՆ, Ժողովրդագրական տեղաշարժերը հյուսիսարեւելյան Հայաստանում Շահ Աբասի կառավարման շրջանում, «Հայագիտության հարցեր», Երեւան, 2020, թ. 1 (19), էջ 37–48:

⁹ Տէս RICHARD G. HOVANNISIAN, The Armenian Question in the Ottoman Empire 1876 to 1914: in The Armenian People from Ancient to Modern times, vol. II: Foreign Dominion to Statehood: The Fifteenth Century to the Twentieth Century, ed. by R. G. Hovannisian, New York, St. Martin's press, 1997, էջ 203–239:

¹⁰ Տէս CHRISTOPHER J. WALKER, World War I and the Armenian Genocide: in The Armenian People from Ancient to Modern times, vol. II: Foreign Dominion to Statehood: The Fifteenth Century to the Twentieth Century, ed. by R. G. Hovannisian, New York, St. Martin's press, 1997, էջ 239–275. TANER AKÇAM, The Young Turks' Crime against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire, Princeton University Press, 2012. "The Armenian Genocide: Evidence from the German Foreign Office Archives, 1915–1916", ed. by Wolfgang Gust, Berghahn Books, 2013. "Genocide in the Ottoman Empire: Armenians, Assyrians, and Greeks 1913–1923", ed. by George N. Shirinian, Berghahn Books, 2017. "The Armenian Genocide: A Captivating Guide to the Massacre of the Armenians by the Turks of the Ottoman Empire", Captivating History, Ch Publication, 2019. ԳՐԻԳՈՐԻՍ Ս. ՎՐԳ. ՊԱՆԱՔԵԱՆ, Հայ Գողգոթան. Դրուագներ հայ մարտիրոսագրությունէն, Վիէննա, 1922. «Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը եւ Հայկական եղեռնի գաղտնիքները», Թարգմ.՝ Ննովք Արմեն, Երեւան, 1990. ՀԱՅՆԻՐԻ ՖԻՐԵՅՈՒԵՐ, Հայաստանը 1915-ին, գերմ. թարգմ.՝ Հ. Ղուկասյանի, Երեւան, 2000. ՖԻՐԵՅՈՒ ՆԱՆՍԵՆ, Խաբված ժողովուրդ, գերմ. թարգմ.՝ Է. Մակարյանի, Երեւան, 2009:

¹¹ Տէս «Հայոց պատմություն», հտ. IV, գիրք Ա., Նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.), Երեւան, 2010:

¹² Տէս ՍՏ. ՍՏԵՓԱՆՅԱՆՅ, Հայ Առաքելական Եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Երեւան, 1994:

կան հայրենիքի՝ Արեւմտյան Հայաստանի հայ բնակչությունը: Գրեթե մինչեւ 1923 թ. տեւող նախճիրն ուղեկցվում է հայոց պատմամշակութային ժառանգության՝ հոգեւոր ու նյութական գանձերի, նմուշների, հուշարձանների, վանական համալիրների, եկեղեցիների, սրբավայրերի անխնա պղծմամբ ու ոչնչացմամբ: Եւ այս առումով փաստերն այնքան հիմնավոր ու խոստուն են, որ դրանք ժխտելն ընդամենն իրականությունը կեղծելու ապարդյուն փորձ եւ պատմական ստի հերթական արտահայտություն է¹³:

Թվում է՝ արդի աշխարհում, որը հավակնում է «քաղաքակիրթ ու մարդասեր» անվանակարգին, պատմության ամոթալի էջերը պետք է սրբազրվեին, մարդկության մեծագույն հանցագործությունների համար որոշակի դատավճիռներ կայացվեին եւ համարժեք պատիժներ սահմանվեին, բոլոր միջոցներով պաշտպանվեին միջազգային տարբեր ատյաններում ամրագրված համամարդկային արժեքներն ու իրավունքները, որոնց վերաբերյալ բազմաթիվ զեկուցյանքներ ու հաշվետվություններ են ներկայացվում. սակայն իրականությունն այլ է... Եւ այդ իրականության մասին են վկայում Նախիջևանի հայաթափումն ու այնտեղ իրագործված մշակութային բնաջնջումը¹⁴:

Երկրորդ աշխարհամարտին հաջորդած տարիներին ադրբեջանական իշխանություններն առավել մեծ ատելություններ ու մոլեռանդություններ են շարունակում Նախիջևանի ԻնՍՆ-ն հայաթափելու քաղաքականությունը, որն սկսել էին տասնամյակներ առաջ¹⁵: Երկրամասի ժողովրդագրական դիմագիծն արմատապես եւ անդառնալիորեն փոխելու դիտավորությամբ՝ հետեւողականորեն արգելվում էր նախիջևանահայերի վերադարձն իրենց հայրենի բնակավայրերը՝ խախտելով սեփական բնօրրանում ապրելու

¹³ Թուրքական եւ ադրբեջանական իշխանությունները տարիներ շարունակ պատմությունը կեղծելու, ի շահ իրենց նենգափոխելու հետեւողական քաղաքականություն են իրականացնում. այս մասին տես Ն. ՍԱՐԳՍՅԱՆ, Ռ. ՍԱՀԱԿՅԱՆ, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը Թուրք պատմագրության մեջ, Երեւան, 1963:

¹⁴ Օտարազգի մասնագետները, որոնք պատմությունն առարկայական (օբյեկտիվ) վերլուծության ենթարկելու ազնվություն եւ կամք են դրսևորում, հաստատում են Նախիջևանի՝ պատմական Հայաստանի անբաժան մասը լինելու իրողությունը, ապա ցավով ներկայացնում երկրամասի հայաթափման, մշակութային ոչնչացման գործընթացը. տես В. ИВАНОВ, Деарменизация Нахиджевана XX в. (сжатый обзор). «Нахиджеван в XX — начале XXI веков: некоторые факты», Сборник статей под ред. В. А. Захарова, Москва, 2011:

¹⁵ ՏԵՍ Ա. ՄԵԼԻԿ-ՇԱԽՆԱԶՐՈՎ, Ա. ԽԱՇԱՏՐՅԱՆ, Этнополитика Азербайджана, Ереван, 2007:

նրանց հիմնարար իրավունքը: Նշյալ քաղաքականությունը զուգակցվում է հայի հողում՝ արգեն իսկ հայաթափված վայրերում, թուրք-թաթարների ու հարեւան իրանից եկվորների բնակեցմամբ¹⁶: Նախիջեւանի հայաթափմանը զուգահեռ իրականացվում է հայկական պատմամշակութային ժառանգության կանխամտածված ու բարբարոսային ոչնչացում. նպատակը, ինչպես միշտ, Հայոց պատմության եղծումը եւ իրականության կեղծումն էին, հայկական պատմական հայրենիքի բռնաշուրջումը: Նախիջեւանում ավերվում կամ հիմնովին քանդվում են վանքերն ու եկեղեցիները, անխնա փշրվում, հողին են հավասարեցվում բազմադարյա խաչքարերը, պղծվում հայկական գերեզմանատները, մշակութային հուշակոթոնները¹⁷:

Հայկական պատմամշակութային ժառանգությունը ոչնչացումից փրկելու նպատակով Վազգեն Ա. Պալճյանը (1955–1994 թթ.) տարբեր գրություններով, նամակ-բողոքագրերով դիմում է Հայաստանի, Ադրբեջանի խորհրդային հանրապետությունների եւ միութենական իշխանություններին: 1956 թ. մայիսի 12-ին Հայոց հայրապետը դիմում է ԽՍՀՄ նախարարների (մինիստրների) խորհրդի նախագահ Ն. Բուլգանինին եւ ահազանգում, որ Նախիջեւանի երկրամասում հայկական գործող եկեղեցի այլեւս չի մնացել¹⁸: Վեհափառ հայրապետը նաեւ ընդգծում է ԼՂԻՄ-ի, Նախիջեւանի ԻԽՍՀ-ի եւ Ախալքալաքի շրջանի խնդրի արդարացի լուծման անհրաժեշտությունը, քանզի դրանք քաղաքական պատճառներով մասնատվել էին Մայր հայրենիքից եւ դուրս թողնվել նրա սահմաններից¹⁹:

¹⁶ Տե՛ս В. Иванов, Деарменизация Нахиджевана XX в. (сжатый обзор). «Нахиджеван в XX — начале XXI веков: некоторые факты», էջ 42–43:

¹⁷ Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ կնքված 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրով Նախիջեւանի մարզը՝ որպես ինքնավար տարածք, հանձնվել է Ադրբեջանի «խնամակալությանը». տե՛ս Տ. ՍԱՀԱԿՅԱՆ, Յավալի պայմանագրեր, Երեւան, 2007, էջ 379: Իսկ թե ինչպես են կովկասյան թաթարները «հոգ տարել» Նախիջեւանի հայության եւ հայկական պատմամշակութային ժառանգության մասին, հայտնի է ամենքին. տարածքը հայաթափվել է, իսկ մշակութային կոթոնները՝ հիմնահատակ ոչնչացվել: Այս մասին առավել մանրամասն տե՛ս Ա. ԱՅՎԱԶՅԱՆ, Նախիջեւանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները (համահավաք ցուցակ), Երեւան, 1986. նույն հեղինակի՝ «Նախիջեւանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները», Երեւան, 1987. Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Հայ մշակութի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երեւան, 1999:

¹⁸ Նախիջեւանում հայկական մշակութային կոթոնների ոչնչացումը կրել է պարբերական բնույթ եւ իրականացվել է ադրբեջանական իշխանությունների, ասել է թե՛ պետական հովանավորությամբ: Խոսուսն փաստերից է 2006 թ. դեկտեմբերին Զուլալյի գերեզմանատան խաչքարերի ոչնչացումն ազերի զինվորների կողմից:

¹⁹ Տե՛ս «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան», գիրք ԺԶ., կազմ. եւ խմբ.՝ Գ. Եազըճեան, «Վազգէն Ա. Պալճեան Ամենայն Հայոց Կաթողիկոս (1955–1994 թթ.)», «Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու», Երեւան, 2008, էջ 253–256:

1957 թ. սեպտեմբերի 20-ին Վազգեն Ա. Պալճյանը հովվապետական այցով մեկնում է Ադրբեջան. Վեհափառ հայրապետը հանդիպում է Անդրկովկասի մահմեդականների հոգեւոր վարչութչյան նախագահ Շեյխ-ուլ-իսլամի եւ նույն վարչութչյան փոխնախագահ մուֆտի Ասադուլլայի հետ: Երկուստեք ընդգծվում է երկու ժողովուրդների հաշտութչյան, համակեցութչյան եւ փոխադարձ հարգանքի կարեւորութչյունը²⁰: Այցելութչյան ընթացքում Հայոց հայրապետն անդրադառնում է հայկական եկեղեցիները Մայր Աթոռ Ս. Էջմիածնին վերադարձնելու եւ դրանք վերականգնելու կամ վերանորոգելու հրատապ խնդիրներին: Հովվապետական այցելութչյան ավարտին Վազգեն Ա. Պալճյանն Ադրբեջանի ԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր Կրոնի պետական գործերի խորհրդի լիազոր ներկայացուցիչ Մ. Մամեդովին է փոխանցում հայկական եկեղեցիների ու վանքերի ցանկը (այդ թվում՝ Նախիջեւանի), որոնց վերաբացման կամ վերանորոգման համար անհրաժեշտ էր միջնորդութչյուն ներկայացնել կառավարութչյանը²¹: Թեեւ Ադրբեջանի հոգեւոր ու աշխարհիկ առաջնորդները խոսում էին հաշտութչյան, համակեցութչյան եւ հանդուրժողականութչյան մասին, սակայն իշխանութչյուններն առավել մեծ մոլեռանդութչյամբ են լծվում Նախիջեւանի ԻսՍՀ-ի եւ ԼՂԻՄ-ի հայաթափմանը, հայկական պատմամշակութային արժեքների հիմնովին ոչնչացմանը՝ նպատակ ունենալով ջնջել, վերացնել հայի հետքն իր իսկ հայրենիքից²²:

Ինչպես ցույց են տալիս Հայոց հայրապետի՝ 1958 թ. ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ Ն. Խրուշչովին հասցեագրված նամակը²³ եւ 1958 թ. օգոստոսի 26-ին Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանին ուղղված բողոքագիրը²⁴, Լեռնային Ղարաբաղում եւ Նախիջեւանում հայկական եկեղեցիները կա՛մ հիմնովին

²⁰ Տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1957, Ժ., էջ 12–16:

²¹ Տե՛ս «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան», գիրք ԺԶ., «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. (1955–1994 թթ.)», էջ 500–501:

²² Այս մասին առավել մանրամասն տե՛ս Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Մշակութային էթնոցիդն Արցախում (Մշակութային ժառանգութչյան բռնաչուրացման մեխանիզմը), Ադրբեջանի պետական ահաբեկչութչյունը եւ էթնիկական զտումների քաղաքականութչյունը Լեռնային Ղարաբաղի դեմ, «Կաճառ», 4 (47–58), 2010. В. ИВАНОВ, Деарменизация Нахиджевана XX в. (сжатый обзор). «Нахиджеван в XX — начале XXI веков: некоторые факты», Сборник статей под ред. В. А. Захарова, Москва, 2011:

²³ Տե՛ս «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան», գիրք ԺԶ., «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. (1955–1994 թթ.)», էջ 672–673:

²⁴ Տե՛ս անդ, էջ 679–682:

քանդվում էին, կամ գտնվում խիստ անմխիթար վիճակում: Այսպես՝ 1958 թ. օգոստոսի 26-ին Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանին ուղղված իր բողոքագրում Վազգեն Ա. Պալճյանը նշում է, որ 1957 թ. սեպտեմբերին անձամբ է այցելել Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի Ս. Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցի. հայրապետական պատվիրակությանն ուղեկցել է նաև Կրոնի պետական գործերի խորհրդի լիազոր ներկայացուցիչ Մ. Մամեդովը: Նրանք ականատես են եղել մի սարսափելի իրողության. եկեղեցու կենտրոնական գմբեթը փլված էր, շինության ներսը՝ ամբողջովին ավերված, բոլոր դռներն ու պատուհանները՝ հանված, երբեմնի աղոթավայրը վեր էր ածվել անասունների ախոռի, կովերը նիրհում էին եկեղեցու Ս. Սեղանի վրա, իսկ հատակն ամբողջությամբ ծածկված էր անասնաղբով²⁵: Նույնպիսի կիսավեր եւ անմխիթար վիճակում են գտնվել նաև Գանձասարի ու Ամարասի վանքերը, ԼՂԻՄ-ի եւ Նախիջևանի ԻԽՍՀ-ի գրեթե բոլոր եկեղեցիներն ու վանական համալիրները, մշակութային կոթողները²⁶:

Միայն Նախիջևանում խորհրդային տարիներին, ապա նաև հետխորհրդային շրջանում բարբարոսաբար ոչնչացվում են հազարավոր եկեղեցիներ ու վանքեր, հուշարձաններ ու հուշարձանախմբեր²⁷, որոնք ոչ միայն հայոց բազմադարյա պատմության խոսուն վկաներն էին, այլ նաև համաշխարհային քաղաքակրթության արժեքավոր բաղադրուցիչը: Առանձնակի վայրագության էր պղծվում եւ քանդվում հայկական գերեզմանատները (Զուղայի, Ագուլիսի եւ հայկական մյուս բնակավայրերի), ոչնչացվում այնտեղ տեղադրված տապանաքարերն ու խաչքարերը²⁸, որոնք հազարամյակների դրոշմն էին կրում, որոնց վրա մեսրոպա-

²⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 142, թթ. 32–36. նաև՝ «Վաերազրեր Հայ եկեղեցու պատմութեան», գիրք ԺԶ., «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. (1955–1994 թթ.)», էջ 680–681:

²⁶ Հստ փաստագրական հետազոտությունների՝ Նախիջևանում ոչնչացվել է հայկական մշակութային ողջ ժառանգությունը, այդ թվում՝ 89 եկեղեցի, 5840 խաչքար եւ 22000-ից ավելի տապանաքարեր. տե՛ս S. MAGHAKYAN, Special investigation: Declassified satellite images show erasure of Armenian churches, <https://www.theartnewspaper.com/feature/agulis>:

²⁷ Հստ կատարված ուսումնասիրությունների եւ ցուցակագրման՝ Նախիջևանի պատմամշակութային հուշարձանների թիվն անցել է 4500-ից. տե՛ս Ա. ԱՅՎԱԶՅԱՆ, Նախիջևան. Գիրք հուշարձանաց, Երեւան, 1990, էջ 8:

²⁸ Այս մասին մանրամասն տե՛ս Ա. ԱՅՎԱԶՅԱՆ, Զուղայի կործանված խաչքարերի սիմֆոնիան, Երեւան, 2007:

տառ վիճաբեր, միայն հայկական արվեստին բնորոշ զարդանախշեր էին փորագրված²⁹:

Արցախյան երկրորդ պատերազմը հաստատեց՝ այսօր եւս որեւէ բան չի փոխվել. հայի նկատմամբ ադրբեջանցիների ու թուրքերի էթնիկատեղությունը նույնն է, նույնն է նաեւ հայատյացության դրսեւորման զազրելի ձեռագիրը:

Արցախյան առաջին պատերազմից հետո թե՛ միջազգային կառույցները, թե՛ Հայաստանի Հանրապետության իշխանությունները շեշտել ու կարեւորել են ազգամիջյան հակամարտության խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը: Այդ են վկայում տարբեր տարիներին ու տարբեր ույթ ձեւաչափերով կայացած միջպետական հանդիպումներն ու բանակցությունները: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին եւս այս առումով անմասն չի մնում՝ հստակ գիտակցելով, որ կրոնական կառույցները կարող են որոշակի դրական դերակատարում ունենալ ազգամիջյան եւ միջկրոնական հակամարտությունների կարգավորման, դրանց լուծման գործընթացներում: Ուստի, բազմաթիվ հանդիպումներ եւ քննարկումներ են կազմակերպվում Մոսկվայի ու Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Բ.-ի, Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Կովկասի ժողովուրդների վերին կրոնական խորհրդի նախագահ, Ադրբեջանի մուսուլմանների հոգեւոր առաջնորդ Շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշա-զադեի միջեւ: Այդպիսի եռակողմ հանդիպում է տեղի ունենում 2000 թ. նոյեմբերի 24-ին, որի ընթացքում քննարկվում են արցախյան հակամարտության կարգավորմանն ուղղված գործընթացները, հայ ռազմագերիների եւ անհետ կորած ազատամարտիկների դեռեւս չլուծված հարցը, իսկ վերջում

²⁹ Նախիջեւանի հայկական մշակութային կոթողների ոչնչացմանը վերաբերող արժեքավոր ուսումնասիրություն է կատարել Կոլորադոյի համալսարանի դասախոս Սիմոն Մաղաքյանը: Վերջինս իր հետազոտությունների միջոցով բացահայտում է Ադրբեջանի իշխանությունների հովանավորչությամբ հայկական պատմամշակութային ժառանգության ոչնչացմանն ուղղված եւ տասնամյակներ իրականացվող գործողությունները: Գիտնականի ուսումնասիրությունը հրապարակվել է միջազգային հեղինակություն ունեցող պարբերականում (The Art Newspaper): Հետազոտության մեջ ներկայացված են փաստագրական արժեքավոր նյութ եւ լուսանկարներ: Հեղինակը դեռեւս 2011 թ. ամերիկյան հետախուզական արբանյակների գաղտնագերծված լուսանկարների միջոցով անհերքելի ապացույցներ է ներկայացնում Նախիջեւանում հայկական եկեղեցիների ոչնչացման վերաբերյալ (փաստական նյութը եւ արբանյակային նկարները ներկայացնում են եկեղեցիները մինչեւ ոչնչացումը եւ ամայացած վայրերը դրանց ոչնչացումից հետո). տե՛ս S. MAGHAKYAN, Special investigation: Declassified satellite images show erasure of Armenian churches, <https://www.theartnewspaper.com/feature/agulis>:

ստորագրվում է համատեղ հռչակագիր, որով Անդրկովկասում եւ սահմանակից տարածքներում խաղաղության ամրապնդման կոչ է արվում³⁰:

2003 թ. նոյեմբերի 26-ին Սուրբ Դանիելյան մենաստանում տեղի է ունենում Կովկասի հիմնախնդիրների կարգավորմանն ուղղված քառակողմ հանդիպում՝ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Բ.-ի, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի, Համայն Վրաստանի կաթողիկոս-պատրիարք Իլյա Բ.-ի եւ Անդրկովկասի մուսուլմանների հոգեւոր առաջնորդ Շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշա-զադեի մասնակցությամբ: Մոսկվայում տեղի ունեցող միջկրոնական այս խաղաղարարական հանդիպման ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավորապես նշում է. «Արցախն իրականացնում է իմֆնորոշման իր իրավունքը, որն աստվածատուր շնորհ է, որն իրավական հարաբերությունների տեսանկյունից ամրագրված է ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների երկու հիմնարար փաստաթղթերում՝ «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագրում» եւ «Սոցիալական ու մշակութային իրավունքների համաձայնագրում»: Եւ եթե Դուք, հարգաւթա՛ն Շեյխ, բնորոշում եմ Ադրբեյջանն իբրեւ «օրեւմ ու մարդու իրավունքներ հարգող երկիր», ապա պիտի ընդունեմ, որ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունն իր նախնիների հողի վրա ազատ ապրելու աստվածաշնորհ իր իրավունքի տերն է...»³¹:

Քառակողմ հանդիպման ավարտին Ռուսաստանի, Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեյջանի հոգեւոր առաջնորդներն ստորագրում են համատեղ ուղերձ՝ ուղղված իրենց երկրների հավատացյալներին: Հանդիպման նպատակը Կովկասի տարածաշրջանում հակամարտությունների հաղթահարումն ու խաղաղության հաստատումն էր³²:

Յավոք, կրոնական գործիչների փորձերին՝ ուղղված տարածաշրջանում փխրուն խաղաղության պահպանմանը, ադրբեյջանական իշխանություններն ամեն կերպ հակազդում են բարբարոսական, հակահայկական, ինչու ոչ, նաեւ հակամարդկային նորանոր արարքներով: Ինչպես ասում են՝ թղթի վրա դեռ չէր շորացել թանաքն իրենց հոգեւոր առաջնորդի, երբ Զուղայում ադրբեյջանական իշխանությունը զինվորականների միջոցով հողին հավասարեցրեց միջնադարյան խաչքարագործության հազարավոր անկրկնելի նմուշներ: Ողջ հայությունն այս առնչությամբ

³⁰ Տե՛ս «Էջմիածին», 2000, ԺԱ., էջ 19–20:

³¹ «Էջմիածին», 2003, Ժ.—ԺԱ., էջ 22:

³² Տե՛ս «Էջմիածին», 2003, Ժ.—ԺԱ., էջ 18–25:

իր բողոքի ձայնը բարձրացրեց՝ պահանջելով, որ միջազգային քաղաքակիրթ հանրությունն իր գնահատականը տա կատարվածի վերաբերյալ: Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր բազմաթիվ գրություններով՝ ուղղված եկեղեցապետներին, կրոնապետներին եւ տարբեր երկրների առաջնորդներին, ինչպես նաեւ միջազգային պատկան կառույցների ղեկավարներին, ուշադրություն հրավիրեց ազերիների այս զագրելի արարքի վրա: Այսպես՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը 15.12.2005 թվակիր գրությամբ՝ ուղղված ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Կոիտիլո Մացուուրային, մասնավորապես ասում է. «Ձեզ ենք գրում մեծ տխրությամբ եւ վրդովմունքով: Հայաստանի արտաքին գործերի նախարարությունից Մեզ պաշտոնապես տեղեկացրել են, որ Ադրբեջանի Հանրապետության Նախիջևանի ինքնավար Հանրապետությունում անխտիր ոչնչացման նոր ալիք է սկսվել՝ թիրախավորելով հայկական հոգեւոր ու մշակութային ժառանգությունը, որը դիմանում էր վերջին տարիների անտանելի եւ դատապարտելի բռնությանը:

Վերջին օրերին պատմական բազմաթիվ խաչքարեր եւ հայկական գերեզմանատների տապանաքարեր են ծանր տեխնիկայի միջոցով ավերվել, բաժանվել մասերի: Այս գործողությունները տեղի են ունեցել օրը ցերեկով, ինչն արձանագրել են տեսախցիկները՝ մեծ վրդովմունք ու զայրույթ առաջացնելով Հայաստանի եւ աշխարհասփյուռ հայության շրջանում:

Խնդրում ենք Ձեզ՝ հրատապ գործողություններ ձեռնարկել՝ դադարեցնելու հայերի՝ հարգանքի արժանի մշակութային ժառանգության նկատմամբ իրականացվող այս ամոթալի գործողությունները...»³³:

2010 թ. ապրիլի 26-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Մայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ժամանում է Ադրբեջանի մայրաքաղաք Բաքու՝ մասնակցելու կրոնապետների համաշխարհային գագաթնաժողովին՝ նվիրված կրոնների եւ ավանդական արժեքների վրա համաշխարհայնացման (գլոբալիզացիա) ազդեցության խնդիրներին: Խոսելով համաշխարհայնացման վտանգների մասին՝ Վեհափառ Հայրապետն իրավամբ նկատում է. «Մեր օրերում շարունակ առավել մեծ շրջագիծ ընդգրկող հաղորդակցության եւ համագործակցության գործընթացները փառապատկան, տնտեսական, գիտատեխնիկական, կրթամշակութային ու այլ

³³ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արխիվ, ֆոնդ 132 (բնագիրը՝ անգլերեն): Փաստաթուղթը տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում Մայր Աթոռի թանգարանների եւ արխիվի տնօրեն Տ. Ասողիկ արզ. Կարապետյանին:

ասպարեզներում եւ ժողովուրդների մեջ մշտապես սերտացող առնչություններն ու կապերը, ցավոք, դեռ չեն գծագրում հեռանկարը այնպիսի աշխարհի, ուր թագավորում են մարդասիրությունը, արդարությունը, աստվածադիր պատվիրանն ու օրենքը, ուր գերագույն արժեք է մարդը, եւ հարգվում է նրա իրավունքը»³⁴։ Գազաթնաժողովի ընթացքում տեղի է ունենում նաեւ տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների եռակողմ հանդիպում՝ մասնակցություններ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի, Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Կիրիլ Ա.-ի եւ Կովկասի մահմեդականների վարչության նախագահ Շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշա-զադեի։ Իր խոսքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադառնում է նաեւ Լեւոնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացին՝ մեծապես կարեւորելով խնդրի խաղաղ հանգուցալուծմանն ուղղված բոլոր ջանքերը³⁵։

Ինչպես ցույց տվեցին մեր օրերում տեղի ունեցող իրադարձությունները, արցախյան հակամարտության խաղաղ կարգավորումը եւ այդ ուղղությամբ գործադրված բոլոր ջանքերը ձախողվեցին. 2020 թ. սեպտեմբերի 27-ին թուրք-ադրբեջանական դաշինքը սանձազերծում է նոր պատերազմ։ Ռազմական գործողությունների ընթացքում, նաեւ պատերազմի ավարտից հետո թշնամին բազմաթիվ հանցագործություններ է կատարում (հայ խաղաղ բնակչության գերեվարում եւ խոշտանգում, արգելված զինատեսակների կիրառում, տարբեր երկրներից հավաքագրված ահաբեկիչների ներգրավում, եկեղեցիների, բնակելի շենքերի ու շինությունների, դպրոցների, մանկապարտեզների ու հիվանդանոցների ուժեղացում կամ հրթիռակոծում, հայ գերիների՝ զինվորականների կամ քաղաքացիական անձանց, այդ թվում՝ կանանց ու ծերերի, անմարդկային կտտանքների ենթարկում, գլխատում, դիակների պղծում եւ անդամահատում,...), որոնք խստագույնս դատապարտվում են միջազգային փաստաթղթերով, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ընդունած բանաձեւերով ու համաձայնագրերով (կոնվենցիա)։ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակն ամենայն պատասխանատվությամբ ու հետեւողականորեն կատարում է իր պարտականությունները եւ այս հանցագործությունների վերաբերյալ անհերքելի փաստեր է ներկայացնում ՄԻԵԴ-

³⁴ «Էջմիածին», 2010, Դ., էջ 28:

³⁵ Կրոնապետների համաշխարհային գազաթնաժողովի ու եռակողմ հանդիպման մասին առավել մանրամասն տես «Էջմիածին», 2010, Դ., էջ 27–32:

ին, միջազգային պատկան մարմիններին. հուսանք, որ մարդկային կյանքերը թանկ կգնահատվեն սեւ հեղուկից:

Այսօր հաճախ է ակնարկվում, երբեմն նաեւ ուղղակիորեն քարոզվում թուրքերի եւ ադրբեջանցիների հետ հաշտության, համակեցության ու փոխգործակցության մասին: Հաշտություն նրանց հետ, ովքեր նույնիսկ ռազմական գործողությունների ավարտից հետո են շարունակում իրենց հանցավոր ընթացքը. հնարավոր է արդյոք այդ հաշտությունը... Կարող ենք հաշտվել, երբ գազանաբար հոշոտում են մեր հարազատներին, ամեն վայրկյան ոտնահարում մեր ազգային արժանապատվությունը, ոտնակոխ անում հայրենի սրբավայրերը, պղծում եւ քանդում գերեզմանները, վայրագորեն ոչնչացնում մշակութային ժառանգությունը... Հաշտությունը զուտ բառ չէ, այն մտածելակերպի, ընկալումների, վերաբերմունքի եւ վարվեցողության արմատական փոփոխություն է, այն սեփական հանցանքի համար ներում հայցելու պատրաստակամություն է, ինչը երբեւէ տեղի չի ունեցել եւ չի ունենա քոչվորի, ահաբեկչի, տեսակով ավարառուի, ուրիշի հայրենիքը բռնազավթողի ներաշխարհում: Այսօր եւս ադրբեջանցիների հայաստացությունն արտահայտվում է հայկական մշակութային արժեքների հանդեպ թշնամանքով, դրանք ոչնչացնելու ախտածին մոլուցքով:

Այսպես՝ պատերազմի ավարտից անմիջապես հետո հիմնահատակ քանդվում է Արցախի Հանրապետության Հադրութի շրջանի Մեխակավան (Ջաբրայիլ) բնակավայրում գտնվող Զորավոր Ս. Աստվածածին կամ Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցին: Այն կառուցվել էր 2017 թ., գտնվում էր հայկական զորամասին հարակից տարածքում՝ բլրի վրա: 2020 թ.՝ թշնամու կողմից Մեխակավանի բռնազավթումից հետո, հենց իրենք՝ ադրբեջանցիները, տեսանյութեր են հրապարակում, թե ինչպես են իրենց զինվորները բարբարոսաբար պղծում այս եկեղեցին: Տեսանյութերում հստակ երեւում է, որ Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցին դեռեւս կանգուն է, իսկ գմբեթի խաչն ադրբեջանցիները գազանաբար կոտրում են հենց նկարահանման պահին: 2021 թ. մարտին BBC-ի պատրաստած լրահաղորդման մեջ (ռեպորտաժ) Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցին արդեն հիմնահատակ քանդված է³⁶:

2020 թ. նոյեմբերին նույն բարբարոսությամբ պղծվում եւ ավերվում է նաեւ Շուշիի Ս. Հովհաննես Մկրտիչ (Կանաչ ժամ) եկեղեցին: Այն խա-

³⁶ Տե՛ս <https://www.bbc.com/news/av/world-europe-56517835>:

չաձեւ-գմբեթավոր, արեւմտյան կողմում զանգակատնով եկեղեցի է, որը կառուցվել է 1818 թվականին: Քանդվել են Կանաչ ժամի գմբեթն ու զանգակատունը, եւ այն վերջնական ոչնչացումից փրկելու որեւէ երաշխիք չկա:

Ադրբեջանցիներին խիստ բնորոշ բարբարոսության (վանդալիզմի) հետեւանքով քանդվում է նաեւ Մատաղիսի Ս. Եղիշե եկեղեցին՝ կառուցված ԺԹ. դարում: Հայկական սրբավայրի անարգման եւ ավերման ընթացքը նկարահանել են հենց իրենք՝ քաղաքակրթության լուսանցքից դուրս մնացած քոչվորները: Տեսանյութում ցուցադրվող վայրենությունը, անմարդկային վարքագիծը, հայերի հասցեին հնչող անվայելուչ արտահայտությունները հստակ վկայում են էթնիկ զտման եւ ցեղասպան քաղաքականության մասին: Ակնհայտ է, որ սա տարիներ շարունակ հայերի նկատմամբ պետական մակարդակով ձեւավորված ազգային ու կրոնական ատելության դրսեւորում է՝ մարդու հիմնարար իրավունքների կոպտագույն խախտում: Ուստի, ամենեւին էլ պատահական չէ, որ ադրբեջանցիներն իրենց վայրագությունները փաստող տեսանյութերը տեղադրում են համացանցում՝ դրանով փորձելով նաեւ բարոյահոգեբանական վնաս հասցնել: Նրանք բացահայտ խախտում են մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային համաձայնագրերը: Այսպես՝ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 75-րդ նիստում՝ 2020 թ. դեկտեմբերի 16-ին ընդունված բանաձեւում, մասնավորապես նշվում է.

«4. Դատապարտում է կրոնական ատելության ցանկացած փարոզություն, որը հրահրում է խտրականություն, թշնամանք կամ բռնություն՝ լինի դա տպագիր, տեսալսողական, էլեկտրոնային կամ լրատվության (տեղեկատվության) ուրեւէ այլ միջոցների օգտագործմամբ»³⁷:

2020 թ. հոկտեմբերի 8-ին՝ մեկ օրվա մեջ երկու անգամ հրթիռակոծվում է Շուշիի Ս. Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցին. հրթիռակոծվում է հենց աղոթասացության ժամանակ, երբ եկեղեցում էին գտնվում բազմաթիվ հավատացյալներ, այդ թվում՝ կանայք, ծեբեր ու երեխաներ, հոգեւորականներ, հայ եւ օտարազգի լրագրողներ: Նշենք, որ Ս. Ղազանչեցոց Ամենափրկիչ Մայր տաճարը կառուցվել է 1868–1887 թթ.: Օրերս

³⁷ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեա, փաստաթղթի համար՝ A/RES/75/187, բանաձեւի նախագիծ՝ A/75/487/Add.2, նիստի ամսաթիվ՝ 16.12.2020, զեկույց նիստի վերաբերյալ՝ A/75/PV.46, կետ՝ 4-րդ: Անգլերեն բնագիրը տես <https://undocs.org/en/A/RES/75/187>, իսկ ռուսերենը՝ <https://undocs.org/ru/A/RES/75/187>:

քանդվել է հայկական մշակութային այս կոթողի գմբեթը, այս եկեղեցու ճակատագիրը եւս անորոշ է, հստակ է միայն՝ ազերիներն ամեն կերպ փորձում են ջնջել հայի դարավոր հետքը³⁸, խեղել հայոց պատմական քաղաքի՝ Շուշիի ճարտարապետական դիմագիծը:

Ադրբեջանի բռնազավթած տարածքներում մնացած հայկական պատմամշակութային հուշարձաններին, եկեղեցիներին, վանական համալիրներին, հնագիտական ու մշակութային արժեք ունեցող կառույցներին ոչնչացման նույն վտանգն է սպառնում³⁹:

Հայերի նկատմամբ էթնիկ ատելության ու սրբապղծության դրսևորում է նաեւ հայկական գերեզմանատների անարգումը, դրանց քանդումը, հանգուցյալների մասունքների դուրս բերումը, ինչը, թերեւս, խիստ դատապարտելի ու աններելի արարք է համարվում բոլոր կրոնների տեսանկյունից: Այս առումով, կարծում ենք, մահմեդական հոգեւոր առաջնորդները եւս պետք է չլռեն, այլ իրենց խոսքով ու գործնական քայլերով վերջ դնեն ադրբեջանցիների բարբարոսությանը: ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 75-րդ նիստում՝ 2020 թ. դեկտեմբերի 16-ին ընդունված բանաձեւում, նաեւ շեշտվում է.

«9. Այնուհետեւ կոչ է անում բոլոր պետություններին միջոցներ ձեռնարկել եւ ռազմավարություն մշակել՝ ուղղված պաշտամունքային եւ կրոնական

³⁸ Ադրբեջանի՝ հայի եւ նրա մշակույթի նկատմամբ ատելությունն այն աստիճանի է, որ իրենց հակագիտական հրապարակումներով նույնիսկ հայտնվում են ծիծաղելի դրույթներ: Մասնավորապես՝ ադրբեջանական որոշ լրատվամիջոցներ 2021 թ. մայիսին, միմյանց հերթ չտալով, Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին ներկայացնում են որպես ուղղափառ, այն դեպքում, երբ նույնիսկ ի. դարասկզբի ռուսական պաշտոնական հրապարակումները, որոնցում մանրամասն ներկայացվում էին Շուշիում գործող եկեղեցիներն ու կրոնական փոքրամասնությունները, մեկ անգամ եւս հաստատում են Ս. Ամենափրկիչ հայկական լինելը, նաեւ այն, որ քաղաքում Ռուս Ուղղափառ Եկեղեցու որեւէ ներկայացուցիչ չի գործել: Ադրբեջանական մամուլում հայտնված հակագիտական եւ պատմությունը կեղծող հրապարակումներին փաստարկված պատասխանել է հետազոտող Գագիկ Պողոսյանն իր «Баку пашет про «Православный Казанчеоц», «удинский» Дадиванк и «азербайджанский» Татев» հոդվածում. տե՛ս <https://www.golosarmenii.am/article/118932/baku-pashet-pro-pravoslavnyj-kazanchecoc-udinskij-dadivank-i-azerbajdzhanskij-tatev>:

³⁹ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, Հուշարձանների եւ տեսարժան վայրերի միջազգային օրվան նվիրված միջոցառումների շրջանակում, ապրիլի 27-ին կազմակերպեց «Արցախի վտանգված ժառանգությունը. մարտահրավերների հանգուցում» խորագրով համաժողով՝ նվիրված մշակութային ժառանգության պահպանման խնդիրներին: Համաձայն Արցախի Հանրապետության ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանի հաղորդած տեղեկությունների՝ թշնամու բռնազավթած տարածքում է մնացել շուրջ 2000 պատմամշակութային ու պատմաճարտարապետական հուշարձան, այդ թվում՝ 13 վանական համալիր, 122 եկեղեցի, 52 ամրոց, 536 խաչքար, 4 մատուռ եւ այլն. տե՛ս <https://escs.am/am/news/8538>:

վայրերի, գերեզմանատների ու սրբավայրերի նկատմամբ բացարձակ հարգանքի խրախուսմանն ու դրանց պահպանմանը, եւ ձեռնարկել պաշտպանական միջոցներ այն դեպքերում, երբ դրանք ենթակա են բարբարոսության (վանդալիզմի) կամ ոչնչացման վտանգին»⁴⁰։

Այսպիսով՝ անտեսելով միջազգային իրավական բոլոր փաստաթղթերն ու համաձայնագրերը⁴¹՝ ադրբեջանցիները պատերազմի ընթացքում եւ դրա ավարտից հետո պղծում, անարգում կամ հիմնահատակ քանդում են հայկական սրբավայրերը, վանքերն ու եկեղեցիները, գերեզմանատները, մշակութային կոթողները, հուշարձանները։ Առանձնակի վայրագություններ են ոչնչացվում հայ ազգային հերոսների արձանները, Հայրենական մեծ պատերազմին, Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշակոթողները։

Դեռեւս խորհրդային տարիներին ադրբեջանական իշխանությունների անմիջական հրահանգով հայկական պատմամշակութային ժառանգությունը կամ անխնա ոչնչացվում էր, կամ այն յուրացնելու դատապարտելի փորձեր էին արվում։ Այսօր եւս պատկերը նույնն է. բազմաթիվ փաստեր են առկա, թե ինչպես են ոչնչացվում հայերեն վիմագրերով, արձանագրություններով հուշակոթողները, որոնք անառարկելիորեն փաստում են հայկական պատկանելությունը։ Ինչպես տարիներ առաջ, այնպես եւ այսօր ադրբեջանական ղեկավարությունը դիմում է իրեն խիստ հոգեհարազատ միջոցի՝ կեղծելով պատմությունն ու խեղաթյուրելով իրականությունը՝ հայկական պատմամշակութային ժառանգության որոշ հուշարձաններ եւ կոթողներ փորձում է ներկայացնել իբրեւ «աղվանական», «ուղիական»։

⁴⁰ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեա, փաստաթղթի համար՝ A/RES/75/187, բանաձեւի նախագիծ՝ A/75/487/Add.2, նիստի ամսաթիվ՝ 16.12.2020, զեկույց նիստի վերաբերյալ՝ A/75/PV.46, կետ՝ 9-րդ։ Անգլերեն բնագիրը տես՝ <https://undocs.org/en/A/RES/75/187>, իսկ ռուսերենը՝ <https://undocs.org/ru/A/RES/75/187>։

⁴¹ Առավել մանրամասն տես ՅՈՒՆԵՍԿՕ-ի ընդունած փաստաթղթերը՝ “Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict with Regulations for the Execution of the Convention (The Hague, 14 May 1954)”, http://portal.unesco.org/en/ev.php-URL_ID=13637&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html. “The European Convention on the Protection of the Archaeological Heritage (London, 6 May 1969)”, <http://www.worldlii.org/int/other/COETS/1969/1.html>. “Convention concerning the Protection of the World Cultural and Natural Heritage. Adopted by the General Conference of the United Nations Educational, Scientific and Cultural Organization at its seventeenth session (Paris, 16 November 1972)”, <https://whc.unesco.org/archive/convention-en.pdf>. “Convention on the Protection and Promotion of the Diversity of Cultural Expressions (Paris, 20 October 2005)”, http://portal.unesco.org/en/ev.php-URL_ID=31038&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html եւ այլն։

Հայաստյացությունն ակնհայտորեն դրսևորվում է պետական մակարդակով. ադրբեջանական իշխանությունները, դիմելով բարոյական բոլոր արժեքներին հակասող միջոցների, փորձում են մոլորության մեջ գցել միջազգային հանրությանն ու համապատասխան կառույցներին՝ ջանալով սեփական երկիրը ներկայացնել իբրեւ «քաղաքակիրթ», մինչդեռ նրանց իրազործած էթնիկ զտման, ցեղասպանության եւ մշակութային բնաջնջման քաղաքականությունը մեկ անգամ եւս ապացուցում են, որ այս երկիրը շարունակում է մնալ քաղաքակիրթության ծիրից անդին եւ համամարդկային արժեքներին հակոտնյա: Այսպես՝ ՄԱԿ-ի 75-րդ նիստում ընդունված բանաձեւում նաեւ հստակ նշվում է.

«3. Մտահոգություն է հայտնում, որ կրոնական անհանդուրժողականության դրսևորման, խտրականության եւ դրանց հետ կապված բռնության, նաեւ կրոնով կամ հավատով պայմանավորված՝ մարդկանց բացասական կարծադրյալացման դեպքերի թիվն աճում է ողջ աշխարհով մեկ, ինչը կարող է լուրջ հետեւանմանք ունենալ ազգային, տարածաշրջանային եւ միջազգային մակարդակներում: Այդ առնչությամբ դատապարտում է կրոնական ատելության ցանկացած ֆորմըություն մարդկանց նկատմամբ, ինչը հրահրում է խտրականություն, թշնամանք կամ բռնություն, եւ խստորեն կոչ է անում պետություններին այդ դրսևորումները ֆինելու եւ դրանց դեմ պայքարելու համար ձեռնարկել արդյունավետ միջոցներ, ինչպես սահմանված է սույն բանաձեւում եւ համապատասխանում է մարդու իրավունքների ոլորտում իրենց ստանձնած միջազգային-իրավական պարտավորություններին»⁴²:

Ակներեւ է, որ ստեղծված իրավիճակում վտանգված է բռնազավթված տարածքներում մնացած հայկական պատմամշակութային ժառանգության գոյությունն առհասարակ. ադրբեջանցիների՝ հայերի նկատմամբ տածած ազգային եւ կրոնական ատելությունն ու անհանդուրժողականությունն առավել են խորացնում ազգամիջյան հակամարտությունը՝ ի դերեւ դարձնելով խաղաղ եւ քաղաքակիրթ ճանապարհով այն լուծելու բոլոր միտումները: Ակնհայտ է դառնում նաեւ, որ դատապարտումը մնում է լոկ խոսք, մարդու իրավունքների վերաբերյալ համաձայնագրերը՝ լոկ թուղթ, միջազգային կառույցների գործունեությունը սահմանափակվում է միայն քննարկումներով, իսկ խաղաղության, հաշտության եւ

⁴² ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեա, փաստաթղթի համար՝ A/RES/75/187, բանաձեւի նախագիծ՝ A/75/487/Add.2, նիստի ամսաթիվ՝ 16.12.2020, զեկույց նիստի վերաբերյալ՝ A/75/PV.46, կետ՝ 3-րդ:

հանդուրժողականության գեղեցիկ կոչերը, ըստ էության, անիրագործելի են... Եւ ամեն անգամ բախվելով դառն իրականությանը՝ արձանագրում ենք պատմական ճշմարտությունը՝ «Չկան հավերժական բարեկամներ, կան հավերժական շահեր»: Հստակ գիտակցելով նաեւ, որ դաշնակից կամ բարեկամ որեւէ երկրի ռազմանավ այդպես էլ չի բարձրանալու հայոց լեռները՝ «ստիպված ենք» ընտրել վերազարթոնքի, նորոգման ու հզորացման ուղին՝ հույս դնելով միայն սեփական բազկի, արարման ուժի եւ մոխիրներից հառնելու աստվածաշնորհ կարողության վրա: Ուստի, տեղին է նաեւ հիշել Հայոց Հայրիկի խոսքերը. «Ժողովուրդ հայոց, անշուշտ, լաւ հասկցա՛մ, թէ զէնքն ինչ կոնա՛ր գործել եւ կը գործէ: Ուրեմն, սիրելի եւ օրհնեալ հայաստանցիներ, գաւառացիներ, երբ հայրենիք վերադառնալու լինէ՛ք, ձեր բարեկամաց եւ ազգականաց, իբրեւ պարգեւ, մէկ-մէկ զէնք տարե՛ք, զէնք առե՛ք եւ դարձեալ զէնք...»⁴³:

РЕЗЮМЕ

27 сентября 2020 г. турецко-азербайджанский тандем развязал новую войну. Вторая арцахская война подтвердила, что в современном мире ничего не изменилось, и азербайджанцы и турки испытывают ту же этническую ненависть к армянам, неизменным остался и гнусный почерк проявления армянофобии. Так, только в Нахиджевани в советские годы, а затем и в постсоветский период были варварски уничтожены тысячи церквей и монастырей, памятников и монументов, которые являлись не только красноречивыми свидетелями многовековой армянской истории, но и ценной частицей мировой цивилизации. Под подобной угрозой уничтожения находится армянское историко-культурное наследие, оставшееся на оккупированных Азербайджаном территориях в следствие Второй Арцахской войны. Это памятники, церкви, монастырские комплексы и сооружения, имеющих важную археологическую и культурную ценность. В ходе военных действий и после них оскверняются, разрушаются или полностью сносятся армянские церкви (Св. Егише в Матагисе, церковь Пресвятой Богородицы (Зоравор Сурб Аствацацин) села Мехакаван Гадрутского района, Св. Иоанна Предтече (Канач Жам) в Шуши).



⁴³ Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ, Պոլիս եւ իր դերը, հտ. Գ., Աթլիլիսս — Լիբանան, 1988, էջ 634:



Ս. Ամենափրկիչ Դազանչեցոց եկեղեցին Արցախյան առաջին պատերազմում Շուշիի ազատագրումից եւ ամբողջական վերականգնումից որոշ ժամանակ անց:



Ս. Ամենափրկիչ Դազանչեցոց եկեղեցին 1920-ական թվականներին՝ Շուշիի հայերի ջարդերից հետո:



Ս. Ամենափրկիչ
Ղազանչեցոց եկեղեցին
2020 թ. հոկտեմբերի
8-ի երկանգամյա
հրթիռակոծությունից հետո:



Մեխակալանի
Ս. Զորավոր
Աստվածածին
եկեղեցի.
կառուցվել է 2017 թ.



Եկեղեցու պղծումը:




Ս. Զորավոր Աստվածածին եկեղեցին հիմնահատակ
փանդվել է:




Շուշիի Ս. Հովնանեն Մկրտիչ եկեղեցի (Կանաչ
ժամ). կառուցվել է 1818 թ.




Ս. Հովնանեն Մկրտիչ եկեղեցին
ավերվել է:



Ս. Ստեփանոս եկեղեցի. գտնվել է Ագուլիսի հյուսիսում եւ, ըստ Արգամ Այվազյանի, հավանաբար հիմնադրվել է ժ.թ.—ժ.թ. դդ. (արբանյակային նկարը վերցված է Սիմոն Մադաթյանի “Special investigation: Declassified satellite images show erasure of Armenian churches” հոդվածից. տե՛ս <https://www.theartnewspaper.com/feature/agulis>):



Ագուլիսի Ս. Թովմա առաքյալ վանական համալիրը Ի. դարասկզբին. միջնադարյան Հայաստանի ամենամեծ եւ ամենակարեւոր վանական համալիրներից է եղել. ըստ ավանդության ու եկեղեցու արեւմտյան մուտքի բարավորի շափածո արձանագրության՝ այս վանքը Ա. դարում հիմնադրել է Բարդուղիմեոս առաքյալը և իր աշակերտ Կոմսիին նրա առաջնորդ կարգել. իսկ 305-ին վանքը վերակառուցել է Գրիգոր Ա. Լուսավորիչը:




Ս. Թովմա վանական համալիրի ամայացած տեղը սրբավայրի ավերումից հետո.
(արբանյակային նկարը վերցված է Սիմոն Մաղաֆյանի “Special investigation: Declassified satellite images show erasure of Armenian churches” հոդվածից.
տե՛ս <https://www.theartnewspaper.com/feature/agulis>);



Ս. Քրիստափոր եկեղեցի. գտնվել է Ագուլիսի հենց կենտրոնում՝ հայտնի շուկայից՝ կամրջից (այժմ փանդված է) այն կողմ: Պահպանված ավանդության համաձայն՝ հիմնադրվել է Ա. դարում Հոսրա Թադեոս առաքյալի կողմից (նկարը Արգամ Այվազյանի արխիվից է):



Արբանյակային նկարում պարզ երևում է Ս. Քրիստափոր եկեղեցին հիմնովին փանդվել է
(արբանյակային նկարը վերցված է Սիմոն Մաղաֆյանի “Special investigation: Declassified satellite images show erasure of Armenian churches” հոդվածից.
տե՛ս <https://www.theartnewspaper.com/feature/agulis>);



Ջուղայի խաչաքարերը:



Ջուղայի խաչաքարերի բարբարոսաբար ոչնչացումը:


8 октября 2020 года дважды за день был подвергнут ракетному обстрелу кафедральный собор Св. Святого Всеспасителя (Казанчецоц) в Шуши, а сегодня уже снесены купола святыни. Проявлением святотатства и этнической ненависти в отношении армян является также осквернение армянских кладбищ, их разрушение, вынос останков усопших, что, пожалуй, считается крайне предосудительным и непростительным поступком с точки зрения всех религий.

SUMMARY

On September 27, 2020, the Turkish-Azerbaijani tandem unleashed a new war. The Second Artsakh War confirmed that nothing has changed today, and that the ethnic hatred of the Azeris and Turks towards the Armenians, as well as the disgusting manifestation of anti-Armenianism still remains the same. Thus, only in Nakhichevan during the Soviet years, then in the post-Soviet period as well, thousands of churches and monasteries, memorials and groups of monuments were barbarically destroyed, which were not only the eloquent witnesses of the centuries-old Armenian history, but also a valuable component of the world civilization.

The Armenian historical and cultural heritage left in the territories occupied by Azerbaijan during the Second Artsakh War — the monuments, churches, monasteries, buildings of archeological and cultural value — are facing the same threat of destruction. During and after military operations, the Armenian churches were desecrated and destroyed or completely ruined (St. Yeghishe Church of Mataghis, Zoravor St. Astvatsatsin Church of Mekhakavan in Hadrut region, St. John the Baptist Church of Shushi known as Green Church). Holy All Savior Ghazanchetsots Cathedral of Shushi was twice rocketed on October 8, 2020, and now the dome is ruined. The desecration and demolition of Armenian cemeteries, the removal of the remains of the dead are also manifestations of ethnic hatred and profanation towards the Armenians, which is perhaps considered as a highly condemnable and unforgivable act from the viewpoint of all religions.





ԿԱՐԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ ԼԻ

ՓՐԿՉԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ ԽՐԻՍՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԽԱՉԻ ՃԱՌՈՒՄ

Քանի՞ պէս-պէս եւ սփանշելի անուն ունիս երկրիս վերայ,
մերք սերմնահամ կը կոչիս, մերք այգեպան,
մերք լոյս աշխարհի, մերք գառն Աստուծոյ, մերք հովիւ,
մերք հանապարհ եւ ճշմարտութիւն, եւ շատ ստէպ եւս որդի
մարդոյ, իսկ այժմիկ ճշմարիտ որք կ'անուանես զՔեզ, եւ ո՞ր
հայր՝ մշակ՝:

Նայ ժողովրդի մեծանուն զավակներից մեկի՝ Խրիմյան Հայրիկի մասին շատ է խոսվել ու գրվել: Հետազոտողները նրա կյանքն ու գործունեությունը մանրամասն քննել են տարբեր տեսանկյուններից՝ ազգային, քաղաքական, գրական, մանկավարժական եւ այլն, ու տակավին քննություն կարոտ ստվարածավալ նյութ կա: Այս ամենը, սակայն, երբեմն մոռացության է մատնում Խրիմյան աստվածաբանի գործունեությունը եւ, ինչու չէ, գրական ժառանգությունը՝ «Մարգարիտ արքայութեան երկնից»-ը, «Հրաւիրակ երկրին Աւետեաց»-ը, հոգեշահ բազմաթիվ քարոզները, ճառերը եւ այլն, որոնք մեր հոգեւոր գրականության անգնահատելի գոհարներից են:

Դրանցից է «Յիսուսի վերջին շաբաթ: Խաչի ճառ եւ կորուսելոյ յիմարութիւն» երկը, որը հայոց հայրապետը նվիրել է հորեղբոր՝ Խաչատուր Խրիմյանի հիշատակին: Նրա մասին ճառի սրտառուչ առաջաբանում գրում է. «Յիսուն տարի կը լինի, որ մեր աշխարհէն յաւիտենական աշխարհ գնացեր ես. այլ քո անուն եւ յիշատակ մանուկ Մկրտչի հոգւոյն ու սրտին մէջ անեղծ պահուէր է» (Գ.):

¹ «Յիսուսի վերջին շաբաթ Խաչի ճառ եւ կորուսելոյ յիմարութիւն», հոգեգրեց Խրիմեան Հայրիկ ի նուէր Հայաստանեայց եկեղեցւոյ ուխտին, Վաղարշապատ, 1894, էջ 20: Այսուհետեւ այս գրքից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն շարադրանքին կից՝ փակագծերի մեջ:

Ճառը նվիրված է Հիսուսի երկրային կյանքի վերջին շաբաթվա իրադարձություններին՝ խորհրդավոր ընթրիքին, խաչելությանը, գերեզման դրվելուն, հարությանը, համբարձմանը եւ այլն: Ինչպես նշում է հեղինակը. «Ահաւասիկ, փառաւորեալդ իմ Յիսուս, Քո վերջին շաբաթ, Խաչիդ ճառ եւ Յաղթական Յարութիւնդ աւարտեցի: Սիօնի վերնատունէն սկսեալ տարի հասուցի մինչեւ երկնից անմատոյց խորանն ի վերին Սիօն, ուր ամէն խաչակրաց ազատավայրն է, եւ ուր չկարեն հասնիլ երկրիս հալածչաց ձեռք» (էջ 115):

Ճառը գրված է յուրօրինակ ոճով՝ առավելապես մարդ—Աստված կամ հեղինակ—Փրկիչ զրուցի ձեւով, որտեղ հեղինակն իր մտորումները, հիացմունքն ու երախտագիտութիւնն է ուղղում Փրկչին՝ Նրան տալով նաեւ զանազան անուններ: Առհասարակ պատմության մեջ Քրիստոսին տրված անունները բազմաթիվ են ու բազմազան: Դրանք եղել են ինչպես Հիսուսի մարդեղութիւնից հետո, այնպես էլ շատ ու շատ դարեր առաջ՝ վաղնջական ժամանակներում, մարդկության Փրկչին՝ Մեսիային սպասելիս, տարբեր մարգարեութիւններում եւ այլուր: Փրկչի գալստյան անդրանիկ խոստումը եղավ Եղեմի պարտեզում արարչագործ առաջին մարդու մեղանշումից հետո, երբ Աստված ասաց օձին. «Եւ եղից թշնամութիւն ի մէջ քո եւ ի մէջ կնոջդ, եւ ի մէջ զաւակի քոյ եւ ի մէջ զաւակի դորա. նա սպասեսցէ քում գլխոյ, եւ դու սպասեսցես նորա գարշապարի» (Ծննդ. Գ. 15)²:

Փրկչի անուններից մեկին հանդիպում ենք Եսայու մարգարեության յոթերորդ գլխում. «Ահա կոյսն յղասցի եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա Եմմանուէլ» (Ես. է. 14—15):

Խաչի ճառում Քրիստոսին տրված անունների մեծ մասը սերտ առնչություն ունի Սուրբ Գրքի հետ: Սրանց պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի խմբերի. Անուններ՝ արտահայտված թանձրացական գոյականներով, անուններ՝ արտահայտված վերացական գոյականներով, անուններ՝ արտահայտված ածականներով, որոնք էլ իրենց հերթին ունեն բազմաթիվ յուրօրինակ բնութագրիչներ՝ մակդիրներ:

Թանձրացական գոյականներով արտահայտված բազմաթիվ անուններից հիշենք «Գառ» կամ «Աստծու Գառ» արտահայտությունը, որն ունի

² «Գիրք Աստուածաշունչը Հին եւ Նոր Կտակարանաց», Վենետիկ, Սուրբ Դավար, 1860: Այսուհետ եւս աստվածաշնչյան տեղիները կնշվեն սույն հրատարակությունից:

աստվածաշնչյան ծագում: Ք. ծ. ա. Հ. դարում Եսային մարգարեանում է՝ գրելով. «Եւ նա առ վշտին ոչ բանայ զբերան իւր: Իբրեւ ոչխար ի սպանդ վարեցաւ, եւ իբրեւ որոջ առաջի կտրչի անմոռնչ կայ, այնպէս ոչ բանայ զբերան իւր» (Ես. ԾԳ. 7): Իսկ Հովհաննէս Մկրտիչը, Հիսուսին տեսնելով, ասում է. «Ահաւասիկ գառն Աստուծոյ՝ որ բառնայ զմեզս աշխարհի» (Յովհ. Ա. 29):

«Աստծու Գառ» արտահայտությունը ժամանակի ընթացքում ձեռք է բերել դարձվածքի արժեք եւ նշանակում է. «ա. մաքուր, անարատ, պարզամիտ արարած: բ. Լսող հյու մարդ»³: Խրիմյան Հայրիկը Գառ —ը կիրառել է մի քանի անգամ՝ Աստծոյ Գառ, Գառն Աստծոյ, հեզ Գառնուկ արտահայտություններում, ինչպէս. «Դու հեզաբար կը պատասխանես, այլ կատաղի ծառայն քահանայապետին զքեզ կ'ապտակէ: Համբերէ գառնուկդ հեզ, համբերէ, դարձուր եւ զմիւս երեսդ. դու այսպէս վարդապետեցիր եւ այդ օրինակով ցոյց տուր մեզ քո անսահման հեզութեան դասը» (էջ 38—39):

Կիրառված ենք տեսնում նաեւ այլ անուն-արտահայտություններ, որոնք ընդգծում են Փրկչի պատարագվելու գաղափարը եւ փաստորեն հոմանիշ են նախորդին՝ Կարմիր երինջ, Սաբեկա խոյ, Պարարտ եզ, Խաչակիր նահատակ, Ճշմարիտ ողջակեզ, Նոր Իսահակ եւ այլն: Վերջինը հիշեցնում է աստվածաշնչյան մեկ այլ դրվագ. հրեաների նախահորը՝ Աբրահամին, Աստված պատվիրում է ողջակիզել իր որդուն՝ Իսահակին: Աբրահամը հնազանդվում է Աստծու կամքին, սակայն վերջին պահին Տիրոջ հրեշտակը երկնքից ձայն է տալիս ու պատվիրում Աբրահամին որեւէ վնաս չպատճառել պատանուն. «Համբարձ Աբրահամ զաչս իւր եւ ետես, եւ ահա խոյ մի կախեալ կայր զծառոյն սաբեկայ զեղջերաց. եւ գնաց Աբրահամ առ զխոյն, եւ եհան զնա յողջակէզ փոխանակ Իսահակայ որդւոյ իւրոյ» (Ծննդ. ԻԲ. 13): Սա մեկնաբանվել է որպէս հարության նախօրինակ, եւ Պողոս առաքյալը եբրայեցիներին ուղղված նամակում գրում է. «Եդ ի մտի իւրում, թէ եւ ի մեռելոց կարօղ է յարուցանել Աստուած. ուստի եւ յառակս իսկ ընկալաւ զնա» (Եբր. ԺԱ. 19):

Ճառի «Յիսուս ի ճանապարհս խաչակրութեան» հատվածում կարդում ենք. «Դու նոր Իսահակն ես, շալկածդ քո ողջակիզին փայտն է. մի հարցներ, թէ՛ ո՞ր է ոչխար ողջակէզ. դու ես միայն ճշմարիտ ողջակէզ,

³ Պ. ԲԵԳԻՐՅԱՆ, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երեւան, 2011, էջ 164:

զոր Աբրահամ գուշակեց, եւ Հայրդ պատրաստեց. միայն թէ քո զոհա-
զործն Աբրահամ չէ, այլ նորա ժպիրհ եւ անզգամ որդիքներ» (էջ 46—47):

Սակայն Քրիստոսին միայն հեզ ու խոնարհ գառնուկի կերպարով
ընկալելը խոր մոլորություն է, եւ հաջորդող էջերում կարդում ենք. «Կը
ննջես, կը լռես եւ գերեզմանիդ խորէն չես մոնչեր, հզօր Առիւծ» (էջ 81),
կամ «Սորա համար Մկրտիչն ասաց, թէ Աստուծոյ գառն է, այժմիկ քաղ-
ցած առիւծ դարձեր է եւ կը մոնչէ որսերը գտնելու: Հօր բարկութեան
կայծակն է, որ երկնքէն շեշտակի մինչեւ ի ներքին դժոխս կ'իջնայ, որ
պիտի զարնէ սատան թշնամոյն գոռոզ գագաթէն եւ զայն տոչորէ եւ այ-
րէ անէջ կրակով» (էջ 85):

Առյուծը նույնպէս խորհրդանիշ է, որ հանդիպում է Աստվածաշնչում.
մասնավորապէս՝ այն համարվել է Մարկոսի Ավետարանի խորհրդանի-
շը: Այս խորհրդանիշն առկա է նաեւ Սուրբ Գրիգոր Նարեկացու *Խաչի*
վերացման տաղում.

Ես ձայն զառիւծուն ասեմ,
որ գոչէր ի քառաթեյին,
ի քառաթեյին գոչէր,
ձայն առնէր ի սանդաքամետն...⁴

Հինկտակարանյան ծագում ունեն Փեսա, Եղբորորդի, Նոր Սողոմոն
արքա անունները, որոնք արդեն կապվում են Սողոմոն Իմաստունի հեղի-
նակած «Երգ երգոց»-ի հետ:

Տարբեր մեկնություններում այս երկը համարվել է մարգարեություն՝
Քրիստոսի եւ Եկեղեցու փոխհարաբերության մասին՝ արտահայտված
փեսայի եւ հարսի այլաբանությամբ: Քրիստոս փեսայի մասին Խրիմյան
Հայրիկը գրում է. «Ելէք եւ տեսէք, դստերք Երուսաղէմի, ելէք եւ տե-
սէք մեր նոր Սողոմոն արքային նորօրինակ հարսանեաց պսակը, որով
յաւուր փեսայութեան իւրոյ կը պսակէ զինքն մայրն իւր Սիօն: Կուլաք,
կաշխատէք եւ սրտակոծ կը լինիք՝ տեսնելով, որ փեսայն մահապարտ
մի խաչակիր է» (էջ 48): Ապա ավելացնում է. «Ասեն, թէ Սողոմոնի եր-
գած անձկալի եղբորորդին եւ փեսայն է, իւր հարսնետորք՝ սուսերակիր
զինուորներն են. պսակադիրք՝ օրինաց վարդապետներ եւ դպիրներն
են. պարահանդէս ուրախութիւնն՝ Երուսաղէմի դստերաց ողբ, կոծ ու
լացն է» (էջ 49):

⁴ «Հայ հին եւ միջնադարյան քնարերգություն», Երեւան, 1987, էջ 108:

Իսկ ինչո՞ւ է Քրիստոսն անվանվում եղբորորդի: Կան տարբեր մեկնություններ. «որովհետե՞ւ ա) հեթանոսները եւ հրեաները եղբայրներն են՝ մի Ադամից, բ) ծնունց Յուդայի ցեղից եւ եղբորորդի է հրեաներին, գ) Ղուկասը Նաթանից է հիմնում ազգահամարը, եւ Քրիստոս կոչվում է Սողոմոնի եղբորորդի, դ) Դավիթը մեր մեղաւոր եւ զղջացած եղբայրն է, իսկ Քրիստոս՝ նրա Որդին, ուստի Քրիստոս եղբորորդի է մեզ ըստ մարմնի (Տաթեւացի)»⁵:

Այս անվանմանն անդրադարձել է նաեւ Գրիգոր Նարեկացին «Տաղ քաղցրիկ»-ում.

Նման է եղբորորդին իմ
այծեմանց որդուց եղանց.
ահա նա ձայն եղբորորդայն
խանդաղատեալ սիրով լըցեալ⁶:

Ինչպէս արդեն նշել ենք, Քրիստոսին տրված որոշ անուն-բնութագրիչներ ունեն իրենց բնութագրիչները: Խոսքը գեղագիտական որոշիչներին՝ մակդիրների մասին է: Հիշենք «Հովիվ» բառը: Ավետարանում Հիսուս բազմիցս այլաբանորեն ներկայացվում է որպէս հովիվ, իսկ հավատացյալ ժողովուրդը՝ հոտ: Աստվածորդին ինքն է իր մասին վկայում՝ ասելով. «Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» (Յովհ. Ժ. 11):

Ինչպէս տեսնում ենք, «հովիվ» որոշյալն այստեղ բնութագրված է «քաջ» մակդիրով, քանի որ չի վախենում իր կյանքը զոհել բանավոր հոտի համար: Աշխարհաբար թարգմանություններում «քաջ»-ը երբեմն փոխարինվել է այլ բառերով, մասնավորապէս՝ բարի, լավ: Ամեն պարագայում, սակայն, հիմնաքարը՝ Հովվի մղիչ ուժը, սերն է, որն ստիպեց Նրան մեղավոր մարդկության փրկության համար հանձն առնել խաչի մահը, կամ Հայրիկի խոսքով. «Տեսաք, Տէր, նոր սիրոյդ հրաշալի հուր. զոր բերիւր ձգեցիր երկիրը. զաշխարհ համայն բոցավառեց եւ զքեզ իսկ ողջակիզեց խաչի սեղանոյն վերայ... Ո՞վ կարէ չափել քո անհուն անհամեմատ սէր, ո՞վ Տէր, զոր դու քառակուսի փայտով մի չափելով՝ բարձրութիւնն մինչեւ երկինք հասաւ, խորութիւնն մինչեւ յանդունդս, իսկ լայնութիւն եւ երկայնութիւն ընդ ծագս չորս կոյս աշխարհի» (էջ 13—14):

⁵ «Երգ երգոց հանդերձ մեկնութեամբ նախնեաց», Երեւան, 1993, էջ 33:

⁶ «Հայ հին եւ միջնադարյան քնարերգություն», էջ 106:

Աստվածային սիրո մասին Հովհաննես ավետարանիչը գրում է. «Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչեւ զՈրդին իւր միածին ետ. զի ամենայն, որ հաւատայ ի նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտեանականս» (Յովհ. Գ. 16.):

Խաչի ճառում գտնում ենք համապատասխան մակդիրը. «Սիրական հովիւն իւր սիրելի Հօրէն զարնուեցաւ» (էջ 35):

Փրկչի վերացական գոյականներով արտահայտված անուն-բնութագրիչների մասին խոսելիս առաջինը հիշենք «Սեր» բառը: Հովհաննես առաքյալն իր Ընդհանրական առաջին թղթում գրում է. «Ամենայն, որ սիրէ՝ յԱստուծոյ է ծնեալ, եւ ճանաչէ զԱստուած. եւ որ ոչն սիրէ՝ ոչ ճանաչէ զԱստուած, զի Աստուած սէր է» (Ա. Յովհ. Գ. 7–8): Ուստի բնավ պատահական չէ, որ Խրիմյան Հայրիկը Քրիստոսին անվանում է Սեր՝ տալով նաեւ ինքնատիպ մակդիրներ, ինչպես. «Բաբէ՛ անոխակալ եւ անյիշաչար սիրոյդ» (էջ 15): Կան նաեւ դեպքեր, երբ «սեր» բառն է դարձնում մակդիր որեւէ փոխաբերական անվանման համար. «Անսահման եւ անծիր դու սիրոյ Ովկիանոսն ես, Տէր, ո՞վ կարող է լայնութիւնդ եւ խորութիւնդ չափել. Սիօնի վերնատան յարկէն գետօրեն բացիր սիրոյ ակդ, զաշխարհ բովանդակ սիրոյ հեղեղովդ ողողեցիր» (էջ 12):

Ահա մի շարք վերացական գոյականներ՝ Հեզություն, Իմաստություն, Կյանք, Փառք, Ճշմարտություն եւ այլն, որոնց մեծ մասը եւս ունի աստվածաշնչյան ծագում: Այս դեպքում եւս առանձնակի կարեւորություն են ձեռք բերում մակդիրները, որոնք ընթերցողին հաճախ օգնում են ներթափանցելու աստվածաշնչյան անվան խոր ենթաշերտերը: Այսպես, Ավետարանում կարդում ենք Քրիստոսի խոսքը. «Ես եմ ճանապարհն եւ ճշմարտութիւն եւ կեանք» (Յովհ. ԺԴ. 6):

Աստծու բացարձակ ճշմարտություն լինելու գաղափարը հիմնարար գաղափար է: Դրան անդրադարձել են Եկեղեցու բազմաթիվ հայրեր: Բավական է հիշել Սուրբ Ներսէս Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» տողով սկսվող քսանչորս տնից բաղկացած հանրահայտ աղոթքը, որի երրորդ, չորրորդ եւ հինգերորդ տներում համապատասխանաբար կարդում ենք. «Հայր Երկնաւոր, Աստուած ճշմարիտ... Որդի՛ Աստուծոյ, Աստուած ճշմարիտ... Հոգի՛ Աստուծոյ, Աստուած ճշմարիտ»⁷:

⁷ «Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2004, էջ 888–889:

Խրիմյան Հայրիկը Քրիստոսին անվանում է մարմնացյալ ճշմարտություն, այսինքն՝ ճշմարիտ Աստված, որ մարմին առավ, ծնվեց Սուրբ Կույսից ամենապարզ ու համեստ պայմաններում, ինչը, փոխաբերության վերածված, հնչում է այսպես. «Ո՛վ մարմնացեալ ճշմարտութիւն, Բէթլէհէմի երկրէն ու մորէն բուսար» (էջ 77):

Իմաստությունը՝ որպես Հիսուսի անուն, հաշի ճառում կիրառված է երկու անգամ՝ տարբեր մակդիրների ուղեկցությամբ, մի դեպքում՝ «խորախորհուրդ», մյուս դեպքում՝ «առաջատես»։ Դարձյալ գործ ունենք Աստվածային էության բացահայտման հետ։ Աստվածային իմաստությունը խոր է ու խորախորհուրդ, այն շատ տարբեր է մարդկայինից, որի մասին ասված է. «Ո՛ր իմաստուն, ո՛ր դպիր, ո՛ր քննիչ աշխարհիս այսորիկ. ո՞չ ապաքէն յիմարեցոյց Աստուած զիմաստութիւն աշխարհիս այսորիկ։ Քանզի իմաստութեամբն Աստուծոյ ոչ ծանեալ աշխարհ իմաստութեամբն զԱստուած» (Ա. Կորնթ. Ա. 20—21):

Նա նաեւ առաջատես է, այսինքն՝ տեսնում է գալիքը, ինչը եւս զուտ Արարչին բնորոշ հատկանիշ է։ Այս մասին է գրել դեռեւս Սողոմոն Իմաստունը. «Քանզի ճաճանչ է Աստուծոյ զաւրութեանն, եւ ծագումն ճշմարիտ փառաց ամենակալին. վասն այնորիկ եւ ո՛չ մի ինչ պղծեալ խառնի ի նա» (Իմաստ. է. 25):

Խրիմյան Հայրիկը գրում է. «Ո՛վ յառաջատես իմաստութիւն, թող թերահաւատները դիպուած կարծեն, այլ ես կը հաւատամ, որ դու քո յաղթական խաչը մեղուցեալ նախամարդոյն գագաթան վերայ կանգնեցիր, որպէս զի արեանդ կենսատու ցօղով մեր հանգուցեալ նախահօր կեանք տաս, նոր վերաստեղծես հողէն. եւ ամբողջ աղամային հաւատացեալ սերունդը կրկին ի կենդանութիւն արարչագործես» (էջ 57—58):

Այստեղ հեղինակն անդրադառնում է այն ավանդությանը, համաձայն որի՝ Գողգոթայի բարձունքում էին ամփոփված առաջին մարդու՝ Ադամի նշխարները։ Այդ պատճառով էլ հաշելության բազմաթիվ մանրանկարներում խաչի տակ պատկերված ենք տեսնում Ադամի գանգը։ Սրա մասին գրել է նաեւ Ղեւոնդ Ալիշանը. «Նոյ յառաջ քան զմտնելն ի տապան, կ'ասեն, հանեց զմարմին Ադամայ եւ Եւայի եւ լալով վերջին ողջոյն տալով հանդիպակաց դրախտին՝ դրաւ ի տապանին. յետոյ աւանդեց Սեմայ կամ Մեղքիսեդեկի, որ տարաւ եւ ի Գողգոթա թաղեց, ի տեղին, ուր կանգնեցաւ հաշն Քրիստոսի»⁸:

⁸ ՀԱՅՐ Դ. ԱԼԻՇԱՆ, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Ս. Ղազար, 1904, էջ 32:

Առանձին խումբ են կազմում ածականով արտահայտված անունները: Սրանք արդեն փոխանվանաբար գործածված ածականներ են, որոնք նույնպես մատնանշում են Փրկչին բնորոշ որեւէ հատկանիշ: Հիշենք դրանցից մի քանիսը: Սուրբ — «Մարդիկ թող այնպէս կարծեն, թէ դու եւս ի կարգս մեռելոց կը համարիս: Քաւ թէ զքեզ ի դժոխս թողում. քաւ թէ սուրբդ իմ ապականութիւն տեսնայ. եւ դու ինքն չգիտես եւ չասացիր, թէ՛ քակեցէք մարմնոյս տաճարը, եւ ես երեք օրէն յետոյ կը շինեմ» (էջ 32—33): Արդար — «Կայիափայ եւ Պիղատոս ատեան կազմեր են եւ կ'սպասեն Արդարոյ դատաստանը համառօտել ի մահ» (էջ 34—35): Անմահ — «Միթէ քո Հայր մեր փրկութեան համար խաղ արար զքեզ, խաչի տեսարան թողուց եւ արդ գերեզմանիդ վերայ կգօսնու. ոչ ինչ փոյթ չունի, կը թողու, որ անմահ՝ ի կարգ մեռելոց թաղեն» (էջ 80) եւ այլն:

Ինչպես ցույց է տալիս այս համառոտ քննությունը, Խրիմյան Հայրիկի Խաչի ճառում Քրիստոսին տրված բնութագրիչ անունները բազմաթիվ են ու բազմազան, որոնց բոլորին չկարողացանք անդրադառնալ տեղի սղության պատճառով: Բոլորը, սակայն, ծառայում են մեկ նպատակի. սրանց միջոցով հեղինակը հնարավորինս ամբողջացնում է Փրկչի դիմանկարը: Յուրաքանչյուր անուն հիմնականում մատնանշում է Հիսուսին բնորոշ որեւէ հատկանիշ, Նրա երկրային կյանքին առնչվող որեւէ դրվագ, որոնք խիստ կարեւոր են փրկչական առաքելության համաբնագրում: Անուններին մեծ մասն ունի սուրբգրային ծագում, որոնց անդրադարձել են նաեւ միջնադարյան մեկնիչները, Եկեղեցու հայրերը, ընդհանրապես հայ հոգեւոր գրականությամբ զբաղվողները:

РЕЗЮМЕ

Слово о Кресте изящный образец из литературного наследия Хримяна Айрика, которая посвящена событиям последней недели земной жизни Иисуса. Здесь особо отличаются данные Христу многочисленные и многообразные характерные имена, с помощью которых автор по возможности делает целостным портрет Спасителя. Большинство имен имеет библейское происхождение, о которых писали еще средневековые толкователи, отцы Святой Церкви, яркие представители армянской духовной литературы и другие.

SUMMARY

Homily on the Cross is a beautiful piece of literary heritage of Khrimyan Hayrik, which is dedicated to the events of the last week of Jesus' earthly life. The numerous and varied characteristic names given to Christ are especially notable here, with the help of which the author makes the complete portrait of the Savior as far as possible. Most of the names are of biblical origin, about which medieval exegetes, Fathers of the Holy Church, prominent representatives of Armenian ecclesiastical literature, and others wrote.



ԼԻԱՆԱ ՍԱՆԹՐՅԱՆ

Բանասիր. գիտ. թեկնածու, դոցենտ,
Շուշիի տեխնոլոգիական համալսարան

ԴԱՐՁՎԱԾՆԵՐԸ ՊԼՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Դարձվածները կամ դարձվածաբանական միավորները ժողովրդի հոգեւոր մշակույթի հարստությունն են եւ արտահայտում են լեզվի ազգային ինքնատիպությունն ու յուրահատկությունը: Դարձվածներում պատկերվող մտածողության շնորհիվ իրենց արտահայտությունն են գտել ժողովրդի պատմական հարուստ կենսափորձը, նրա պատկերացումներն առարկայական (օբյեկտիվ) աշխարհի եւ երեւույթների մասին, վերաբերմունքը մարդկային հարաբերությունների նկատմամբ¹:

«Դարձվածաբանություն» եզրը ծագում է հունարեն φράσις (արտահայտություն, խոսքի հատված) եւ λογος (գիտություն, ուսմունք) բառերից: Այն ուսումնասիրում է լեզվի դարձվածները, նրանց ծագումը, կառուցվածքը, տեսակները եւ դերը նախադասության կազմում:

Հստ Մ. Աբեղյանի՝ դարձվածներն առաջանում են բառերի ազատ կապակցություններից՝ իմաստափոխությամբ. «Բառերի այսպիսի նորիմաստ կապակցությունները սովորաբար կոչվում են դարձվածքներ, որոնք, սակայն, մի բառի նշանակություն են ստանում եւ կարող են նաեւ մի բարդ բառ համարվել»²: Պ. Բեդիրյանը տալիս է հետեւյալ բնորոշումը. «Դարձվածքը բառերի կայուն, պատրաստի վերարտադրելի, վերաիմաստավորված կապակցություն է, ուր բաղադրիչ բառերի ինքնուրույնությունը ձեւական է, շարահյուսական կապը՝ մթագնած»³: Իսկ ակադեմիական հրատարակության Ա. պրակտում նշվում է. «Դարձվածք պետք է համարել փոխաբերական-այլաբանական միասնական իմաստ ունեցող

¹ Տէս Ա. ՍՈՒՔԻԱՅԱՆ, Ս. ԳԱԼՍՅԱՆ, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երեւան, 1975, էջ V:

² Տէս Մ. ԱԲԵՂՅԱՆ, Հայոց լեզվի տեսություն, Երեւան, 1965, էջ 151:

³ Տէս Պ. ԲԵԴԻՐՅԱՆ, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երեւան, 1973, էջ 5:

ամեն մի կայուն բառային անբաժանելի, պատրաստի վերարտադրելի կապակցություն»⁴:

Դարձվածաբանության գիտական ուսումնասիրությունն սկսվում է շվեյցարացի լեզվաբան Շարլ Բալլիից: Դարձվածները բավական լավ են ուսումնասիրել նաեւ ռուս լեզվաբաններ Վ. Վինոգրադովը, Ն. Շանսկին, Ն. Վալզինան եւ այլք:

Հայերենում դարձվածներին առաջինն անդրադարձել է Մխիթար Սեբաստացին իր բառարանում («Բառգիրք հայկազեան լեզուի», 1749–1769 թթ.): Հետագայում իրենց աշխատություններում դարձվածներին մեծ տեղ են հատկացրել Մ. Ավգերյանը եւ Ստ. Մալխասյանը: Ժամանակակից հայերենի դարձվածները եղել են Ա. Մուրվալյանի, Ե. Գեւորգյանի, Պ. Բեդիրյանի, Ա. Սուքիասյանի, Ս. Գալստյանի եւ այլոց ուշադրության կենտրոնում: Նոր ժամանակներում դարձվածներին վերաբերող աշխատություններով հանդես է եկել Խ. Բադիկյանը⁵:

Ինչպես տեսնում ենք, դարձվածները բազմակողմանիորեն ու մանրակրկիտ ուսումնասիրված են արեւելահայ գրական լեզվում, մինչդեռ արեւմտահայ գրականի մասին նույնն ասել չենք կարող: Այստեղ անելիք կա, եւ մենք փորձել ենք Դ. Վարուժանի պոեզիայի միջոցով ինչ-որ չափով լրացնել այս ոլորտը: Իհարկե, ուսումնասիրելու եւ ներկայացնելու նյութ շատ կա, բայց դա հետագայի աշխատանք է:

Սույն հոդվածը գրել ենք վերլուծական-նկարագրական-համեմատական եղանակով՝ վերլուծելով դարձվածների կառուցվածքն ըստ բաղադրիչների, նկարագրելով նրանց իմաստային յուրահատկություններն ու համեմատելով արեւելահայերեն համարժեքների հետ:

Ինչպես իրավացիորեն նկատում է Ռ. Սաքապետոյանը, «Դարձվածները՝ որպես խոսքային պատրաստի միավորներ, առավելագույնս կապված են ժողովրդական լեզվամտածողության հետ: Դրանք գալիս են վաղնջական ժամանակներից եւ ժողովրդի կյանքի, հոգեկան կերտվածքի, սովորույթների եւ հավատալիքների հայելային արտացոլումն են: Այդ իսկ պատճառով հայերենի երկու տարբերակներում դարձվածները

⁴ Տե՛ս Գ. ԶԱՆՈՒԿՅԱՆ, Է. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Վ. ՔՈՍՅԱՆ, Հայոց լեզու, I մաս, պր. Ա., Երեւան, 1980, էջ 473:

⁵ Տե՛ս Խ. ԲԱԴԻԿՅԱՆ, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները (կառուցվածքային վերլուծություն), Երեւան, 1986. նույնի՝ «Ուսումնական դարձվածաբանական բառարան», Երեւան, 2002:

կառուցվածքային առումով նույնական են.... Այդ ամենի հետ միասին արեւմտահայերենն ունի առանձնահատուկ դարձվածաբանություն, որի տարբերություններն արեւելահայերենից պայմանավորված են դարձվածք բաղադրող բառերի արեւելահայերեն կամ արեւմտահայերեն տարբերակներին նախապատվություն տալու հետ....»⁶:

Այսպես՝ բառային տարբերակների միջոցով են ստեղծված հետեւյալ դարձվածները.

Գիւղացիի խորշոմներուն մէջ աղուոր՝

Ուր արեգակն առողջ արիւնն եռեփեց,

Քրտինքը ա՛լ սառած է....⁷

Արեւմտահայերենի արյունը եռեփել դարձվածք, որ նշանակում է «ժիր, աշխույժ լինել», նույն իմաստով առկա է նաեւ արեւելահայերենում, որտեղ եռեփել (եռալ եւ եփել)

տարբերակի դիմաց եռալ եզրն է (արյունը եռալ):

Լաց, Հայաստան՝ ո՛վ թշուառ կին, ու փետէ՛

Վարսերդ սեւ (1, էջ 131)

Վարսերը փետել դարձվածք նշանակում է «կոծել, սգալ, ողբալ»: Արեւելահայերենում առկա է մագերը փետել տարբերակը:

3. Շանթ կը տեղաւ արեգակը երկինքէն վար անամպ.... (2, էջ 78):

Շանթ տեղալ նշանակում է «վառել, այրել»: Արեւելահայերենում նույն իմաստ դարձվածն ունի կրակ թափել տարբերակը: Արեւմտահայերենի բառարանները շանթ բառը չեն տալիս⁸: Արեւելահայերենում շանթի առաջնային իմաստը «կայծակ»-ն է (եթե մի կողմ թողնենք փոխաբերական իմաստները), արեւմտահայերենում վերոնշյալ դարձվածի բաղադրիչ շանթ-ն առավելապես «այրող, վառող» իմաստն ունի: Ինչպես Վարուժանն ինքն է գրում. «Մեր հիմնական կարծիքներէն մէկն այն է, որ լեզուի մը բոլոր յատկութիւնները ուղիղ կը համեմատին միջավայրի ազդեցութեան եւ ժողովրդի մը հոգեւոր-քաղաքական շարժումին հետ»⁹:

Օ. Պերելոմովան իր ատենախոսության մէջ որոշարկում է այս միտքը. «Դրական բնագրի լեզուն ազգի մշակութային ծածկագիրն է, որը

⁶ Տէս Ռ. ՍԱՔԱՊԵՏՈՅԱՆ, Արեւմտահայերենի դասագիրք, Երեւան, 2006, էջ 116:

⁷ ԴԱՆԻՆԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ, Երկերի լիակատար ժողովածու երեք հատորով, հտ. 1, Երեւան, 1986, էջ 107 (այսուհետ սույն հրատարակության մեջբերումների էջը եւ հատորը կնշվեն տեղում):

⁸ Տէս Ռ. ՍԱՔԱՊԵՏՈՅԱՆ, Արեւմտահայերեն—արեւելահայերեն նոր բառարան, Երեւան, 2011:

⁹ Տէս ԴԱՆԻՆԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 3, Երեւան, 1987, էջ 127:

ոչ միայն արտացոլում է իրականությունը, այլև մեկնաբանում է այն՝ ստեղծելով յուրահատուկ իրականություն, որում ապրում է մարդը: Լեզվի կապն ազգային մշակույթի հետ հատկապես նկատելի է լեզվական կայուն արտահայտություններում, որոնք պատրաստի կամ վերափոխված ձևով օգտագործվում են որպես աշխարհի լեզվական նկարագրի բաղադրիչներ»¹⁰:

Ըստ արտահայտած իմաստի եւ առնչության ոլորտի՝ Դ. Վարուժանի գործածած դարձվածները կարելի է բաժանել 3 խմբի.

1. Հարստահարված եւ ծանր ճակատագրի արժանացած ժողովրդի հասարակական-քաղաքական վիճակը ներկայացնող դարձվածներ:

2. Ժողովրդի ցասումը, ըմբոստացումը ներկայացնող դարձվածներ:

3. Ձեզոք շերտին վերաբերող դարձվածներ:

1. Առաջին խումբը ներկայացված է հետևյալ դարձվածներով.

Ամէն խայտանք ջախջախեցի սրտիս մէջ—

Ձեմ վախնար սեւ ծծելէ.... (1, էջ 17):

«Տառապել, տանջվել» իմաստով այս դարձվածը հանդիպում է միայն արեւմտահայերենում, արեւելահայերենն այն չունի:

Օր մը սեւ (1, էջ 285, աղետալի, դժբախտության

ժամանակներ):

Նուաղկոտ բիբով ըսպասեց

Իր վերջին սեւ վայրկեանին....(1, էջ 120, ծանր պահեր):

Եւ գլխուն սեւ քօղ առնէ....(1, էջ 158, սգո եւ տխրության խորհրդանիշ):

....Շրջան ըրաւ սեւ լուրն այս պալատին մէջ բովանդակ....(2, էջ 67, բոթ, գուլժ):

Նկատելի է, որ Դ. Վարուժանի դարձվածներում հանդիպող միակ գունանունը սեւ-ն է, որ գործածվել է ամբողջ 5 անգամ՝ միշտ խորհրդանշելով աղետ, տառապանք, սուգ, ծանր պահեր, բոթ, տխրություն, այսինքն՝ հայ ժողովրդին ճակատագրով բաժին հասած դժվարին ուղին:

Սիրտս աչքերէս փամեցի (1, էջ 113):

«Լացելով հանգստանալ, դատարկվել» իմաստն ունեցող դարձվածը եւս հատուկ է միայն արեւմտահայերենին:

¹⁰ Տե՛ս Օ. Տ. PERELOMOVA, 2010, Intertextuality in the Ukrainian literary discourse: structural, semantic and stylistical aspects, PhD thesis, Kyiv, 2010, էջ 14:

Ու ամպերէն կը դիտեմ
 Զիս իբր աղիք պատող փողերն հրացանին,
 Ծո՛վն արիւնի դիակներով խարակված.... (1, էջ 152,
 արյունահեղություն, կոտորած):

Հարսանեկան քօղս արիւնով ներկեցիր.... (1, էջ 143, արյուն թափել):
 2. Երկրորդ խումբում ցասում, ըմբոստություն արտահայտող դարձ-
 վածներն են, որոնք առաջին խմբից տրամաբանորեն բխող շարունակու-
 թյունն են՝ որպէս հետեւանք: Այդ դարձվածներն են.

Հոգիդ կաղնի՛, երբ կուծօ՛ կու տաւ մըրըրկին՝
 Ես շուքին տակ, հանգիստ, լուռ
 Կը մեծնայի.... (1, էջ 18, դիմադրել, պաշտպանել)
 Վըկայ չկար: Պիտի վրէժն ո՛վ կըռէ.... (1, էջ 107, վրեժ լուծել,
 վրեժխնդիր լինել):

Մինչ կուրծքիս տակ բաշ կը թոթուէր ոխ մը նոր (1, էջ 113,
 ըմբոստանալ):

Կու գար լուծել իշխանէն վրէժ.... (2, էջ 78, վրեժխնդիր լինել):
 Ժողովուրդներն աւասիկ կը խորտակեն շղթաներն.... (2, էջ 209, ազա-
 տագրվել, ազատություն ձեռք բերել):

Հողն արիւնի էր ծառա,
 Ինքը ծարաւ էր հողի (2, էջ 224, սպանելու ցանկություն, ոխ, քեն):
 Այս շարքի դարձվածներից երեքը՝ վրէժ կըռել, բաշ թոթուել, նզովք
 կարդալ, արեւելահայերենի բառարաններում բացակայում են:

3. Երրորդ շարքը՝ չեզոք շերտը, ամենաստվարն է, ինչը բնական է:
 Սակայն այս շարքի դարձվածների գրեթե կեսը հանդիպում է միայն
 արեւմտահայերենում: Դրանց կանգրադառնանք ստորեւ:

Գիրկդ կուգամ երազելու առանձին.... (1, էջ 14, վերադառնալ):
 Մէկդի թողած եմ ժպիտ, խաղ ու պարեր,
 Նորընծայ իմ գաղափարի աշխարհին (1, էջ 14, թողնել, հեռանալ):
 Դենն երեսիս կատղած պոռաց. —«Տեղի՛ տուր՝
 Թէ չէ գքեզ կը խեղդեմ.... (1, էջ 65, զիջել, նահանջել):
 Ո՛վ պիտ կրնար փետել համել Զայն սրտէս.... (1, էջ 65, մոռանալ,
 այլեւս չսիրել):

Արեւուն տակ, զօր կարօտցան, ձեռք ձեռքի
 Պիտի պարեն շուրջն արձանիդ.... (1, էջ 80, միասին, անբաժան):

Եռաց զուարթ կեանք մը թորգոմ գեղջուկի.... (1, էջ 94, աշխուժություն, եռուզեռ տիրել):

Դիւղացիի խորշոմներուն մէջ աղուոր....

Քրտիմբը ա՛լ պաղած է.... (1, էջ 107, աշխուժությունը կորցնել, մարել, մեռնել):

Կողը տուած է հողին

Զօր մշակեց ամրան դեղին հասկերուն

Երազանքէն ժպտալով (1, էջ 108, հենվել, թիկնել):

Ըսի թէ մեր տանիքին վրայ, լուսնին տակ,

Բուերը պար կը բռնեն.... (1, էջ 113, պարել):

...Ո՛վ կեանք սիրոյ, լանջ քրտինքի, սիրտ փուշի,

Յեկիմ նետուած սրբութիւն.... (1, էջ 113, չգնահատված):

Կը գրէ մայրս. —Ո՛վ իմ որդեակս պանդուխտ,

Դեռ մինչեւ երբ պիտ անծանօթ լուսնի տակ

Օրերդ անցնին....» (1, էջ 115, այս աշխարհում, աշխարհի երեսին):

Դու որ մատղաշ տաքիֆիս

Հարսանեկան քօղս արիւնով ներկեցիր.... (1, էջ 143, երիտասարդ):

Պիտ ուզեն գալ լոկ մեր կոյս, ատոք լեռները պեղել,

Եւ մեր ծոցուոր հանքերէն կթել մետաղն հրաշափառ.... (1, էջ 151, հանքն արդյունահանել):

Ընդհանրապէս կթել բառը յուրօրինակ կիրառություն ունի արեւմտահայերէնում: Վարուժանի՝ «մետաղը կթել» կառուցից զատ՝ մեկ ուրիշ արեւմտահայ գրողի՝ Հակոբ Մնձուրու երկերում հանդիպում են խաղողը կթել (հավաքել, քաղել) եւ փեթակները կթել¹¹ (մեղրը քամել, մեղրահացից հանել) կազմութիւնները:

Կը դիտեմ վարն նաեւ մեռած եղբայրներ....

Որոնց....

Մեր Մայրը կեանք չտուաւ.... (1, էջ 153, ծնել, լույս աշխարհ բերել):

...Ու անոնց պարզ հոգիներուն կը բանայ

Իբրեւ ուրիշ խարոյկներ,

Հին փառքերն այդ մեր լեռներուն սգաւոր.... (1, էջ 180, պատմել):

...Կը յուզէ այդ երկնքի մօտ մարդերուն

Արծուային բնազդումներն, ու խօսքն իր

¹¹ Տե՛ս ՀԱԿՈԲ ՄՆԶՈՒՐԻ, Երկեր, Երեւան, 1986, էջ 120, 178:

Կառուցն անոնց կը սրէ (1, էջ 180, խոսելու առիթ տալ, թեւավորել, լեզուները բացել):

Ես կը պաշտեմ Սուրդ արդար՝ մահիկին դէմ լուսնային
 Ժամերով ծունր դնող սուրբ հնդիկի մը նման.... (1, էջ 184, չոքել, ծունկի գալ):

....Թողլով որ քաղցր հոտն ընէ շուրջի գայլերն հալումաշ....
 (1, էջ 206, տանջել):

....Շրջան ըրաւ սեւ լուրն այս պալատին մէջ բովանդակ.... (2, էջ 67):

Այս դարձվածք միակն է Վարուժանի պոեզիայում, որ գործածված է երկու անգամ, ի դեպ, տարբեր իմաստներով: Վերոնշյալ օրինակում ունի «տարածվել, բոլորին հասանելի ու լսելի դառնալ» նշանակությունը, իսկ հետևյալ օրինակում արտահայտում է «փնտրել, աչք ածել, նայել» իմաստը:

Շրջան ըրաւ Ան միջոցը մէկէն,

Եւ հոն իրմէ գատ բան մը չբզրտաւ.... (2, էջ 85):

Երկու պարագայում էլ շրջան անել-ը բնորոշ է միայն արեւմտահայերենին:

Հորիզոնին դարձուց գլուխն ու մտրակի մ՝ հարուածով

Թաղուեցաւ իր արշաւին ամպրոպին մէջ փռեծով (2, էջ 75, նայել, ուշադրություն դարձնել, ուղղել):

Ես կարծեմ Աստուած բան մը կ'որոնէր՝

Որ դարման ըլլայ տաղտուկի վէրքին (2, էջ 85, բուժանյութ լինել):

Դ. Վարուժանի պոեզիայում հաշվել ենք 39 դարձվածային միավոր, որից 24-ն առկա են եւ արեւելահայերենում, եւ արեւմտահայերենում, իսկ 15-ը՝ միայն արեւմտահայերենում (դրանք, ըստ քանակի եւ տոկոսային հարաբերության, հաջորդիվ բերելու ենք աղյուսակում):

Միայն արեւմտահայերենին բնորոշ դարձվածային միավորներն են՝ սեւ ծծել — տառապել, վրեժ կշռել — վրեժխնդիր լինել, ֆռփմֆռ սառել — մարել, մեռնել, կողը տալ — հենվել, բաշ թոթվել — ըմբոստանալ, սիրտը ֆամել — լացելով հանգստանալ, դատարկվել, ցելխին նետել — չգնահատել, սեւ վայրկյան — ծանր պահ, մատղաշ տարիք — երիտասարդ, կթել մեռաղը — արդյունահանել, սեւ ֆոդ — սգո եւ տխրության խորհրդանիշ, փառքերը բանալ — պատմել փառքերի մասին, հայտնի դարձնել, կաուցը սրել — խոսելու առիթ տալ, թեւավորել, շրջան ընել — 1. շրջել, տարածվել, 2. փնտրել, դարման ըլլալ — բուժանյութ լինել:

Դարձվածները դասակարգվում են նաեւ ըստ խոսքամասային պատկանելության եւ լինում են բայական, անվանական, մակբայական: Անվանականն իր հերթին ունի ենթատեսակներ՝ գոյականական, ածականական, թվականական, դերանվանական: Դ. Վարուժանի պոեզիայում հանդիպող դարձվածներն ըստ խոսքամասային պատկանելության ընդգրկում են 4 խումբ՝ բայական, գոյականական, մակբայական, ածականական:

Բայական դարձվածային միավորները թե՛ հայերենում, թե՛ օտար լեզուներում ամենասովորն են, ինչը կապված է բայերի կիրառական հաճախականության հետ¹²: Դրանք են՝ գիրկը գալ, մեկդի թողուլ, սեւ ծծել, կուրծք տալ, տեղի տալ, սրտէ հանել, կեանքը եռալ, սիրտ ընել, վրեժ կռել, արյունը եռեփել, քրտինքը սառել, կողը տալ, պար բռնել, բաշ թոթվել, սիրտը քամել, ցեխին նետել, վարսերը փետել, արիւնով ներկել, մետաղը կթել, կեանք տալ, փառքերը բանալ, կտուց սրել, ծունր դնել, հալումաշ լինել, շրջան ընել, գլուխը դարձնել, շանթ տեղալ, վրէժ լուծել, դարման ըլլալ, շղթաները խորտակել:

Սրանք բաղադրված են գերազանցապես գոյական+բայ կաղապարով եւ մասամբ՝ մակբայ+բայ, ածական+բայ կաղապարներով:

Գոյականական դարձվածային միավորները քիչ են՝ ընդամենը 6-ը՝ սեւ վայրկյան, սեւ օր, մատղաշ տարիք, արյունի ծով, սեւ ֆող, սեւ լուր:

Սրանցից 5-ը կազմված են ածական+գոյական, եւ միայն մեկը՝ գոյական+գոյական կաղապարով:

Մակբայական դարձվածային միավորները երկուսն են՝ ձեռք ձեռքի, լուսնի տակ: Կազմված են գոյական+գոյականի սեռական հոլով եւ գոյական+կապ կաղապարներով:

Ածականական դարձվածային միավորը մեկն է՝ արյունի ծառավ՝ բաղադրված գոյական+ածական կաղապարով:

¹² Տե՛ս 1. Scicenter.online/yazik-russkiy-scicenter/sovremenniy-russkiy-yazik-ucheb-dlya870.html Н. М. ШАНСКИЙ, В. В. ИВАНОВ, Современный русский язык. Учеб. для студентов пед. ин-тов по спец. №2101, ч. 1, М., 1987 (որոնման ամսաթիվ՝ 27.01.2020): 2. лектор.com/kultura-rechistilistika/struktura-fazeologizmov-sootnoshenie-45904.html Структура фразеологизмов. Соотношение фразеологических оборотов с различными частями речи (որոնման ամսաթիվ՝ 27.01.2020): 3. reshaf.ru/frazeologizmy-i-ix-klassifikaciya/ Фразеологизмы и их классификация. (որոնման ամսաթիվ՝ 27.01.2020): 4. seanewdim.com/uploads/3/4/5/1/34511564/httpsdoi.org10.31174sendhs2018-184vi30-05.pdf ANAHIT HOVHANNISYAN, ROUZANNA GHAZARYAN, Morphological classification of idioms in English and Armenian, Shirak state University, Gyumri, Armenia (որոնման ամսաթիվ՝ 29.01.2020): 5. research.vu.nl/ws/portalfiles/porta/1845295/150494.pdf Geert Booij, Constructional idioms, morphology, and the Dutch lexicon, Vrije Universiteit Amsterdam (որոնման ամսաթիվ՝ 29.01.2020):

Հստ քանակի եւ տոկոսային հարաբերության՝ Դ. Վարուժանի գործածած դարձվածները ներկայացվում են ստորեւ բերվող աղյուսակում:

ԴՄ տեսակը	Առկա է եւ արեւելահայերենում, եւ արեւմտահայերենում		Առկա է միայն արեւմտահայերենում		Ընդամենը	
	Քանակը	Տոկոսը	Քանակը	Տոկոսը	Քանակը	Տոկոսը
Բայական ԴՄ	18	56,7	12	40	30	76,9
Գոյականական ԴՄ	3	50	3	50	6	15,4
Մակբայական ԴՄ	2	100	—	0	2	5,1
Ածականական ԴՄ	1	100	—	0	1	2,6

Ինչպես ցույց է տալիս սույն ուսումնասիրությունը, արեւմտահայերենը կարող է հարուստ ու հետաքրքիր նյութ տրամադրել դարձվածային միավորների ուսումնասիրության եւ հայերենի հարստացման համար: Այդ հսկայական շտեմարանը դեռ կարոտ է մանրակրկիտ ու բազմակողմանի քննության եւ հանրայնացման:

РЕЗЮМЕ

В восточноармянском языке фразеологизмы являются широко изученной и тщательно выявленной сферой, в то время как в западноармянском следует проделать большую работу в этом отношении. Лишь по поэзии Д. Варужана можно судить об огромном потенциале западноармянского языка, который нуждается в раскрытии.

Из 39 фразеологизмов в поэзии Варужана 15 свойственны только западноармянскому языку, 24 встречаются в двух языках, однако некоторые имеют лексические различия.

Семантически фразеологизмы Варужана делятся на три группы: связанные с тяжелой судьбой народа; представляющие гнев и возмущение народа; фразеологизмы нейтрального пласта.

Из цветов используется только слово черное для формирования 5 фразеологизмов первой группы.

По морфологической принадлежности в поэзии Варужана встречаются глагольные (30 ФЕ), субстантивные (6 ФЕ), наречные (2 ФЕ), адъективные (1 ФЕ) фразеологические единицы.

SUMMARY

In Eastern Armenian language, phraseological units form a widely studied and carefully identified sphere, while in Western Armenian, a lot of work needs to be done in this regard. Only by the poetry of D. Varoujan can one judge the enormous potential of the Western Armenian language, which needs to be revealed.


Among 39 phraseological units in Varoujan's poetry, 15 are characteristic only of the Western Armenian language, 24 are found in two languages, but some have lexical differences.

Semantically, the phraseological units of Varoujan are divided into three groups: 1. associated with the plight of the people, 2. representing the anger and indignation of the people, 3. phraseological units of a neutral layer.

Of the colors, only the word black is used to form 5 phraseological units of the first group.

According to the morphological affiliation, Varoujan's poetry contains verbal (30 PhU), substantive (6 PhU), adverbial (2 PhU), adjectival (1 PhU) phraseological units.





ԿՈՄԻՏԵԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ՝ ԱՍՏՈՒԱԾԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՄԵԾ ՕՐԻՆԱԿ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչությունը, Հրաչեայ Միսակի Պողոսեանի (Սանկտ Պետերբուրգ) մեկենասութեամբ, լոյս է ընծայել Հայ Եկեղեցու պատմութեան վաւերագրեր շարքի ԻԱ. հատորը¹: Պրակը կազմել է Գոհար Աւագեանը, խմբագիրներն են Տ. Ասողիկ աբեղայ Կարապետեանը եւ պատմագիտութեան դոկտոր Ամատունի Վիրաբեանը:

Հայ Եկեղեցու պատմութեան վաւերագրերի ԻԱ. պրակում ներկայացուած է 192 փաստաթուղթ (կազմողի եւ խմբագիրների դիտարկմամբ՝ համալրուելու կենցաղ միտում կայ), որից 180-ը պահուում է Հայաստանի ազգային, 12-ը՝ Կահիրէի ազգային առաջնորդարանի արխիւներում: Գիրքն օժտուած է անձնանունների, տեղանունների, փաստաթղթերի ցանկերով, որ էապէս օգնում են անհրաժեշտ նիւթերը որոնելիս:

2019-ի սեպտեմբերի 26-ին՝ Կոմիտասի 150-ամեակի հանդիսութեանը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը միանգամայն դիպուկ շեշտել է. «Կոմիտասն Աստծու, Եկեղեցու եւ հայրենիքի հանդէպ իր անսասան հաւատով մաքրեց ու հայացրեց մեր երգը, ստեղծեց այն հոգեւոր պարարտ անդամտանը, որտեղ հայն այլեւս յաւիտենապէս ճանաչում է իր հոգեւոր «ես»-ը, առերեսւում դարերի խորքից հնչող հայրապետների ու վարդապետների նուիրական աղօթքին, հայրենաշունչ եւ խրոխտ նախնեաց զգացումներին, շինականի անկեղծ ու ստեղծագործ հորովելին... Կոմիտաս վարդապետը յաւիտենութեան մէջ դրեց մեր երգը՝ Յեղասպանութեան սարսափի մէջ անգամ դառնալով հայ ժողովրդի անկորնչելի դարաւոր յոյսը եւ հոգու զրոյցն Աստծու հետ... Կոմիտասի սիրտն ամեն վայրկեան բաբախում էր Աստծուն եւ իր հայրենիքին ծառայելու եւ փառաբանելու մղումով» (էջ 5):

¹ «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան». «Տ. Կոմիտաս վարդապետ Սողոմոնեան (1869–1935 թթ.)». Փաստաթղթերի ժողովածու (ըստ Հայաստանի ազգային արխիւի նիւթերի), Սուրբ Էջմիածին, 2019, 280 էջ:

Տարիների անձնական փորձով գիտեմ, նկատել եմ՝ երբ ուսանողներն իբրեւ ինքնուրույն աշխատանքի առարկայ ընտրում են Կոմիտասի ժառանգութեան դիտարկումը, անպատճառ անդրադառնում են նաեւ համացանցում, գրականութեան մէջ երբեմն միտումնաւոր, յաճախ մակերեսային մօտեցմամբ կերտուած՝ «կղերականների» յարուցած դժուարութիւններին, որոնք վառ երեւակայութիւն ունեցող երիտասարդների համար վերաբերմունք են ձեւաւորում, յանիրաւի դառնում էական գործօն: Եւ խունանում է Մայր Աթոռի անուրանալի դերը որբուկ Սողոմոնի՝ բառացիօրէն եւ փոխաբերական իմաստով՝ փրկութեան, կրթութեան, երաժշտական ճաշակի ձեւաւորման, ուսումը Եւրոպայում շարունակելու հնարաւորութիւն ընձեռելու գործում:

Յատկանշական է, որ Սուրբ Էջմիածնի դերն ու նշանակութիւնն ամենալաւը գիտէր ու կարեւորում էր հէնց Վարդապետը, որը յաճախ էր կրկնում. «...Քանիցս առիթ եմ ունեցել մեծ բազմութեան առաջ խոստովանելու, որ եթէ բաղդն ինձ չը ժպտար, եւ ես Ս. Էջմիածին եւ ապա իմ անգին բարերար Պ. Աղեքսանդր Մանթաշեանի միջոցաւ Գերմանիա չգնայի, կը լինէի իմ հայրենիքում՝ Կուտինայում, շատ շատ մի կօշկակար, որովհետեւ որբիս խնամող Յարութիւն հօրեղբայրս էլ կօշկակար էր եւ ակնյայտնի բան է, որ ես էլ, ամենայն հաւանականութեամբ, նրան պիտի աշակերտէի» (էջ 6):

Ներկայացուող պրակի նախաբանում Տ. Ասողիկ արեղայ Կարապետեանը հէնց սկզբից տասնամեակներով գոյացած մի վիճ է լրացնում, շիտակ խօսքով ցրում է թերասածութեան հետեւանքով ձեւաւորուած թանձր մշուշը: Եւ վաւերագրերի բարեխիղճ-մանրակրկիտ համադրմամբ ամփոփում է. «Տ. Կոմիտաս Վարդապետն իր հարազատ Ազգի ու Եկեղեցու պէս դարձաւ ԶՈՂ՝ ցարիզմի զոհը, այնուհետեւ՝ օսմանեան, վերջում էլ՝ մերայնոց» (էջ 9):

Առաջին տպաւորիչ վաւերագիրը Կուտինայի թաղային խորհրդի գրութիւնն է՝ ուղղուած Գէորգ Դ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ փոքրիկ Սողոմոնին Գէորգեան ճեմարանում ուսումնառութեան հնարաւորութիւն տալու մասին: Այսօր՝ տասնամեակների հեռուից, զարմացնում ու հիացնում է, թէ համայնքն ինչ բծախնդրօրէն, ստոյգ ու անաչառ էր ընտրում եկեղեցու կենարար հովանու ներքոյ կրթութեան կարիք ու արժանիք ունեցողներին: Սողոմոնին, որ պարկեշտ ու բարուք վարք ունէր եւ որբ էր «ի հօրէ եւ ի մօրէ», տրուել էր բացառիկ հնարաւորութիւն, որի շնոր-

հիւ եւ որի արդիւնքում փրկուեցին որբուկն ու... հայ տոհմիկ, ազնուագարմ, մաքրամաքուր երաժշտութիւնը:

Ներկայացուող պրակից բերենք անմոռանալի, խօսուոյն մի դէպք. 1914-ին Փարիզում հրատարակութեան պատրաստուած ազգային երաժշտական մշակոյթներին նուիրուած ժողովածուից դուրս էին թողել հայկականը. «Կոմիտասն էր, որ հրապարակ եկաւ եւ գիտականօրէն, հատու եւ վճռական կերպով գրեց. «Հայը ունի իր ինֆնուորոյն երաժշտութիւնը»²: Այս ապացոյցէն յետոյ ոչ միայն մուտք գործեց Հայոց անունը [երաժշտական] պատմութեան մէջ այլ եւ Կոմիտաս Վարդապետի դասախօսութեան պահուն, Փարիզի մէջ, շատ մը վարպետ երաժիշտներ ուզած են իր ձեռքը համբուրել՝ զայն հռչակելով «Արեւելեան երաժշտութեան Բանալին Շնորհող»»: Այս պատմութիւնը տպագրուել է Ֆրէզնոյի «Նոր օր» պարբերականի՝ 1957 թուականի հոկտեմբերի 29-ի համարում (էջ 154):

Բայց չխախտենք ժամանակագրութիւնն ու վերադառնանք որբուկ Սողոմոնի՝ էջմիածնում կրթութիւն ստանալու եզակի հնարաւորութեանը: Գէորգ վարդապետ Դերձակեանը, համայնքի ընտրութեամբ, փոքրիկին բերում է Վաղարշապատ՝ ներկայացնելու Վեհափառ Հայրապետին: Սակայն՝ «Սողոմոն, որ իր կրթութիւնը թուրքերէն լեզուով ստացած էր, իբրեւ անլեզուն՝ Կաթողիկոսին հարցումներուն միայն գլխու շարժումով կը պատասխանէր: Գէորգ Դ. Կաթողիկոսը՝ հիասթափած միանգամայն կը բարկանայ թէ՛ Կարելի չէ, որ հայերէն չգիտցող մը ոեւէ ճիւղի հետեւի: Ապա կ'առաջարկէ երգել: Սողոմոն կը սկսի «Աոյս Զուարթ» շարականը երգել այնքան անուշ ու զմայլելի ձայնով, որ Գէորգ Դ. Կաթողիկոսը չի կրնար տոկալ իր կրած յուզումին եւ կ'արտասուէ դառնօրէն» (էջ 153):

1881—1882 ուսումնական տարում Սողոմոնը դառնում է ճեմարանական, եւ տքնաջան, յամառ աշխատանքի շնորհիւ շատ արագ նկատում է արդիւնքը: Երաժշտական արտառոց ընդունակութիւնների շնորհիւ նա տարիներ անց պէտք է դառնար ճեմարանում երաժշտութեան ուսուցիչ եւ խմբավար: Վաւերագրերը յստակ արտացոլում են, թէ ինչ բծախնդրութեամբ ու եւրոպական երաժշտանոցներին յատուկ մասնագիտական բարձր չափորոշիչներով էր վարդապետը կազմել «Երաժշտութիւն»

² Այս կապակցութեամբ Բօստօնի «Հայրենիք» օրաթերթը (19 մայիսի, 1960) գրում է. «Կարգ մը անձեր, 1913 թուին, ուզեցին գիտնալ թէ հայը ինքնուրոյն երաժշտութիւն ունի: Բոլորին պատասխանեց Կոմիտաս վարդապետ. «Հայը ունի ինքնուրոյն երաժշտութիւն» խորագրուած գրութեամբ մը, հրատարակուած «Ազատամարտ»ի 1913 Հոկտ. 1ի թուին մէջ: Կուտանք Վարդապետին գրութեան կարևոր մասը»:

առարկայի ուսուցման ծրագիրը (տե՛ս օր.՝ վաւ. №№24, 25), հայ հոգեւոր երաժշտութեան մատուցման, դասաւանդման տրամաբանական շղթան:

Մանկավարժութիւնից ազատ ժամերին վարդապետը սիրում էր պտոյտի ելնել, լինել մերձակայ բնակավայրերում, լսել աշխատող-արարող գեղջուկի երգն ու հաւաքել, ի մի բերել անկրկնելի, անաղարտ մեղեդիները, որոնք մշակելուց, յղկելուց յետոյ նոր փայլով պէտք է վերադառնային այդ գանձերի տիրոջը՝ ժողովրդին: «Հորիզոն» օրաթերթի՝ 1910 թուականի յունիսի 6-ի համարում, լուսաբանելով Կոմիտասի՝ Բաթում քաղաքում կազմակերպած համերգ-դասախօսութիւնը, յօդուածագիրը նկատում է. «Կոմիտաս վարդապետը լաւ ըմբռնել է հայ ժողովրդական երգի մօտիւնները եւ կարողանում է խորը թափանցել նրանց մէջ» (էջ 78):

Առաջին աշխարհամարտի նախօրէին Կոմիտասը մեկնում է Կ. Պոլիս: Թերեւս չարժէ մանրամասնել, թէ ցաւալիօրէն ինչ անդառնալի հետեւանք ունեցաւ այս ճակատագրական որոշումը եւ հայ հոգեւորականութեան համար ինչ տագնապների, անհանգստութեան, յուսահատ որոնումների պատճառ դարձաւ: Միայն 1917-ի փետրուարին յայտնի դարձաւ՝ յստակեցուեց նրա գտնուելու վայրը: Կոմիտասը Պոլսում էր, եւ Զաւէն վարդապետ Մահտեսի-Բաբայեանն իր գրութեամբ շտապում էր լուրը յայտնել «ի մխիթարութիւն եւ յուրախութիւն նորին Ս. Օծութեան Վեհափառ Հայրապետի եւ միաբան հարց եւ եղբարց» (էջ 90):

Այլեւս հետեւողական, անընդհատ խնամքի եւ հոգածութեան կարօտ հանճարի խնդիրները համազգային էին՝ Հայ Առաքելական Եկեղեցու, Սփիւռքի բարեխնամ կազմակերպութիւնների համատեղուած ջանքերի կիզակէտում: Հէնց նրանք էլ պէտք է լինէին Կոմիտասի ցիրուցան ժառանգութիւնը պատուախնդրօրէն ի մի հաւաքողները, ուսումնասիրողներն ու հանրայնացնողները: Այս կարեւոր գործին անշուշտ լծուեցին նաեւ Երեւանի երաժշտանոցի մասնագէտները, գիտութիւնների կաճառի արուեստագէտները: Մասնաւորապէս, կոմիտասեան վաւերագրերի մի մեծ խմբաքանակ Մայր Աթոռ է տեղափոխել պատմագիտութեան դոկտոր, պրոֆէսոր Աշոտ Աբրահամեանը: Այդ մասին պահպանուել է Արշակ Զոպանեանի գրութիւնը՝ ուղղուած Գէորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին. «Յանկալի է, որ Զեր Վեհափառութիւնը գիտնայ, թէ ինչպէս այդ ձեռագիրները, եւ ատոնց պէս ուրիշներ ալ, կորուստէ փրկուեցան շնորհիւ հոգածութեանը Փարիզի Կոմիտասեան Յանձնախումբին, որուն պատիւն ունեմ նախագահն ըլլալու» (էջ 145):

Խորէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին յղուած Վռամշապուհ եպիսկոպոսի՝ 1935-ի հոկտեմբերի 22 թուակիր հեռագիրը Փարիզից գուժում էր Կոմիտաս վարդապետի վախճանի մասին: Հիմա արդէն ՀԽՍՀ իշխանութիւնների հետ, բոլորը միասին պէտք է հոգային մեծ հայի աճիւնը Երեւան տեղափոխելու եւ հայրենի հողում ամփոփելու՝ ջանք պահանջող, բայց շնորհակալ գործը: Վաւերագրերն այդ ջանքերի խօսուն վկաներն են:

Եգիպտոսի հայոց առաջնորդական փոխանորդ Մամբրէ եպիսկոպոս Սիրունեանը Կոմիտաս վարդապետի հոգեհանգստի արարողութեան ժամանակ մահականացու ծնուած անմահի մասին հնչեցրել է շատ բնութագրական խօսքեր. «Ինք որ համակ կեանք էր ու կորով, խանդ էր ու եռանդ, երգ էր ու ժպիտ մեզի ամենուն ծանօթ պատճառներով իր կեանքին ամենէն լեցուն եւ գործօն մէկ շրջանին քաշուեցաւ ասպարէզէն եւ խորասուզուեցաւ առանձնութեան մէջ, մարդիկ զրկուեցան այլեւս իր այնքան բարի, մտերմիկ ու զուարթ դէմքէն: Մարեցաւ իր կեանքը մոմի պէս, այն կեանքը, որ սէր էր ու լոյս՝ մշտանորոգ ու գեղեցիկ» (էջ 110):


Վաւերագրերն ամբողջացնում են պատկերը, թէ ինչպէս են նշուել մեծ երաժշտի յոբելեանական տարիները, ինչ ժողովածուներ են հրատարակուել, բերուած են ռադիօհաղորդումների, եթերների սղագրութիւններ, նկարագրուած է, թէ հանդիսութիւնների ու գիտաժողովների ինչ ներկայանալի համակազմով օրեր են եղել Երեւանում, Սփիւռքում, ամենուր, որտեղ տրոփում է հայի սիրտն ու հոգին: Յովհաննէս Թումանեանի եւ Կոմիտասի մէկդարեայ յոբելեանները նշուել են նաեւ ԵՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքոյ (էջ 168):

Այդ հանդիսութիւնների օրերին երաժշտութեան ասպարէզի մէկ այլ հանճար՝ Դմիտրի Շօստակովիչը նկատել է. «Կոմիտասն անգնահատելի ծառայութիւններ է մատուցել հայկական մշակոյթին: Նրա սքանչելի ստեղծագործութիւնները դուրս են եկել հայրենի լեռնաշխարհի սահմաններից եւ դարձել համաշխարհային երաժշտական մշակոյթի հպարտութիւնը...» (էջ 211):

Ներկայացուող պրակը նոյնպէս հերթական յոբելեանի ծրագրի երեւելի բաղադրիչներից է՝ 150-ամեակի շրջանակում կարեւոր մի գործ, որ լոյս է սփռում, նոր՝ անծանօթ երանգներ աւելացնում Մեծ Հայի կեանքի ու գործունէութեան յայտնի դրուագներին:

ԱՆԻ ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, ՀԱԱՀ



Տ. ԳԻՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԳԱՆՇԵԱՆ

(1933–2021)

Ապրիլի 26-ին Փարիզում կեանքի 88-րդ տարում ի Տէր ննջեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագոյն միաբաններից Գերաշնորհ Տ. Գիտ արքեպիսկոպոս Նագգաշեանը։ Սրբազան հայրը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու անդաստանի բազմավաստակ մշակ էր, որը տասնամեակներ շարունակ իր նուիրեալ ծառայութիւնն է բերել մեր Եկեղեցուն եւ հայ ժողովրդին։ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու եկեղեցականաց դասը սգում են բազմավաս-

տակ սրբազան հօր մահը։

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի։

Կենսագրութիւն

Գերաշնորհ Տ. Գիտ արքեպիսկոպոս Նագգաշեանը (աւագանի անունը՝ Յովհաննէս) ծնունդ է 1933 թ. Սիրիայի Հալէպ քաղաքում։ Նախնական կրթութիւնն ստացել է տեղի Կիլիկեան վարժարանում։

1948 թ. ուսանել է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթրիա-սի դպրեմանքում։

1955 թ. ձեռնադրուել է կուսակրօն քահանայ։

1955–1960 թթ. ուսուցչական պաշտօններ է վարել Բէյրութի Թեքէ-եան, Սահակեան եւ Նոր Բարձրագոյն վարժարաններում։ Այս ընթացքում հովուական ծառայութիւն է կատարել Բէյրութի եւ Կիպրոսի հայկա-կան եկեղեցիներում։

1958 թ. Ս. Էջմիածնում ստացել է մասնաւոր վարդապետութեան շորս աստիճանները:

1960 թ. նշանակուել է Փարիզի Ս. Յովհաննէս Մկրտիչ մայր եկեղեցու հոգեւոր հովիւ:


1965 թ. արժանացել է ծայրագոյն վարդապետութեան աստիճանի:

1973 թ. սեպտեմբերի 30-ին Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ստացել է եպիսկոպոսական օծում եւ ձեռնադրութիւն:

1984 թ. Ն. Ս. Օ. Տ. Տ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինութեամբ նշանակուել է Արեւմտեան Եւրոպայի հայրապետական պատուիրակ:

2009 թ. անցել է վաստակած հանգստի:





ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ

(1955–2021)

Ապրիլի 11-ին կեսանքի 65-րդ տարում ի Տէր մնջեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեորգեան հոգեւոր նեմարանի վաստակաշատ դասախօս Գրիգոր Բրուտեանը: Հանգուցեալը հայրենի գիտութեան անդաստանի բազմավաստակ մշակներից էր, որ տարիներ շարունակ իր նուիրեալ ծառայութիւնն է բերել նեմարանի սաների կրթութեան գործում:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Կենսագրութիւն

Գրիգոր Բրուտեանը ծնունել է 1955 թուականի յունիսի 28-ին Երեւանում: 1962–1972 թթ. սովորել է Երեւանի Մուրացանի անուան թիւ 18 միջնակարգ դպրոցում: 1965–1972 թթ. սովորել է նաեւ Արմէն Տիգրանեանի անուան մանկական երաժշտական դպրոցում: 1973–1978 թթ. ուսանել է Երեւանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում: Ուսումնառութեան վերջին տարիներին աշխատել է նոյն համալսարանի աստղաֆիզիկայի ամբիոնում որպէս լաբորանտ: Ուսումնառութեան աւարտից անմիջապէս յետոյ աշխատանքի է անցել Բիւրականի աստղադիտարանում: Երկար տարիներ աշխատել է աստղերի եւ միգամածութիւնների ֆիզիկայի բաժնում՝ սկզբում որպէս աւագ լաբորանտ, ապա՝ կրտսեր գիտաշխատող եւ գիտաշխատող: Զբաղուել է բռնկուող աստղերի ուսումնասիրութեամբ, գործուն մասնակցութիւն է ունեցել աստղադիտարանում ընթացող դիտողական ծրագրերին: Սկսեալ 1982 թուականից՝ աստղաֆիզիկական աշխատանքին զուգընթաց՝ զբաղուել է նաեւ

հայկական օրացույցին վերաբերող խնդիրներով: 1992–2002 թթ. Բիւրականի աստղագիտարանում եղել է հայկական օրացույցների հետազոտութեանը նուիրուած գիտական թեմայի ղեկավար: 1999 թուականից աշխատել է նաեւ Վիկտոր Համբարձումեանի նորաբաց տուն-թանգարանում, իսկ 2000 թուականից այդ թանգարանի տնօրէնն էր: 2004 թուականին պաշտպանել է թեկնածուական ատենախօսութիւն եւ ստացել ֆիզիկամաթեմատիկական գիտութիւնների թեկնածուի գիտական աստիճան: 2005 թ. սկսեալ՝ «Տոմարագիտութիւն» առարկան է դասաւանդել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարանում, ինչպէս նաեւ Երեւանի պետական համալսարանում ու Մխիթարեան ճեմարանում: 2008 թուականին ազատուել է Բիւրականի աստղագիտարանի աշխատանքից: 2009 թուականից, Վ. Համբարձումեանի տուն-թանգարանում իր պաշտօնավարութեանը զուգահեռ, աշխատանքի է անցել Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանում:

Գրիգոր Բրուտեանի տոմարագիտական ուսումնասիրութիւնների հիմնական ոլորտը հայկական հին եւ հնագոյն օրացույցների դաշտն էր: Նա ճշգրտել է հայոց Հայկեան օրացույցի սիզբը՝ ն. Ք. 2341 թ., հայոց հնագոյն Ամանորի՝ Նաւասարդի տօնի դիրքն արեւադարձային տարուայ մէջ (ամառնամուտից 8 օր առաջ), ի յայտ է բերել հայոց հնագոյն՝ Նախահայկեան օրացույցը՝ իր ուրոյն կառուցուածքով, որոշ ճշգրտումներ է կատարել հայկական միջնադարեան օրացույցների վերաբերեալ (մասնաւորապէս՝ Անանիա Շիրակունու Տոմարի հետ կապուած), ճշգրտել է Յովհաննէս Սարկաւազի ժամանակագրական համակարգը եւ այլն: Բազմաթիւ գիտական ուսումնասիրութիւնների հեղինակ է:



СОДЕРЖАНИЕ

<i>От редакции</i>	5
--------------------------	---

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И ГРАМОТЫ БЛАГОСЛОВЕНИЯ

Послание ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , по случаю праздника чудесного Воскресения Господа нашего Иисуса Христа	8
Послание ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , по случаю праздника Благовещения Пресвятой Богородицы	12
Письмо соболезнования ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , по случаю кончины Вардана Грегориана	13
Послание ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , по случаю Дня памяти свв. мучеников Геноцида армян.	15

ПРОПОВЕДИ

Проповедь ЕГО ПРЕОСВЯЩЕНСТВА ЕПИСКОПА АРШАКА ХАЧАТРЯНА , произнесенная во время Пасхальной Литургии Сочельника	16
Проповедь ПРОТОАРХИМАНДРИТА ЗАКАРИИ БАГУМЯНА , произнесенная в монастыре Св. Гаяне во время Литургии в честь Красного воскресенья.	20

РЕЛИГИОВЕДЕНИЕ

УТЕ ПОССЕКЕЛ — Юлианство в ассирийском христианстве	24
ДИАКОН КАРО ГАРИБЯН — Попытки преодоления Кривой пасхи в XIX веке . .	34

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

АРХИМАНДРИТ ТАЧАТ ЦАТУРЯН — Падежные сдвиги в «Текстуальных проблесках» Григора Хлатеци	47
---	----

СЕДА ПАРСАМЯН — Участие османской армии в уничтожении армянских населенных пунктов и памятников на примере провинций Ван, Битлис и Эрзрум (1915—1918 гг.)	66
АКОП ЧОЛАКЯН — Армянский язык в странах Ближнего Востока (1918—1946 гг.)	81
АВАГ А. АРУТЮНЯН — Документы коммунистической партии Армении, относящиеся к Армянской Церкви (1920—1930 гг.)	94
ИЕРЕЙ АРАРАТ ПОГОСЯН, АРПИНЕ ЧАНТИКЯН — Примирение или отречение?	108

СООБЩЕНИЯ


КАРИНЕ АРАКЕЛЯН — Характеристики Спасителя в Слове о Кресте Хримян Айрика	126
ЛИАНА САНТРЯН — Фразеологизмы в поэзии Даниела Варужана	135

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

АНИ ХУДАВЕРДЯН — Архимандрит Комитас — великий пример боголюбия и патриотизма	145
--	-----

НЕКРОЛОГИ

Архимандрит Гют Нагашян	150
Григор Брутян	152



CONTENTS

<i>Editorial</i>	5
------------------------	---

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , on the occasion of the glorious feast of Resurrection of our Lord Jesus Christ	8
Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , on the occasion of the feast of Annunciation of Holy Virgin Mary	12
Condolences of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , on the occasion of the death of Vardan Gregoryan	13
Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , on the occasion of the commemoration day of holy martyrs of the Armenian Genocide	15

SERMONS

Sermon delivered by H.G. BISHOP ARSHAK KHACHATRYAN during the Divine Liturgy celebrated on the Easter Eve	16
Sermon delivered by PROTO-ARCHIMANDRITE ZAKARIA BAGHUMYAN during the Divine Liturgy celebrated on “Red Sunday” at St. Gayane Monastery ..	20

RELIGIOUS STUDIES

UTE POSSEKEL — Julianism in Syriac Christianity	24
DEACON KARO GHARIBYAN — Attempts to overcome the issues concerning different dates of Easter celebrations in the 19 th century	34

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

ARCHIMANDRITE DAJAD TSATURYAN — Changes of the conjugation system in “Original Notes” by Grigor of Khlat	47
---	----

SEDA PARSAMYAN — Involvement of the Ottoman army in the destruction of Armenian settlements and monuments, following the example of Van, Bitlis and Erzurum provinces (1915–1918).	66
HAGOP CHOLAKIAN — The Armenian language in the Middle East Countries (1918–1946)	81
AVAG A. HARUTYUNYAN — Documents of the Communist Party of Armenia on the Armenian Church from 1920 to 1930 ^s	94
FR. ARARAT POGHOSYAN, ARPINE CHANTIKYAN — Reconciliation or denial?	108

ESSAYS

KARINE ARAKELYAN — Characteristics of the Savior in the “Homily on the Cross” by Khrimyan Hayrik	126
LIANA SANTRYAN — Phraseological Units in the Poetry of Daniel Varoujan	135

LITERARY REVIEW

ANI KHUDAVERDYAN — Archimandrite Komitas — a great example of piety and patriotism	145
---	-----

OBITUARY

H.E. Archbishop Gyut Naggashian.	150
Grigor Brutyan	152



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական5

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ պատգամը
մեր Տեր Յիսուս Զրիստոսի Հրաշափառ Յարության տօնի առիթով8

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ուղերձը
Սուրբ Աստուածածնի Աւետման տօնի առիթով12

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ցաւակցագիրը Վարդան Գրեգորեանի մահուան առիթով13

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ուղերձը Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների
յիշատակի օրուայ առիթով15

ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ քարոզը՝
խօսուած Սուրբ Յարության Ճրագալոյցի Պատարագին 16

Տ. ԶԱՔԱՐԻԱ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄԵԱՆԻ
քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում «Կարմիր կիրակի»-ին
մատուցուած Ս. Պատարագին 20

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ՈՒԹԷ ՓՈՍՍԵՔԷԼ — Յուլիանականութիւնն ասորի քրիստոնէութեան մէջ24

ԿԱՐՕ ՍՐԿ. ՂԱՐԻԲԵԱՆ — Ծռագատկի յաղթահարման փորձերը
ԺԹ. դարում34

ՊԱՏՄԱՐԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Տ. ՏԱՃԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԾԱՏՈՒՐԵԱՆ — Խոնարհման համակարգի
տեղաշարժերը Գրիգոր Խլաթեցու «Բնագրական նշմարներ»-ում47

ՍԵՂԱՅ ՊԱՐՍԱՄԵԱՆ — Օսմանեան բանակի ներգրաւուածութիւնը հայկական բնակավայրերի եւ յուշարձանների ոչնչացման գործում՝ Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի նահանգների օրինակով (1915—1918 թթ.)	66
ՅԱԿՈՐ ԶՈՒԱՔԵԱՆ — Հայերէնը Մերձաւոր Արեւելքի երկիրներուն մէջ (1918—1946)	81
ԱԲԳ Ա. ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ — Հայաստանի կոմկուսի 1920—1930-ական թթ. փաստաթղթերը Հայաստանեայց Եկեղեցու վերաբերեալ	94
Տ. ԱՐԱՐԱՏ ՔՀՆՅ. ՊՕՂՈՍԵԱՆ, ԱՐՓԻՆԷ ԶԱՆԹԻԿԵԱՆ — Հաշտութիւն, թէ՞ ուրացում.	108

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ


ԿԱՐԻՆԷ ԱՌԱՔԵԼԵԱՆ — Փրկչի բնութագրիչները Խրիմեան Հայրիկի Խաչի ճառում	126
ԼԻԱՆԱ ՍԱՆԹՐԵԱՆ — Դարձուածները Դանիել Վարուժանի պոէզիայում	135

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՆԻ ԽՈՒՂԱՎԵՐԴԵԱՆ — Կոմիտաս վարդապետ՝ աստուածասիրութեան եւ հայրենասիրութեան մեծ օրինակ	145
--	-----

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ

Տ. ԳԻՒՄ ԱՐՔԵԱՅԻՍԿՈՅԿՈՍ ՆԱԳԳԱՂԵԱՆ	150
Գրիգոր Բրուտեան	152



ISSN 1829-4243

Հրատարակում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխատրոյթեամբ եւ որոշմամբ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՀ ազգային եւ ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարանները ձեռնամուխ են եղել «Հայկական գիտատեղեկատուական հանգոյցի» ձեւաւորման աշխատանքներին:

Այս հանգոյցում ի մի են բերում հայագէտների եւ գիտութեան տարբեր բնագաւառների ներկայացուցիչների հրատարակած յօդուածների, գրքերի ընտրանիները: Այս աշխատանքներին իրենց աջակցութիւնն են բերում հայաստանեան եւ Սփիւռքի հայագիտական կենտրոնները, հրատարակչութիւնները, գրադարանները:

Հանգոյցը հասանելի է համացանցային հասցէով:

Բոլոր նիւթերը հասանելի են ազատ դիտման ու ներբեռնման համար:

Ունեցէ՛ք Ձեր ներդրումը համահայկական այս եզակի նախագծում՝ օգտուելով հանգոյցից, տարածելով տեղեկատւութիւն դրա մասին, տրամադրելով թուայնացուած նիւթեր:

ՀՀ Ազգային գրադարան
ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարան

Խմբագրութեան հասցէն՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ»

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal "Etchmiadzin"

Էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com

Ամսագրի արխիւն ամբողջական կերպով՝ www.tert.nla.am կամ <http://www.flib.sci.am/arm/node/2>

Հեռ. (+374-10) 517-277/278

Ստորագրուած է տպագրութեան՝ 15.05.2021 թ.

